ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՐԱՏՔ
ԽԻԿԱՐԱՅ ԻՄԱՍՏՆՈՅ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

«МАТЕНАДАРАН»
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ
ИМ. МАШТОЦА ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

ИСТОРИЯ И ПОУЧЕНИЯ ХИКАРА ПРЕМУДРОГО

(АРМЯНСКАЯ РЕДАКЦИЯ)

КНИГА I

Критический текст и предисловие
А. А. МАРТИРОСЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1969

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌՉՆԻՔԻՐ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

AP
M-30

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՐԱՏՔ ԽԻԿԱՐԱՅ ԻՄԱՍՏՆՈՅ

(ՀԱՅԿԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

356

ԳԻՐՔ Ա

Աշխատասիրությամբ՝
Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1969

БИБЛИОТЕКА
ԳՐԱԴԱՐԱՆ

Մ ո ս՝
ՆՈՒՇԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
Տիշատակին

Այս հուշարձանն ստեղծվել է մեր թվագրությունից առաջ VII դարում, ասորա-բաբելական միջավայրում։

Ներկայացվում է գրույցի հայկական խմբագրությունն իր տարբերակներով, որոնցից երկուսը XIV դարի են, շատ ավելի հին, քան մինչ այժմ հայտնի բոլոր խմբագրությունները (ասորական, արաբական, հունական, սլավոնական, եթովպական)։

Տարբերակներից չորսը հրատարակվում են առաջին անգամ։ Դրանց օգնությամբ կարելի է պարզել և ճշտել Իկարի նախնական վերաբերող կարևոր հարցեր։

7—3—3

ԽԻԿԱՐԻ ՋՐՈՒՅՑԸ ԵՎ ՆՐԱ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Խիկարի զրույցը, ինչպես Գիլգամեշի վեպը, Արևելքի հնագույն երկերից է, որ պահպանվել ու հասել է մեզ, կտրելով գրեթե երկու և կես հազարամյակի մեծ ուղի։ Բայց եթե Գիլգամեշի վեպը այդ ամբողջ ճամփան անցավ իր հերոսի նման անսովոր մեկ թռիչքով[1], ապա Խիկարի զրույցը՝ անվերջ դեգերումներից հետո, մինչև որ հանգրվաններ ժամանակակից տպագիր գրքերում։

Ճամփորդելով գրավոր և բանավոր ուղիներով, այն ենթարկվել է բազմաթիվ փոխակերպումների և մթագնել իր նախնական պարզ նկարագիրը։

Որքան բարդ ու հարուստ է զրույցի անցած ուղին, այնքան բարդ ու հարուստ է նրա մասին եղած բանասիրությունը, որ շուրջ երեքհարյուրամյակ ջանադրաբար հայտաբարներ է փնտրում։

Զրույցը հրապուրում է բանասիրությանը, որովհետև արևելյան բնորոշ և հազվագյուտ երկ է, ունի հետաքրքիր թեմա և օժտված է վաղեմիության հմայքով։

Այն հասել է մեզ բազմաթիվ խմբագրություններով. արամեերեն, ասորերեն, հունարեն, հայերեն, եթովպերեն, արաբերեն, սլավոներեն, ռումիներեն, ղփշաղերեն և այլն։

Զրույցն արտահայտվում է գեղարվեստական ճկուն ձևերի մեջ։ Պատմություն է ապերախտ քեռորդու մասին, ընդմիջարկված խրատներով, առակներով և հանելուկներով։ Ոչինչ չի տուժի, եթե

---

[1] 1872 թվականին Գիլգամեշի վեպը պնակիտներից ընթերցեց Ջորջ Սմիթը։ Պնակիտների ոչ լրիվ մի շարք Օ. Ռասամը Լոնդոն էր ուղարկել Քույունջիկի բլուրը պեղելիս բացված արքայական գրադարանից։ Այդպես, հազարամյակներ այն անհայտ էր և թաղված բլրի տակ և միանգամից հրապարակ եկավ այն տեսքով, ինչ, թերևս, գիտեր Ասուրբանիպալը։

դրանք ավելացվեն կամ կրճատվեն։ Ուստի տարբեր ժամանակներում հասարակական առանձին շերտերի կողմից փոխվել են կամ լրացվել, համաձայն իրենց ըմբռնումների։

Այդպիսով այն անվերջ նորացվել է, պահպանելով իր հարատև հմայքը։

Զրույցը կարող է հեշտությամբ մերվել ազգային գրականությունների հետ։ Հենց այդպես էլ եղել է դեռ շատ վաղուց։ Մի տեղ ասված է, որ Խիկարը ծագումով հրեա էր, հին կտակարանում նա Տովբիտի եղբորորդին է՝ Աքիաքարոս (Ἀχιάχαρος)։ Հույները նրան սեփականել են՝ կապելով Եզովպոսի հետ, արաբները համարել «Հազար ու մեկ գիշերների» հերոսներից մեկը, Խիկարի ռուսական խմբագիրը չի մոռացել շեշտելու, որ նա իր որդուն ռուսերեն էր սովորեցնում, իսկ մեր մատենագրության մեջ Խիկարը հայացվել է։ Մի ճառընտիրում ասված է, որ նա ոչ թե Խիկար է, այլ Խոկայր, «զի իւրով իմաստութեամբ հանապազ խոկմամբ ամենեցուն տայր խրատս և առակօք կրթէր»։

Այնուհետև, դարերի ընթացքում Խիկարի շուրջը կուտակվում է այնքան մեծ գրականություն, որ մթագնվում է նրա ինքնությունը և, նույնիսկ, բուն երկը՝ զրույցը, դիտվում անհարազատ։

Խիկարը հայ գրականության, հատկապես անգիր դպրության համար կատարում է նույն դերը, ինչ Վարդանը առակագրության մեջ։ Նա հանդես է գալիս իբրև հավաքական հեղինակ։ Այստեղ արգեն զուտ ազգային բնույթ ունի և կապը ասորա-բաբելական Ախիկարի հետ պայմանական է։

Զրույցի բանասիրական քննությունն անցել է երկու շրջան։

Նախապես հրատարակվելով «Հազար ու մեկ գիշերների» շարքի մեջ, այն ճանաչվում է իբրև արաբական հեքիաթ։ Ասեմանին առաջինը նկատեց, որ զրույցը չափազանց նման է Եզովպոսի կենսագրության երկրորդ մասին, Պլանուդեսի կողմից կազմված[2], իսկ Գ. Հոֆմանը 1880 թվականին իր «Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer»[3] գրքում անցողակի շատ հետաքրքիր դիտողություն արեց, տեսնելով Տովբիտի և Խիկարի մեջ ինչ-որ ազգակցություն։

[2] Bibliotheca orientalis Clementino-Vaticana, 3m Pars 1, № 21. Roma 1724, էջ 286։

[3] Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer, übersetzt und durch Untersuchungen zur historischen Topographie, erläutert von Georg Hoffmann, Leipzig, 1880, էջ 182—183։

Այսպիսով, այդ թեման կապվեց երեք նշանավոր արժեքների՝ Սուրբ գրքի, Եզովպոսի և «Հազար ու մեկ գիշերների» հետ։

Հենց այդ առնչություններն էլ դարձան առաջին շրջանի բանասիրության հիմնական առանցքը։

1907 թվականին էլեֆանտինում հայտնաբերվեցին հրեական համայնքի պապիրուսներ, որոնց մեջ նաև Խիկարի զրույցից մի քանի թերթ։ Պապիրուսները հասնում են մինչև մեր թվագրությունից առաջ V դար։

Սկսվում է Խիկարի ուսումնասիրության նոր շրջանը։

Շատ խնդիրներ, որոնք այնքան իրարամերժ վարկածներ են ծնել, դարձան պարզ և հեշտալույծ։

Եթե V դարում արդեն գոյություն է ունեցել Խիկարի արամեական բնագիր, ապա հասկանալի է, որ այն չի կարող փոխառված լինել Տովբիտի գրքից, կամ վերաձևված նրա ակնարկների հիման վրա, որովհետև Տովբիտի գիրքը կազմվել է II դարում մեր թվագրությունից առաջ։ Խիկարը անվերապահ Սուրբ գրքի աղբյուրներից մեկն է։ Այդպես, նրանից է փոխառված նաև Եզովպոսի կենսագրության երկրորդ ընդարձակ բաժինը և այլն։

Պապիրուսներն իրենց հետ բերին նոր հետաքրքրություն։ Արամեական ծվենված բնագիրը իր ընթերցումներով շատ է տարբերվում մինչ այդ հայտնի բոլոր խմբագրություններից։

Ե՞րբ է կազմվել այն և ի՞նչ ծագում ունի։

Երբ անհայտ էին էլեֆանտինյան պապիրուսները, հենվելով Տովբիտի գրքի հետ Խիկարի առնչության վրա, անվստահ դիտվում էր բնագրի հրեական ծագում։ Այժմ ավելի համարձակ վերարծարծվեց եբրայական նախնականի խնդիրը։

Սակայն դա բերեց լուրջ ընդդիմություն[4], որը հենց սկզբից հղի էր իր բացատմամբ[5]։

[4] Տե՛ս Թ. Նոլդեքեի դրախոսականը E. Sachau-ի գրքի առթիվ (Literarisches Zentralblatt, 1911, № 47, սյուն 1503—1507), ինչպես նաև՝ առանձին ընդարձակ հոդվածը՝ Untersuchungen zum Achigar-Roman von Th. Nöldeke (Abhandlungen der Königlichen Gesellschaft der Wissenschaften zu Göttingen. Philologisch-historische Klasse, neue Folge, Band XIV), Լիպցարսկու գրախոսականը՝ Deutsche Literaturzeitung, 1911, № 47, Ռուդոլֆ Սմենդի հոդվածը (Theologische Literaturzeitung, 1912, № 13). Ed. Meyer, Der Papyrusfund von Elephantine. Documente einer jüdischen Gemeinde aus der Perserzeit und das älteste erhaltene Buch der Weltliteratur. Leipzig, 1912, էջ 102—128։

[5] **Николай Дурново,** Материалы и исследования по старинной литературе. К истории повести об Акире, М., 1915, էջ 57—88։

Եվ այդպես խնդիրը մնաց առկախ։

Այս է երկրորդ շրջանի բովանդակությունը։

Բանասիրությունը, չնայած իր մեծ ջանքերին, որոշակի արդյունքի չկարողացավ հասնել։ Բազմաթիվ հարցեր դեռ մնում են անլուծ։ Իսկ այժմ մեծ հետաքրքրությունից հետո տիրում է մի տեսակ ընդարմություն, երբ քննախույզ միտքը հոգնում է տեվական լարումից։

* * *

Աղբյուրագիտական տեսակետից ևս զրույցի շուրջը բավական աշխատանք է կատարվել, ձգտելով բավարարել բանասիրության պահանջները։

Շատ ավելի վաղ, քան եթե զրույցը հայտնի կդառնար Խիկարի անունով, այն ծանոթ էր եվրոպական ընթերցողին Եզովպոսի կենսագրությունից, որ ավանդել է Պլանուդեսը, և երկրորդ մասը նույնն է զրույցի բովանդակության հետ, ներկայացնելով, իհարկե, առանձին խմբագրություն։ Առաջին անգամ հրատարակված է Միլանում (Vita Esopi Fabulatoris), 1476 թվականին Rynucius-ի լատինական թարգմանության ուղեկցությամբ։ Այնուհետև հաջորդում են բազմաթիվ հրատարակություններ. Esopi Fabulae et Vita graece cum Aldi Manucii interpretatione, Լուվեն, 1503 թիվ, Vita et Fabulae Esopi... Վենետիկ, 1505 թիվ[6], Բազել, 1518, 1524, 1530, Լիոն, 1535, Փարիզ, 1546, Անտվերպեն, 1565, 1567, 1574, Լայպցիգ, 1741, Վենետիկ, 1747։ Առավել կարևոր են Ա. էբերհարդի և Ա. Վեստերմանի[7] հրատարակությունները։

Վեստերմանի բնագիրը իրենից ներկայացնում է մի նոր խմբագրություն։ Ռ. Հարրիսը օգտվել է էբերհարդից։

Եզովպոսի զրույցը բազմաթիվ անգամ թարգմանվել է եվրո-

---

[6] Այս հրատարակությունը Ա. Գրիգորևը համարում է առաջինը, որ կատարվել է Aldus-ի կողմից, բայց հենց նրա անունը կապվում է Եզովպոսի գրքի հետ ավելի վաղ՝ Լուվենում, 1503 թվականին։ Գրիգորևը հենվում է կրումբախերի վրա, որի մոտ ցանկը սկսվում է վենետիկյան հրատարակությամբ։ Տե՛ս Geschichte der byzantinischen Literatur von Justinian bis zum Ende des oströmischen Reiches (527—1453) von Karl Krumbacher, München, 1897, § 395. էջ 897։

[7] **A. Eberhard,** Fabulae Romanenses graece conscriptae, Leipzig, 1872 A. Westermann, Vita Esopi, ex Vratislaviensi ac partim Monacensi et Vindobonensi codicibus nunc primum edidit, Brunswig et Londres, 1845.

պական լեզուներով Լաֆոնտենի հրատարակությունների հետ և առանձին[8]։

Հայերեն լույս է տեսել 1818 թվականին, Ֆրանսերենից Մինաս վարդապետ Բժշկյանի թարգմանությամբ. «Առակք Եզոբոսի, յորում բովանդակին առակք, որ յածին յանուն Եզոբոսի առակախօսի և վարք նորին...»[9]։ Այնուհետև մինչև ութսունական թվականները հրատարակվել է չորս անգամ՝ 1827, 1849, 1860 և 1886 թվականներին։

Եզովպոսի բնագրից անկախ, «Հազար ու մեկ գիշերների» շարքի մեջ, 1788 թվականին հրատարակվում է Խիկարի ֆրանսերեն թարգմանությունը արաբերենից, որ կրում է Շավի-Կոզոտի անունը[10]։ Դա Գալանի «Հազար ու մեկ գիշերների» թարգմանության շարունակությունն է։ Թարգմանիչը չափազանց ազատ է վարվել բնագրի հետ, շատ տեղերում ուղղակի մի կողմ թողնելով աղբյուրը։

1806 թվականին Գալանի և Կոզոտի թարգմանությունը իր ծանոթագրություններով և ուղղումներով հրատարակում է Caussin de Perceval-ը[11]։ Իհարկե բնագիրն այստեղ ավելի հարազատ է ներկայացված, բայց իր նախորինակից չէր կարող շատ հեռանալ։

Անհրաժեշտ է հիշել Ագուրին ևս։ Նա բնագրին միջամտում է, ոչինչ չավելացնելով սակայն, խմբագրում և դուրս է նետում այն տեղերը, որ իր կարծիքով ավելորդ են և չեն հրապուրի ֆրանսիական ընթերցողին[12]։

---

[8] Եզովպոսի ընդարձակ մատենագիտությունը տե՛ս Կ. Կրումբախեր, § 297։ Ignatios, էջ 716—717, § 395 Leben des Aesop, էջ 897—898. Francois Nau. Histoire et sagesse d'Ahikar l'Assyrien. Paris, 1909, էջ 138։

[9] Լրիվ խորագիրն է. Առակք Եզոբոսի, յորում բովանդակին առակք, որ յածին յանուն Եզոբոսի առակախօսի և վարք նորին թարգմանեալ գաղղիական լեզուէ յաշխարհաբար լեզու յաւելմամբ զանազան ծանոթութեանց, ուսանելոց իմաստից և բարոյական խրատուց... ի Հ. Մինաս վարդ. Բժշկեան, Վենետիկ, ի Վանս Ս. Ղազարու, 1818 (ՌՄԿԷ)։ Այս հրատարակությունից մի օրինակ պահվում է Երևանի Մյասնիկյանի անվ. պետական գրադարանի անձեռնմխելի ֆոնդում, 874 համարի տակ։

[10] Nouveaux contes arabes ou supplément aux Mille et une nuits, etc. par l'abbè C... Paris, 1788, հա. 4։ Մ. Գալանի թարգմանած «Հազար ու մեկ գիշերների» այս լրացումը կատարել է Կոզոտը, նրան օգնել է Շավին, ծանոթությամբ արաբ։

[11] Les Mille et une nuits. Contes arabes, traduits en français par M. Galland, continués par M. Caussin de Perceval, Paris, 1806. հա. 8, էջ 167—220։

[12] «Հազար ու մեկ գիշերների» ընդարձակ մատենագիտությունը տե՛ս «Юбилейный сборник в честь Всеволода Феодоровича Миллера», изданный его учениками и почитателями, М., 1900, էջ 231—240։

Հրատարակվում են նաև ոչ մեծ թվով բնագրեր։

1875 թվականին C. H. Cornill-ը եթովպական խմբագրության հետ տալիս է արաբական մի օրինակ, Գոթայի 2652 ձեռագրից[13]։ 1890 թվականին Սալհանին Բեյրութում առանձին գրքով և որպես «Հազար ու մեկ գիշերների» 5-րդ հատորի լրացում, հրատարակում է մի նոր բնագիր, երկու աղբյուրների հիման վրա[14]։ Այն հարուստ է Բիբլիայից արված շատ նորմուծություններով, որոնք գրչական ծագում ունեն։ Սալհանիի օգտագործած ձեռագրերը XVIII դարից այն կողմ չեն անցնում։ 1894 թվականին Մարկ Լիդցբարսկին հրատարակում է նոր սիրիական և արաբական բնագրերը զուգահեռ, Զախաուի № 339 ձեռագրից և հաջորդ տարին թարգմանում գերմաներեն, նույն ամսագրում[15]։ Եվ վերջապես Ագնես Սմիթը Խիկարի նշանավոր ժողովածուի մեջ (1898 թ.) իր բաժինն է բերում։ Նա արաբական խմբագրությունը ներկայացնում է Քեմբրիջի 2886 (K1) և Բրիտանական թանգարանի 7209 (K2) ձեռագրերով, անգլերեն թարգմանության ուղեկցությամբ[16]։ Սմիթը օգտվում է նաև Սալհանիի բնագրից։ Այս վերջին հրատարակությունից բնագիրն ռուսերեն է թարգմանում Ի. Կուզմինը 1920 թվականին և զետեղում «Мудрость Хикара и басни Лукмана» ժողովածուի մեջ, Ի. Կրաչկովսկու խմբագրությամբ և առաջաբանով[17]։

Ասորական բնագիրը հրատարակվել է որոշակի թվով ձեռագիր օրինակներից։

Գիտնականների ուշադրությունը գրավել են հիմնականում երեք աղբյուր. Բրիտանական թանգարանի № 7200 ձեռագիրը (XII—XIII դար), որտեղ կա Խիկարի մի փոքրիկ հատված։ Այս հատվածի հիման վրա Հոֆմանը կապ տեսավ Խիկարի և Տովբիտի գրքի միջև,

[13] **C. H. Cornill**, Das Buch der weisen Philosophen nach dem Aethiopischen untersucht und zur Erlangung des Doctorgrades bei der Phil. Fac. zu Leipzig eingereicht, Leipzig, 1875.

[14] **Salhani**, Contes arabes, Beyrouth, 1890.

[15] **M. Lidzbarski**, Die neu-aramäischen Handschriften der Königlichen Bibliothek zu Berlin, I *մաս, 1894*, II *մաս, 1895*, *էջ 1—41*։

[16] The Story of Ahikar, From the Syriac, Arabic, Armenian, Ethiopic, Greek and Slavonic Versions, by F. C. Conybeare, Rendel Harris and Agnes Smith Lewis, London, 1898, *էջ 87—118, բնագիրը՝ էջ 1—32*։

[17] Мудрость Хикара и басни Лукмана, переводы Ив. Плат. Кузьмина и М. А. Салы, под редакцией и с предисловием И. Ю. Крачковского. Петербург, 1920, *էջ 15—60* (Всемирная литература, Арабы, выпуск № 54, Петербург, MCMXX):

Քեմբրիջի № 2020 և Բեռլինի Զախաուի 336 ձեռագրերը։ 1898 թվականին Հարրիսը հրատարակում է № 7200 բնագրի հատվածը և № 2020 ամբողջական բնագիրը անգլերեն թարգմանության հետ միասին[18]։ Նույն № 2020 ձեռագրից է կատարել իր թարգմանությունը Դիլլոնը 1898 թվականին և լրացումների համար հաճախ դիմել է արաբական և նոր արամեական ձեռագրերի, որով ընկնում է բնագրի գիտական ճշգրտությունը[19]։ Գիտնականներն իրենց ուսումնասիրությունների մեջ ձեռագիր վիճակում օգտվել են Զախաուի բնագրից, բայց այն առաջին անգամ թարգմանաբար հրատարակում է F. Nau-ն 1909 թվականին իր «Histoire et sagesse d'Ahikar l'Assyrien» գրքում Քեմբրիջի № 7200 ձեռագրի համեմատությամբ և այլ խմբագրությունների զուգորդումով[20]։ Հարրիսի անգլերեն օրինակից օգտվում է Ա. Գրիգորևը ռուսերեն թարգմանության համար, որը ներկայացնում է երեք խմբագրությունների հետ, նախ՝ 1908—1909 թվականներին Մոսկվայի Համալսարանին առընթեր Ռուսաստանի Պատմական և Հնագիտական ընկերության Ընթերցումներում և ապա՝ 1913 թվականին[21]։ Ասորական խմբագրությունը 1958 թվականին դարձյալ թարգմանվում է ռուսերեն, այս անգամ բնագրից[22]։ Թարգմանիչներն հավանաբար նկատի են ունեցել Հարրիսի օրինակը (Քեմբրիջի № 2020 ձեռագիրը)։

Nau-ն 1920 թվականին «Revue de l'Orient Chrétien»-ում հրատարակում է երեք տարբերակ, ֆրանսերեն թարգմանության հետ միասին[23]. Բեռլինի Զախաուի № 162 ձեռագիրը, Գրաֆենի և Բոնհոնի օրինակները։ Առաջին բնագիրը թերի է և, ինչպես Զախաուն է գտնում, այն կարելի է անկասկած համարել XV դարի ըր-

[18] The Story ... *էջ 56—84, բնագիրը՝ էջ 33—72*։

[19] The Contemporary Review, London, 1898, *էջ 369—386*։

[20] Histoire et sagesse d'Ahikar l'Assyrien (fils d' Anael, neveu de Tobie). Traduction des versions syriaques avec les principales différences des versions arabes, arménienne grecque, neo-syriaque, slave et roumaine par François Nau, Paris, 1909, *էջ 145—280*։

[21] Чтения в Императорском обществе Истории и Древностей Российских при Московском университете, 1908 год, кн. III, отд. II, Материалы историко-литературные, *էջ 2—128* и 1909 год, кн. III, отд. II, *էջ 129—235*, **Ал. Дм. Григорьев**, Повесть об Акире премудром. Исследование и тексты. Москва, 1913, Приложения, *էջ 2—235*։

[22] «От Ахикара до Джано», перевод с сирийского А. Белова и Л. Вильскера, М.—Л., 1960, *էջ 11—36*։

[23] Documents relatifs a Ahikar, textes syriaques édités et traduits par F. Nau (Extrait de la Revue de l'Orient Chrétien, t. XXI), Paris, 1920.

շուրյուն: Գրաֆենի բնագիրը ընդօրինակված է 1908 թվականին, հետաքրքիր մի աղբյուր, որ չի նկատուվել բանասերների կողմից, իսկ Բոնիոնի ձեռագիրը «Թերևս գրված է XVI—XVII դարերում և լրացված ժամանակակցի ձեռքով»: Առաջին մասը Գրաֆենի հետ նույնն է, իսկ լրացումը իրենից ներկայացնում է անկախ տարբերակ:

Nau-ն այս հրատարակության սկզբում գրում է. «1910 թվականի շրջանում մենք կազմել էինք ասորական ծանոթ բոլոր բնագրերն ընդգրկող Ախիկարի մի ժողովածու: Ներկա աշխատությունը առանձնացնում ենք դրանից»[24]: Այդ անշուշտ կարևոր երկի ճակատագիրը մեզ անհայտ է:

Սլավոնական խմբագրության մասին առաջին անգամ հպանցիկ հիշատակվում է 1800 թվականին «Ироическая песнь о походе на половцов...» գրքում, մի ծանոթագրության մեջ[25]:

1816 թվականին Կարամզինը իր «Պատմության» 3-րդ հատորում բերում է այդ բնագրից մի փոքր հատված[26]: 1842 թվականին Պոլևոյը հրատարակում է հետագա խմբագրության լրիվ մի օրինակ[27]: 1855 թվականին Պիպինը իր ուսումնասիրության մեջ բերում է Ախիկարի գրույցը XVII դարի Ռումյանցևյան թանգարանի ձեռագրից, որը կրում է 363 համարը և նույն թանգարանի № 27 ձեռագրից մի հատված[28]:

---

[24] Documents . . . էջ 14:

[25] Ироическая песнь о походе на половцов удельного князя Новаг рода-Северского Игоря Святославича, писанная старинным русским языком в исходе XII столетия с перележанием на употребляемое ныне наречие. Москва, 1800 г., էջ VII: Այդ էջի ծոդատակում նշված է, որ գրաֆ Ալեքսեյ Իվանովիչ Մուսին-Պուշկինի գրադարանում պահվում է մի ձեռագիր, 323 էջից, որի մեջ կա նաև Ախիկարի բնագիրը, որը թվարկվում է «Ասք Իգորի գնդից» առաջ . . . 4 Синогрин царь Адоров Иналивския страны. 5. Слово о плъку Игореве, Игоря Святъславля, внука Ольгова. Դա ասքը պարունակող այն ձեռագիրն է, որը այրվել է:

[26] Մենք օգտվել ենք 5-րդ հրատարակությունից: Н. М. Карамзин, История государства Российского, СПб, 1842, примечания к III тому Истории государства Российского, նյութեակ 106, ծանոթագրություն № 272:

[27] Московский телеграф № 11, 1825, էջ 227—235:

[28] Пыпин А., Очерки старинной русской литературы (статья первая): (Отечественные записки. Журнал учено-литературный, издаваемый Андреем Краевским, том XCVIII, вторая книжка, СПб, 1955 էջ 141—142:

1860 թվականին Գրիգորի Կուշներևի կողմից նորից հրատարակվում է Ռումյանցևյան № 363 ձեռագրի բնագիրը և մի տարբերակ Պոգոդինյան № 1772 ձեռագրից[29]:

1861 թվականին Ռուս պատմության և հնագիտության Մոսկվայի ընկերության գրադարանի № 189 ձեռագրից Ֆ. Բուսլաևը կրճատումներով հրատարակում է սլավոնական հնագույն խմբագրության բնագիրը (XV դար)[30], նույնը լրիվ և հնագրական ամենաթծախնդիր ճշգրտությամբ ներկայացնում է Գրիգորևը[31]:

1868 թվականին Վ. Յագիչը հրատարակում է Կուկուլևիչի հավաքածուի 1468 և 1520 թվականների ձեռագրերից սերբական բնագրեր Arkiv za povjestnicu Jugoslavensku-ի 9-րդ գրքում և առանձին[32]: Եվ ապա այդ երկու տարբերակներից կազմած համահավաք բնագիրը 1892 թվականին հրատարակում է Byzantinische Zeitschrift-ում գերմաներեն[33], որով սլավոնական խմբագրությունը մատչելի է դառնում եվրոպական ընթերցողին: Այդ միջամտված օրինակը 1898 թվականին թարգմանվում է անգլերեն[34]:

1886 թվականին Ե. Բարսովը ներկայացնում է XVI դարի սերբական մի աղբյուր Ջերտկովյան քաղաքային գրադարանից, այն անվանելով «Թանկագին հուշարձան»[35]: Բնագիրը վերահրատարակում է Գրիգորևը իր գրքի լրացումներում[36]:

Այնուհետև 1915 թվականին Նիկոլայ Դուրնովոն Ախիկարի մասին իր արժեքավոր աշխատության մեջ հրատարակում է սլավոնա-

---

[29] Памятники старинной русской литературы, издаваемые гр Григорием Кушнеревым-Безбородко, под ред. Н. Костомарова, СПб., 1860, выпуск второй, էջ 359—364 և 364—370:

[30] Историческая хрестоматия. . . Составлено на основании наставления для образования воспитанников военно-учебных заведений. . . Ф. Буслаевым, из сборника, находящегося в библиотеке Московского общества Истории и Древностей Российских (отд. I, № 189), М., 1861, էջ 644—656:

[31] Чтения . . . 1908, кн. III, отд. II, էջ 2—128, 1909 г., кн. III, отд. II, стр. 129—235, „Повесть об Акире премудром", 1913, էջ 2—235:

[32] Arkiv za povjestnicu Jugoslavensku, IX, Zagreb, 1868, էջ 137—150 (Jagic V. Prilozi k historiji knjizevnosti naroda hrvatskoga i srbskoga):

[33] Byzantinische Zeitschrift, I Band, 1 Heft, Leipzig, 1892, էջ 107—126:

[34] The Story . . . էջ 1—23:

[35] Барсов Е. В., Акир премудрый во вновь открытом сербском списке XVI в. Издание Императорского общества Истории и Древностей Российских при Московском Университете. Чтения в Императорском обществе Истории и Древностей Российских при Московском Университете, кн. III, 1886, էջ 1—11:

[36] Повесть об Акире премудром, էջ 236—264:

կան երկու բնագիր Սոլովեցկյան վանքի № 46 (XVI դար) և Բելգրադի ժողովրդական գրադարանի № 828 ձեռագրերից[37]: 1916 թվականին Պերետցը Լոնգինովի հավաքածուի XVIII դարի ձեռագրից հրատարակում է հետագա խմբագրության մի տարբերակ, փոքրիկ բայց հետաքրքիր առաջաբանով[38], վերջապես Մ. Ռեշետարի ժողովածուում 1926 թվականին տպագրվում է XVI դարի մի բնագիր[39] (1520 թվականի գրչության), որը առիթ տվեց Ն. Դուրնովոյին հանգելու սլավոնական թարգմանության ուղիների մասին կարևոր հետևությունների:

Հայկական խմբագրությունն առաջին անգամ տպագրվել է 1708 թվականին Սարգիս դպրի կողմից[40]: Դա Խիկարի անունով գրույցի ամենահին հրատարակությունն է:

Ինչպես որ արաբական խմբագրությունը ներկայացվում է «Հազար ու մեկ գիշերների» հեքիաթաշարով, այնպես էլ հայկականն ուղեկցում է «Պղնձե քաղաքի պատմությանը», բայց և երկու դեպքում գրույցը նրանց հետ ոչ մի առնչություն չունի:

Այնուհետև գրույցը հրատարակվել է բազմաթիվ անգամ, միշտ ուղեկցելով «Պղնձե քաղաքի պատմությանը»[41]:

1894 թվականին Կովկասյան ցեղերի և տեղանքի նկարագրության նյութերի ժողովածուում տպագրվում է Խիկարի բանավոր

[37] **Дурново Н.**, Материалы и исследования по старинной литературе, I. К истории повести об Акире (отдельный оттиск из 2 выпуска IV тома Трудов Славянской Комиссии Императорского московского археологического общества), М., 1915, էջ 20—36, 37—44:

[38] **Перетц В. К.**, К истории текста повести об Акире премудром (отдельный оттиск из «Известий» Отделения русского языка и словесности Императорской Академии наук; т. XXI, кн. I, էջ 268—278) Петроград, 1916, էջ 7—17:

[39] Зборник за историју језик и књижевност српског народа, I, кн. XV, 1926.

[40] «Գիրք պատմութեան վասն Պղնձէ քաղաքին եւ հարցմունք աղջկանն եւ մանկանն եւ Պատմութիւն Խիկարայ և Փահլուլ Թագաւորին», 1708, էջ 83—123: Մի օրինակ պահվում է գրականության թանգարանի Սունդուկյանի ֆոնդում:

[41] 1731, 1749, 1757, 1792, 1807, 1814, 1820, 1834, 1850, 1857, 1861, 1862, 1908, 1911 թվականներին: Այս շարքից մեզ անծանոթ է 1862 թվականի տպագրությունը, որի մասին նշում կա Զարբհանալյանի մոտ: Տե՛ս «Հայկական մատենագիտություն», Վենետիկ, 1883, էջ 383: «Պղնձե քաղաքի» հրատարակությունների ցանկը Հ. Անասյանի «Հայկական մատենագիտության» մեջ լրացման կարիք ունի (տե՛ս էջ 623):

գրույցի մի գրառում, որ կատարել է Բայանդուրի ուսումնարանի տեսուչ Բունիաթյանը[42]:

1898 թվականին Ա. Ա. ստորագրությամբ հոդված է տպագրվում «Բազմավեպի» մեջ, որտեղ գրույցը բերվում է քաղվածաբար մի ձեռագրից, լրիվ բնագիրը թողնելով «հարմար առիթի»[43]: Վերջապես, նույն թվականին երեք բանասերների նշանավոր գրքում հրատարակվում է Ֆ. Կոնիբերի կազմած համեմատական բնագիրն անգլերեն թարգմանության հետ միասին[44]:

Կոնիբերի այս աշխատանքը ընդհանուր ճանաչում է գտնում բանասիրության կողմից: Nau-ն նրանից է օգտվում իր ասորական բնագրի համադրությունների համար, իսկ Ֆեթթերը թարգմանում է գերմաներեն[45]:

Սրանով մենք սպառում ենք Խիկարի հայկական խմբագրության հրատարակությունները:

Զրույցը հրապարակ է եկել և այլ լեզուներով. 1850 թվականին՝ ռումիներեն, Անտոն Պանի կողմից, որը այնուհետև վերահրատարակվել է 1854, 1872 և 1880 թվականներին, ինչպես նաև Մ. Գաստերի երկու հրատարակությունները[46], վրացական օրինակը տպագրվել է 1900 թվականին[47]:

1902 թվականին Խախանովը Մոսկվայի հնագիտական ընկերության Սլավոնական հանձնաժողովի նիստում հայտնում է Խիկարի մի այլ վրացական բնագրի մասին, որը ավելի ամբողջական է և հատակ[48]:

356

[42] «Сборник материалов для описания местностей и племен Кавказа». Издание Управления Кавказского учебного округа, вып. 19, Тифлис, 1894, էջ 206—219:

[43] «Բազմավեպ», հոկտեմբեր, 1898, էջ 488—492:

[44] The Story ... էջ 125—162, անգլիերեն թարգմանությունը՝ էջ 24—55:

[45] Theologische Quartalschrift. in Verbindung mit mehreren Gelehrten hrsg. von D. v. Funk, D. v. Schanz, D. Velser, D. Vetter, D. Koch, D. Sägmüller, Professoren der Kath. Theologie an der K. Universität Tübingen, 1904, էջ 330—364:

[46] Pann Anton: Inţeleptul Archir si nepotul său Anadam. Bucureşti 1850. Gaster M., Archir si Anadam: Literatura populară română, Bucureşti 1883, էջ 106—109: Gaster M., Contributions to the History of Ahikar and Nadan: Journal of the Royal Asiatis Society, 1900, էջ 301—309:

[47] «Очерки по истории грузинской словестности», вып. 3, М., 1901, էջ 169—180 և 423—427:

[48] Протокол 59-го заседания Славянской комиссии Императорского московского археологического общества –18 января 1902, Древности. Труды Славянской Комиссии Императорского московского археологического общества, том. III, издан под редакцией М. И. Соколова, М., 1902, էջ 51:

БИБЛИОТЕКА

1935 թվականին պրոֆ. Յորդան Իվանովը բուլղարական խմբագրությունը հրատարակում է կրճատումներով, XVI դարի Լովչանական ժողովածուից (Ловчанский сборник)[49]։

Այդ խմբագրության մասին դեռևս 1878 թվականին տեղեկացնում է բուլղար նշանավոր պատմաբան Իրեչեկը, բայց, որովհետև երկար ժամանակ մնում էր անհայտ, ոուս բանասիրության մեջ չի համարվել հավաստի։

1964 թվականին Ժ. Դնին և է. Տրիյարսկին հրատարակում են զրույցի հայատառ ղիչաղերեն բնագիրը, լուսանկարները և լատինական տառադարձությունը, ուղեկցելով ֆրանսերեն թարգմանությամբ, Վիեննայի Մխիթարյանների № 468 ձեռագրից[50]։

Եթովպական և նոր-արամեական բնագրերի մասին մենք արդեն հիշեցինք, մնում են էլեֆանտինի արամեական պապիրուսները, որ ներկայացրեց հիանալի հրատարակությամբ էդվարդ Զախաուն և ապա՝ Արթուր Ունգնադը[51]։

Պապիրուսները ոուսերեն լեզվով Զախաուի գերմաներեն թարգմանությունից, նկատի առնելով Զախաուի և Ունգնադի բնագրերը և նոլդեքեի դիտողությունները, հրատարակում է Դուրնովոն իր «К истории повести об Акире» գրքում[52]։

Այս ոչ լրիվ թվարկումից պարզ է, թե որքան շատ աղբյուրներ են ներկայացված տարբեր խմբագրություններով։ Սակայն նրանք չեն տալիս զրույցի բնագրային ճիշտ պատկերը։

Զրույցը մեծ մասամբ ներկայացվել է մեկ կամ երկու ձեռագրերի հիման վրա, ստեղծելով ոչ թե համեմատական, այլ հավաքական բնագրեր։

---

[49] **Йордань Ивановъ,** Старобългарски разкази. Текстове, новобългарски преводъ и бележки. София, 1935, էջ *95—102*, նոր բուլղարերեն թարգմանությունը՝ էջ *237—245*։

[50] **Jean Deny, Edward Tryjarski,** Histoire du sage Hikar dans la version arméno-kiptchak, Rocznik Orientalistyczny, t. XXVII, zeszyt 2, Warszawa, 1964.

[51] Aramäische Papyrus und Ostraka aus einer judischen Militärkolonie zu Elephantine, bearbeitet von Eduard Sachau, Leipzig, 1911, էջ XX—XXIII, *ապա՝ 40—50*։ Ներկայացված է բնագիրը գերմաներեն թարգմանության հետ միասին։ **Arthur Ungnad,** Aramäische Papyri aus Elephantine, Kleine Ausgabe unter Zugrundelegung von E. Sachaus Erstausgabe, Leipzig, 1911. *Միայն բնագիրը*։

[52] **Дурново Н.,** էջ *3—19*։

Հրատարակությունները չեն ընդգրկում տարբեր ենթախմբերի բոլոր, կամ որոշակի քանակի աղբյուրներ, այլ կատարվել են առանձին, երբեմն պատահական միավորներից։

Դարերի ընթացքում գրիչներն իրենց սեփական հետքն են թողել բնագրերի վրա, նույնը շարունակել են հրատարակիչները, ծածկելով զրույցը նոր, օտարամուտ շերտերով։

Նրանք քմածին ազատությամբ միջամտում են բնագրին, փոխում կամ դուրս նետում իրենց կողմից անկարևոր համարված տեղերը և հաճախ կապակցություններ ստեղծում սեփական երևակայությամբ։

Դա մեծ բարդություն է առաջացրել բանասիրության համար, դժվարացնելով աղբյուրներից օգտվելու խնդիրը։ Յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ կլիներ ստուգել տարրննթերցվածը. հեղինակային է այն, գրչի, թե հրատարակչական, բայց դրա համար պետք է նայել բոլոր հրատարակությունները և ձեռագրային աղբյուրները, որ թերևս անկարելի է։

Հենց այդ պատճառով հետազոտողների մոտ բազմաթիվ դիտողություններ և վարկածներ կորցնում են իրենց արժեքը, որովհետև հենվել են ոչ թե հարազատ, այլ ոչ ճիշտ և հետամուտ ընթերցվածի վրա։

Երկու շրջաններում գիտնականներին հետաքրքրում էր միևնույն հարցը. որտեղից է գալիս զրույցը և ինչպիսին է եղել նրա նախնականը։

Դա ինքնին աղբյուրագիտական բնույթ ունի, և գիտական միտքը պետք է գնար այդ ուղղությամբ, մի պահանջ, որ առաջացավ բավական ուշ, երբ արդեն պարզ էր, որ բանասիրությունը աննկատ սահում է միևնույն շրջագծով։

Nau-ն գրում է. «Ախիկարի պատմությունը շատ է տառապել թարգմանիչների և գրիչների ձեռքին։ Նրա վերակազմումը կպահանջեր հարազատության համար ամենից առաջ ձեռագրերի հնարավոր չափով մեծ քանակի վրա հենված յուրաքանչյուր խմբագրության խնամքոտ հրատարակություն և ապա՝ այդ խմբագրությունների համեմատություն»[53]։

Այս պահանջը լիովին վերաբերում է և հայ խմբագրությանը, որը ասորական, արաբական և սլավոնական խմբագրությունների հետ առանձնակի արժեք է ներկայացնում։

---

[53] „Histoire et sagesse ...", էջ *77*։

* * *

Ինչպես տեսանք, հայկական Խիկարն ունի բավական շատ հրատարակություններ, որոնք, սակայն, երեք բնույթի են. տպագիր, բանավոր և ձեռագիր:

Տպագիրը ուղեկցում է «Պղնձէ քաղաքի պատմությանը», որը ձգվում է 1708 թվականից մինչև 1920 թվականը: Այդ երկար շարքը գալիս է մի մայր ձեռագրից, ուշ շրջանի, խիստ աղավաղ և բարբառային շերտերով ծածկված: Այն հիմք է ծառայել 1708 թվականի հրատարակությանը:

Տպագրերը բաժանվում են երկու խմբի (Fa և Fb), որոնք անխառն տարբերակվում են: Մի տեղ Fa մայր հրատարակությունից շեղվելով խմբագրական փոփոխություններ են մտել և ստացվել է ենթամայր տպագիր (Fb): Fa-ից և Fb-ից սերողները լիակատար համապատասխանում են և եթե փոփոխություն կա, ապա միայն վրիպակային, իսկ Fab-ն կապվում են իրար ամենամերձ ազգակցական իրավունքով:

Fb-ն փորձում է խուսափել խիստ արտահայտված բարբառային ձևերից և բաց է թողնում որոշ խրատներ: Իբրև օրինակ բերենք մի երկու ընթերցում.

Fa	Fb
Կապած և մօհրածն:	Կապած և կնքածն:
Ուտել և խմելն:	Ուտել և քմպելն:
Որդեակ, մի՛ այնպէս անէր, որ երթաս ի տեղ մի ւ ի քեզանէ մեծ մարդոյն ի վեր նստիս, որ չասեն թէ եկու ի վայր, որ յամօթ լինիս: Ի վայր նիստ, որ ասեն թէ եկու ի վեր:	Որդեակ եթէ գնաս ի հրաւիրեալ տեղիս, յորում գտանի քան զքեզ մեծ և յարգի, մի՛ նստիր ի վերին կողմն, զի յետոյ սակաւ առ սակաւ իջանես ամօթով ի ստորին կողմն:
Մի լինիր լեղի:	Մի լինիր դառն:
Լըփ գանձով մինչև լցի հողով:	Շատանալ գանձով մինչև մտանէ ի հող:
Ընդ մարդոյ կնոջ մի խնամախօսիր:	Մի պատճառ լիներ հարսնացուցանելոյ զդուստրն ուրուք ընդ առն օտարի:

և այլն:

Fb-ն բաց է թողնում մի քանի խրատ, չխախտելով սակայն Fa-ին հատուկ հերթակարգը[54]:

Թերևս կարելի է գայթակղվել, որ Fb-ն սերում է այլ աղբյուրից, նկատի ունենալով որոշ ընթերցումներ, որոնք բավական ուժեղ

[54] Fb -ն չունի №№ 14, 28, 40, 43, 46, 48, 49, 50, 52, 53, 83, 84, 87,106 խրատները:

են տարբերակվում, բայց ակնհայտ է, որ այդ փոփոխությունները չեն թելադրում առանձին բնագիր և ոչ, նույնիսկ, ունեն գրչական բնույթ, այլ պարզապես խմբագրված են որևէ հրատարակչի կողմից:

Փոփոխությունների մեջ բացահայտ զգացվում է լեզվի բռնապետիկ արհեստականություն. «Մի պատճառ լինէր հարսնացուցանելոյ զդուստրն ուրուք ընդ առն օտարի» և այլն:

Սակավ տարբերություններից մենք բերեցինք մի երկու օրինակ, իսկ գերիշխողը, ավելի ճիշտ՝ ընդհանուրը նույնությունն է:

Fb-ի մեջ մտնում են 1857, 1908, 1911 թվականների հրատարակությունները, այսինքն 1857 թվականից հետո: Այդ նշանակում է, որ Fa-ն և Fb-ն տարբերվում են ոչ թե զուգահեռաբար, այլ մեկը հաջորդում է մյուսին: Հավանորեն Fb-ի հիմքը 1857 թվականի հրատարակությունն է:

Երկրորդը՝ բանավորն է, բնագիր, որ պատմել է էջմիածնեցի 65-ամյա մի գեղջկուհի և գրի առել Բայանդուրի ուսումնարանի տեսուչ Բունիաթյանը:

Ինչպես Կոնիբերի հրատարակությունը Եվրոպայում, այնպես էլ այս բնագիրը ռուս բանասիրության համար առիթ դարձավ առաջին ծանոթության: Այդտեղ էլ վերջանում է նրա դերը:

Բոգոյավլենսկին, նկատի ունենալով այս հրատարակությունը, գրում է. «Խիկար իմաստունի պատմությունը մեր նախնիներին լավ հայտնի Ակիր իմաստունի մասին հեքիաթի հայկական խմբագրությունն է ներկայացնում»[55]:

Սակայն այն չունի բնագրական որևէ արժեք և չի կարող հայ խմբագրության մասին ճիշտ պատկերացում տալ:

Միլլերը դուրս գալով զրույցի բնույթից արդեն կռահում էր. «Հեքիաթի անսովոր պահպանվածությունը էջմիածնի պատավի շրթներին մեր կարծիքով ուղղակի նշում է նրանից գրառված պատմվածքի գրքային ծագումը»[56]:

Նա հորդորում է բանասերներին գտնելու աղբյուրը. «Ցանկալի կլիներ, որպեսզի ժողովածուում հայ Խիկարի հանդես գալը հայագետներին ևս մղեր հայկական մատենադարաններում այդ հեքիաթի ձեռագրի որոնումներին»[57]:

[55] «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XIX, Тифлис, 1894, էջ XVII:

[56] Журнал Министерства Народного просвещения, седьмое десятилетие, часть CCC, июль, 1895, СПб, էջ 209—210:

[57] Տե՛ս նույնը՝ էջ 209—210:

Որոնումների հարկ չկա: Զրույցի օրինակը մեզ հայտնի տպագիրն է, որ ուղեկցում է «Պղնձէ քաղաքի» բաղմաթիվ հրատարակություններին: Դա պարզորոշ ցույց է տալիս պատումների նույնությունը և խրատների բնույթը, նույնիսկ հերթակարգը:

Բերենք մի երկու զուգահեռ.

1. Որդեակ, եթէ լսես խօսք ի դուռն թագաւորաց և իշխանաց և մեծամեծաց, պահեա և մեռո զնա ի սրտի քում և մի՛ ասեր (Fb յայտներ) մարդոյ մինչև այլոն ասեն ի քեզ:

1. Если услышишь что-нибудь в доме царя или приближенных его, то никому о том не говори, пока того-же самого не услышишь от других.

2. Որդեակ, զմարդոյ կապած և մոհրածն (Fb կնքածն) մի՛ արձակեր և զարձակեալն մի՛ կապեր:

2. Завязанного и запечатанного другими не развязывай, а развязанного не запечатывай.

3. Որդեակ, լաւ է իմաստուն մարդուն հետ (Fb մարդոյն գէտ) քար կրելն, քան զանգետին հետ ուտել և խմելն (Fb ըմպելն):

3. Лучше с умным человеком камни таскать, нежели с глупым есть и веселиться.

4. Որդեակ մի՛ լիցի զի առաքեսցեն զքեզ ի բան, և դու ոչ իմանաս զբանն և երթաս: Յետոյ այլ ոք ուղարկեն, որ երթայ ի բանն, և դու ծաղր լինիս:

(Որդեակ, եթէ առաքեսցեն զքեզ ի տեղի ինչ վասն բանի, լաւ ի միտ առ զբանն, զոր ասելոց ես և ապա գնա, զի մի գուցէ յետոյ լինիցիս ծաղր առաջի այլոց):

4. Если тебя посылают куда-нибудь, хорошенько разузнай, за чем идешь, и что тебе нужно сказать, чтобы впоследствии не стать посмешищем для других.

5. Որդեակ մի՛ այնպէս աներ, որ երթաս ի տեղ մի՛ ի քեզանէ մեծ մարդուն ի վեր նստիս, որ չասեն թէ նկու ի վայր, որ յամօթ լինիս, ի վայր նիստ, որ ասեն թէ նկու ի վեր:

(Fb Որդեակ եթէ դնաս ի հրաւիրեալ տեղիս յորում գտանի քան զքեզ մեծ և յարգի, մի՛ նստիր ի վերին կողմն, զի յետոյ սակաւ առ սակաւ իջանես ամօթով ի ստորին կողմն):

5. Если тебя пригласят куда-нибудь в гости или на свадьбу, не садись на первом месте, а то, когда придут постарше тебя, придется тебе пересаживаться на низшее место; лучше садись ниже всех; тогда тебе будут предлагать место все выше и выше, и, таким образом, ты займешь почетное место.

6. Որդեակ, թէ ընկերն քո հիւանդ է մի ասեր ի միտքդ (Fb մտի քում) թէ տանձ կամ խնձոր գտանեմ (Fb գտանեմ) և ապա երթամ տես. երթ (Fb այլ երթ) ուտիլք և տես աչօք, զի գիւանդն դատարկ տանանել շատ լաւ է քան զբազում կամակս ուտելոյ (Fb միրգս տանել փխ կամակս ուտելոյ):

6. Когда друг твой болен, то не откладывай посещения до тех пор, пока достанешь яблоко или грушу; больной, видя тебя, обрадуется, а это лучше на него подействует, нежели принесенные тобою яблоки и груши, из-за которых пришлось-бы тебе, пожалуй, отложить свидание.

. . . . . .

. . . . . .

13. Որդեակ լաւ է աղջիկ որ ծնանի և շուտ մեռանի, քան թէ ապրի և ազգին իւրոյ սևերեսանք բերէ (Fb լինի նախատինք)[58]:

13. Лучше ребенку умереть во младенчестве, чем жить, служа позором своего рода[59].

Իսկապես «անսուտ պահպանվածություն»: Միայն տպագիրը և նույն բնույթը կրող ձեռագրերի խումբը ունեն խրատների նման հերթակարգ: Ժողովրդական զրույցի և գրավոր աղբյուրի մեջ այդպիսի համաձայնություն կարող է լինել բացառապես ուղղակի առընչության դեպքում: Եթե ճիշտ է, որ Բունիաթյանը գրի է առել էջմիածնեցի մի ծեր կնոջից, ապա կինն է տպագրի անմիջական փոխանցողը:

Զրույցը ժողովրդի մեջ երկարատև բանավոր ուղի չի անցել, ուստի իբրև ժողովրդական անգիր պատում ևս իրենից չի ներկայացնում որևէ հետաքրքրություն[60]:

Երրորդը Կոնիբերի հրատարակությունն է: Այն անվանում ենք ձեռագրական, որովհետև հենվում է ուղղակի ձեռագիր աղբյուրների վրա: Բնագիրը կազմելիս Կոնիբերը նկատի է ունեցել ութ ձեռագիր, որոնց առանձին ընթերցումներն իջեցրել է տողատակ:

Այս հրատարակության մասին Nau-ն գրում է. «Միակն է, որ ունի բավարար քննական ապարատ և նոր հրատարակություն չի պահանջում»[61]:

---

[58] «Պատմութիւն Պղնձէ քաղաքին»... Տփխո, 1857, էջ 80—81:

[59] «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XIX, *էջ 207—208:*

[60] *Զրույցի մեջ տպագրից կան և որոշ շեղումներ, բայց այդ բոլորը դուրս չեն գալիս նյութի սահմաններից, այլ հետևանք են բնագրի համառոտման: Զրույցը պատմվում է երրորդ դեմքով, որը նույնպես իր հետ որոշ փոփոխություն է բերում: Մի տեղ միայն փոքր շափով հեռանում է իր աղբյուրից: Խիկարը եգիպտոս է գնում կնոջ հետ («Хикар взял свою жену, двух мальчиков и орла и пошел к египетскому царю»), որտեղ ինքն է թոցնում արծիվ (և ոչ արծիվներ): Այդ փոփոխությունը տրամաբանական հետևություն է այն բանի, որ մինչև եգիպտոս գնալը նա է սովորեցնում երեխաներին և կառավարում արծվի թռիչքը: Դժվար չէր նույն դերի համար նրան տանել եգիպտոս:*

Զրույցի մեջ չկա մի շեղում, որը անհնար լինի արտածել տպագիր աղբյուրից, կամ որը դիտվեր իբրև ժողովրդական հավելում:

[61] „Histoire et sagesse ...", *էջ 92—93:*

Բայց դա ճիշտ չէ։

Կոնիբերի բնագիրը Տաշյանին առիթ տվեց գրելու զրույցի մասին մի հետաքրքիր աշխատանք, որին նա առաջ մատադիր էր, բայց չէր ձեռնարկում, լավագույն և նախընտրելի բնագիր չունենալու պատճառով։ Նա իր ուսումնասիրության մեջ բանասիրական բազմաթիվ հարցեր է շոշափում. զրույցի, Եղովպոսի և Տովբիտի գրքի աղբյուրները, հայկական խմբագրության բնույթը, նրա թարգմանական աղբյուրները, ժամանակի խնդիրը և այլն, բայց որովհետև Կոնիբերի բնագիրը ևս, չնայած իր առավելությանը, բավական աղավաղ է և նորաբանություններով լեցուն, Տաշյանին շատ հիմքեր չի տալիս հաստատուն եզրակացությունների համար։

«Ներկա հայ բնագիրը,—գրում է նա,—խճողված է ոամկաբանություններով, որոնք չեն միաբանիր թարգմանության առհասարակ ընտիր և հին գրական լեզվին հետ... Բնագիրն առհասարակ լի է ծայրեծայր աղավաղություններով, սխալ ընթերցումներով և այլն»[62]։

«Այս կետը զմեզ կստիպե ընդհատել մեր ուսումնասիրությունքն ալ,—կարդում ենք մի ուրիշ պարբերության մեջ,—մինչև հնագույն և ընտրելագույն բնագրի մը հայտնվիլն։ Առանց ասոր շատ մը խընդիրներ, որ լուծման կսպասեն, չեն կրնար նաև ձեռնարկվիլ, առանց ապարդյուն աշխատության և ո՛չ հանված եզրակացություններ հաստատուն հիմ կրնան ունենալ»[63]։

Տաշյանը մտադիր էր ներկայացնել հայկական և մյուս խմբագրությունների համեմատական մի հրատարակություն, որը շատ օգտակար աշխատանք կլիներ։ Բայց նա հրաժարվում է այդ մտքից ևս։

«Բնագրին այս վիճակն և այն պարագան, որ մեր մատենագրանը չունինք օրինակ մը Խիկարա, ստիպեց զմեզ հետ կենալու մեր դիտավորությենեն, զոր ունեինք հրատարակել հայ բնագիրն համեմատությամբ մյուս բնագիրներուն, վասնզի ստիպված էինք բնագիրը ծայրեծայր սրբագրել, որ քիչ շատ միշտ կամայական կմնա, քանի որ վստահելի աղբյուր մը կպակսի։ Եվ այսպես կսպասենք ընտրելագույն օրինակի մը»[64]։

[62] Հ. Տաշյան, *Մատենագիտական մանր ուսումնասիրություններ, մասն երկրորդ, է—ժ, Վիեննա, 1901, էջ 140—141։*

[63] *Տե՛ս նույնը, էջ 136։*

[64] *Տե՛ս նույնը, էջ 143։*

«Հայ բանասիրաց առաջին գործքն ըլլալու է այսպիսի բնագիր մը գտնել»[65],—եզրակացնում է Տաշյանը։

* * *

Խիկարի զրույցը հայ մատենագրության մեջ հնագույն կամ առաջին թարգմանությունից հետո դարերի իր երթի մեջ մթագնել է հարազատ նկարագիրը։

Եթե Սիրաքի և Սողոմոնի խրատները գրչություններով անցել են անփոփոխ, որովհետև ընդօրինակվել են Աստվածաշնչից և Սուրբ գրքի հեղինակությունը թույլ չի տվել բնագրի հետ ազատ վարվելու, ապա Խիկարի համար այդպիսի սահմանափակում չկա[66]։ Ընդօրինակող գրիչները կատարել են բազմաթիվ հավելագրումներ և նորմուծություններ։ Ահա թե ինչու անօգուտ է որոնել մի բնագիր, որը հարազատորեն պահպաներ հայ սկզբնագրի թարգմանական օրինակը, եթե այն չի գալիս բուն թարգմանության շրջանից, ամենակարճ փոխանցումով։ Սակայն հայ մատենագրության մեջ Խիկարի մուտքը խորհրդավոր հնություն ունի, իսկ մեզ հասած հնագույն բնագիրը XIV դարից է գալիս։

Մնում է հետագա շրջանի բազմաթիվ ձեռագրերի համեմատությամբ փորձ անել վերականգնելու հայ նախնականը։ Դա բարդ է, բայց հնարավոր։

Մատենադարանում և այլ ձեռագրատներում կան Խիկարի հարյուրից ավելի օրինակ։

Սակայն որևէ ձեռագիր հիմք ընդունելով մյուս ձեռագրերի համեմատությունը և քննական բնագրի ստեղծումը այս պայմաններում անկարելի է, որովհետև ձեռագրական միավորները չեն ծածկում իրար։ Նրանք կազմում են վեց առանձին խումբ, ինչպես և պետք է ներկայացնել։

Ահա մեր օգտագործած բնագրերն ըստ խմբերի։

[65] *Տե՛ս նույնը, էջ 140։*

[66] *Սուրբ գրքի մասին մեր խոսքը պայմանական է, քանի որ, այնուամենայնիվ, Սիրաքի և Սողոմոնի խրատները նույնպես փոփոխություններ են կրել։ IX դարի հեղինակ Համամ Արևելցու Սողոմոնի առակաց մեկնության մեջ բերված բառացի քաղվածքները Աստվածաշնչի հրատարակությունների հետ բավական ուժեղ տարբերություններ են տալիս։ (Տե՛ս Կ. Կոստանյանց, Համամ Արևելցի, Վաղարշապատ, 1896, էջ 22)։*

A

A_1 **Խրատք Խիկարայ իմաստնոյ, զոր պարտ է զի ամենայն ճարք այսպէս խրատէն զորդիս և վարդապետք զաշակերտեալսն**

Բնագիրը պարունակում է միայն խրատականները։ Առաջին և երկրորդ (առակավոր) խրատների մեջ կապ ստեղծելու համար պատմողական մասի փոխարեն կարմիր թանաքով գրված է. Արդ որ լսէ զխրատս և առնէ, սիրելի առնէ զանձն աստուծոյ և մարդկան և երանեմ կենաց նոցա։ Եւ որ լսէ և ոչ առնէ մանաւանդ թէ հակառակ ևս լինի և փոխանակ բարոյ չար ևս խորհի, եթէ որդի է, թէ եղբայր, թէ աշկերտ, թէ սիրելի կամ օտար, նա զառաջիկա գրեալդ բնդունի և թէ ոչ՝ յազար եղուկ է նոցա *(էջ 50բ)։*

Սա մեզ հասած Խիկարի գրույցի ամենահին օրինակն է։

Ձեռագիրը պարունակում է նաև Սիրաքի խրատները։

Ձեռագիր № 2961, ժողովածու, գրիչ՝ Մխիթար Անեցի, 1321 թ., էջ 48բ—60բ։

A_2 **Պատմութիւն և խօսք Խիկարայ իմաստասիրի, զոր պարտ է իմանալ և ի միտ առնուլ ամենայն մարդոյ, վասն շահի և օգտութեան**

Ամբողջական է։

Ձեռագիր № 1495, ժողովածու, գրիչ՝ Եփրեմ վարդապետ, 1674—1684 թ., էջ 13ա—17բ։

A_3 **Խաւսք և խրատք և իմաստութիւն Խիկարայ իմաստասիրի**

Մուտքը համառոտված է, չունի այն բաժինը, ուր թագավորն իր մտահոգությունն է արտահայտում։ Առաջին խրատներին հաջորդում է խիստ համառոտված պատմություն. Զայս ամենայն ուսուցանէի Նաթանայ քեռորդոյ իմոյ ես՝ Խիկար դպիր այսպէս կարծելով, թէ զուսումս զայս, զոր ուսուցի Նաթանայ պահեսցէ ի սրտի և կացցէ ի դրան արքունի։ Ոչ գիտացի թէ զբանս իմ անտես առնէ։ Եւ նա հոսեաց որպէս փոշի ընդ հողմոյ։

Զայս եղեալ ի մտի թէ հայրն իմ Խիկար ծերացեալ է և հասեալ է յափն գերեզմանին, զառածել են միտք իւր և դողացեալ ամենայն մարմինն։

Եւ սկսաւ Նաթան վատնել զինչս իմ և կորուսանել։ Ոչ խնայէր ի ծառայս և յաղախնեայս իմ և կապել չարչարէր զնոսա։ Ի հարուածս սաստիկս կոտորեալ սատակէր զերիվարս իմ, զձիս և զջորիս։

Յայնժամ ես՝ Խիկար, յորժամ տեսի զայս ամենայն թէ Նաթան զգործս իմ այլայլեաց, խնայեցի զինչս իմ, զի մի կորայց։

Եւ սկսա խաւսել Նաթանա և ասեմ. Ինչս իմ մի մերձենար։ Աստացեալ է իմաստնոց. Զեռք որ ոչ են վաստակել, ակն մի խնայեսցէ։

Եւ երթեալ պատմեցի ի Սենեքարիմայ արքայի։ Եւ հրամայեաց Նաթանա և ասէ. Որչափ հայր քո Խիկար կենդանի է, ինչս նորա մի մերձենար։

Եւ նա ոխացեալ մահու սպասեր ինձ։

Եւ իմ գիտացեր զչարիս նորա՝ զեկեցի արքայի, և նա ետ զնաթան ի ձեռս իմ, եթէ արա որպէս և կամիս։

Խաւսել սկսա և ասեմ։

Հաջորդում են առակավոր խրատները, և, բավական անսպասելի, ընդմիջարկվում նորից պատմությամբ, որը համեմատելի է E *խմբի հետ։*

Ձեռագրին ծանոթ է եղել Գալուստ Տեր-Մկրտչյանը, որը 1893 թվականին հղել է Մառին օգտվելու համար, առակաց գրքի վրա աշխատելիս։

Ձեռագիր № 3119, ժողովածու, Կաֆա, գրիչ՝ Դավիթ Ղրիմեցի, 1694 թ., էջ 179ա—191ա։

A_4 **Խրատք իմաստնոյն Խիկարէ**

Բնագիրը մուտք չունի, սկսվում է խրատներից։ Պատմությունը համառոտված է և համընկնում է A_2*-ին։*

Ունի չափածո հիշատակագրություն.

Եթէ բանիս լինիս խնդիր,
Ոչ առնուս ի թիկունքդ բիր.
Աստէնս լինիս դու բարձր և ընտիր,
Անդէնն պարգեւ առնուս դու զամէնն ձիր։

Զանայ հմուտ լինել ուսման,
Որ քան զոսկին է պատուական.
Ով որ ցանկայ իմաստութեան,
Արժան լինի շատ բարութեան։

Վարդ անբառամ է գիտութիւն.
Ով փափաքէ յիմաստութիւն,
Այլ որ չունի հնազանդութիւն,
Նորա անշահ է գիտութիւն։

Շարունակվում են խրատներ, որոնք հավելված են գրչի կողմից և Խիկարի հետ ոչ մի կապ չունեն։ Սկիզբ՝ Լաւ է յիստակ խորհրդով

ենջել հաճ պղտոր խորհրդով աղաւթս մատուցանել և վարձս ոչ առնել *(210ա)*։ Վերջ՝ Վասն մեղաց հաւրն զորդին մի տանջեր.—ասաց տէր ցմովսէս։ եւ թէ հանդիպիս եզին կամ իշոյ մոլորելոյ դարձոյ առ տէրն իւր *(211ա)*։

Ձեռագիր № 2147, ժողովածու, գրիչ՝ Մինաս, 1627 թ., էջ 194ա—209բ։

A5 **Պատմութիւն Խիկարայ իմաստասիրի**

Պատմութեան մասը համընկնում է A3*-ին։*

Ամբողջական է։

Ձեռագիր № 2004, ժողովածու, գրիչ՝ Մկրտիչ Սարկավագ, 1623 թ., 60ա—75բ։

A6 **Անխորագիր**

Միայն մի քանի էջ հատված է, բայց ներկայացնում է խիկարի բնագրի հնագոյն օրինակը։ Այն հեշտութեամբ կարելի է համարել XI դարի ընդօրինակութիւն, սակայն անվերապահ ճշգրիտ լինելու համար ընդունում ենք XII դարը։

Նկատելի է, որ պատկանում է A *խմբին։ Հրատարակում ենք լուսապատկերով։*

Ձեռագիր № 5465, Բանք Սողոմոնի, XII դար, էջ 101ա—103բ։

Այս խմբին է հարում և մի այլ բնագիր. Խրատ Խիկարայ, զոր յուսաւ Նադան (Ձեռագիր № 2264, էջ 173ա—180)։ Բնագիրն ունի միայն առաջին խրատները։ Սկզբում ինչ որ չափով զուգահեռ է դնում C *խմբին։*

Խրատները խառն են, բարբառայնացված և տալիս են անկարեւոր ընթերցումներ։ Համեմատել ենք, բայց ընթերցումները նկատի չենք առել։

B

B1 **Պատմութիւն և խօսք Խիկարայ իմաստասիրի, զոր պարտ է իմանալ և ի միտ առնուլ ամենայն մարդոյ, վասն շահի և ազտութեան**

Ամբողջական է։

Ձեռագիր № 45, ժողովածու, Լիմ, գրիչ՝ Սարգիս եղեսացի, 1642 թ., էջ 297բ—312ա։

B2 **Պատմութիւն և խրատք Խիկարայ իմաստասիրի, զոր պարտ է իմանալ և ի միտ առնուլ ամենայն մարդոյ, վասն շահի և ազտութեան**

Պատմութիւնը և առակավոր խրատները բացակայում են։ Հապավվել է բնագիրը։

Ձեռագիր № 1865, ժողովածու, Երուսաղեմ, գրիչ՝ Թորոս եպիսկոպոս, 1656 թ., էջ 93բ—99ա։

B3 **Պատմութիւն և խօսք Խիկարայ իմաստասիրի, զոր պարտ է իմանալ ամենայն մարդիք և ի միտ առնուլ, վասն շահի և օգտութեան, խիստ լաւ և պիտանի խրատ**

Ամբողջական է։

Ձեռագիր № 679, ժողովածու, գրիչ՝ Գրիգոր Երևանցի և այլք, 1660 թ., էջ 174ա—208բ։

B4 **Պատմութիւն և խօսք Խիկարայ իմաստասիրի, զոր պարտ է իմանալ ի միտ առնուլ ամենայն մարդոյ, վասն շահի և օգտութեան**

Ամբողջական է։

Ձեռագիր № 3526, ժողովածու, գրիչ՝ Մխքարիչ, 1660 թ., էջ 202ա—223բ։

B5 **Պատմութիւն և խօսք Խիկարայ իմաստասիրի, զոր պարտ է իմանալ ամենայն մարդոյ վասն շահի և օգտութեան**

Ամբողջական է։

Ձեռագիր № 3413, ժողովածու, գրիչ՝ Հակոբ Թոխաթեցի, 1709—1710 թ., էջ 13ա—45բ։

B6 **Պատմութիւն և խրատ իմաստասիրին Խիկարայ, պարտ է ամենեցուն ի միտ առնուլ, պարտ է և արժան ուշիմ ի միտ դնել**

Ամբողջական է։

Կցված է մի փոքրիկ հիշատակագրություն. Գրեցաւ բանիս խրատական իմաստասիրին Խիկարայ ի թվականիս հայոց ՌՃԼԶ-ին, փետրվարի է, օր երկուշաբթի, որ էր բակլայ խոռան, ընդ հովանեաւ սրբոյն Գէորգայ զօրավարին, ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլսի աւուրս սորին

Ձեռագիր № 2448, ժողովածու, Պոլիս, գրիչ՝ Վարդան Գրուզեցի, 1687 թ., էջ 193բ—227ւ։

B7 **Պատմութիւն Խիկարայ դպրապետի և իմաստասիրի, զոր պարտ է ուսումնասիրաց ի միտ առնուլ, վասն շահի և օգտութեան ամենայն մարդոյ**

Ամբողջական է:

Ձեռագիր № 4290, ժողովածու, գրիչ՝ Մկրտում Ագուլեցի, 1571 թ., էջ 26ա—59բ:

B8 **Պատմութիւն և խօսք Խիկարայ իմաստասիրի, զոր պարտ է իմանալ և ի միտ առնուլ մարդոյ, վասն շահի և օգտութեան**

Ամբողջական է:

Ձեռագիր № 8076, ժողովածու, գրիչ՝ Թովմա վարդապետ, XVII դար, էջ 98ա—112ա:

B9 **Խրատք պիտանի և օգտակար Խիկարայ իմաստասիրի ասացեալ**

Ամբողջական է:

[illegible], գրիչ՝ Աստվածա- [illegible] դար, էջ 317ա—322ա:

B10 **Խօսք և խրատք Խիկարայ, զոր ասաց Նաթանայ քուեր որդոյ իւրոյ**

Ունի միայն խրատականքը:

Ձեռագիր № 6643, ժողովածու, գրիչ՝ Ղուկաս, XVII դար, էջ 171բ—181ա:

B11 **Յարմարեալ պատմութիւն իմաստնոյն Խիկարայ, արարեալ խրատ վասն Նաթանայ քուեր որդոյ իւրոյ և ամենայն լսողաց և ի միտ պահողաց, զի դուռ է իմաստութեան և շահ է ամենայնի, լաւ ի միտ առնուլ**

Բնագիրը պակասավոր է, վերջից թերթեր են ընկած, բայց համարակալումից չի զգացվում: Ավարտվում է այս խրատով՝ Որդեակ, կերա դառնին և արբի լեղի և չէր դառն քան զաղքատութիւն:

Ձեռագիր № 7032, ժողովածու, գրիչ՝ Ղազար, XVII դար, էջ 107բ—112բ:

B12 **Անխորագիր**

Թուղթ է պակասում 12—13, 22—23, 25—26, 26—27 թերթերի մեջ: Համարակալումը նոր է:

Ձեռագիր № 6961, ժողովածու, XVII դար, էջ 1ա—30ա:

B13 **Խրատք և խօսք Խիկարայ իմաստասիրի զոր պարտ է իմանալ և ի միտ առնուլ ամենայն մարդկան, վասն շահի և օգտութեան**

Պատմությունը չունի, աղված է գրչի կողմից, վերջից մի քանի տող թերի է, վերջանում է. Ասէ տէր ծառոյն, դու ի քո ժամանակդ.... *Նախադասությամբ:*

Ձեռագիր № 3687, XVII դար, էջ 1ա—16բ[67]*:*

B14 **Պատմութիւն և խօսք Խիկարայ իմաստասիրի, զոր պարտ է ի միտ առնուլ և իմանալ ամենայն մարդոյ, վասն շահի և օգտութեան**

82բ և 83ա էջերի մեջ թերթեր են պակասում և ոչ քիչ: Այդ պատճառով աղվել են 20-ից 173 խրատները:

Ձեռագիր № 697, ժողովածու, Սուչավա, գրիչ՝ Վարդան Աբեղա, 1631 թ., էջ 78ա—102ա:

B15 **Պատմութիւն և խօսք Խիկարայ իմաստասիրի, զոր պարտ է իմանալ և ի միտ առնուլ ամենայն մարդոյ, վասն շահի և օգտութեան**

Ամբողջական է:

Ձեռագիր № 723, ժողովածու, Երուսաղեմ, գրիչ՝ Հովասափ վարդապետ, 1734 թ., էջ 205ա—241ա:

B16 **Անխորագիր**

Բնագիրն սկզբից շատ է պակասավոր ձեռագրից թուղթ ընկած լինելու պատճառով: Սկսվում է պատմությունից՝ և ասէ հայր իմ խիկար յոյժ պատուական և հանոյ թուեցար: *Թերթ 8—9-ի մեջ նույնպես թղթեր են ընկած: Աղվել են պատմությունից մի փոքր հատված և առակավոր խրատներից մի քանիսը: Առակավոր խրատներն սկըսվում են՝* է կանգուն, զտեղի ձիուն ոչ կարէ լնուլ:

Ձեռագիր № 8387, ժողովածու, XVII դար, էջ 1ա—10բ:

---

[67] Սա 3454 ձեռագրի մի մասն է, որ առանձնացվել և կազմվել է իբրև ձեռագրական նոր միավոր 3687 համարի տակ: Մատենադարանի ձեռագրացուցակում նրանց չափսերը տարբեր են ներկայացված (3454՝ 15,5×10,9, 3687՝ 16×10), որով ազգակցության հետքերը ջնջվել են:

В7 **Պատմութիւն Խիկարայ դպրապետի և իմաստասիրի, զոր պարտ է ուսումնասիրաց ի միտ առնուլ, վասն շահի և աւգտութեան ամենայն մարդոյ**

Ամբողջական է։

Ձեռագիր № 4290, ժողովածու, գրիչ՝ Մկրտում Ագուլեցի, 1571 թ., էջ 26ա—59բ։

В8 **Պատմութիւն և խօսք Խիկարայ իմաստասիրի, զոր պարտ է իմանալ և ի միտ առնուլ մարդոյ, վասն շահի և օգտութեան**

Ամբողջական է։

Ձեռագիր № 8076, ժողովածու, գրիչ՝ Թովմա վարդապետ, XVII դար, էջ 98ա—112ա։

В9 **Խրատք պիտանի և օգտակար Խիկարայ իմաստասիրի ասացեալ**

Ամբողջական է։

Ձեռագիր № 2732, Աստվածաշունչ, գրիչ՝ Աստվածատուր երեց, XVII դար, էջ 317ա—322ա։

В10 **Խօսք և խրատք Խիկարայ, զոր ասաց Նաթանայ քուեր որդոյ իւրոյ**

Ունի միայն խրատականքը։

Ձեռագիր № 6643, ժողովածու, գրիչ՝ Ղուկաս, XVII դար, էջ 171բ—181ա։

В11 **Յարմարեալ պատմութիւն իմաստնոյն Խիկարայ, արարեալ խրատ վասն Նաթանայ քուեր որդոյ իւրոյ և ամենայն լսողաց և ի միտ պահողաց, զի դուռ է իմաստութեան և շահ է ամենայնի, լաւ ի միտ առնուլ**

Բնագիրը պակասավոր է, վերջից թերթեր են ընկած, բայց համարակալումից չի զգացվում։ Ավարտվում է այս խրատով՝ Որդեակ, կերա դառնին և արբի լեղի և չէր դառն ման զաղմատութիւն։

Ձեռագիր № 7032, ժողովածու, գրիչ՝ Ղազար, XVII դար, էջ 107բ—112բ։

В12 **Անխորագիր**

Թուղթ է պակասում 12—13, 22—23, 25—26, 26—27 թերթերի մեջ։ Համարակալումը նոր է։

Ձեռագիր № 6961, ժողովածու, XVII դար, էջ 1ա—30ա։

В13 **Խրատք և խօսք Խիկարայ իմաստասիրի զոր պարտ է իմանալ և ի միտ առնուլ ամենայն մարդկան, վասն շահի և օգտութեան**

Պատմությունը չունի, սղված է գրչի կողմից, վերջից մի քանի տող թերի է, վերջանում է. Ասէ տէր ծառոյն, դու ի fn ժամանակդ.... Նախադասությամբ։

Ձեռագիր № 3687, XVII դար, էջ 1ա—16բ[67]։

В14 **Պատմութիւն և խօսք Խիկարայ իմաստասիրի, զոր պարտ է ի միտ առնուլ և իմանալ ամենայն մարդոյ, վասն շահի և օգտութեան**

82բ և 83ա էջերի մեջ թերթեր են պակասում և ոչ քիչ։ Այդ պատճառով սղվել են 20-ից 173 խրատները։

Ձեռագիր № 697, ժողովածու, Սուչավա, գրիչ՝ Վարդան Աբեղա, 1631 թ., էջ 78ա—102ա։

В15 **Պատմութիւն և խօսք Խիկարայ իմաստասիրի, զոր պարտ է իմանալ և ի միտ առնուլ ամենայն մարդոյ, վասն շահի և օգտութեան**

Ամբողջական է։

Ձեռագիր № 723, ժողովածու, Երուսաղեմ, գրիչ՝ Հովասափ վարդապետ, 1734 թ., էջ 205ա—241ա։

В16 **Անխորագիր**

Բնագիրն սկզբից շատ է պակասավոր ձեռագրից թուղթ ընկած լինելու պատճառով։ Սկսվում է պատմությունից՝ և ասէ ճայր իմ Խիկար յոյժ պատուական և հաճոյ թուեցար։ Թերթ 8—9-ի մեջ նույնպես թղթեր են ընկած։ Սղվել են պատմությունից մի փոքր հատված և առակավոր խրատներից մի քանիսը։ Առակավոր խրատներն սկրսվում են՝ է կանգուն, գտեղի ձիուն ոչ կարէ լնուլ։

Ձեռագիր № 8387, ժողովածու, XVII դար, էջ 1ա—10բ։

---

[67] *Սա 3454 ձեռագրի մի մասն է, որ առանձնացվել և կազմվել է իբրև ձեռագրական նոր միավոր 3687 համարի տակ։ Մատենադարանի ձեռագրացուցակում Նրանց չափսերը տարբեր են ներկայացված (3454՝ 15,5×10,9, 3687՝ 16×10), որով ազգակցության հետքերը ջնջվել են։*

B_{17} **Պատմութիւն և խօսք Խիկարայ իմաստասիրի, զոր պարտ է իմանալ և ի միտ առնուլ ամենայն մարդոյ, վասն շահի և օգտութեան**

Ամբողջական է։

Ձեռագիր № 8443, ժողովածու, Նոր Ջուղա, գրիչ՝ Կոստանդին դպրապետ Ջուղայեցի, 1687 թ., էջ 1ա—23ա։

B_{18} **Խրատ Խիկարայ, զոր ասաց քեռորդոյն իւրոյ Նատանայ, որ է այսպէս**

Ունի միայն խրատականքը։

Ձեռագիր № 2116, ժողովածու, Թավրիզ, գրիչ՝ Եսայի, 1637 թ., էջ 167ա—176բ։

B_{19} **Անխորագիր**

Պատմությունը 115 էջում ընդհատվում է շատ տարօրինակ ձևով՝ Եւ ասէ փարաւոն. Մանեայ ինձ պարան յաւազէ: Եւ ես երբեալ ծակեցի զորմն պատի ի դէմ արեգականն առեալ յաւազ և փոշի չփէի զքո զէշ երեսրդ ադաեղի: Որդեակ եղեր ինձ որպէս որոգայթ, որ բադեալ.... *խրատը ընդհատվում է, որտեղ և ընդմիջարկված է մի վիճակահանության աղյուսակ իր բացատրագրով, ապա՝ 113ա էջից նորից շարունակվում է խրատը և վերջանում նույն տեղում։*

Ձեռագիր № 2492, ժողովածու, 1661 թ., էջ 95ա—109ա։

B_{20} **Անխորագիր**

Թերթասավոր է։ Սկիզբ՝ ...զօակ, բայց թէ զնարան քուեր որդին քո առցես, *վերջ՝* ...թէ ինչ տարայց նմա, այլ երթ և տես, զի զնայն քո յօ է նմա, քան զոսկի և զարծաթ:

Ձեռագիր № 3206, ժողովածու, XVI դար, էջ 11ա—13բ։

B_{21} **Անխորագիր**

Սկզբից թուղթ է ընկած։ Սկիզբ՝ ...(իմ)աստութեամբ: Եւ ասէ արքայն. Ած զնա առ իս զի տեսից, թէ կարող իցէ:

Ձեռագիր № 5935, ժողովածու, XVII դար, էջ 1ա—26բ։

B_{22} **Անխորագիր**

Սկզբից թուղթ է ընկած։ Սկիզբ՝ ....ասացին թէ դեղ է նմայ, աղքատի որդին կերաւ, ասացին թէ քաղցեալ է *(համընկնում է B_1-ի 10-րդ խրատին)։*

Ամբողջ բնագիրն ընդմիջարկված է, ներկայացնում է ձեռագրից տարբեր ընդօրինակություն։

Ձեռագիր № 6110, ժողովածու, XV դար, էջ 21ա—42բ։

B_{23} **Պատմութիւն և խօսք Խիկարայ իմաստասիրի, զոր պարտ է իմանալ և ի միտ առնուլ ամենայն մարդոյ, վասն շահի և օգտութեան:**

Ամբողջական է։

Ձեռագիր № 8482, ժողովածու, 1664 թ., էջ 111ա—148բ։

B_{24} **Պատմութիւն և խօսք Խիկարայ իմաստասիրի, զոր պարտ է իմանալ և ի միտ առնուլ ամենայն մարդոյ, վասն շահի և օգտութեան**

Թերթասավոր է։ Գրիչն ուղղակի չի շարունակել։ Վերջ՝ Որդեակ, զգաղտնիս քո մի յայտներ զկնոջ քո, քանզի ոչ կարէ պահել բան ի սրտի իւրում, զի կարճամիտ է և փոքրոգի և ոչ կարէ համբերել: *(Համընկնում է B_1-ի 61-րդ խրատին)։ Բնագրի 114բ էջում այլ նյութ է (ժամանակագրության հատված)։ Էջի վերևում գրիչը այսպիսի նշում է թողել՝* Այս երեսս գրուած էր յառաջմանէ, կիսակատար մնաց, այն կողմն գրեցաք:

Ձեռագիր № 519, ժողովածու, XVII դար, էջ 112բ—115ա։

B_{21-24} *օրինակները համեմատված են խմբի հետ, բայց ընթերցումները հարկ չենք համարել արտահայտելու տողատակերում, որովհետև բնագրերը մեզ հայտնի են դարձել ավելի ուշ և չեն տալիս ոչ մի կարևոր ընթերցում։*

C

C1 **Այս է իմաստութիւնք Խիկարայ դպրապետի և Սենեքարիմա արքային ասորոց և քերորդւոյն իմոյ Ադաձա և սպանումն Խիկարայ և Փարաւոնի արքային եգիպտացւոց և պատասխանիք Խիկարայ: Ով զայս գիրս կարդայ և ի միտ առնու ամք կենացացեր յաւելուն և ի մեծ հասանին:**

Խրատք Խիկարայ, զոր ասաց և ուսոյց զՆաթան

Ամբողջական է:

Ձեռագիր № 1978, ժողովածու, Իլով, 1606 թ., էջ 23բ—33ա:

C2 **Խաւսք և իմաստութիւն ասացեալ Խիկարի իմաստնասիրի, զոր խրատեն որդիք մարդկան և ի միտ առնուն**

Բնագիրն ընդօրինակված է Աստվածաշնչի վերջում, միևնույն գրչի կողմից: Ունի հիշատակագրություն՝ Մինչև ցայս կատարեցաւ Խիկարս: Կրեցաւ և խրատս և պատմութիւնս Խիկարայ իմաստութիւն ի թվին հայոց ՋՃԿէ, յուլիս ամսոյն ի ԺԲ: Ճ տառը ջնջված է *(=1518), բայց ոչ թե այս ձեռագրի ընդօրինակության տարին է, այլ նախագաղափար օրինակի: Բուն հիշատակագրությունը թելադրում է 1641 թիվ.* Արդ, եղև սկիզբն գրոյս և աւարտումն ի Կոստանդինուպոլիս, ձեռամբ Աստուածատուր դպրի ի թուականութեանս հայոց ՌՂ ամի *(=1641):*

Ձեռագիր № 2669, Աստվածաշունչ, 1641 թ., էջ 656բ—661ա:

C3 **Պատմութիւն և խրատ Խիկարայ իմաստնոյ**

Ամբողջական է:

Ունի փոքրիկ հիշատակագրություն ...եւ կոռեաւ չարն և բարձաւ ի միջոյ շնորհօքն աստուծոյ, նոյնպէս և ամենայն չարախօսք պատուհն ի դիմաց ծառայիս աստուծոյ պարոն Մելիք Հախնազարին, գինքն անձնեարարի գՔրիստոս, որ պահէ անփորձ ի թշնամեաց ամէն, եղիցի, եղիցի:

Ձեռագիր № 713, Շատախ գյուղ, գրիչ՝ Հովհաննես Երեց, 1636 թ., էջ 94ա—112ա:

C4 **Խրատք և իմաստութիւն Խիկարայ, զոր ուսանին որդիք մարդկան**

Համեմատական բնագիր, որ հրատարակել է Կոնիբերը, հետևյալ ձեռագրերի հիման վրա.

1. Arm1=Bod. *Բոդլեյան գրադարանի հայկական մի ձեռագիր, որը չի նկարագրված և համարակալված: Առաջին էջը չունի:*

2. Arm2=Ven. *Վենետիկի Մխիթարյան մատենադարանի № 482 ձեռագիրը, XV—XVI դարերի գրչություն:*

3. Apm3=Paris 92. *Փարիզի Ազգային գրադարանի հայկական ֆոնդի № 92 ձեռագիրը: Այս բնագիրը ինչ-որ ազգակցություն ունի մեր Մատենադարանի № 2669 (C2) բնագրի հետ: Վերարտագրված է միևնույն հիշատակագրությունը.* Կրեցաւ խիկաս և խրատ և պատմութիւնս խիկարայ իմաստութիւն ի թվ ՋՃԿէ յուլիս ամսոյ ԺԲ: *Կոնիբերը ոչինչ չի ասում տարեթվի մասին, արդյոք այստեղ նույնպես Ճ-ն գծով ջնջված է, թե՞ ոչ, ուստի չենք կարող ասել որ թվականն է ճիշտ՝ ՋՃԿէ=1618, թե ՋԿէ=1518: Թերևս Փարիզի ձեռագիրն այն նախագաղափարն է, որ ձեռքի տակ է ունեցել C2-ի գրիչը, կամ երկուսի համար էլ եղել է մի ընդհանուր աղբյուր: Այդ բնագրերը տարբերեցվածներով ևս իրար չափազանց մոտ են:*

4. Apm4=Paris supp 58. *Փարիզի ազգային գրադարանի հայկական ֆոնդի լրացուցիչ № 58 ձեռագիրը, XVII դար, բնագիրը լրիվ չի պահպանված:*

5. Apm5=Paris 131. *Փարիզի ազգային գրադարանի հայկական ֆոնդի № 131 ձեռագիրը, հավանաբար XVII դար, էջ 213—228:*

6. Apm6=Paris 69. *Փարիզի ազգային գրադարանի № 69 ձեռագիրը, XVII դար, մուտքը չունի, բնագիրն սկսվում է խրատներից:*

7. Arm7=Bod. Canon. *Բոդլեյան գրադարանի արևելյան № 131 ձեռագիրը, կանոնագիրք, գրված է Նոր Ջուղայում, գրիչը՝ Հազրապետ, 1637 թ., 1—36 էջ: Բնագրին հաջորդում են յոթ իմաստասիրաց և Բարեղամի ու Հովասափի պատմությունները:*

8. Apm8=Edjm 2048. *Էջմիածնի մատենադարանի № 2048 ձեռագիրը, այժմ նոր ցուցակով կրում է 2018 համարը: 1891 թվականին Կոնիբերը օգտվել է այս բնագրի միայն մուտքից և առաջին 18 խրատներից:*

Բնագիրը պատկանում է D խմբին և կնկարագրվի իր տեղում:

Կոնիբերին հայտնի են Էջմիածնի №№ 1633, 1995, 1986, 51 (նոր ցուցակով համապատասխանաբար №№ 1865, 1978, 2004, 45) ինչպես նաև՝ Բրիտանական թանգարանի մի ձեռագիր (XVIII դար) և Բեռլինի գրադարանի № 83 ձեռագիրը (1698 թիվ), բայց դրանցից նա չի օգտվել:

Նա նշում է նաև Խիկարի երեք հրատարակություն, 1708, 1731 և 1862 թվերի, որոնցից նույնպես չի օգտվել[68]։

C_5 **Խօսք և իմաստութիւն ասացեալ Խիկարի իմաստասիրի, զոր խրատեն որդիք մարդկան և ի միտ առնուն**

Ամբողջական է։

Բնագիրն ունի փոքրիկ հիշատակագրություն՝ Կատարեցաւ Խիկարս: Գրեցաւ և խրատքս և պատմութիւնս Խիկարայ իմաստասիրի ի թվին ՌՂ մարտի ամսոյ ԺԱ և Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն *(119ա)։*

Ձեռագիր № 6712, ժողովածու, 1641 թ., էջ 112բ—119ա։

D

D_1 **Պատմութիւն և խրատք իմաստնոյն Խիկարայ**

Ամբողջական է։

Կոնիբերին ծանոթ է եղել այս բնագիրը[69]*։*

Ձեռագիր № 2018, ժողովածու, Ստամբուլ, գրիչ՝ Սահակ, 1621 թ., էջ 265ա—286բ։

D_2 **Պատմութիւն և խրատք իմաստուն Խիկարայ**

43 և 44 թերթերի մեջ թուղթ է պակասում, որ ընդգրկում է 57-ից մինչև 107 խրատները։

Բնագիրը չափազանց նման է D_1-ին։ Կարելի է ենթադրել, որ D_1-ից է գաղափարված։ Երկու բնագրերի խրատականքը վերջանում է միակերպ հավելումով՝ Իսկ որ առնէ զխրատքս զայսոսիկ գովի յաստուծոյ և ի մարդկանէ և եղիցի փառաւոր և պատուական աստ և ի հանդերձելումն:

Ձեռագիր № 464, ժողովածու, գրիչ՝ Սուքիաս Ջուղայեցի, XVII դար, էջ 40ա—56ա։

D_3 **Պատմութիւն և խրատք իմաստնոյն Խիկարայ**

Ամբողջական է։

Շատ նման է $D_{1,2}$ բնագրին։ Խրատականքն ունի նույն հավելումը։

Ձեռագիր № 7993, ժողովածու, գրիչ՝ Ալեքսան, 1672 թ., էջ 273ա—287բ։

---

68 „The Story ...", *էջ* XXIV—XXVI։

69 *Կոնիբերը ենթադրում է, որ այն գրված է մոտավորապես 1600 թվականի շրջաններում* (about A. D. 1600)։

D_4 **Պատմութիւն և խրատ Խիկարայ իմաստնոյ**

Ամբողջական է։ D խմբի մյուս միավորների նկատմամբ ավելի շատ ընթերցումներ է տալիս։

Վրաստանի ձեռագրերի ինստիտուտի հայերեն ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 172, XVII դար, էջ 134ա—188ա։

D_5 **Բանք Խիկարայ խրատական վասն ուսման իմաստասիրաց**

Պատմությունը և առակավոր խրատները չունի, գրչի կողմից չի արտագրված։

Ձեռագիր № 8699, ժողովածու, 1671 թ., էջ 47բ—64բ։

D_6 **Խրատ իմաստնոյ Խիկարայ**

Մուտք չունի։ Վերջից թերի է, ձեռագրից թուղթ ընկած լինելու պատճառով։ Վերջ՝ Որդեակ, եղեր դու որպէս զօշիլ հացի, որ եկեր զշտէ.... *(ընդհատվում է)։ Համընկնում է D խմբի առակավոր 12-րդ խրատին։*

Պատմության մասը խիստ համառոտված է։ D-ի հետ զուգահեռ է գնում մինչև և ոխացաւ Նադան ընդ իս և մահու սպառնար անձին իմոյ *տողերը, այնուհետև՝* Եւ իմ զեկուցեալ արքային և ետ զնայ ի ձեռս իմ: Եւ տարեալ ի տուն իմ կապեցի շղթաիւք ի սիւն մի քարեա ի դրան սրահի իմոյ և եդի պահապան զմի ի ծառայից իմոց, զի ի մտանել և յելանելն իմ զոր ինչ ասիցեմ, գրիցէ: Եւ առեալ բիր հարկանէի ի կողս նորա: Եւ ասէ. Զի՞ ոխացար ի վերա իմ այսպէս, ով հայր իմ Խիկար: Եւ ես ասեմ ցնայ:

Բնագրի №№ 19, 27, 67, 84, 94, 105, 118, 147, 161 և 204-րդ խրատները խմբում զուգահեռ չունեն, բայց տեղադրել ենք, դիտելով որ աղբյուրին հարազատ են և ոչ՝ հետամուտ։

Ձեռագիր № 7974, ժողովածու, XVIII դար, էջ 17ա—22բ։

Այս խմբին է հարում և մի բնագիր (ձեռագիր № 9322, էջ 2 աբ)։ Սկզբից և վերջից թերի, ձեռագրից թուղթ ընկած լինելու պատճառով։ Պահպանվել են միայն մի քանի առակավոր խրատներ։ Սկիզբ՝ ...չար է որ վարէ զիս: Որդեակ, տեսի մահին որ ի սպանդանոցն ածին... *վերջ՝* Որդեակ, նմանեցար օձին, որ պատեցօ ի մասրենին և անկօ ի գետն և տեսեալ գայլուն և ասէ. Անայ չար ի չար են նեծեալ ... *(ընդհատվում է)։*

Խաղը դասավորություն ունի և հավանաբար սխալաշատ, որովհետև վերջին խրատը նույնն է սկզբի խրատի հետ, որից միայն հինգ բառ է մնացել։

Աննշան հատված է, և բնագիրը կազմելիս նկատի չենք առել։

E

E₁ **Խաւսք և խրատք Խիկարայ իմաստնոյ, զոր ետ քրոջ որդոյնն իւրոյ Նաթանայ**

Ամբողջական է։

Ձեռագիր № 3081, ժողովածու, գրիչ՝ Զաքարիա աբեղա Երզնկացի, 1617 թ., էջ 196ա—209բ։

E₂ **Խաւսք իմաստասիրացն, խրատք հարանց իմաստնով առաքող**

Մուտքը չունի, սկսվում է խրատներից։

Ձեռագիր № 527, ժողովածու, գրիչ՝ Տրդատ, 1663 թ., էջ 53բ—63ա։

E₃ **Խաւսք իմաստասիրացն, խրատք հարանց իմաստնով առաքող**

Մուտք չունի, սկսվում է խրատներից։

Բնագիրը բառացիորեն համապատասխանում է E₂-ին։ Անպատճառ արտագրված է նրանից։

Ձեռագիր № 613, ժողովածու, գրիչ՝ Զաքարիա քահանա, 1664 թ., էջ 44ա—52ա։

E₄ **Պատմութիւն և խօսք Խիկարայ և իմաստասիրի, զոր պարտ է ի միտ առնուլ և իմանալ ամենայն մարդոյ, վասն շահի և օգտութեան հոգւոյ և մարմնոյ**

Ամբողջական է։

Ձեռագիր № 1403, ժողովածու, XVII դար, էջ 239ա—246ա։

E₅ **Պատմութիւն և խօսք Խիկարայ իմաստասիրին, զոր պարտ է ի միտ առնուլ և իմանալ ամենայն մարդոյ վասն շահի և ուգտութեան հոգւոյ և մարմնոյ**

Ամբողջական է։ Ունի փոքրիկ հիշատակագրություն՝ Արդ. գրեցաւ Խիկարայ պատմութիւնս ձեռամբ Համբեցի Վազար վարդապետիս, որ է մականունամբ Շահին, ի դուռն սուրբ էջմիածնի, թվին ՌՃԽԵ։

Ձեռագիր № 5495, ժողովածու, էջմիածին, գրիչ՝ Վազար Համբեցի, 1696 թ., էջ 79ա—91ա։

E₆ **Խաւսք և խրատք Խիկարայ իմաստնոյ, զոր ետ քրոջ որդոյ իւրոյ**

Մուտք չունի, սկսվում է խրատներից, լիովին համապատասխանում է E₁-ին։

Բնագրին նախորդում է՝ խաւսք իմաստնայսիրական առ աւտարս և մերձաւորս թագաւորաց, զի յուսանիցն սովաւ և իմաստնասցին (L₁₁)։

Ձեռագիր № 6708, ժողովածու, 1635 թ., էջ 206ա—219ա։

Այս խմբի մեջ են մտնում նաև տպագրերը։ Համեմատության համար դիմում ենք երկու հրատարակություններին։

Fa **Գիրք պատմութեան, որ կոչի Պղնձէ քաղաք և բանք խրատականք և օգտակարք Խիկարայ իմաստնոյ և այլ բանք պիտանիք, տպագրեցեալ... ի թուին հայոց ՌՄԽՍ.=1792, յունվար Ը, ի տպարանի Յօհաննէսի և Պօղոսի։**

Fb **Պատմութիւն Պղնձէ քաղաքին, յորում են բանք խրատականք եւ օգտակարք Խիկարայ իմաստնոյ եւ այլ բանք պիտանիք, տպագրեալ ի Տփխիս, ի տպարանի Ներսիսեան դպրոցի հայոց ընծայեցեալոյ յազնուական Աղայ Գէորգայ Արծրունւոյ, 1857։**

Fab-ն լիովին արտահայտում է իրարից որոշ չափով հեռացող բոլոր տպագրերը։

Fab-ի մեջ մտնում են նաև XIX դարի վեց ձեռագիր, որոնք անպայման գաղափարված են Պղնձե քաղաքի *ժողովածուներից և ընդգրկում են տպագրի մյուս նյութերը ևս։*

1. Խրատ պիտանիք և օգտակարք, զոր ասացեալ է Խիկարայ իմաստնոյ (Fa)

Ամբողջական է։ Վերջում գրված է՝ Յիշատակարան տպողիս Ոսկերիչ Վարդան ամենաեռանեալս ոգի ողորմի աստուած յուրեան ողորմեացի, ամէն *(114ա)*։

Ձեռագիր № 8963, ժողովածու, XIX դար, էջ 45բ—70ա։

2. Խրատ պիտանիք և օգտակարք, զոր ասացեալ է Խիկարայ իմաստնոյ (Fa)

Ամբողջական է։

Ձեռագիր № 10166, ժողովածու, Շուշի, գրիչ՝ Մովսես Մահտեսի, 1840 թ., էջ 40ա—55բ։

3. Պատմութիւն Խիկարայ իմաստնոյ (Fa)

Ամբողջական է։

Ձեռագիր № 9428, ժողովածու, 1846 թ., էջ 39ա—63ա։

4 ხრატქ პიტანიქ იევ ოგტაკარქ ზორ ასაციალ ე ხიკარა იმასტნუ (Fa)

(Խրատք պիտանիք և օգտակարք, զոր ասացեալ է Խիկարա իմաստնու)։

Ամբողջական է, վրացատառ հայերեն։

Պահպանակի վրա ունի մի փոքրիկ հիշատակագրություն՝ Переписал из армянской книги 1869 г. *Ձեռագրի վերջում ևս մի այլ հիշատակագրություն՝* Արտագրեցի յայրենից այս պատմութիւն 19... *Թերևս ընդօրինակության տարեթիվն է, որ չի լրացվել, բայց առաջին հիշատակագրության 1869-ը չի վերաբերում նախօրինակին, որովհետև այդ թվականին* Պղնձե քաղաքի *հրատարակություն մեզ հայտնի չէ։ Դեռ է ընդունել, որ դա է ընդօրինակության տարեթիվը։*

Ձեռագիր № 9265, ժողովածու, 1869 թ., էջ 44ա—66ա։

5. Խրատք պիտանիք և օգտակարք, զոր ասացեալ է Խիկարայ իմաստնոյ (Fb)

Ամբողջական է։

Ձեռագիր № 8724, ժողովածու, XIX դար, էջ 43բ—64բ։

6. Խրատք պիտանիք և օգտակարք, զոր ասացեալ է Խիկարայ իմաստնոյ (Fb)

Ամբողջական է։

Ձեռագիր № 10107, ժողովածու, Շուշի, գրիչ՝ Անդրեաս Մուսայելեան Շուշեցի, 1868 թ., էջ 35ա—49բ։

G

Խրատք Խիկարի դպրապետի և իմաստնասիրի, Սենեքերիմայ արքայի Ասորեստանի և Նինուէի

Ինքնատիպ բնագիր է։ Ձեռագիրը քայքայված է և շատ տեղեր

մնում են անընթեռնելի։ Բնագիրը № 2961-ից հետո (A_1) ամենահինն է և միակ օրինակով կազմում է խումբ։

Ձեռագիր № 5599, Սիսէ (Կիլիկիա), գրիչ՝ Ստեփաննոս, 1347 թ., էջ 222ա—232բ։

Այս խմբերով կազմված բնագրերը մենք կդիտենք իբրև տարբերակ։

Խիկարի հայկական խմբագրությունը վեց տարբերակ ունի՝ ABCDEG։ A-*ի մեջ մտնում է մի բնագիր, որը գալիս է XIV դարից (ձեռագիր № 2961, 1321 թվականի գրչություն),* G-*ն, որ ներկայանում է մի ձեռագրով, նույնպես XIV դարի է (ձեռագիր № 5599, 1347 թվականի գրչություն), քառորդ դար միայն ավելի ուշ քան առաջինը։*

Այդ երկու բնագրերը, սակայն, արդեն բավական ուժեղ տարամիտվում են։

Դժբախտաբար A_1 *ձեռագիրը մուտք և պատմություն չունի, որպեսզի կարողանայինք համեմատել, բայց կդիմենք նույն տարբերակի մի այլ ձեռագրի՝* A_2-*ին, որն ուղղակի առնչվում է* A_1-*ի հետ։*

Բերենք մուտքից մի երկու հատված։

A

Յամի Սենեքարիմայ՝ արքայի Ասորեստանեաց և Նինուէի, ես՝ Խիկար, դպիր Սենեքարիմ արքայի, ստացայ ինձ ծառայս և աղախնեայս և ստացուածս բազումս, շինեցի ինձ ապարանս Կ և ոչ էի կարօտ ընչից, բայց զաւակ ոչ ունէի, որ ժառանգէր զինչս իմ։ Եւ յիշեցի զօր մահուան իմոյ, զի ամենեքեան ծաղր արասցեն զիս, թէ Խիկար դպիր և իմաստուն մեռաւ և ոչ կայր որդի, որ թաղէր և ոչ դուստր, որ լայր զնա։

G

Յամս Սենեքարիմայ՝ արքայի Ասորեստանի, ես՝ Խիկար դպրապետ էի նմայ։ Մինչ դեռևս տղայ էի, հրաման եղև ինձ թէ որդի քեզ չէ հրամայած յաստուծոյ լինելոյ։

Եւ մեծութիւն յոյժ ստացեալ էր իմ։ Կ կին առի և Կ ապարան շինեցի և Կ ամաց եղէ և ոչ եղև ինձ որդի ի նոցանէ։

Տարբերությունը միայն բոլորովին անկախ շարահյուսության մեջ չէ։ G *բնագրում Խիկարին տղա ժամանակ հայտնում են, որ ինքը ժառանգ չի ունենալու («Մինչդեռ ես տղա էի հրաման եղև ինձ, թէ որդի քեզ չէ հրամայած յաստուծոյ լինելոյ»), որ նա 60 կին է առել, իսկ* A *տարբերակը՝ չունի։*

Շարունակենք.

A

Եւ զմտաւ ածեալ մտի առաջի չաստուածոցն և արկի խունկս և մատուցի զոհս և ընծայս բազումս և աղաչեցի այսպէս ասելով. Ով տեարք իմ չաստուածք, ուք ինձ զաւակ արու, զի մի անժառանգ մնացից։

G

Յայնժամ ես՝ Խիկար, շինեցի բադին մեծ, վառեցի հուր և արկի ի վերայ խունկս անուշահոտս և նուիրս, զոհեցի զոհս և մատուցի ընծայս և այսպէս ասէի յաղաչելն իմում. Ով տեարք իմ և աստուածք, Բելշիմ և Մերշամին, էշարիշէ և Իշեմիշահ եթէ հրամայեցեք ինձ արու որդի, զի մի անժառանգ մնացից։

Ինչպես տեսնում ենք բնագրերը ուղղակիորեն հեռու են իրարից և դա, նույնիսկ, շատ ավելի ուժեղ է արտահայտված, քան երկու առանձին խմբագրությունների մոտ (ասորական և արաբական)։ Այսպես.

Ա ս ո ր ա կ ա ն խ մ բ.

Նինվեի թագավոր Սեննքերիմի ժամանակ, երբ ես Ախիկարս գանձապահ և դպիր էի։

Եւ երբ երիտասարդ էի, գուշակները, մոգերը և իմաստունները ինձ ասացին, թէ դու երեխա չես ունենալու։

Ես մեծ հարստություն էի ձեռք բերել և լիացած էի առատությամբ։ 60 կին ունեցա և նրանց համար կառուցեցի 60 պալատ՝ մեծ, շքեղ և հոյակապ, ինչպես նաև՝ բազմաթիվ տներ, և 60 տարեկան էի, դեռևս որդի չունեի։

Ա ր ա բ ա կ ա ն խ մ բ.

Սարհադոմի որդի Սեննքերիմի՝ Նինվեի ու Ասորեստանի թագավորի, ժամանակ ես՝ Խիկարս, նրա նախարարն էի ու դպիրը։

Եվ երբ երիտասարդ էի, կախարդները, աստղագետներն ու գուշակները ինձ ասացին թե դու զավակ չես ունենալու։

Եվ ես մեծ հարստություն ունեի։ Ձեռք էի բերել մեծ բարիք, 60 կին էի առել։ Եվ հրամայեցի կառուցել ինձ 60 ապարանք՝ ճարտարապետորեն գեղեցիկ տներ, և ես 60 տարեկան էի և դեռևս որդի չունեի։

Բնագրերի խրատականքը նույնպես չի զուգամիտվում։ Նրանք ունեն ուղղակի տարբեր շարք և անհավասար թիվ խրատներ։ G բնագրում բացակայում է խրատների 57 և առակավոր խրատների 22 միավոր, A բնագրում խրատների 37 և առակավոր խրատների 2 միավոր։

Սակայն տարբերությունը դրանով չի սպառվում։ Միևնույն խրատները տալիս են բավական ուժեղ ընթերցումներ։ Բերենք մի երկու օրինակ.

A

1. Որդեակ, մի՛ առնուր կշռով մեծաւ և տալ փոքրով և ասել թէ շահեցայ, զի անօրէնութիւնք և չարութիւնք են առաջի աստուծոյ։ Գուցէ բարկացի աստուած ի վերայ քո և զոր ունիցիս՝ առցէ ի ձեռս օտարաց։

2. Որդեակ, եթէ կամիցիս յաստուծոյ խնդրել ինչ, ի կամաց նորա մի՛ խոտորիր։ Պահեա զպատուիրանս նորա, երկիր ի նմանէ և սրբութեամբ կաց առաջի նորա, և յաւելցէ ի ժամանակս քո։

3. Որդեակ, սիրեա զկին քո, զի մարմին քո է և գէտ կնոջ օտարի մի՛ երթար, զի գործդ մահաբեր է և շար է առաջի աստուծոյ և մարդկան։

4. Որդեակ, թէ կամիս իմաստուն լինել, պահեա զլեզու քո ի շատախօսութենէ և նայեա առաջի աչաց քոց և լիցիս իմաստուն առաջի ընկերաց։

G

Որդեակ, մի՛ առնուր կշռով մեծաւ և տալ փոքրով և [ասաս]ցես ի սրտիդ քում եթէ շահեցայց և ինչք յաւելուն ի տուն իմոյ, [զի] անօրէնութիւն և չարիք են։ Գուցէ հայհոյեցի աստուած յերկնից և տեսանիցէ [ց]քեզ և դարձուցանիցէ զերեսս իւր ի քէն և իբրև յանօրինէ և յամբար[տաւանէ] երկինք և երկիր չեն բաւական տանել դատաստանի քո։

Որդեակ, եթէ խնդ[րեսց]ես ինչք յաստուծոյ, զբանիւք նորայ մի՛ յանցանիցես։

Որդեակ, պահեա զպատ[ուիր]անս աստուծոյ և զօրենս և մի՛ մոռանար և մի՛ մեղանչէր և բարի լինիցի քեզ։

Որդեակ, սիրեա զկին քո, զի մարմին քո է և կցորդ կենաց քոց և մայր որդոց քոց և յոյժ աշխատի սնուցանել զորդիս քո։

Որդեակ, եթէ կամեսցիս իմաստուն լինել, յորժամ ի մէջ ընկերաց ըմբենդինի մի՛ շատախօս լինիր, ունկն դիր, զի ի բազում խօսից կոխ լինի և կռունսպանութիւնք։

Ինչպես տեսնում ենք բնագրերը որոշակիորեն հեռու են իրարից և տալիս են այնպիսի ընթերցումներ, որ դժվար կլիներ միևնույն աղբյուրից արտածել։

Մենք կարող ենք շարունակել, բայց այսքանն էլ բավական է դրանք համարելու առանձին խմբագրություն և ոչ տարբերակ։

Մյուս խմբերը կազմված են ուշ շրջանի բնագրերից, բայց դարձյալ բան է ասում, քանի որ հնարավոր է ժամանակով անհամեմատ նոր ձեռագիր, ընդօրինակված հին ու լավագույն գրչությունից, որն ավելի է արժեք ներկայացնում, քան մի հին, անկանոն բնագիր։

Տեսնենք, թե այդ տարբերակները ինչ առնչություն ունեն A և G խմբագրությունների հետ։

B-ն մեծ չափով համերաշխում է A խմբագրությանը։ Խրատների շարքը փոքրիկ բացթողումներով ծածկում է A-ին, իսկ ամբողջ բնագիրը համեմատելի է, բայց առայժմ չենք պնդում, որ B-ն ծագում է A-ից։ Միջնադարյան բնագրերը հաճախ կարող են ունենալ

տարբեր աղբյուրներ, ներկայացնել տարբեր թարգմանություններ, բայց, նույնիսկ, համեմատելիության աստիճանի համերաշխել իրար, օրինակ, ասենք, Դիոնիսիոս Արիոպագացու երկու թարգմանությունները.

Ձեռ. № 110, էջ 5ա.

Ամենայն տուրք բարի և ամենայն պարգև կատարեալ ի վերուստ են իջեալ առ ի հօրէն լուսոյ։ Այլ և ամենայն հայրաշարժ լուսեղինութեան յառաջ ճանապարհ ի մեզ բարեւորապէս ընթացեալ։ Դարձեալ որպէս միացուցիչ զօրութիւն ի վերին կոյս ձգտեցուցանել զմեզ պարզէ և դարձուցանէ առ ժողովրդին հօր միաւորութիւն, աստուածաբար պարգեւիւն։ Քանզի ի նմանէ են ամենեքեան և ի նա որպէս սրբազանն ասաց բան։

էջ 6ա.

Եւ գիշխանականն և գերիշխանականն աստուածապետութեան հօր լուսաւորութիւն, որ զհրեշտակաց տպաւորական նշանակօք երևէցուցանէ մեզ զերանական քահանայապետութիւնս աննիւթ և անդողդոջ աշօք մտացս ի ներքս ընկալեալ դարձեալ ի նմանէ ի պարգն նորա ճառագայթ ձգեսցուք։

Ձեռ. № 49, էջ 4ա.

Ամենայն տուրք բարի և ամենայն պարգևք կատարեալ ի վերուստ են իջեալ առ ի հարէն լուսո։ Այլ և ամենայն հայրաշարժ լուսերեւութեան յառաջ ճանապարհ ի մեզ բարեւորապէս ընթացեալ։ Դարձեալ որպէս միացուցիչ զաւրութիւն ձգտեցուցանէլով զմեզ պարզէ և դարձուցանէ առ ժողովոյն հաւր միաւորութիւն և աստուածաբար պարգևիւն։ Քանզի ի նմանէ են ամենայնք և ի նա որպէս սրբազանն ասաց բան։

էջ 5ա.

Եւ գերիշխանական աստուածապետութեան հաւր լուսաւորութիւն կամ հրեշտակաց տպաւորականաւք նշանակաւք երևեցուցանէ մեզ երանական քահանապետութիւնս։ Աննիւթաւք և անդողդոջաւք աչաւք ի ներքս ընկալեալք, դարձեալ ի նմանէ ի պարգն կոյս նորա ձգտեցուք ճառագայթ։

Առաջին։ թարգմանությունը կատարվել է VIII դարում Ստեփանոս Սյունեցու, իսկ երկրորդը՝ XVII դարում Ստեփանոս Լեհացու կողմից[70]։

[70] Ստեփանոս Լեհացին իր թարգմանության մասին «Ճառաչաբանութեան» մեջ գրում է. «Նախ քան զձեռն արկել յիրողութիւնս, արժան վարկանիմ պատճառ արտարել, թէ վասն էր համարձակեցայ վերստին թարգմանութիւն առնել։ Մի գուցէ թուեսցի ումեք աւելորդ զոլ աշխատութիւնս մեր։

Արդ վասն զի թարգմանութիւն սրբոյն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի էր ջուարիմաց և բնաբանն ի բազում տեղիս փոփոխեալ և մեկնութիւն առ ի սրբոյն Մաքսիմոսէ արարեալ կիսակատար թարգմանեալ, քանզի ոչ եթէ ինքն սուրբն Ստեփաննոս մեկնեաց, որպէս ոմանք կարծեն, այլ ի յումեց բարբառոյ ի մերս թարգմանեաց, վասն որոյ ես Ստեփաննոս Ելոլացի յետին ի բանասիրացն ի խնդրոյ եղբարցն ուսումնասիրաց ի դուռն սրբոյ աթոռոյ էջմիածնի համարձակեցայ միւս անգամ թարգմանեալ ի լատինացւոց բարբառոյ ի հայոց լեզու» (Ձեռագիր № 49, էջ 2ա)։

Միջնադարին այնքան էլ չի հետաքրքրում հեղինակային ինքնության հարցը։ Նրանց ավելի շատ նյութը ներկայացնելու գաղափարն է մղում, իսկ հեղինակը պահում է իրեն ստվերի տակ։ Այդ մտայնության հետևանքն է, որ հաճախ նրանք ավելորդ են համարում, նույնիսկ, անուններ դնել երկի վրա և մյուս կողմից՝ իրենց թույլ են տալիս ազատորեն քաղելու անհրաժեշտը, պակասը միայն լրացնելով։ Այդպես է վարվել Ստեփանոս Լեհացին։

Դա հնարավոր է նաև մեր բնագրի նկատմամբ։ Այն ունի ինքնահատուկ, սեփական ընթերցումներ և խրատների մի ամբողջ շարք (77 խրատ), որ բացակայում է A խմբագրություններում։ B-ն ընդգրկում է ավելի շատ թվով ձեռագրեր, քան մյուս բոլորը։ Այդպիսով այն ամենատարածված տարբերակն է։

Մյուս տարբերակները ևս չեն զուգամիտվում A կամ G խմբագրություններին։ C-ն ավելի համառոտ է, բաց է թողնում առանձին դրվագներ, ունի տարբեր շարք և խրատների այլ բնույթ չորս բանքով, որը հատուկ է միայն այդ տարբերակին։ D-ն ամենաընդարձակն է, ունի շուրջ 210 պատմողական և 40 առակավոր խրատներ, մանրամասնված է նաև պատմության մեջ։ E-ն ձգտում է G խմբագրությանը, բայց ոչ բացահայտ։ C և D տարբերակները զրաբարյան են, բարբառային և ժողովրդական ձևերով միահյուս, իսկ E տարբերակը ավելի բարբառային։ Այդ չորս բնագրերն էլ թույլ են տալիս փոխադարձ ներխուժումներ, որոնք հաճախ ծածկում են իրար։

Բնագրերից յուրաքանչյուրն ունի այնպիսի ինքնահատուկ բնույթ, որ դժվար է որևէ նախապատվություն տալ։

Այդպես։ Այնքան փոփոխություններ կրած այս գրույցը, որն իր մեջ արդեն խմբագրություններ ունի, անկարելի է ներկայացնել մեկ բնագրով։ Նման փորձ արեց Կոնիբերը, բայց անհաջող։ Նրա ձեռքի տակ եղել են տարբեր խմբերի ձեռագրեր, որոնց բնույթը չի արտահայտվել։ Էջմիածնի № 2048 ձեռագիրը մեր D₁-ն է, որի միայն սկզբի 18 խրատներից է օգտվել Կոնիբերը, իսկ Canon-ը հավանաբար պատկանում է A խմբին։ Նրանց տարբերությունները ստացել են սովորական ընթերցումների բնույթ։

Համահավաք բնագիր նույնպես չի կարելի։ Առհասարակ այն չի ելնում գիտականության սկզբունքներից։ Ստեղծել մի երրորդը, հենվելով բոլոր ձեռագրերի կամ ձեռագրախմբերի նախնական դիտվող ընթերցումների վրա, բոլոր դեպքերում պայմանական է, քանի որ անկարելի է հավաստել։ Համահավաք—դեռևս չի նշանակում

աղբյուրների և բանասիրական տվյալների օգնությամբ վերակազմել բնագիր։ Դա այլ խնդիր է և մտնում է հետազոտության բնագավառը։

Միակ ուղին բնագրերը համադրությամբ ներկայացնելն է։ Դա նույն համեմատական բնագիրն է՝ ամբողջական և զուգահեռ ընթերցումներով։ Բայց այս դեպքում անհնար է տեխնիկապես, ուստի մենք հաջորդաբար կտանք բոլոր խմբերը, իսկ յուրաքանչյուր խումբ իր համար կկազմի մի համեմատական բնագիր։ Խմբերը ներկայացվում են լրիվ, նրանց կազմի մեջ մտնող ձեռագրական օրինակները՝ անհրաժեշտ դիտվող ընթերցումներով։ Այսպիսով լիովին արտահայտվում են ղրույցի ձեռագրական աղբյուրները, իրենց ամբողջ բազմազանությամբ։

Բնագիրը կազմելիս նկատի ենք ունեցել ոչ թե միայն նախնական դիտվող ընթերցումները, այլ ինչ հատուկ է և բնորոշ տվյալ խմբին-տարբերակին, երբեմն եթե, նույնիսկ, նախընտրելի չէ։

Դա թերևս շեղում է ընդհանուր սկզբունքից, քանի որ գիտական բնագրի նպատակն է հնարավոր չափով հստակել աղբյուրը, կամ ձգտել հասնելու ճշգրտումների, բայց այս դեպքում անհրաժեշտաբար ընտրել ենք այլ ուղի։

Երբ հայտնի չէ թարգմանական և ոչ մի տվյալ, ինչպես և ինչ աղբյուրից է գալիս այն և երբ ղրույցը հասել է մեզ մեկից ավելի տարբերակներով, հետագա գրչությամբ որևէ բնագրի մեջ նախնականը վերականգնելու խնդիրը դառնում է անհնարին։

Ուղղումներ արվել են միայն նույն տարբերակի շրջանակներում, չդիմելով և ոչ մի փոխառության, այլապես կարող էին խախտվել տարբերակի մեջ եղած սահմանները։

Բանասիրության պահանջն է ղրույցի յուրաքանչյուր խմբագրություն, բնագիր կամ տարբերակ անաղարտ ներկայացնել, որը հնարավորություն կտա պատասխանելու շատ հարցերի։

ա) Ինչ առնչություն ունեն տարբերակները միմյանց հետ և ինչպես են առաջացել։

բ) Նրանցից որն է ավելի նախնական և մոտ առաջին թարգմանությանը։

գ) Օտար որ խմբագրությունից է կատարվել թարգմանությունը։

դ) Եղել են մեկ, թե զուգահեռ թարգմանություններ։

ե) Ի՞նչ զարգացում և փոփոխություններ են ապրել տարբերակները։

զ) Որն է հայ մատենագրության մեջ հաճախ պատահող խիկարյան ասույթների աղբյուրը։

Միայն տարբերակների չաղարտված պատկերը ունենալուց հետո և զուգորդաբար քննելով օտար բոլոր խմբագրությունները կարելի է խոսել ղրույցի նախնական ընթերցումների մասին հայ մատենագրության սահմաններում, ինչպես և, առհասարակ, իբրև միջազգային դրական հուշարձան[71]։

Սակայն երբ մի տարբերակը համեմատելի է մյուսին, մենք առանձին չենք ներկայացրել, ինչպես A-ն և B-ն, և, որպեսզի ընդգծվի, B-ի ընթերցումները տալիս ենք A խմբից հետո։

B-ի այն խրատները, որոնք A-ի մոտ զուգահեռներ չունեն և լիովին համեմատելի են Խօսք իմաստասիրացին (L) արտահայտել ենք նրա տողատակում։

Այդ քայլը ճիշտ կարելի է համարել միայն այն դեպքում, եթե ընդունվի, որ B-ի հավելյալ խրատաշարը օտարամուտ է։ Մենք այդպես էլ կարծում ենք։

Այն խրատները, որոնք խմբի մեջ չունեն զուգահեռներ և դուրս են մնում հիմքի խրատաշարից, իբրև հավելված, տալիս ենք տարբերակների խրատականքից հետո։

Համեմատական բնագիրը կազմելիս առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքներով.

Սակավ դեպքում է միայն, որ միջամտում ենք հիմքի բնագրին, վրիպակներ, բացթողումներ և այլն, ինչպես նաև՝ ուղղագրական որոշ շտկումներ։

Երկգրությունների դեպքում պահպանել ենք մի ձևը, որը համարվում է ավելի ճիշտ, կամ ավելի ընդհանրական։

Աւ երկբարբառը տալիս ենք Ո նիշով և հակառակը, եթե չարաշահված է Ո-ն, ինչպես 5599 ձեռագրում։

Տողատակերում չենք արտահայտել.

ա) գրչական բացահայտ վրիպակները, բայց եթե դրանք որոշ բան են հուշում, ասենք՝ ձեռագրերի մեջ ազգակցություն, պահպանել ենք։

բ) դրափոխված կամ շրջուն շարադասությամբ նախադասությունները։

գ) աւ և Ո ուղղագրական տարբերությունները։

---

[71] Այդ հարցերին կնվիրվի մեր հաջորդ աշխատանքը, որտեղ զուգահեռաբար կքննվեն նաև բանասիրական և գրականագիտական շատ խնդիրներ, որոնք արծարծվել են, բայց դեռ լուծում չեն գտել բանասիրության մեջ։

դ) անտեղի գործածված բառավերջի յ կիսաձայնը և ըմպագրությունը։

ե) բարբառային կրկնվող ձևերը և այլ մանր ընթերցումներ, որոնք ոչ մի բանով չեն կարող օգտակար լինել և ավելորդ կծանրաբեռնեն տողատակերը։

A խմբի առակավոր խրատների համեմատական բնագիրը կազմելիս տարընթերցվածները ավելի քիչ են հաշվի առնված, որովհետև A₁-ի ընթերցումները գրեթե միշտ նախընտրելի են։

Խրատները համարակալել ենք նկատի ունենալով դիմումի հատուկ ձևը՝ որդեակ։ Եթե խրատը այդպես չի սկսվում, բայց ունի անկախ իմաստ, դիտել ենք իբրև նախորդ խրատի մի մասը և անջատել լատինական տառանիշերով (a, b, c, d և այլն)։

Կարելի է թերևս համարակալել տարբեր իմաստ արտահայտող բոլոր խրատները, բայց այդ դեպքում խմբերի մեջ նրանց համեմատությունը կդժվարացներ, որովհետև մի տեղ խրատը ձուլված է նախորդին մի այլ տեղ արդեն ստացել է ինքնուրույն արժեք։

Տարբերակներից բացի, հրատարակում ենք դրույցի հայկական խմբագրության հետ առնչվող Խօսք իմաստասիրաց և խրատ հասարակաց բնագիրը, որն ուղղակի կապ ունի դրույցը հետ։

Աղբյուրը ներկայացնում ենք հետևյալ օրինակների համաձայն.

L

L₁ **Խաւսք իմաստասիրաց և խրատ հասարակաց**
Ամբողջական է։

Ձեռագիր № 4724, ճառընտիր, Վան, գրիչ՝ Մելիքսեթ, 1611 թ., էջ 214բ—219ա։

L₂ **Խօսք իմաստասիրաց և խրատք հասարակաց**
Ամբողջական է։

Ձեռագիր № 4726, ճառընտիր, XVII դար, էջ 228ա—231ա։

L₃ **Խրատք իմաստասիրաց և խրատք հասարակաց**
Ամբողջական է։

Ձեռագիր № 2890, ժողովածու, Վան, գրիչ՝ Թումա Մոկացի, 1718 թ., էջ 229ա—333ա։

L₄ **Խօսք իմաստասիրական առ ծառայս և մերձաւորս թագաւորաց զի ուսցին սովաւ և իմաստնասցին**
Ամբողջական է։

Ձեռագիր № 9992, ժողովածու, գրիչ՝ Պետրոս, Վենետիկ, 1709 թ., էջ 128ա—133բ։

L₅ **Խաւսք իմաստասիրաց և խրատ հասարակաց**
Բնագրից բացակայում են որոշ խրատներ։ Մի թերթ այլ բովանդակություն ունի (323) և պատահաբար ընդմիջարկվել է կազմողի կողմից։

Ձեռագիր № 45, ժողովածու, Լիմ, գրիչ՝ Սարգիս Եղեսիացի, 1642 թ., էջ 321ա—322բ և 324բ։

L₆ **Անխորագիր**
Թերի է, սկզբից թերթ ընկած լինելու պատճառով։ Սկսվում է՝ Որդեակ, յորժամ առնամարհիցես առաջի թագաւորաց ամենայն սիրելիք fո ատելութիւն դառնան fեզ և բարեկամքն fո հեռանան ի fէն։ *Որ համընկնում է* L₁*-ի 24 խրատին։*

Ձեռագիր № 6724, ժողովածու, գրիչ՝ Պաղտասար, XVII դար, էջ 139ա—143ա։

L₇ **Ի յայսմանէ խրատ հոգևոր**
Անկանոն բնագիր է, ունի ընդամենը 19 խրատ, խառն դասակարգությամբ։ Սկիզբն՝ Որդեակ, ըդդ աճգէտ մարդոյ ամենեին մի խաւսիր, զի մի ծաղր լինիս։ *Վերջ՝* Սիրեա զինազանդութիւն և ստացիր գիտնարհութիւն հեզութեան, զի արժանի լիցիս ժառանգել զերկիրն կենդանեաց ի Քրիստոսէ աստուծոյ մերմէ, որում և գմեզ արժանիս արասցէ, մանաւանդ զատացող գոյս տէր Ձաքարէն և զկողակիցն գեանխաթուն և զորդին զտէր Յովանէս և կողակիցն Վարդիխաթուն կարդացողաց և լսողաց։

Ձեռագիր № 3239, ժողովածու, Ս. Գևորգ, գրիչ՝ Զաքարիա երէց, 1671—1675 թթ., էջ 176բ—178։

L₈ **Խաւսք իմաստասիրաց, խրատք հասարակաց**
Ամբողջական է, նման է L₁*-ին։*

Ձեռագրի 45ա էջում, որդեակ, ոչ եթէ ամենայն ժառանգէ գաւնուն մարդոյ *խրատից հետո գրիչը ընդհատում է և բերում իր հիշատակագրությունը՝* Շնորհաւ և մարդասիրութեամբ տեառն մերոյ.... *և այլն։*

Այնուհետև նույն էջի վրա շարունակում է բնագիրը, կարմիր թանաքով նորից վերնագրելով՝ **Խաւսք իմաստասիրաց, խրատ հասարակաց:** *Թվում է թե նոր բնագիր է:*

Ձեռագիր № 5349, ճառընտիր, Ավարիս գյուղ, գրիչ՝ Հովհաննէս, 1567 թ., էջ 42ա—48ա:

L9 **Խօսք իմաստասիրական առ ծառայս և մերձաւորս թագաւորաց, զի ուսցին սովաւ և իմաստնասցին**

Ամբողջական է:

Ձեռագիր № 6047, ժողովածու, XVII դար, էջ 166ա—173ա:

L10 **Խրատք իմաստասիրականք և խրատք հասարակ մարդկանց**

Պակասավոր է, ունի միայն սկզբի 15 խրատները: Վերջ՝ **Որդեակ, հաւասար է գինի կենդանութեան** *(ընդհատվում է): Հաջորդ էջից սկսվում է այլ բնագիր:*

Ձեռագիր № 6726, գրիչ՝ Գրիգոր Դեբայերցի, 1693 թ., էջ 17բ—18ա:

L11 **Խաւսք իմաստնայսիրական առ աւտարս և մերձաւորս թագաւորաց, զի յուսանիցեն սովաւ և իմաստնասցին**

Ամբողջական է:

Ձեռագիր № 6708, ժողովածու, 1635 թ., էջ 198բ—206ա:

L12 **Խաւսք իմաստասիրականք և խրատք հասարակաց որդւոց մարդկան**

Ամբողջական է, մոտ է L1*-ին:*

Ձեռագիր № 2783, ժողովածու, գրիչ՝ Գրիգոր Խլաթեցի, 1410 թ., էջ 32ա—37ա:

L13 **Խօսք իմաստասիրական և խրատ**

Ամբողջական է, շատ մոտ է L1*-ին:*

Ձեռագիր № 3467, ժողովածու, XVII դար, էջ 143ա—150բ:

L14 **Այլ խրատ**

Բնագիրը խրատների քանակով և դասակարգմամբ շատ է տարբերվում L*-ից, բայց պատկանում է այդ խմբին: Հաղմաթիվ խրատներ (42—75)* L *խմբում չունեն իրենց զուգահեռները, ներկայացնում ենք վերջում:*

L14*-ը Մաշտոցյան մատենադարանում* **Խօսք իմաստասիրաց և խրատք հասարակաց***-ի ամենահին բնագիրն է, ունի փոքրիկ հիշատակագրություն՝* **Որ սիրեմ զխրատս յիշեցեք զտառապեալ գրիչս և խրատն խաղաղութեան եղիցի ընդ ձեզ, որ եկն յերկնից ի գուժ արկանել երկրաւոր խաղաղութեանս, որ լի էր մեղաւ:**

Ձեռագիր № 5229, ժողովածու, գրիչ՝ Վասիլ, XIV դար, էջ 139բ—148ա:

Այս խմբի մեջ ընդգրկված է նաև մի փոքրիկ բնագիր՝ **Խրատ օգուտ, ընդամենը 26 խրատ և չորս իրք***-ի մի հատված: Ինչ-որ առընչվում է* C *խմբի հետ: Խրատներից երեքը իրենց զուգահեռներն ունեն* L *տարբերակում և որոշ ընթերցումներ են տալիս:*

Բնագիրն առհասարակ խրատականքի անկանոն հատված է: Նշանակել ենք K *տառանիշով: (Ձեռագիր № 2272, 1697—1706 թ., էջ 113 աբ):*

Խօսք իմաստասիրաց և խրատք հասարակաց*-ի քննական բնագիրը կազմելիս համեմատել և ընթերցումներում արտահայտել ենք նաև Խիկարի* ABDE *տարբերակների մեջ եղած զուգահեռները:*

Հրատարակում ենք նաև՝

1. Խիկարի հայատառ թուրքերեն բնագիրը՝ Ալիմ Խիկարբն սօյլատիկի նասիհաթ: Ձեռագիրը պահվում է Զմմառի վանքում, 413 համարի տակ, էջ 43ա—66ա: Այն անծանոթ է գիտական աշխարհին: Բնագրի լուսապատճենը մեզ է հղել վանքի տնօրինությունը, որի համար մեր շնորհակալությունն ենք հայտնում:

2. Խիկարի հայատառ դպիշաղերեն բնագիրը: Բնագրի մասին առաջին անգամ խոսում է Տաշյանն իր հետաքրքիր աշխատության մեջ: Պահվում է Վիեննայի Մխիթարյանների ձեռագրատանը 468 համարի տակ, էջ 53բ—62ա: Ձեռագիրը պարունակում է նաև Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, նույնպես հայատառ դպիշաղերեն:

*Տպագրվել է երկու անգամ. 1913 թվականին «*The story of Ahikar...*» գրքի երկրորդ հրատարակության մեջ և 1964 թվականին «*Rocznik Orientalityczny*»-ի XXVII հատորում:*

Այսպիսով սպառում ենք զրույցի հայկական խմբագրության մատենագրությունը: Այն ինչ չի առնչվում զրույցի հետ, բայց հյուսվել է Խիկարի անվան շուրջը (հեքիաթ, զրույց, առակ և այլն) չի ընդգրկված:

Այս նյութերը, որոնք մեծ մասամբ անծանոթ են գիտական հասարակայնությանը, կարող ենք հուսալ, որ կարթնացնեն նոր հետաքրքրություն և կօգնեն լուծելու Խիկարի զրույցի՝ հին աշխարհի նշանավոր և հազվագյուտ հուշարձաններից մեկի շուրջը միջազգային բանասիրության մեջ արծարծված շատ հարցեր:

ПОВЕСТЬ О ХИКАРЕ И ЕЕ ИСТОЧНИКИ

Подобно эпосу о Гильгамеше, повесть о Хикаре относится к древнейшим творениям Востока, которые сохранились и дошли до нас, пройдя длинный путь почти в две с половиной тысячи лет. Однако, если эпос о Гильгамеше прошел этот путь как и его герой одним необычным прыжком, то повесть о Хикаре нашла себе пристанище в современных печатных книгах после бесконечных блужданий.

Путешествуя письменными и устными путями, она претерпела многочисленные метаморфозы и утратила свой первоначальный ясный образ.

Чем сложнее и богаче путь, пройденный повестью, тем сложнее и богаче существующая о ней филологическая литература, которая около трех столетий тщетно ищет общих знаменателей.

Повесть привлекает к себе внимание филологов, так как она является характерным и редкостным восточным произведением, имеет интересную тему и обладает очарованием древности.

Она дошла до нас в многочисленных версиях—арамейской, сирийской, греческой, армянской, эфиопской, арабской, славянской, румынской, кипчакской и др.

Повесть выражена в гибких художественных формах. Это история о неблагодарном сыне, которая интерполирована поучениями, притчами и загадками. Ничто не пострадает, если число их будет увеличено или сокращено. Поэтому в разные

времена отдельные общественные слои изменяли или дополняли их соответственно своим понятиям.

Таким образом, она постоянно обновлялась, сохраняя обаяние своей долговечности.

Повесть легко сливается с национальными литературами. Так оно и было издавна. В одном месте сказано, что Хикар по происхождению еврей, в Ветхом завете он племянник Товита. Греки связывали его с Эзопом, арабы считали его одним из героев «Тысячи и одной ночи». Русский редактор Хикара не забыл подчеркнуть, что он «учит сына своего грамоте русской алевитской», а в армянской литературе Хикар армонизировался. В одном из Чарынтыров (Гомилиарий) сказано, что он не Хикар, а Хокайр (т. е. размышляющий, думающий), «ибо в своей премудрости, размышляя постоянно, он давал всем советы и воспитывал притчами».

В дальнейшем, на протяжении веков вокруг Хикара слагается такая большая литература, что даже сама повесть рассматривается как чуждая ему.

В армянской литературе, в особенности в устной, Хикар играет ту же роль, что Вардан в баснописании. Он выступает как писатель собирательный. Здесь он имеет уже сугубо национальный характер и связь его с ассиро-вавилонским Ахикаром условна.

Филологическое исследование повести прошло два периода.

Будучи сперва опубликованной в числе сказок «Тысячи и одной ночи», она становится известной как арабская сказка. Асемани первый заметил, что повесть чрезвычайно похожа на вторую часть биографии Эзопа, составленную М. Планудом, а Г. Гофман в 1880 г. в своей книге Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer сделал мимоходом очень интересные замечания, заметив какую-то родственность между Товитом и Ахикаром.

Таким образом, эта тема оказалась связанной с тремя замечательными ценностями—Священным писанием, Эзопом и «Тысячей и одной ночью».

Именно эти связи и явились основным стержнем первого периода филологических изысканий.

В 1907 году в Элефантине были обнаружены папирусы еврейской общины и в их числе несколько листов из повести о Хикаре. Древность папирусов восходит к V веку до н. э.

Начинается новый период исследования Хикара.

Многие вопросы, которые породили столько взаимоисключающих мнений, стали ясными и легко разрешимыми.

Если уже в V веке существовал арамейский текст Хикара, то понятно, что он не мог быть заимствован из книги Товита или перекроен на ее основе, потому что книга Товита была составлена во II веке до н. э. Повесть о Хикаре является также источником второго раздела биографии Эзопа.

Папирусы вновь вызвали интерес к Хикару. Разрозненный арамейский текст в своих чтениях очень отличается от всех до того известных версий. Когда он сформировался и каково его происхождение?

Когда элефантинские папирусы были еще неизвестны, ученые, опираясь на связь Хикара с книгой Товита, неуверенно говорили о еврейском происхождении текста. Ныне, уже смелее, был вновь поднят вопрос о еврейском оригинале.

Однако это вызвало серьезные возражения, которые с самого начала были чреваты отрицанием.

Итак вопрос остался открытым.

Таково содержание второго периода.

Несмотря на все усилия, филология не достигла определенных результатов. Многочисленные вопросы все еще остаются неразрешенными.

Чтобы удовлетворить филологические требования в связи с повестью, была проделана значительная работа и с точки зрения источниковедческой.

Было опубликовано большое число источников разных версий—арамейской, сирийской, арабской, греческой, славянской, румынской и других[1]. Однако они не дают верного представления о тексте повести.

Большей частью повесть представляли на основе одной или двух рукописей, создавая не сравнительный, а собирательный текст.

[1] Критический обзор источников мы дали в армянском предисловии к настоящей книге, стр. 8—16.

Публикации не охватывают все или хотя бы какое-то определенное число источников различных версий, они были напечатаны с отдельных, иногда случайных экземпляров.

На протяжении веков писцы вносили в текст различные изменения, то же продолжали делать издатели, благодаря чему в повести появились привнесенные извне наслоения.

Они весьма свободно обращались с текстом, изменяли или выбрасывали отдельные части, не имеющие, с их точки зрения, особого значения, и нередко устанавливали связи соответственно своему воображению.

Это создало большие трудности для филологов, усложнив задачу пользования источником. В каждом отдельном случае требовалось проверить разночтения, выяснить, принадлежат ли они автору, писцу или издателю, но для этого необходимо было ознакомиться со всеми изданиями и рукописными источниками, что почти невозможно. Именно по этой причине многочисленные замечания и гипотезы исследователей теряют свою ценность, так как они часто опираются на элементы, привнесенные в текст позднее.

В обоих периодах ученых интересовал один и тот же вопрос: откуда идет повесть и каков был первоначальный текст?

Сам по себе этот вопрос имеет источниковедческий характер и научная мысль должна была пойти в этом направлении—требование, возникшее довольно поздно, когда уже стало ясно, что филология незаметно оказалась в порочном кругу.

F. Nau пишет: «История Хикара очень пострадала от рук переводчиков и писцов. Ее воссоздание потребует заботливой публикации каждой отдельной версии, которая в первую очередь основывалась бы, по возможности, на большем числе рукописей и, затем, сравнении этих рукописей»[1].

Это требование полностью относится и к армянской версии, которая, наряду с сирийской, арабской и славянской версиями, представляет особую ценность.

Армянский Хикар имеет довольно много публикаций, их три рода—печатные, устные и рукописные.

---

[1] Histoire et sagesse d' Ahikar l' Assyrien..., par F. Nau, Paris, 1909, pp. 77.

Печатная публикация сопровождает «Историю о Медном городе», издание которой растянулось с 1708 по 1920 гг. Этот длинный ряд происходит от одной общей рукописи позднего периода, очень искаженной и с большим числом диалектных наслоений. Она послужила основой для публикации 1708 г.

Второй вид—устный: это текст, который был рассказан 65-летней крестьянкой Эчмиадзина и записан смотрителем Байяндурского училища Бунятовым.

Как публикация Конибера в Европе, так и этот текст послужили поводом для первого ознакомления русской филологии с армянской версией повести о Хикаре. В этом лишь и заключается роль устного текста.

Он не имеет какой-либо текстологической ценности и не может дать верного представления об армянской версии.

Источником для повести послужил известный нам печатный текст, который сопровождает многочисленные издания «Медного города». Это ясно показывают тождество сказов и характер поучений, даже их последовательность.

Если Бунятов действительно записал сказ со слов старой женщины в Эчмиадзине, то непосредственным передатчиком печатного текста была эта женщина.

Сказ в народе прошел недолгий устный путь, поэтому как произведение устного народного творчества не представляет собой какого-либо интереса.

Третье—это публикация Ф. Конибера. Мы именуем ее рукописной, так как она опирается непосредственно на рукописные источники. Составляя текст, Конибер имел в виду восемь рукописей, отдельные разночтения которых он спустил в подстрочные примечания.

Текст Конибера дал повод А. Ташяну написать о повести интересную работу, за которую он не брался раньше из-за отсутствия лучшего текста, хотя и задумал ее. В своем исследовании он рассматривает многочисленные филологические вопросы: связи между повестью Эзопа и книгой Товита, характер армянской редакции, ее переводные источники, вопрос времени и т. д., но так как и текст Конибера, несмотря на свои преимущества, довольно искажен и полон неологизмов,

то он и не дает Ташяну достаточных оснований для окончательных и правильных выводов.

«Этот момент,—читаем мы,—заставляет прервать наши исследования до появления древнейшего и наилучшего текста. Без него ряд вопросов, нуждающихся в разрешении, не может быть поднят, не породив бесплодной работы, равно как и выводы не могут иметь твердой основы»[1].

«Первое дело армянских филологов—найти такой текст»[2],— заключает Ташян.

* * *

Если притчи Сираха и Соломона прошли через списки неизменными, ибо были скопированы из Библии, а авторитет Священного писания не допускал свободного обращения с текстом, то для Хикара таких ограничений не было. Переписчики повести внесли много добавлений и нововведений. Вот почему бесполезно искать текст, который доподлинно верно сохранил бы переводный экземпляр армянского оригинала. Однако вступление Хикара в армянскую литературу имеет таинственную давность, а дошедший до нас древнейший текст восходит к XIV веку.

Остается путем сравнения многочисленных рукописей позднейшего периода восстановить армянский первоначальный текст. Это трудно, но возможно.

В Матенадаране и в других хранилищах рукописей имеется свыше 100 экземпляров Хикара. Однако невозможно создать критический текст, приняв за основу одну рукопись и сравнивая ее с другими, так как рукописные единицы не совпадают. Они составляют шесть отдельных групп, так мы и представляем их.

Тексты, составленные по этим группам, мы будем рассматривать как варианты.

Таким образом, армянская редакция Хикара имеет шесть вариантов. A_{1-5} (имеет пять рукописей и один фрагмент

[1] Հ. Տաշյան, *Մատենագրական ժամր ուսումնասիրություններ*, Վիեննա, 1901, էջ 136։

[2] Там же, стр. 140.

XII в.). B_{1-24} (охватывает 24 рукописи), C_{1-5} (охватывает пять текстов и издание Конибера, основанное на сравнении восьми рукописей), $Д_{1-6}$ (охватывает шесть рукописей), E_{1-6} (охватывает шесть рукописей и все печатные издания), G_1 (представлен одной рукописью)[1].

В вариант **G** входит текст XIV в. (рук. № 5559, год 1347), на четверть века позднее, чем рукопись № 2961, 1321 года, представляющая вариант **A**.

Эти два текста настолько различны как в повествовательной части, так и в поучениях, что их можно рассматривать как две различные редакции.

А какие связи имеют другие варианты с редакциями **A** и **G**?

Вариант **B** в значительной степени соотносится с редакцией **A**. Ряд поучений с небольшими пропусками, а также почти весь текст совпадает с **A**, но пока что мы не настаиваем на том, что **B** возник из **A**. Средневековые тексты часто могут иметь различные источники, представлять различные переводы, но при сравнении могут совпадать.

Вопрос авторства не очень интересовал средневековых писателей, их побудительным мотивом была больше идея представления материала, а сам автор оставался в тени. Именно вследствие этого они нередко считали излишним даже ставить имя автора на рукописи, и в то же время позволяли себе свободно брать необходимое из других произведений, восполняя недостающее.

Это возможно и в отношении нашего текста, он имеет свойственные лишь ему собственные чтения и целый ряд поучений (числом 77), которые отсутствуют в редакции **A**. **B** охватывает большее число рукописей, чем все остальные. Таким образом, это наиболее распространенный вариант.

Другие варианты также отличаются от редакций **A** и **G**. **C** более сокращенный вариант, в нем пропущены отдельные места, он имеет отличный ряд и иной характер поучений,

[1] Описание текста дано в армянском предисловии, список условных обозначений см. в конце книги.

которые начинаются со слов «четыре вещи», что характерно только для него.

Самый пространный вариант—**D**, имеет больше 210 поучений и 40 притч, он более подробен и в повествовательной части. **E** ближе к редакции **G**, но не определенно. Варианты **C** и **D** написаны на грабаре (древнеармянском языке) в сочетании с диалектными и народными формами. Вариант **E** отличается еще большей диалектностью. Эти четыре текста допускают взаимопроникновения, которые нередко совпадают.

Каждый из текстов имеет такой ему лишь свойственный характер, что трудно какому-нибудь из них дать предпочтение.

Составляя текст, мы имели в виду не только чтения, рассматриваемые как первоначальные, но и все то, что свойственно данной группе, варианту.

Исправления мы производили лишь в пределах одного варианта, не прибегая ни к каким заимствованиям, ибо иначе могли нарушиться границы, существующие в самом варианте.

Филология требует, чтобы каждая версия, текст, вариант были представлены в чистом не искаженном виде.

Лишь получив верную картину всех вариантов и анализируя параллельно все иноязычные версии, можно будет говорить о первоначальных чтениях повести в пределах армянской литературы, а также вообще о повести, как памятнике мировой литературы[1].

Помимо вариантов, мы публикуем также и другие источники, связанные с армянской версией, повести.

1. «Речения мудрецов»—полный текст поучений. Он имеет непосредственную связь с повестью. Публикуется на основе 14 рукописей и параллелей, заключенных в вариантах **A, B, D, E.**

2. Турецкий текст Хикара, написанный армянскими буквами—Алым Хикарым сэойлэтики насият. Рукопись хранится в монастыре Змарры под № 413, стр. 43а—66а. Она неизвестна ученому миру. Публикуется по фотокопии оригинала, которую прислала нам конгрегация, за что выражаем благодарность.

[1] Этим вопросам мы намерены посвятить нашу следующую работу, где параллельно будут рассмотрены также многие филологические и литературоведческие вопросы.

3. Кипчакский текст Хикара, написанный армянскими буквами. Впервые об этом тексте говорит в своем интересном труде Ташян. Хранится в хранилище рукописей Мхитаристов в Вене, под № 468, стр. 53б—62а. Рукопись содержит также «Судебник» Мхитара Гоша на кипчакском языке, написанный армянскими буквами. Фотокопия ее и латинская транскрипция текста, сопровождаемая французским переводом, были опубликованы в 1964 г. в Варшаве Жаном Дени и Эдвардом Триярским. Мы воспользовались этой публикацией.

4. Сложенная о Хикаре армянская народная сказка.

Таким образом, мы исчерпываем литературу армянской версии повести. То, что не имеет связи с повестью, но сложилось вокруг имени Хикара (сказы, притчи и пр.) не охвачено нами.

Надеемся, что эти по большей части неизвестные научной общественности материалы возбудят новый интерес и помогут разрешить многие вопросы, которые возникли в мировой филологии по поводу одного из известных и замечательных памятников древнего мира—повести о Хикаре.

LA LÉGENDE DE KHIKAR ET SES SOURCES

L'histoire de Khikar, tout comme l'épopée de Gilgamesh constitue l'une des œuvres les plus anciennes de l'Orient. A cours des 2500 années environ qui nous en séparent, elle n'a cessé de voyager et son périple fut très long. Si l'épopée de Gilgamesh nous est parvenue en une seule étape, la légende de Khikar, par contre, en a connu plusieurs, dont elle s'est fortement ressentie, avant de trouver refuge dans les livres imprimés de nos jours.

Elle a fait son chemin dans la tradition orale, d'une part, d'écrit en écrit, d'autre part, subissant par là même de nombreuses modifications qui en altérèrent sensiblement le contenu primitif.

Les études philologiques qui lui sont régulièrement consacrées depuis près de 300 ans, sont aussi riches et multiples que son existence entière.

Œuvre orientale originale et unique, au thème intéressant, offrant le charme de l'ancienneté, cette légende captiva toujours les philologues.

Եւ գնացի յօթևանս իմ, կերա և արբի և ուրախ եղէ: Ապա գնացի առ փարաւոն: Եւ ասէ ցիս. Զի՞ է, երիվարք ձեր խրխնջացին յԱսորիս, լուան կուռք մեր և վրիժեցան:

Եւ ես՝ Խիկար, ելի ի նմանէ և հրամայեցի բերել ինձ աքիս մի և կապեալ տանջէի զնա, մինչև գիտացին ամենայն քաղաքացիքն և երթեալ ծանուցին փարաւոնի, եթէ անարգեաց Խիկար զդիս մեր, քանզի կալեալ աքիս մի և տանջէ յանդիման մեր:

Եւ ես ասացի (B_{16} ասեմ). Արքայ, յաւիտեան կաց, տուր զվարձս ճարտարացն, զի եկեալ շինեսցեն: Ասէ փարաւոն. Երդնում ի գլուխ իմ, զի յորժամ տեսից զարուեստաւորսն քո, զի ելանիցեն յօդս ի շինել զապարանսն, բազում ոսկի և արծաթ տաց քեզ:

Եւ ես գնացեալ պատրաստեցի և թռուցի զհաւերն: Եւ առեալ բարձրացան և ելին յօդն և որպէս ուսեալք էին յինէն, ձայնէին ի վայր. Քար բերէք, քարփին (A_2 $B_{8,14,15}$ քար և խիճ, B_6 կիր քար խիճ, B_7 քար և խիճ և կիր, $B_{12,16}$ կիր և խիճ և աղիւս, B_{17} քար և կիր) բերեք, ճարտարքս պարապ են: Եւ յոյժ զարմացաւ փարաւոն և ամենայն եգիպտացիքն:

Եւ հրամայեցի (A_2B_7 հրամայեաց) նոցա իջանել փխ և մարմին իմ ապականեալ էր (էջ 113 տող 4)—և հրամայեաց նոցա իջանել (էջ 116, տող 17):

28 B_9 յանդիման չաստուածոցն:

Եւ կոչեաց զիս արքայն և ասէ. Վասն է՞ր անարգես զդիս մեր: Եւ ասեմ. Շատ վնաս արարեալ է աքիսդ ինձ: Աքաղաղ մի էր տուեալ ինձ Թագաւորն Սենեքարիմ, և ի ժամու զարթուցանէր զիս գնալ յարքունիսն, և աքիսդ յայսմ գիշերի չոգաւ յԱսորիս և խեղդեաց զաքաղաղն և եկ այսր: Ասէ փարաւոն. Ինձ այնպէս թուի, թէ որչափ ծերացար, իմաստութիւն քո անհամացաւ: Յեգիպտոսէ մինչև յԱսորիս Յ և Կ խրախս է, զի՞արդ գնաց աքիսդ յայսմ գիշերի և խեղդեալ զաքաղաղն՝ եկ այսր: Եւ ասեմ ցփարաւոն. Եթե գիտես, որ յԵգիպտոսէ յԱսորիս այսչափ ճանապարհ է, ապա զի՞արդ լուան կուռք ձեր զխրխնջիւն երիվարաց մերոց և վրիժեցան:

Իբրև լուաւ արքայն, տրտմեցաւ յոյժ և ասէ. Եկ և մեկնեա զոր հարցանեմ քեզ: Սիւն մի էր, և ի վերայ սեանն՝ մարք ԲԺ-ն, և ի վերայ միոյ միոյ մարքի՝ անիւք Լ, և ի վերայ միոյ միոյ անուի՝ Բ սուրհանդակ. մինն՝ թուխ և մինն՝ սպիտակ: Եւ ասեմ. Զայդ աստրոց որթարածերն լաւ գիտեն: Սիւնն, զոր ասացեր, տարին է, և մարքն ԲԺ-ան՝ ամիսք տարոյն է, և անիւքն Լ՝ աւուրք ամսոյն է, և Բ սուրհանդակն՝ տիւ և գիշերն է:

Եւ ասէ փարաւոն. Մանեա ինձ պարան աւազէ. երկայնութիւն նորա կանգունս Թ և ստուարութիւն նորա բղունկ մի: Եւ ասեմ. Տէր արքայ, հրամայեա, զի ի գանձարանէ քումմէ հանցեն օրինակ, զի տեսից և ըստ օրինակին արարից, զի մի ստուար լիցի կամ նուրբ: Եւ ասէ փարաւոն թէ. Ի գանձարան իմ ոչ գոյ, բայց թէ դու ոչ մանես, զարծաթն ոչ տանիս, զոր իմաստութեամբ խնդրեցեր, և ես խոստացայ տալ:

Յայնժամ մտախորհ եղէ և ի թիկանց կոյս տանն ծակեցի զորմն, ուստի արևն ծագէր, և յորժամ ծագեաց արևն, խառնեցի փոշի ընդ աւազի և արկի ի լուսամուտն: Եւ երևեցաւ շողն որպէս մանոցք, և ասեմ. Տէր իմ արքայ, հրամայեա, զի ժողովեսցեն զայդ, զի այլ մանեցից:

---

1 B_{16} ընդ փխ վասն:

7 A_2 $B_{4,5,8,14,15,17}$ ԳՃԿ փխ Յ և Կ:

8 $B_{4,5}$ եհան զգլուխ աքաղաղին:

9 $B_{4,5}$ ԳՃ և Կ խրախս է փխ այսչափ ճանապարհ է.

15 A_2 սպիտակ և ասէ պատմեա ինձ:

20 B_7 Կ փխ Թ:

28 B_7 եղև փխ երևեցաւ:

Իբրև ետես արքայն, ծիծաղեցաւ և ասէ. Օրս այս յաւուրս օրհնեալ եղիցի, զի տեսի զխիկար կենդանի առաջի դից իմոց և զիմաստութիւն մտաց սորա տեսի և փառաւորեցայ:

Դարձեալ պատուեաց զիս և ի գլուխ բազմականին կացոյց զիս և պարգևս մեծամեծս երետ ինձ և զքանքարն, զոր խնդրեցի, ետ ցիս և խաղաղութեամբ յուղարկեաց:

Եւ ես եկեալ հասի առ տէրն իմ Սեննեքարիմ արքայն: Եւ նա ել ընդ առաջ իմ և մեծաւ ուրախութեամբ ընկալաւ զիս: Եւ ասէ ցիս. Խնդրեա յինէն զոր ինչ և կամիս և տաց քեզ: Եւ ես անկեալ, երկիր պագի արքային և ասեմ. Զոր ինչ կամիս տալ ինձ, պարգևեա Աբուսմաքայ ընկերի իմոյ և կենսատուի, բայց ինձ տացես զնադան, զքուեր որդին իմ, զի այլ ուսումն ուսուցից նմա, զի առաջին ուսումն մոռացեալ է:

Եւ հրամայեաց արքայն տալ զնադան ի ձեռս իմ և ասէ ցիս. Երթ և արա զոր ինչ և կամիս, զի արժան է մշակն վարձոյն:

Յայնժամ առի զնադան, զքուեր որդին իմ և տարայ ի տուն իմ և կապեցի ընդ սիւն մի երկաթի, որ էր կշիռ նորա էճ լիտր և եդի առասան ի պարանոց նորա և հարի Ռ փայտ զլանջս նորա և Ռ՝ զթիկունսն: Եւ կայր ի դրան սրահի իմոյ, և տայի նմա հաց կշռով և ջուր չափով և յանձն արարի զնա Բելիաբայ ծառայի իմոյ և ասեմ ցնա. Ցլանելն իմ և ի մատանելն, զոր ինչ ասեմ ցնադան, գրեա ի մատենի քում:

---

2 B_1 իմ փխ դից իմոց, A_2 աչաց իմոց փխ դից իմոց, $B_{7,17}$ դիմաց իմոց փխ դից իմոց:

5 A_2 $B_{4,5,7,8,12,15,17}$ պարգևեաց փխ երետ:

ԱՅԼ ԽՐԱՏՔ ՆԱԴԱՆԱՅ ՔՈՒԵՐ ՈՐԴՈՅՆ ԻՒՐՈՅ, ԶՈՐ ԵՏ ԽԻԿԱՐ

1. Որդեակ, որ ընդ ականջն ոչ լսէ, ընդ թիկունսն լսեցուցանեն:

A_2 B_{1-24} թիկունսն և ընդ լանջսն:

Խօսել սկսաւ Նադան և ասէ. Հայր, զի՞ ոխացար ընդ քեռորդւոյս քո: Ասեմ.

A_1 չիք՝ խօսել-ասեմ, A_2 B_{1-24} ասէ Նաթան զի ոխացար քուեր որդոյ քում և ասէ ցնա փխ խօսել-ասեմ, $A_{4,5}$ և ասէ զի ոխացար ընդ իս (A_4 իս հայր) փխ խօսել-ասեմ:

2. Որդեակ, ես յաթոռ պատուոյ նստուցանել զքեզ կամեցայ, և դու յաթոռոյ իմոյ կործանել զիս կամեցար, բայց անմեղութիւն իմ ապրեցոյց զիս:

A_3 նստուցի փխ նստուցանել զքեզ կամեցայ, կործանեցեր, չիք՝ կամեցար, $A_{2,4-5}$ B_{1-24} յաթոռ փառաց նստուցի զքեզ և դու յաթոռոյ (A_4 յաթոռոյ իմմէ) կործանեցեր զիս, A_2 B_{1-24} չիք՝ բայց-զիս, $A_{4,5}$ զիս ի ձեռաց քոց:

3. Որդեակ, եղեր ինձ որպէս կարիճն, որ եհար զասեղն: Ասէ. Ահա խայթոց, որ չար է քան զքոյդ:

Դարձեալ եհար զթաթ ուղտոյն, և նա հարեալ զթաթն ի վերայ կարճին, ճմլեաց և ասէ. Գերեկ, ոչ գիտացեր, թէ շունչ քո յոտս իմ է:

B_3 ոտացն ուղտոյն, B_3 եղեր փխ հարեալ, B_{12} եհար փխ հարեալ, A_2 B_{1-24} զոտն (B_7 զթաթն փխ զոտն)՝ փխ զթաթն, չիք՝ կարճին (B_{12} նորա և փխ կարճին), ճմլեաց զնա, գիտէիր չար կարիճ, զօրութիւն փխ շունչ, A_3 չիք՝ ոչ գիտացեր:

4. Որդեակ, եղեր ինձ որպէս այծն, որ ուտէր զտօրունն: Ասէ տօրունն ցայծն. Ոչ գիտես թէ ինև շիկեն զմորթ քո, զի՞ ուտես զիս: Ասէ այծն. Ես ի կենդանութեանս իմում ուտեմ զքեզ, և ի մահուան իմում թող խլեն զտակ քո և շիկեն զմորթ իմ:

A_2 B_{1-24} թէ արմատով իմով նեռկեն փխ թէ ինև շիկեն զմորթ քո, A_3 նեռկեն փխ շիկեն, A_2 B_{1-24} յետ մահուան իմոյ թող հանեն զարմատ քո և նեռկեն փխ ի-շիկեն:

5. Որդեակ, եղեր որպէս զայն, որ ձգէր նետ յերկինս և ոչ կարաց հասուցանել ի վեր, բայց զանօրէնութիւն շահեցաւ, և դարձաւ նետն ի գլուխ իւր։

A_2 B_{1-24} ձգեաց (B_9 եհար և ձգեաց) փխ ձգէր, զնետ իւր փխ նետ, A_2 B_{1-24} թէպէտ դարձաւ փխ և դարձաւ, A_2 հասուցանել ի վեր, B_{1-24} զանօրէնութիւն իւր։

6a. Որդեակ, այսպէս կարծէիր, թէ զտեղի նորա լնում, բայց թէ իցէ ագի խոզի երկայն իբրև կանգուն հինգ, զծիրոյ տեղին ոչ կարէ լնուլ։

Եւ թէ լինիցի սար նորա ծիրանի, զմարմնով թագաւորի ոչ անկանի։

A_2 չիք՝ որդեակ, A_2 B_{1-24} դու այդպէս, չիք՝ նորա, լնում զծիկարայ, ագին խոզի լինի թ կանգուն զտեղի ձիոյն փխ իցէ-տեղին, չիք՝ և թէ լինիցի-անկանի։

6b. Ես այսպէս ասէի, թէ կաս ի տան իմում և ժառանգես զինչս իմ, այլ ըստ անօրէնութեան քում ոչ հաճեցաւ զքեզ աստուած։

A_2 B_{1-24} կարծէի փխ ասէի, կայցես փխ կաս, A_{2-5} B_{1-24} ժառանգեսցես, $A_{4,5}$ այլ որդեակ ընդ (A_5 չիք՝ այլ) փխ այլ ըստ, A_2 B_{1-24} յաջողեաց քեզ (B_7 հաճեցաւ փխ յաջողեաց) փխ հաճեցաւ զքեզ։

7. Որդեակ, եղեր ինձ որպէս գայլն, որ պատահեաց իշոյն և ասէ. Ողջոյն քեզ յավանակ։ Ասէ էշն. Այդ ողջոյնդ տեառն իմոյ, որ արձակեաց զպարանն յոտից իմոց և ետ տեսանել զդէմս քո չար և արեանարբու։

A_2 պատուհասեցաւ փխ պատահեաց, $B_{4,5}$ պատահեցաւ փխ պատահեաց, A_2 $B_{7,12}$ ասէ գայլն, A_2 B_{1-24} ասէ ցնա, $B_{3,7}$ իմոյ եղիցի, A_2 B_{1-24} զերեսդ փխ զդէմս, չիք՝ չար և արենարբու, B_3 տեսանել զքեզ և։

8. Որդեակ, եղեր ինձ որպէս որոգայթն, որ թաղեալ կայր յաղբըն և ունէր զհատն ի բերան իւր։ Եգիտ զնա ճնճղուկն և ասէ. Զի՞նչ գործես։ Ասէ որոգայթն. Յաղօթս կամ առ աստուած։ Ասէ ճնճղուկն. Այդ, որ ի բերանդ է, զի՞նչ է։ Ասէ որոգայթն. Քաղցելոց հացիկ է։ Եւ ջանաց ճնճղուկն առնուլ զհացն։ Նա կալաւ զպարանոց նորա։ Ասէ ճնճղուկն. Թէ քաղցելոց հացն այս է, նա աստուած, որ յաղօթս կաս, այսպէս լսէ քեզ աղօթից քոց։

A_2 B_{1-24} յաղբիւսն փխ յաղբն, տեսեալ փխ եգիտ, ասա զինչ փխ զինչ, հաց է քաղցելոց փխ քաղցելոց հացիկ է, A_{3-5} հատիկ փխ հացիկ, A_2 B_{1-24} խմբում կրճատման ենթականերով աղավաղվել է բնագիրը, բացի B_7-ից։

9. Որդեակ, եղեր ինձ որպէս ոջիլ հացի, որ եկեր զշտեմարանս թագաւորաց, և ինքն ումեք ոչ է օգուտ և պիտանի։

10a. Որդեակ, եղեր ինձ որպէս պոյտն, որ արարին արկղ ոսկոյ, և կող նորա ի մրոյն ոչ պակասէր։

$A_{4,5}$ պտուկ փխ պոյտն, պակասէր երբեք։

10b. Դարձեալ եղեր որպէս սերմնացանն, որ ցանեաց գրիւ տասն և զկնի բաղում աշխատանացն, ժողովեաց գրիւ հինգ։

A_4 չիք՝ դարձեալ, A_5 որդեակ փխ դարձեալ։

10c. Դարձեալ եղեր ինձ որպէս զոշխարն, որ զընկերն տարան ի խոհակերոցն, և զանձն իւր ոչ կարաց ապրեցուցանել ի զենմանէն։

A_4 չիք՝ դարձեալ, A_5 որդեակ փխ դարձեալ։

10d. Եղեր ինձ որպէս շունն, որ եմուտ ի հնոց բրտի և յորժամ ջեռաւ, սկսաւ հաչել ընդդէմ նորա։

$A_{4,5}$ որդեակ եղեր, B_{13} դշուն բրտին, դարթեաւ փխ ջեռաւ, յերես բրտին, փխ ընդդէմ նորա։

11a. Որդեակ, եղեր ինձ որպէս խոզն, որ երթայր ի բաղանիսն։ Յորժամ ետես զնախարարսն, անկեալ ի տիղմն՝ թաւալէր ասելով թէ. Դուք ի ձերդ լուացեք և ես՝ յիմս։

A_3 և ասէր փխ ասելով թէ։

11b. Եղեր ինձ որպէս շուն ժպիրհ, որ ջիլս տեառն իւրոյ ծամեաց։

A_{2-5} B_{1-24} որդեակ եղեր, A_3 ամենայն իւրոյ փխ տեառն իւրոյ։

12. Որդեակ, սնուցի զքեզ որպէս զձագս աղուեսու։ Եւ ակն քո ի ծակ քո, մատն իմ կոգիւ ի բերան քո, և քո մատունքդ տարեալ է յաչս իմ։

$A_{2,3}$ չիք՝ որդեակ, A_2 B_{1-24} արծուի փխ աղուեսու, և մատունք քո արկեալ են յաչս իմ քանզի ակն քո չար էր տեսանել զիս (B_3 մատունք, B_{12} մատունքդ արեցիր, $B_{4,5}$ արկեալ են) փխ և․․․յաչս իմ։

13a. Որդեակ, շուն, որ զորսն ինքն ուտէ, կերակուր գայլոց եղիցի։

A_2 B_{1-4} թողու զտէր իւր փխ զորսն ինքն ուտէ։

13b. Ձեռք, որ սնուցի և ինձ ոչ օգտէ, ուսօքն հատցի։

B_{1-24} որդեակ ձեռք, A_2 B_{1-24} օգնէ (B_{17} օգտէ) փխ օգտէ, A_5 սրով փխ ուսօքն։

13c. Եւ աչք, որ ինձ լոյս ոչ տա, ագռաւք հանցեն զնա։

B_{1-24} որդեակ փխ և, A_2 B_{1-24} հանցեն ագռաւք ձորոց փխ ագռաւք հանցեն զնա։

14. Որդեակ, զերեսս դիցն և զարքունեացն ցուցի քեզ և մեծ փառաց հասուցի, և դու ի փառաց ընկեցեր զիս։

B_{1-24} դարքունի (B_7 զարքունեացն), $B_{4,5}$ դիցեն փխ դիցն, B_{1-24} չիք՝ և մեծ փառաց հասուցի, B_7 փառաց իմոց։

15. Եղեր ինձ, որդեակ, որպէս ծառն, որ կտրէին։ Եւ ասէր ծառն. Թէ ոչ էր յինէն ի ձեռին քում, ոչ կարէիր յաղթել ինձ։

16. Որդեակ, եղեր ինձ որպէս ձագ ծիծառանն, որ անկաւ ի բունոյ իւրմէ։ Եւ գտեալ զնա աքիստ մի ասէ. Թէ յինէն ի զատ լեալ էիր, ի մեծ չարիս մատնեալ էիր։ Ասէ ձագն. Բարիդ, զոր առնես ինձ, ի գլուխ քո դարձցի։

A_3 աքիստ մի ասէ գոհացիր գաստուծոյ որ, A_3 առնել կամիս փխ առնես ինձ։

17. Որդեակ, եղեր ինձ որպէս զաքիստն, որ ասացին. Թող զսովորական զբարսդ քո և համարձակ լինի քեզ յարքունիս մտանել և ելանել։ Ասէ աքիստն։ Եթէ եղիցին աչք իմ արծաթի և թագ իմ ոսկի, զսովորական բարս իմ ոչ թողից։

$A_{3,4}$ ասացին Թէ, A_2 լիցի փխ լինի, A_2 B_{1-24} չիք՝ և ելանել, $A_{4,5}$ արծվի փխ արծաթի, A_2 B_{1-24} թաթ (B_7 թագ) փխ թագ։

18. Որդեակ, նմանեցար դու օձին, որ պատատեցաւ ընդ մասրովն և անկաւ ի գետն։ Եւ տեսեալ զնա գայլուն՝ ասէ. Ահա չար ի չար հեծեալ և չար է, որ վարէ զնոսա։

A_3 գմասրենովն փխ ընդ մասրովն։

19a. Որդեակ, տեսի զմաքին, որ սպանդանոցն ածին։ Երբ օրն չէր հասել, դարձաւ առ յընկերսն իւր և ետես զորդիս որդոց իւրոց։

A_3 տարան փխ ածին։

19b. Ես զամենայն բարիս ջամբեցի քեզ, և դու զհաց ի հողոյ արգելեր յինէն։

A_{3-5} չիք՝ ես, քեզ Նագան, A_2 B_{1-24} որդի Նաթան փխ ես, A_2 քո փխ ի հողոյ։

19c. Ես իւղով անուշիւ օծի զքեզ, և դու հողով զմարմինս իմ ապականեցեր։

B_{1-24} որդեակ իւղով, A_2 B_{1-24} զքեզ քհնիգս և ծիրանիս ագուցի քեզ, չիք՝ հողով, ապականեցեր ի տուն խաւարի ($B_{12,16}$ գիս մատնեցեր ի մահ փխ ապականեցեր-խաւարի)։

19d. Ես զքեզ արարի ծառ պտղով լիացեալ, և դու յարմատոց խլել կամեցար զիս։

$A_{3,4}$ լի պտղով փխ պտղով լիացեալ, A_3 խլեցեր փխ խլել կամեցար, $A_{4,5}$ խլեցեր զիս քեզ որդի իմ Նագան (A_5 քվեր փխ քեզ) փխ խլել կամեցար զիս։

19e. Ես բարձրացուցի զքեզ որպէս աշտարակ, որ թէ եկեսցեն յիս թշնամիք, ելից ամրացայց ի քեզ, և դու ինքնին գտար թշնամի տան իմում և կորուստ անձին իմոյ։

A_5 B_{1-24} որդեակ ես, A_2 B_{1-24} զի թէ թշնամի հասանէր ի վերա իմ դու լինէիր ինձ ամուր պարսպի (B_{1-24} ապաստանի փխ պարսպի, իսկ B_7-ը լրիվ համապատասխանում է A_1-ին) փխ որ թէ-ի քեզ, A_5 չիք՝ տան իմում, A_2 B_{1-24} չիք՝ և կորուստ (B_7-ը ուճի)։

19f*. Որդեակ, սնուցի զքեզ, որպէս մայր զանդրանիկ որդի, և դու ի կեանս իմ կորացուցիր զիս։ (9cA2 և 20B1)։

B_3 որպէս մայր գմանուկ և, A_2 $B_{6,7,16}$ ուսուցի փխ սնուցի, A_2 $B_{6,7,14,16}$ չիք՝ մայր, A_2 ուրացեր փխ կորացուցեր, $B_{6,8,9}$ կուբացուցեր փխ կորացուցեր։

Ասել սկսաւ որդին ապերախտ և անհնազանդ և ասէ. Տէր իմ հիկար և հայր բազմերախտ, արա ինձ ըստ ողորմութեան քում։ Աստուծոյ մեղանչեն մարդիկ, և Թողուն նոցա։ Եւ մի՛ մեղանչեր անձին իմոյ, և ես եղեց քեզ չար ծառայ, որպէս զմի յանցաւորաց քոց։

A_{3-4} Նագան փխ որդին-անհնազանդ, A_2 B_{1-24} ասէ Նաթան փխ խօսել-քում, $A_{3,4}$ չիք՝ և հայր բազմերախտ, A_3 Թողու փխ Թողուն, յանձն փխ անձին, A_2 B_{1-24} և աստուած Թողու փխ Թողուն նոցա և դու Թող, անպիտան փխ չար, չիք՝ քոց։

Ասէ.

20. Որդեակ, եղեր որպէս զարմաւենին, որ բուսեալ էր յափն գետոյն, և պտուղ նորա ի գետն անկանէր։ Եկն տէր ծառոյն կտրել զնա։ Ասէ արմաւենին. Թող զիս յայսմ ամի և ի միւսում ամին բերից պտուղ։ Ասէ տէրն. Դու ի ժամանակդ չես բերել ինձ պտուղ, և այժմ, որ կտրել կամիմ, զի՞արդ պիտանասցիս։

A_2B_{1-24} արմաւենի մի տնկեալ էր այր ոմն փխ եղեր—բուսեալ էր, A_2 B_{1-24} նորա փխ ծառոյն, A_4 յայմ մի փխ յայսմ ամի, բերից քեզ, պտուղ և ոչ արկից ի գետն, տէր ծառոյն, A_4 դու ի քում ժամն կատար փխ դու ի ժամանակդ, A_1 դու ի քում այդր չեղեր պիտանի որ ոչ քո է պիտանասցիս փխ դու-պիտանասցիս, A_5 յայնժամ կտրել կամիմ զքեզ փխ և այժմ-պիտանասցիս։

21. Որդեակ, ասացին գայլուն, թէ ի բաց կաց ի գիհէդ, ապա թէ ոչ՝ շունք պատառեն զքեզ։ Ասէ գայլն թէ. Ի բաց կենամ, կուրանամ, զի փոշին աչացս դեղ է։

A_2 B_{1-24} չիք՝ ապա-զքեզ, գիհին աչացս շահ է և փորոյս օգուտ (B_{16} դեղ է աչացս) փխ աչացս դեղ է։

22. Որդեակ, ագին շանն հաց բերէ և բերանն՝ բիր։

$A_{2,4-5}$ B_{1-24} ասյ փխ բերէ, A_4 եւ զարձեալ ասէ որդեակ փխ որդեակ։

Եւ ի նմին ժամու չարախորհ որդին կորստեան ուռեալ պատառեցաւ։

Եւ ասէ Իկար. Ով բարի առնէ, բարոյ հանդիպի և որ փորէ խորխորատ, անձամբն լնու։

Եւ որ սիրէ զչարն, ատելի է բազմաց, և որ առնէ զբարի, փրկի ի մահուանէ։

A_{2-5} B_{1-24} ուռաւ Նաթան և փխ չարախորհ-ուռեալ, B_7 պատառեցաւ և սատակեցու ի փառս սատանայի յայնժամ Իկար գոհացեալ զատուածոյ, A_5 փորէ հոր խորխորատ, B_{1-24} խորխորատ ընկերին, B_6 ինքեանք անկանին և ի յաւիտենական հրոյն աջժանի լիցին փխ անձամբն լնու։ A_2 ընկերին ինքն անկ անի փխ անձամբն լնու, $A_{4,5}$ B_{1-24} իւրով լնու գնա փխ անձամբն լնու, A_2 B_{1-24} գնեա երթա բարեաց ժառանգէ գնա (B_9 գարբայութիւն փխ գնա) փխ առնէ-մահուանէ։

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

Այս բնագիրն առհասարակ Իկարի գրույցի գրավոր ամենահին աղբյուրներից մեկն է։ Նրան տարեկից է միայն Բրիտանական թանգարանի № 7200 ասորական ձեռագրի հատվածը, որ հրատարակել է Ռ. Հարրիսը 1898 թվականին։ Երկուսն էլ հաշվվում են 11—12-րդ դար։ Մենք նկատի չունենք էլեֆանտինի արամեական պապիրուսները (մեր թվագրությունից առաջ 5-րդ դար), որ ներկայացնում են Իկարի բուցարձակ այլ խմբագրություն։

Հայկական հնագույն այս պատառիկները, որ նոր են հայտնի դառնում, պարունակում են որոշ հատվածներ ուսուցող խրատներից և պատմությունից։ Գրված են դասական հայերենով։

Բնագրին առավել մոտ է A խումբը, ուստի և դնում ենք այդ տարբերակի մեջ, համառոտագրելով A_6։

Ձեռագիրը խիստ քայքայված է (Մատենադարանի ձեռագիր № 5465, էջ 101ա—103բ)։ Թղթերը խունացել են և եզրերից թափվել։ Վերանորոգվել է վերջերս։ Քայքայված մասերը լրացվել են նոր, սպիտակ թղթերով։ Դա բարձրացրել է պատառիկների տևունակությունը, բայց դարձրել պակաս ընթեռնելի։

Պատառիկներն ունեն բնագրագիտական մեծ արժեք։ Հրատարակում ենք լուսապատկերով։

* * *

Ա. Որդեակ, կցորդ [լեր] մարդո իմաստնո, զի իմաստնասցիս եւ մի՛ կցորդ լիներ ընդ մարդո անաւրինի եւ անմտի եւ անզգամի, զի մի իբրև զնա հաստատեսցիս։

Որդեակ, մի՛ քաղցրանար, զի կլանիցեն զքեզ և մի՛ դառն լինիր, զի մի թշնամանցեն զքեզ, այլ լեր հանդարտ ի գործս քո և կերիցես զպաւրութիւն ամենայն երկրի։

Որդեակ, մինչդեռ կաւշիկս յոտս են, կոխեա զփուշս եւ արա ճանապարհ, որդոց քոց և թոռանց։

Որդեակ, մեծատան որդին աւձ եկեր, ասեն վասն դեղո եկեր, աղքատին որդին եկեր, ասեն առ սովին եկեր։

Որդեակ, կեր զմասն քո եւ ընկերին մի աչս արձակեր։

Որդեակ, ընդ աներկեղի ի ճանապարհ մի երթիցես... ընդ անամաւթի հաց մի ուտեր։

Որդեակ, թե տեսանիցես զթշնամիս քո գլորեալ, մի ծաղր առնիցես զնա, մինչ յառնիցէ կանգնիցի ի վերա ոտից իւրոց եւ հատուցանէ քեզ։

Բ. ...Հայր իմ ծերացաւ։ Հաս[եալ կա] առ ա[փ]ն գերեզմանի։ Զանցեալ է միտք իւր եւ դողացեալ է խորհուրդ նորա։ Սկսաւ վատնել զինչս իմ։ Զծառայս եւ զաղախնայս եւ զսիրելիս իմ սկսաւ տանջել առաջի աչաց իմոց։ Զձիս և զջորիս իմ եւ զամենայն եհատ։

Իբրև տեսի ես եթէ Նադան քեռորդի իմ զբանս իմ այլայլեաց, խնայեցի յինչս իմ։ Խաւսել սկսա եւ ասեմ ցնադան. Աղէ, դու... նչս իմ մերձե[ցիր]։

Որդեակ, ասացեալ է յառակս, թէ ձեռք որ ոչ առացաւ, ակն մի հայեսցի։ Եւ պատմեցաւ առաջի Սենեքարիմա արքաի տեառն իմոյ։

Եւ ասէ արքա։ [Նա]դան, մինչ Խիկար կենդանի է [յինչ] նորա [մի մերձենար]։

Յայնժամ Նադան քեռորդին իմ իբրև ետես զնաբոռդան եղբայր իւր կրտսեր, զոր սո՞նման նմա սնուցի եւ ուսուցի եթե ի տան իմում կեցցէ։ Յայնժամ տր....

Գ. ...յր(ի)ց նորա։ Եւ ասէ ցիս,. երթ յասպանջականս քո եւ ի վաղին եկ առ իս։ Եւ հրաման ետ.... առաջի իւր եւ ասէ ցիս. Ո՞ւմ նման եմ ես եւ նախարարք իմ ո՞ւմ նման են։

Եւ ասեմ. Նման ես դու Սինա և նախարարք քո բրմացն։

Եւ ասէ ցիս. Երթ յասպընջականս քու

Եւ կանխեալ են....

Հրաման ետ նախարարացն, զի զգեցցին ներկածուս եւ ինքն զգեցաւ քարտեսս։

Եւ հրամաեաց կոչել զիս եւ ասէ. Ո՞ւմ նման եմ ես եւ նախարարք իմ ո՞ւմ նման են։

Եւ ասեմ. Նման ես դու....

Ծաղկաց նոցա։

Իբրեւ զայս լուաւ արքա, յոյժ ուրախ եղեւ եւ ասէ ցիս.

Արդ, աղէ, ասա [ինձ] Սե[նեքերիմ]....



101ա

101բ

102ա

102բ

103ա



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՐԱՏ ԽԻԿԱՐԱՅ ԻՄԱՍՏՆՈՅ

(ՏԱՐԲԵՐԱԿ C)

Այս տարբերակը համապատասխանում է Յ. Կոնիբերի 1898 թվականի հրատարակությանը:

Բնագիրը սակայն կազմվել է այլ սկզբունքներով և հեռանում է Կոնիբերի օրինակից:

Կոնիբերի օգտագործած ձեռագրերը տարաբնույթ հավաքածու են և չեն պատկանում միևնույն խմբին: Դա խանգարել է տալու աղբյուրի ճիշտ պատկերը:

Պարզ չէ, թե Կոնիբերի մոտ որ ձեռագիրն է համարվել հիմք, ուստի այստեղ նրա բնագիրն արտահայտում ենք C_4 համառոտագրությամբ, իսկ C_4-ի նկատմամբ բոլոր ընթերցումները տալիս ենք փակագծի մեջ, նրա իսկ օգտագործած պայմանական նշաններով: Բայց եթե C_4-ը զուգահեռ է գնում մեր բնագրին, և շեղվում է տողատակ իջեցված որևէ այլ օրինակ, բերում ենք ուղղակի նրա ընթերցումը, C_4-ից անկախ:

Բնագրի համար հիմք է ծառայել C_1-ը: Հազվադեպ ուղղումներ կատարվել են միայն այն ժամանակ, երբ դա թելադրել է C խմբի մեջ գտնվող որևէ այլ ձեռագիր: Ուղղումների դեպքում խուսափել ենք հենվել Կոնիբերի օրինակի վրա, որովհետև այն անխաոն չէ:

CEF խմբերի և A_3 ձեռագրի մուտքը ընդհանուր է, համեմատելի (նկատի չունենք բազմաթիվ այլընթերցումները), ուստի ներկայացնում ենք միասին, տարբերակների մեջ եղած առնչությունները անսքող պահելու համար: Հիմքը դարձյալ C_1-ն է:

Բնագիրը կազմելիս ոչ թե նպատակ ենք ունեցել վերականգնել նախնականը, մի բան, որ այս տարբերակով հնարավոր չէ, այլ տալ տարբերակի ճիշտ պատկերը, ուստի այնպիսի ընթերցումներ, որոնք նախընտրելի չեն մյուս տարբերակների համեմատությամբ, բայց հատուկ են C խմբին, պահել ենք վերևում:

Երբ միևնույն խմբի մեջ չունենք ճիշտ օրինակը, սխալը թողնում ենք անփոփոխ (օր. №№ 87, 97 խրատները և այլն):

Պահպանել ենք այն տարընթերցվածները, որոնք անարժեք են, ունեն վրիպակային բնույթ, բայց կարող են հուշել ձեռագրերի ազգակցության մասին։

Տարընթերցվածների համարակալումը խրատականքի բաժնում տրված է ոչ թե ըստ տողերի, այլ ըստ խրատների։

C տարբերակի հավելյալ խրատներն անհարազատ են, որովհետև գալիս են C_4-ից և հավանաբար այնպիսի ձեռագրից են ծագում, որոնք չեն պատկանում C խմբին, բայց պահպանել ենք Կոնիբերի հրատարակությունը լրիվ ներկայացնելու համար։

Հավելյալ խրատներն ընդմիջարկել ենք պատմողական խրատներից հետո, ուր հաջորդում է Հարցումն թագաւորաց որդւոց և պատասխանիւ Խիկարայ բաժինը, բնագրային խմբից տարբերել ենք աստղանիշերով (*)։

Հավելյալ պատժիչ խրատները պատկանում են Բոդլեյան գրադարանի արևելյան № 131 ձեռագրին, որը Կոնիբերը համառոտագրում է Canon։

Աղբյուրներն իրենց պայմանական նշաններով և խրատների համակարգը տրված են գրքի վերջում (աղյուսակ III—ուսուցող խրատներ, աղյուսակ IV—պատժիչ խրատներ)։ Կոնիբերի՝ իր կողմից հավելյալ համարվող խրատների համարակալումը հայկական տառերով (կ, կա, կբ) տալիս ենք նույնությամբ C_4-ի տակ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՐԱՏ ԽԻԿԱՐԱՅ ԻՄԱՍՏՆՈՅ

Յամս և ի թագաւորութեան Սենեքարիմայ՝ արքային Նինուէի և Ասորեստանեաց, ես՝ Խիկարս, դպիր էի Սենեքարիմայ արքայի։ Կ կին առի և Կ ապարանս շինեցի և ես՝ Խիկարս, Կ տարւոյ եղա, և ոչ եղև ինձ որդի։

Յայնժամ մտի առ չաստուածան իմ բազում ընծայիւք, բորբոքեցի հուր առաջի չաստուածոցն և արկի խունկս անուշս ի վերայ նորա, մատուցի ընծայս և զոհեցի զոհս, եդի ծուներս և աղաչեցի։

Եւ այսպէս ասէի յաղաչելն իմում.

Ով տեարք իմ և չաստուածք. Բելշիմ և Շիմիլ և Շահմին. հրամայեցեք և տուք ինձ արու զաւակ, քանզի ահա Խիկար կենդանի մեռանի, և զի՞նչ ասեն մարդիկ, եթէ Խիկար կենդանի

---

2 C_2 չիք՝ յամս-արքային, C_3 ամս փխ յամս և ի, չիք՝ արքային։
3 C_3 առենադպիր, Fa,b Սենեքերիմայ։
4 Fa և արարի Կ կինս փխ Կ կին առի, Fb առի ինձ Կ կինս փխ Կ կին առի, A_3 արարի փխ առի, Fb չիք՝ և ես Խիկարս։
5 $E_{4'5}$ ամի փխ տարւոյ, Կ ամաց։
6 $E_{4'5}$ գնացի փխ մտի, C_2 աստուածան, $E_{4'5}$ չաստուածքն, Fa,b կուռքն, (Fa_1 լուծքն) փխ չաստուածան։
7 Fa,b և վառեցի փխ բորբոքեցի, $C_{1-3'5}$ A_3 չիք՝ առաջի չաստուածոցն, C_4 չիք՝ անուշս (Paris 58 և 131 ունեն՝ և անուշս), C_3 անուշս անուշս Fa,b անուշահոտս։
8 Fa,b վասն ծննդեան փխ եդի ծուներս։
10 C_1 էր ապաչէն իմ փխ ասէի յաղաչելն իմում, Fa,b ասելով փխ և այսպէս ասէի յաղաչելն իմում։
11 չաստուածք իմ, C_1 Բէշիմ և Զբիմիլ և Շահմին, C_2 Բելշիմ Շիմիլ և Զահմին, C_3 Բէշիմ և Շիմել և Շամին, C_4 Բելշիմ և Շիմիլ և Շամին (Paris 131 Բէլշիմ և Շիմել և Շահմին), Fa Բելշիմ և Շահմիմ, Fb Բէլշիմ և Շահիմ։
13 Fa,b չիք՝ կենդանի և։

և իմաստուն և ճարտար մեռաւ, և ոչ կայ իւր որդի, որ թաղէ զնա և ոչ՝ դուստր, որ լացցէ զնա: Զունիմ ժառանգ յետ մահուան իմոյ, և եթէ որդի իմ աւուրս ծ քանքարս ծախեսցէ, ոչ կարէ սպառել զինչս իմ, այլ զի արկցէ հող ձեռօք իւրովք ի վերայ իմ, զի մի մնացից անյիշատակ:

Յայնժամ ձայն եղև ի չաստուածոցն և ասէ. Խիկար, ոչ է հրամայեալ քեզ զաւակ, բայց եթէ առցես զնադան քեռորդին քո և սնուցանիցես զնա քեզ որդի, և հատուցանիցէ զանուն քո:

Յայնժամ լուայ զայս ի չաստուածոցն և առի զնադան քեռորդին իմ Ա տարոյ և ագուցի նմա բեհեզս և ծիրանիս և եդի մանեակ ոսկի ի պարանոց նորա և, որպէս որդի թագաւորի, գեղաշուք զարդարեցի զնա և արբուցի նմա կաթն և մեղր և ննջեցուցանէի զնա ի վերայ արծուեաց և աղաւնեաց իմոց, մինչև եղև է ամաց:

Եւ ապա սկսայ ուսուցանել նմա զդպրութիւն և զիմաստութիւն և զհանճարագիտութիւն և զպատասխանիս հրովարտակաց և զդարձուածս հակառակաց խօսից: Ի տուէ և ի գիշերի ոչ դադարէի յուսուցանելոյ զնա: Եւ յագեցուցի զնա ուսմամբ, իբրև հացիւ և ջրով:

Ապա ասէ արքայն ընդ իս. Խիկար, դպիր և իմաստուն, գիտեմ զի ծերացեալ ես, և յետ վախճանի քո ով է, որ կատարէ ճարտարութեամբ և իմաստութեամբ զգործս արքունեաց մերոց: Եւ ես տրտում եմ յայդմ խորհրդիդ:

Եւ ասեմ ցնա. Արքայ, յաւիտեան կաց, է իմ որդի, որ է առաւել և հանճարեղ քան զիս: Եւ ասէ թագաւորն. Ած զնա առ իս, զի տեսից:

Եւ իբրև ածի զնա և կացուցի առաջի թագաւորին, ետես և ասէ. Յաւուրս իւրում օրհնեալ եղիցի Խիկար, զի ի կենդանութեան իւրում էած կացոյց առաջի իմ զորդի իւր, և ինքն ի հանգստեան եղիցի:

Երկիր պագի տեառն իմոյ և առեալ տարա զնադան յապարանս իմ:

Եւ այսպէս ասեմ յուսուցանելն իմում և ի խրատելն զհանճար և զխորագիտութիւն զամենայն:

---

1 Fa,b իմաստուն էր, $E_{4,5}$ մեռանի, Fa կայր նորա փխ կայ իւր, Fb դոյր նորա փխ կայ իւր:
2 $C_{4,5}$ $E_{4,5}$ լայ, Fa,b լայր, զնա զինչ ասեմ:
3 C_4 և ոչ եթէ որդի յետի աւուրն փխ և եթէ որդի իմ աւուրս (Paris 58 ունի ճիշտ բնթերցվածք):
4 Fa,b զի մնայն:
6 Fa,b չաստուածոցն իմոց, C_1 ասացին փխ ասէ, C_4 ասէին, $C_{2,5}$ $E_{4,5}$ ասէր, Fb թէ փխ և ասէ:
8—9 C_1 հատուցանէ զնա փխ հատուցանիցէ զանուն քո, C_4 հատուցէ քեզ զանունդ քո, Fa,b, E_4 հատուցէ քեզ զանուն քո, E_5 չիք՝ և հատուցանիցէ զանուն քո:
10 $C_{2,3,5}$ յորժամ փխ յայնժամ:
10—11 Fa,b և ապա առի զնաթան քեռորդին իմ առ իս որ էր մի ամի:
11 $E_{4,5}$ մի ամի փխ ա տարոյ, $E_{4,5}$ զգեցուցի փխ ագուցի:
12 C_{1-3} $A_3F_{4,5}$ չիք՝ եղև:
14 C_3 ուսուցանէի փխ ննջեցուցանէի, A_3 արծուենաց:
15 Bod տարկան փխ ամաց:
17 C_4 գհանճար գիտութեան, $E_{4,5}$ հանճարս գիտութեան:
17—18 A_3 հրովարտակաց և գելսն իմում (Այստեղ A_3-ն ավարտվում է):
18 C_3 հակառակախօսից:

1 C_3 կարէ փխ է որ կատարէ:
2 C_3 իմաստութեամբ վճարել:
3 Fa,b և ես հանապազ, վասն այդ բանիդ փխ յայդմ խորհրդիդ:
4 C_1 չիք՝ արքայ, Fa,b պատասխանի ետու նմա և ասացի փխ և ասեմ ցնա, չիք՝ է (որ է):
5 C_5 $F_{4,5}$ Paris 131 և 58 առաւել աւելի, Fa,b հանճարեղ և իմաստուն է փխ և հանճարեղ, C_4 չիք՝ և հանճարեղ, քան զիս և է աւելի հանճարեղ:
6 Fa,b տեսից զնա:
7 Fb ես փխ իբրև ածի զնա և, Fa,b կացուցի զնա:
8 $C_{1,2}$ յաւուրս իւր աւրհնեալ եղիցի սորա փխ յաւուրս իւրում օրհնեալ եղիցի Խիկար, C_3 աւուրս սորա, Fa,b այս օրս օրհնեալ եղիցի:
9 Bod 58 չիք՝ ինքն:
11 Fa,b և ես երկիրպագի արքային փխ երկիր պագի տեառն իմոյ:
13 Canon իմում ականջ արայ որդի իմ խօսկին և խրատն իմ զբեր ի մատանին քում և մի մոռասցիս զի ամբ կենաց քոց շատանայ և փառօք և մեծութեամբ հասցես ի ծերութիւն, C_5 խրատէն իմում:
13—14 C_4 E_{4-5} Fa,b չիք՝ և ի խրատէն-զամենայն, C_3 և խրատէն զհանճար և զգիտութիւն և զիմաստութիւն խրատ և խօսք Խիկարայ իմաստնոյ խրատն այս է Խիկարայ զոր ասաց քեռորդուն:

ԽՕՍՔ ԵՒ ԽՐԱՏ ԵՒ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԽԻԿԱՐԱՅ. ԽՐԱՏՆ ԱՅՍ Է ԽԻԿԱՐԱՅ, ԶՈՐ ՈՒՍՈՑՑ ՆԱԴԱՆԱՅ

1a. Որդեակ, եթէ լսես բան ինչ ի դրան արքունի, մեռո և թագո զնա ի սրտի քում և մի՛ ումեք ի վեր հանիցես:

1b. Զկապն կնքեալ մի՛ արձակեսցես և զարձակեալն՝ մի՛ կապեսցես:

1c. Եւ զոր տեսանես, մի՛ ասել և զոր լսես, մի՛ յայտնել:

2. Որդեակ, ի համբառնալ զաչս քո տեսանել զկին գեղեցիկ, յունեալ և ծարուրեալ, մի՛ ցանկանայցես ի սրտի քում: Եւ եթէ տացես նմա զամենայն ինչս քո, առաւել ի նմանէ ոչինչ գտանիցես, այլ դատապարտիս յաստուծոյ և ի մարդկանէ: Քանզի նման է նա գերեզմանի, որ ի վերոյ գեղեցիկ լինի և ի ներքոյ՝ լի ժահահոտութեամբ և ոսկերօք մեռելոց:

3. Որդեակ, լաւ է ընդ առն իմաստնոյ քարինս կրել, քան ընդ առն անմտի գինի ըմպել:

4. Որդեակ, մի՛ լինիր իբրև զնշենի, որ յառաջ ծաղկի և յետոյ հասանի պտուղ նորա, այլ լեր որպէս ձիթենի, որ յետոյ ծաղկի և յառաջ հասանի պտուղ նորա:

1a C_4 դրանէ, C_4 վերայ փխ վեր:

1b Bod կապեալ փխ կնքեալ, C_2 արձակես, C_4 արձակել (Bod արձակեսցես), C_5 արձակեր, C_2 կապես, C_5 կապեր:

1c C_1 զոր լսես մի յայտնեսցես և զոր տեսանես մի յայտնեսցես փխ եւ– յայտնել, C_2 զոր լսես միայն տես և զոր տեսանես մի ասես, Bod չիք՝ խրատք:

2 C_1 չիք՝ տեսանել, $C_{1,2}$ ծրարեալ փխ ծարուրեալ, Canon ոչինչ աւելի գտցես քան զքո միայն մեղս և ամօթ ի մարդկանէ և դատաստանն աստուծոյ, Bod ոչինչ իւիք ի նմանէ աւգտիս առաւել քան թէ դատաստան յաստուծոյ արդար իրաւանց է իմ:

4 Ven, C_1 չիք՝ որ յառաջ-պտուղ նորա, C_5 իբրև փխ որպէս, $C_{2,4,5}$ թթենի փխ ձիթենի:

5. Որդեակ, ընդ իմաստնոյ մի՛ անմտիր և ընդ անմտին մի՛ իմաստնանար:

6. Որդեակ, ընդ առն իմաստնոյ կցորդ լեր, որ իմաստուն լինիս իբրև զնա և մի՛ լինիր կցորդ անզգամի և անմտի, զի մի իբրև զնոսա անմիտ կոչեսցիս:

7. Որդեակ, մի՛ լինիր կարի քաղցր, որ կլանեն զքեզ և մի՛ կարի դառն, որ թքանեն զքեզ, այլ լեր հեզ և հանդարտ ի գործս գնացից քոց և յամենայն բանս:

8. Որդեակ, մինչդեռ կոշիկդ յոտդ է, կոխեա զփուշն և արա ճանապարհ ոտից քոց:

9a. Որդեակ, մեծատան որդին օձ եկեր, և ասեն՝ դեղ է նմա, իսկ աղքատի որդին եկեր, և ասեն՝ առ սովոյ եկեր:

9b. Զքո մասն կեր և քո ընկերին աչք մի՛ արձակեր:

9c. Ընդ աներկիւղի ի ճանապարհ մի՛ երթար և ընդ անզգամի հաց մի՛ ուտեր:

10. Որդեակ, անկանի անօրէնն ի չար գործոց իւրոց և կանգնի արդարն ի բարի գործոց իւրոց:

11. Որդեակ, թէ տեսանես զքնշնամին քո գլորեալ, մի՛ ծաղր առներ զնա, զի թէ կանգնի, չար հատուցանէ քեզ:

12. Որդեակ, մի՛ մերձենար ի կին անզգամ և բամբասող, զի մի արհամարհիս և կատակիս դու ի նոցանէ, և նա յափշտակէ զքեզ:

---

5 C_4 իմաստուն, $C_{2,4,5}$ իմաստանար (C_2 իմաստանայր):

6 C_4 կցորդ լեր առն իմաստնոյ (Bod լեր ընդ), որպէս փխ իբրև, C_3 զնա փխ զնոսա:

7 $C_{3,5}$ զի մի կլանիցեն փխ որ կլանեն, C_3 զի մի թքանիցեն փխ որ թքանեն:

8 $C_{1,2,5}$ կոխէ փխ կոխեա, Canon որդոց փխ ոտից:

9a $C_{3,4}$ կերաւ, C_3 ասացին փխ և ասեն, C_{2-5} չիք՝ իսկ, C_3 օձ կերաւ ասացին թէ քաղցած էր փխ եկեր և ասեն առ սովոյ եկեր, C_4 ի սովոյ կերաւ:

9b C_3 բաժինն փխ մասն, Ven, Canon կեր քաղցրութեամբ, C_4 գաչաղ մի արկաներ:

9c C_3 ընդ առն:

10 Bod, *38* չար գործուք:

11 Bod չիք՝ տեսանես, Ven քեզ եւ լինի հանապազ չարկամ:

12 C_4 բանբանասող, Ven ի նոցանէ և դու ծաղր լինիս, C_{3-5} ի նոցանէ դու և կատակիս:

13. Որդեակ, զգան որդւոյ քո մի՛ խնայեր, զի գանն մանկանն այնպէս է, որպէս աղբիւր պարտիզի, կամ կապ և մատնեհար քսակի և որպէս կապան յոտն իշոյ, այնպէս օգուտ է գանն կարճին, զի թէ հարկանես գաւազանաւ մի կամ երկու, հանդարտի և ոչ մեռանի, բայց եթէ թողուս զնա ի կամս իւր, գող լինի, և տանին զնա ի կախումն և ի սպանումն: Եւ լինի քեզ նախատինք և բեկումն:

14a. Որդեակ, ուսո զորդին քո ի քաղց և ի ծարաւ, որ խոնարհութեամբ վարեսցէ զկեանս իւր:

14b. Զբան թշնամոյ որ ասեն, մի ընդունիցիս, զի զքոյդ նորա ասիցեն:

15. Որդեակ, առանց զինու ի ճանապարհ մի՛ երթիցես, զի մի թշնամին քո պատահեսցէ քեզ և կորնչիս:

16. Որդեակ, որպէս վայելուչ է ծառն պտղովք և ոստօք և լերինք անտառախիտ մայրօք, այնպէս վայելուչ է այր և կին, որդի և եղբայր, ազգական և բարեկամ և ամենայն զարմք:

17. Որդեակ, առն որ ոչ գոյ կին, որդի և եղբայր, ազգական և բարեկամ, զնա երկար սրհամարհեն: Եւ նման է նա ծառոյ, որ յանցըս ճանապարհի իցէ, և ամենեքեան, որ անցանեն ընդ նա, տերեվաթափ և ճղակոտոր առնեն զնա:

18. Որդեակ, մի՛ ումեք ասել շար և մի՛ լինիր շատախօս առաջի տեառն քո, զի մի անարգեսցիս ի նմանէ:

19. Որդեակ, յաւուր զոհից քոց մի՛ խոտորիր: Գուցէ ոչ հաճեսցի տէր ի զոհս քո, զոր առնես:

---

13 Ven *զորդիդ ի ծեծ փխ զգան որդւոյ քո, ծեծ փխ գանն,* $C_{3,4}$ *ազդն ի փխ ազբիւր,* $C_{2,3,4}$ *և որպէս փխ կամ,* C_4 *ի իշուն ոաքըն փխ յոտն իշոյ,* C_4 (Ven?) *ծեծ տղայքն փխ գանն կարճին,* Bod *չիք՝ այնպէս-կարճին,* C_4 (Ven?) *զի թէ ծեծես գաւազանաւ մի կամ երկուս նայ խելաքանայ հանդարտութեամբ ոչ մեռանի (*Bod *և 58 ինչպես բնագրում),* C_5 *չիք՝ և ի սպանումն,* C_2 *կոխումն փխ բեկումն:*

14b C_4 *որդեակ զթշնամոյն,* C_4 *չիք՝ զբան (*Bod *ունի զբան),* Bod *քո որ ասիցէ քեզ փխ որ ասեն,* $C_{2,5}$ *ասէ փխ ասեն,* C_3 *թշնամուն,* C_5 *ընդունիս,* C_3 *ասիցեն և նա ևս ոչ ընդունի,* C_4 *նոքայ փխ նորա:*

15 C_{2-5} *երթայր փխ երթիցես,* Canon *զինու ի զիչերք,* C_3 *հասանի կամ պատահէ փխ պատահեսցէ:*

16 Ven *չիք՝ և կին,* C_4 *զարմիք,* C_3 Bod *58 չիք՝ և ամենայն զարմք:*

17 C_4 *որոյ փխ առն որ, կամ որդի կամ եղբայր և,* C_4 *յերկար ամաւք փխ զնա երկար,* C_3 *որ ի ճանապարհի, որք անցան:*

18 $C_{2,4,5}$ *շատախօս լինել:*

19 C_4 *չիք՝ քոց,* C_4 *չիք՝ զոր առնես (58-ը ունի):*

20. Որդեակ, մի՛ թողուր զլաւիսն և երթար ի հարսանիսն, զի ամենեցուն մահ առաջի կայ, և պատուհասն մեծ է:

21a. Որդեակ, մատանի ոսկի, որ չէ քո, մի՛ դներ ի մատին քո:

21b. Եւ մի՛ ագանիր բեհեզս և ծիրանիս, որ չէ քո:

21c. Կամ ձի, որ չէ քո, մի՛ հեծանիր, զի ծաղր առնեն զքեզ տեսօղքն և որ գիտեն զքեզ:

22. Որդեակ, թէպէտ և քաղցեալ իցես, հաց, որ չէ քո, մի՛ ուտիցես:

23. Որդեակ, մարդ, որ զօրաւոր է քան զքեզ, մի՛ հակառակիլ ընդ նմա: Գուցէ սպանանիցէ զքեզ:

24. Որդեակ, ճմլեա և մաշեա զչարն ի սրտի քում և բարի լինի քեզ յաստուծոյ և ի մարդկանէ, և ըղձակիս կամօքն աստուծոյ:

25. Որդեակ, թէ բարձր են սեմք տան քո երկան իբրև կանգունս է, յորժամ մտանես, խոնարհեցո զգլուխ քո:

26. Որդեակ, մի՛ առնուր կշռովն մեծ և տար փոքրովն և ասես թէ շահեցայ, զի աստուած ոչ տայ, այլ բարկասցի, և դու սովամահ կորիցես:

27. Որդեակ, մի՛ երդնուր սուտ, զի մի աւուրս քո պակասեսցին:

28. Որդեակ, օրինացն աստուծոյ ունկն դիր և ի չարէն մի՛ երկընչիր, զի պատուիրանն աստուծոյ պարիսպ է մարդկան:

29. Որդեակ, ի բազմութիւն որդւոց քոց մի՛ խնդասցես և ի պակասելն նոցա մի՛ տրտմեսցիս:

30. Որդեակ, որդիք և ստացուածք աստուծոյ շնորհին: Աղքատն մեծանայ և մեծատունն աղքատանայ, խոնարհն բարձրանայ և բարձրն խոնարհի:

21c $C_{3,4}$ *հեծնուլ (*Bod *հեծեր,* Canon *հեծներ),* C_4 *հեծնուլ գնա, չիք՝ և որ գիտեն զքեզ (*Bod *ի գիտեն գնա, 58 որ գիտեն զքեզ):*

22 Canon *թէպէտ և կարի,* Bod *թեպէտ և յոյժ:*

23 $C_{3,4}$ *չիք՝ մարդ (*Bod *58 ունի):*

24 C_3 *ի շահիս զու յաստուծոյ փխ և ըղձակիս կամօքն աստուծոյ:*

25 C_{2-5} *չեմք,* C_3 *չիք՝ երկան,* C_4 *չիք՝ տան քո (*Bod *58 ունի),* C_4 *յերկինսն փխ երկան,* C_3 *յորժամ ի տունն, մտանես և ելանես:*

26 C_3 *մեծ կշռով,* $C_{3,4}$ *փոքր կշռովն,* C_3 *ասել,* Bod *58 չիք՝ այլ բարկասցէ,* $C_{3,4}$ *կորնչիս:*

27 C_2 *աւուրց,* C_3 *աւուրք,* C_4 *յաւուրց քոց,* Bod *58 յաւուրք քո պակասցեն ի վերայ երկրի:*

28 C_3 *երկիր փխ մի երկնչիր,* C_4 *մարդոյ:*

30 $C_{1,4}$ *խոնարհանայ փխ խոնարհի,* $C_{2,5}$ *խոնարհի այլ երդ ոսիւք և տես աչաւք...* (Այդպիսով հաջորդ խրատն անիմաստ ձևով միակցվել է նախորդին):

31. Որդեակ, եթէ ընկերն քո հիւանդանայ, մի՛ ասեր թէ դինչ տանիմ նմա, այլ երթ ոտիւք և տես աչօք, զի լաւ է նմա, քան զոսկոյ և արծաթոյ։

32a. Որդեակ, վասն չարախօսութեան ոսկի և արծաթ մի՛ առնուր. զի գործքն մահաբեր է և չար յոյժ։

32b. Եւ մի՛ հեղուր արիւն արդար ի տարապարտուց, զի մի հեղցեն զարիւն քո փոխանակ արեան նորա։

33. Որդեակ, պահեա զլեզու քո ի չարախօսութենէ և զաչ քո յարատ հայելոյ, զձեռն քո ի գողութենէ, և բարի լինի քեզ յաստուծոյ և ի մարդկանէ։ Զի որ գողանայ ոսկի կամ այլ փոքր իրք, պատուհասն մի է և սպանումն։

34. Որդեակ, մի՛ շնար ընդ կնոջ ընկերի քո, զի մի բարկասցի աստուած և այլքն շնան ընդ կնոջ քո։

35. Որդեակ, մի՛ առնուր կին այրի, զի յորժամ բանս ինչ լինի և ասիցէ. Աւա՛ղ զառաջին այրն իմ, և դու տրտմիս։

36. Որդեակ, եթէ վրէժ հասանիցէ քեզ, յաստուծոյ մի՛ խռովիր և ժժգոհիր, զի մի բարկասցի աստուած և այլ խստագոյն ի տարաժամ սատակէ զքեզ։

37. Որդեակ, մի՛ սիրեր զորդին քո, առաւել քան զծառայքն, զի ոչ գիտես եթէ ի նոցանէ է՞, որ լինի քեզ պիտանի։

38. Որդեակ, խաշինքն, որ ի գիհեն ի զատ գնան, գայլոց մասն լինիցին։

---

31 $C_{2,5}$ չիք՝ եթէ-նմա, C_4 եթէ բարձր են չէմք տան քո և ընկերն քո հիւանդանայ (Bod, 58, Canon չիք՝ բարձր-քո և) փխ եթէ ընկերն քո հիւանդանայ։

32a $C_{2,5}$ չարախօս փխ չար յոյժ։

32d C_4 հեղցի։

33 C_3 փոքր ինչ պատուհաս մեծ է, C_4 պատուհասն և սպանումն մի է։

34 C_3 բարկասցի քեզ, զի մի և այլք շնասցեն փխ և այլքն շնան ընդ կնոջ քո, C_4 շնանան։

35 C_3 լինիցի, C_1 չիք՝ աւաղ։

36 $C_{2,5}$ ձըչկոհիր, C_3 ձըճգոհար, C_4 ձըճգոհիր, C_3 մահ տարաժամու սատակեսցէ զձեզ։

37 $C_{2,5}$ զծառայն քո, C_3 զծառայս քո, որն փխ է որ, C_4 եթէ ո ի նոցանէ պիտանի լինի քեզ (Ven չիք՝ ո Bod լինի բարի, 58 եթէ ի նոցանէ որ լինի քեզ պիտանի) փխ եթէ-պիտանի։

38 C_1 գեհենէ փխ գիհեն, C_3 բաժին լինին փխ մասն լինիցին։

39. Որդեակ, դատեա զդատաստան արդար ի մտի քում և զծերսն պատուեա, զի ի մեծ դատաւորէն դու պատուեսցիս և լինիր բարի։

40. Որդեակ, մի՛ հպարտանար յաւուր մանկութեան քո, զի մի կորուսցէ զքեզ մանկութիւն քո։

41. Որդեակ, ընդ դատախազին առաջի դատաւորին մի՛ ցասմամբ խօսիր, այլ իմաստութեամբ։

42. Որդեակ, մի՛ տար թոյլ ընկերին քո կոխել զոտն քո, զի մի համարձակեալ կոխեսցէ զպարանոց քո։

43. Որդեակ, եթէ խնդրեսցես յաստուծոյ բարի, նախ զկամս նորա կատարեա պահօք և աղօթիւք, և ապա կատարին խնդրուածք քո ի բարին։

44. Որդեակ, լաւ է անուն բարի, քան զտեսակ ցանկալի, զի գեղեցկութիւն ապականի, և անուն բարի յաւիտեան մնայ։

45. Որդեակ, լաւ է կոյր աչօք, քան զկոյր մտօք, զի կոյր աչօք արագ ուսանի զերթևեկ ճանապարհին, իսկ կոյր մտօքն թողու զուղղորդ ճանապարհն և երթայ ընդ կամս իւր։

46. Որդեակ, լաւ է աղքատութիւն ժողովել, քան ի մեծութիւն ցրուել։

47. Որդեակ, քննեա զբանն ի սրտի քում և ապա՝ ի վեր հանիցես, զի թէ փոխես զբանն՝ քաղցր լինի։

48. Որդեակ, եթէ լսես բան չար յումեքէ, թաքո դնա ի սրտի քում կանգունս է, զի այն չարն մեռանի և ի բարին կատարի։

49. Որդեակ, մի՛ ընդ վայր ծիծաղիր, զի ընդ վայր ծիծաղիլն կռիւ է, և կռիւն սպանումն է և մահ։

---

39 C_1 արդարութեան փխ արդար, C_3 չիք՝ և լինի բարի, C_4 լինի քեզ։

41 $C_{3,4}$ դատախազին քո, C_3 դատաւորաց, C_3 բարկութեամբ մի խօսիր այլ հեզութեամբ և յաղթեսցես դու նմա փխ մի-իմաստութեամբ, C_4 ցասմամբ մի խաւսիր զի մի անդրադա և անմիտ կոչեսցիս (Bod անպիտան երևեսցիս փխ անմիտ կոչեսցիս) այլ զոր (Bod չիք՝ զոր) հարցանէ պատասխանի քաղցրութեամբ տացես և զդատաստան նորայ ի գլուխ նորայ կատարեսցես փխ մի ցասմամբ-իմաստութեամբ։

42 C_3 զատն փխ զոտն, զպարանոցդ փխ զպարանոց քո։

43 C_3 չիք՝ ապա։

45 C_3 քանզի աչօք կուրն, C_3 մտօքն կուրն, C_4 ըստ փխ ընդ։

46 $C_{3,4}$ աղքատութեամբ, չիք՝ ի, մեծութեամբ։

47 Bod քննեա զբարի, C_3 հան դնա փխ հանիցես, զբանն և ընտրեա զբարին, C_4 վերայ հասանիցես փխ վեր հանիցես։

50. Որդեակ, բան սուտ և ստախօսութիւն որպէս արճիճ ծանր է, բայց յետ սակաւ աւուրց ի վերայ ջրին գայ, որպէս տերև ծառի։

51. Որդեակ, յայտնեա զփոքր խորհուրդն բարեկամին քո և յետ սակաւ աւուրց գրգռեա զնա և անարգէ։ Եթէ զայն խորհուրդն ոչ յայտնէ, ապա զմեծ խորհուրդն յայտնեա նմա և հաւատարիմ սիրելի պահեա զնա քեզ։

52. Որդեակ, առաջի թագաւորի և առաջի դատաւորի օգնական լեր ընկերին քո, զի ի բերանոյ առեւծոյ զերծուցանես զնա, և լինի քեզ անուն բարի և փառք։

53. Որդեակ, եթէ եկեսցէ թշնամին քո յոտս քո, թողութիւն շնորհեա նմա և ծիծաղեա ուրախութեամբ ընդ երեսս նորա և ընկալ զնա։

54a. Որդեակ, որ չկոչեն զքեզ, մի՛ երթար ի պատիւ և որ չհարցանեն, պատասխանի մի՛ տար։

54b. Ընդ հարուցեալ կամ ընդ սառուցեալ գետոյ մի՛ անցաներ, զի մի յանկարծամահ լինիցիս։

55. Որդեակ, փորձեա զորդին քո ի քաղց և ի ծարաւ։ Եթէ կարօղ իցէ, ապա տուր զինչս քո ի ձեռս նորա։

56. Որդեակ, ի կոչնատանէն և ի հարսանեացն քան զքո ընկերն յառաջ ել և այլ մի՛ դառնալ յետս, զի անուն բարի առնուս և չառնուս վերք ի գլուխ քո։

57a. Որդեակ, կերա դառնիճ և արբի լեղի և ոչ էր լեղի, քան զաղքատութիւն։

---

50 C_1 Աւուր, Bod բայց պակաս յաւուրն, C_4 ծառոյ։

51 $C_{3'4}$ խորհուրդ քո, զայն փոքր, C_4 անարգէ զնա և (Bod զնա և ասա), C_3 չիք՝ սիրելի, C_4 չիք՝ քեզ։

52 C_3 դատաւորի փխ առաջի դատաւորի, C_4 թագաւորաց, դատաւորաց, զի որպէս։

53 C_3 ընդունեա փխ ընկալ, C_4 զնա պատուով։

54a C_4 չիք՝ որ, երթալ, C_1 ուր փխ որ, Bod որ չի կոչիս ի պատիւ մի երթայր, C_4 ուր զքեզ։

54b C_4 և փխ կամ, C_4 անցանիցես, C_1 անընկամահ փխ յանկարծամահ, Ven անընկամահ լինիս, C_3 մեռանիս անմահ փխ յանկարծամահ լինիցիս, C_4 մեռանիցես փխ լինիցիս։

55 $C_{3'4}$ և քէ փխ եթէ, C_3 իցէ տանել, C_4 ձեռին։

56 C_3 դառնաս, $C_{3'4}$ չիք՝ յետս (Ven ուն), Ven չիք՝ քան-ընկերն, Canon էնպէսայ որ անուշ իւղով օծեցիր զգլուխ քո (C_4-ի մյուս ձեռագրերը՝ ինչպես բնագրում՝ զի անուն-գլուխ քո։ Մեզ անհասկանալի է որ ձեռագրին է պատկանում զի անուշ քո փխ զի անուն ընթերվածը, որը, ինչպես նշում է Կոնիբերը, համընկնում է ասորական հետ)։

57a $C_{3'4}$ դառն փխ լեղի։

57b. Բարձի աղ, բարձի արճիճ և ոչ էր ծանր, քան զպարտքն, զի թէպէտ ուտէի և ըմպէի ոչ կարէի հանգչել։

57c. Բարձի երկաթ և քարինս ի վերայ ուսոց իմոց և լաւագոյն էր ինձ, քան զբնակիչն ընդ անդիտի և անմտի։

58. Որդեակ, թէ աղքատ իցես ի մէջ ընկերաց քոց, մի՛ յայտներ, զի մի արհամարհեսցիս ի նոցանէ, և բանից քոց ոչ լսեն։

59a. Որդեակ, սիրեա զկին քո, որպէս զմարմին քո, զի անձն քո է և կցորդ կենաց քոց և յոյժ աշխատանօք սնուցանէ զորդին քո։

59b. Եւ դու ուսո զորդին քո ի քաղց և ի ծարաւ, զի սովորութեամբ վարեսցէ զկեանս իւր։

60. Որդեակ, զգաղտ բան կնոջ քո մի՛ յայտներ, զի տկար է և փոքրոգի և յայտնէ կարևորացն և դու արհամարհիս։

61. Որդեակ, եթէ գինի ըմպես, պահեա զլեզու քո ի շատախօսութենէ և բարի լինի քեզ, և կոչիս իմաստուն։

62. Որդեակ, զինչս քո ի մարդ առանց մուրհակի և վկայի մի՛ տար։ Գուցէ ուրանայ և դու ապաշաւես։

63. Որդեակ, ի բարեկամէ քումմէ մի՛ հեռանար։ Գուցէ այլ ոչ գտանիցես այնպիսի խորհրդակից և բարեկամ։

64. Որդեակ, սիրեա զհայր քո, որ ծնաւ զքեզ և զանէծս հօր և մօր քո մի առցես, զի ի բարութիւն որդւոց քոց խնդասցես։

65. Որդեակ, լաւ է զի գողասցեն զինչս քո, քան թէ գացեն ի վերայ քո գողութիւն։

66a. Որդեակ, առն, որում աստուած աջողեալ է, դու պատուեա զնա։

57b $C_{3'4}$ և փխ բարձի, Canon հանգչել մինչև հատուսցէ գպարտսն։

57c C_3 բարձի երկաթ ինձ լաւ էր քան թէ բնակէի ընդ անմտի փխ բարձի-անմտի։ C_4 երկար փխ երկաթ։

58 C_1 չիք՝ քոց, C_3 քան ընկեր քո փխ ի մէջ ընկերաց քոց, C_3 յայտներ նմա գաղքատութիւն քո։

59a $C_{1'2'4'5}$ սիրեա զմարմին քո և զկին քո փխ սիրեա զկին քո որպէս զմարմին քո, C_3 զի կցորդ է կենաց քո փխ զի անձն-քոց, C_3 զորդիսն քո ի քաղց և ի ծարաւ զի սովորութեամբ վարեսցէ զկեանս իւր (Միակցվել են a և b խրատները, արտահայտելով անսովոր իմաստ)։

59b C_2 սովորութեան վառեսցէ փխ սովորութեամբ վարեսցէ։

60 C_3 գաղտնիք արուի քո փխ զգաղտ բան, C_4 բան քո կնոջ, C_3 է բնութեամբ, յայտնէ զնա։

61 C_3 ի գինի ըմպելն փխ թէ գինի ըմպես։

62 C_4 չիք՝ ի մարդ, C_3 չիք՝ մի տար-ապաշաւես։

63 C_3 չիք՝ այնպիսի։

65 C_3 գողութիւն ի քեզ։

66a C_3 որում և փխ առն որում, C_4 մարդ որ իրենն աստուած յաջողէ։

66b. Եւ յորժամ տեսանիցես զծերն, դու յոտն կացիր առաջի նորա և մեծարեա։

67. Որդեակ, խնամախօսութիւն մի՛ առներ, զի զբարին աստուծոյ յողակէ տեսնուն և զմեջումն ի քենէ։

68. Որդեակ, եթէ դադարեն գետք ի գնացից, կամ արեգակն յընթացից, կամ քաղցրացի լեղի որպէս մեղր, կամ սպիտակասցի ագռաւն որպէս զաղաւնի, նոյնպէս թողցէ անզգամն զանզգամութիւն իւր, և անմիտն զգաստասցի։

70. Որդեակ, շունն, որ հետ քեզ գայ, քարամբ հալածեա զնա, որ ոչ գայ։

71a. Որդեակ, գործք բարի և պատարագ անբիծ հաճոյ է աստուծոյ։

71b. Եւ յամօթոյ, իբրև յաստուծոյ, երկիր։

72. Որդեակ, խորհուրդ չար և սիրտ առնուլ ի դիւին հակառակութեան է, և համբերութիւն հիմն է ծերոց և ամրութիւն հաւատոյ։

73a. Որդեակ, որ քեզ չար թուի, ընկերին մի՛ առներ։

73b. Եւ զոր չէ քո, այլոց մի՛ տար։

74a. Որդեակ, սիրեա զճշմարտութիւն և ատեա զստութիւն։

74b. Պատուիրանացն աստուծոյ ունկն դիր և ի չարէ մի՛ երկնչիր, զի պատուիրանն աստուծոյ պարիսպ է մարդոյ։

75. Որդեակ, ի մարդոյ չարէ և ի ստախօսէ փախի՛ր, զի ագահութիւն մայր է ամենայն չարեաց, և ամենայն չարիք ի լրբութենէ ծնանին։

66в C_5 ոտաց փխ յոտն, $C_{3,4}$ մեծարեա զնա։

67 C_3 զի բարին և բագակն յաստուծոյ առնուն և զվատն ի քէն, C_4 յաստուծոյ և յըղջակէ, քենէ և ասեն զքո զեմ հանուղն, C_5 զմեջումն, C_4 զչարն փխ զմեջումն։

68 C_4 յընթացից նորա, C_3 անզգամութիւն իւր անմիտն փխ անզգամն, զգաստացի, Canon զգնացս իւր փխ զգաստասցի։

70 C_4 շուն որ թողու զտէրն իւր և գայ զհետ քո (ven զկնի քո), C_5 արեամբ փխ քարամբ, Canon չիք՝ որ ոչ գայ, Bod որ չի գայ։

71b Bod այնպէս փխ իբրև։

72 C_4 ի սիրտ առնուլն դիւրին (Ven և սիրտ, դիւրին), C_3 առն նենգաւորի հակառակութեան է փխ առնուլ-է, գործոց փխ ծերոց (ven, 58 ծերոց), C_3 բայց համբերութիւն հիմն է հաւատոյ փխ և-հաւատոյ։

73a C_3 որ ինչ, $C_{3,4}$ ընկերին քո զու (Ven 58 չիք՝ քո զու)։

74a C_4 ատեա զանօրէնութիւն և (Ven, 58 չիք)։

74b C_3 չարեացն, երկիր փխ մի երկնչիր, Ven վախել փխ երկնչիր, C_3 եղիցի քեզ փխ է մարդոյ։

75 C_3 ստախօսէ երկիր և, Bod, 58 ստախաւսութենէ, C_3 ստախօսութիւն փխ ագահութիւն, Bod մեղաց փխ չարեաց, C_3 չիք՝ և-ծնանին։

76. Որդեակ, զդատաստան մի՛ սիրեր։ Թէպէտ և յաղթես ոսոխին, սակայն յաստուծոյ դատաստանէն երկի՛ր։

77. Որդեակ, որ ըղորդ է մտօքն՝ արեգակն է լուսաւոր և որ նենգ է սրտիւ՝ խաւար է մթացեալ։

Որ առատ է սրտիւ՝ լի է ողորմութեամբ և որ ագահ է, թէպէտ և ունի ինչ, յիմար է։

78. Որդեակ, ի տուն արբեցողի մի՛ մտաներ և թէ մտանես, մի՛ յամեր, զի ի բարուց քոց ունայն և դատարկ մնաս։

79. Որդեակ, զընկեր քո ի մօտոյ կամ ի հեռաստանէ մի՛ բամբասեր, զի բանք չար շուտ և փութով հասցէ ի տէր։

80. Որդեակ, հրամայեալ է աստուած զգինին վասն ուրախութեան, բայց ի տեղիս բողանոցի և այլ վատթար և անպատշաճ տեղի. լավ է աղբ ըմպել քան զգինի։

81. Որդեակ, այր արբեցող այնպէս կարծէ ի միտս իւր, թէ ես քաջ եմ և զամենայն զօր և ինչ խօսիմ իմաստութեամբ խօսիմ։ Ոչ գիտէ, թէ հանդիպի առն քաջամտի, որ ի շօշափել ձեռաց իւրոց յերկիր կործանէ զնա և ձգէ։

82. Որդեակ, թէ տեսանես զթշնամին քո գլորեալ, դու տրտմեա ի վերայ նորա, զի բարեկամ առնես, ապա թէ ծաղր առնես, յորժամ կանգնի, չար հատուցանէ։

83. Որդեակ, այր արբեցող այնպէս կարծէ, եթէ երկիրս ի շուրջ է ի գալ, ոչ գիտէ, եթէ գլուխն իւր խելագարեալ է։ Քանզի որպէս մայր է երկիր ամենայն պտղոց և պտղաբերաց, նոյնպէս մայր է գինին ամենայն չարեաց։ Անխտիր ախտի ախտանալ տայ և անողորմ սպանանել տայ, խելագարել տայ զմարդն և յանասնոց բնութիւնն փոխէ։

---

76 Canon զդատաստան անիրաւութեան, $C_{4,5}$ սիրեր զի (C_4 սիրել)։

77 C_1, 58 խորդ փխ ըղորդ, C_4 ողորդ, արեգական նման, C_3 չիք՝ մթացեալ, աստուածանման է ողորմածն փխ լի է ողորմութեամբ, անողորմն փխ և որ ագահ է։

79 C_3 չար և զրգռութիւնք, շուտ և փութ, $C_{2,5}$, 58, Canon տէր և կուռք, տէրն իւր։

80 Canon արար փխ հրամայեալ է, C_3 ի տեղիս տեղիս փխ ի տեղիս-տեղի։

81 C_3 արբեցողն փխ այր արբեցող, քան զինքն քաջ կայ փխ հանդիպի-ձգէ։

82 C_3 եթէ թշնամին քո գլորի տրտմեա այլ մի ուրախանար թէ ուրախանաս յորժամ կանգնէ քեզ չար հատուցանէ, $C_{2,4,5}$ առնես զնա հատուցանէ քեզ։

83 $C_{2,5}$ շուռ փխ շուրջ, Canon, 58 շրջշրջէ փխ ի շուրջ է, C_5 գետինն փխ երկիր, C_1 մայր է գինին և փխ որպէս մայր է երկիր, C_2 չիք՝ մայր է-նոյնպէս, $C_{2,5}$ Canon, 58 խելագրէ փխ տայ, խելագարել տայ։

84. Որդեակ, փախիր յերաշխաւորութենէ, ապա թէ երաշխաւոր կենաս, դու այնպէս կարծէ, որ ի գրպանէ քումմէ տացես։ Ոչ միայն տալն, այլև ճոխեն զմուրուզդ։

85. Որդեակ, ստախօս մի՛ լինիր, զի եթէ զքեզ ժամ մի սուտ գտանեն, երբ զղորդն խօսիս՝ սուտ հաշուին։

86*. Որդեակ, հեղգես զգինի քո և մի՛ ըմպել ընդ անզգամս և ընդ անօրէնս, զի մի՛ արհամարհեսցիս ի նոցանէ (7)։

87*. Որդեակ, յառաջ սիրէ մարդ սուտ, բայց յետոյ ատելի լինի քեզ, զի բան սուտ որպէս լոր պարարտ է, բայց որ անմիտ է, նա կլանէ զնա (17)։

88*. Որդեակ, մի՛ ասեր թէ տէրն իմ անմիտ է և ես իմաստուն, այլ համբերեա նմա անմտութեամբ և առ իմաստուն ունիցես զանձն մինչև այլ ոք գովեսցէ զքեզ (22)։

89*. Արդեակ, ցածո գաշ քո և կակղացո զբարբառ բերանոյ քո և նայեա ընդ ակամբ քո, զի մի երևեսցիս մարդկան անզգամ, զի եթէ աղաղակաւ տաճար շինէր, էշն ամէն օրն է դարպաս շինէր և չարտախ (45)։

90*. Որդեակ, լաւ է կող մի ի ձեռին քո, քան զգէր բուծ մի յայլոց ձեռին։

Լաւ է ճնճղուկ մի ի ձեռին քո, քան զհազարս յերկինս թռուցեալ,

Լաւ է ուլ մի պատարագ ի տան քում, քան զուարակ մի ի տանէ այլոց (52)։

91*. Որդեակ, մի՛ անիծաներ զորդին քո, մինչև տեսանես վաչջան նորա և մի՛ արհամարհեսցես, մինչև տեսանեսցես զկատարածն և զվաղչանն և զշահն (54)։

92*. Որդեակ, հարց զայր իմաստուն բան խրատական և իմաստնասցիս։ Եւ եթէ հարցանիցես զայր անմիտ բանիւք բազմօք, նա ոչ իմանայ (64)։

---

84 C_3 կարծիր թէ զրոց բան քո տաս փխ կարծէ-զմուրուզդ, C_2 չիք՝ քումմէ-տալն, Canon, 58, C_5 քո տաս, ի գրպանէ փխ տալն։

85 C_2 Canon, 58 հաշուին և ոչ հաւատան։

86* Par 58 չիք՝ խրատը, Ven հեղցես գդինին և, անգգամին և անաւբինին։

87* 58 չիք՝ խրատը, Bod և տես եթէ փխ բայց։

89* Ven տաճար լինեը, Canon, 69 տուն փխ տաճար, Ven ապարան փխ դարպաս։

90* Ven, Canon յերկինս, Ven ի տան բում պարարտ։

92* Ven բան խրատական, Bod բանս իմաստութեան։

93*. Որդեակ, եթէ զայր իմաստուն առաքես ի բան, մի՛ ինչ պատուիրել, ինքն կատարէ զբանն։ Ապա թէ զանմիտն առաքես, առաջի բազում մարդկան պատուիրէ և կամ դու գնա և գնա մի՛ յղեր (65)։

94*. Որդեակ, մարդ որ ստացուածք և ինչք բազում ունի, կոչեն զնա իմաստուն և առաքինի, և որ ինչք պակաս ունի, կոչեն զնա անմիտ և անարգ, և ոչ ոք պատուէ զնա (68)։

95*. Որդեակ եթէ առաքէ տէրն քո, թէ բեր սպտուր, խաղող մի՛ բերել նմա, զի զխաղողն ուտէ և զպատուհասն սպտուրին ոչ թողու (72)։

96*. Որդեակ, լաւ է բան իմաստնոյ յարբեցութեան, քան զբան անմտի ի ծարաւութեան կամ լրջութեան։

Լաւ է ծառայ զորդ, քան ազատ և սուտ։

Լաւ է բարեկամ մօտևոր, քան եղբայր հեռաւոր (73)։

97*. Որդեակ, ընդ առն ունևորի և ընդ գետոյ յարուցելոյ մի՛ հակառակել, զի ագահ մարդոյ աչքն ոչ լցվի քաւել թէ հողով (81)։

Որդեակ նաթան ի միտ առ զխրատս և մի՛ մոռանար։

97* C_3 մոռանար գնարցումն թագաւորաց, Canon, 58 և ես ասեմ ցնաթան որդեակ ի միտս քո փխ որդեակ-ի միտ։

Հուտայ և Բաղիայն հարցան ի Խիկարն, և ասէ Խիկար ի Նաթան.

1. Զորս իրք զմարդոյն աշաց լոյսն շատացնէ.

Նախ՝ *ի վերայ ծաղկանց հայիլն,* **երկրորդ՝** *բոկիկ զկանաչն կոխել,* **երրորդ՝** *ի հետ ջրին ի վեր գնալ,* **չորրորդ՝** *զիւր բարեկամն տեսանել։*

2. Դարձեալ չորս իրք զմարդն գիրացնէ և առողջ պահէ.

Նախ՝ *վուշ հագնիլն,* **երկրորդ՝** *լսել բան հանց որ իւրն դուր գայ,* **երրորդ՝** *ի տանէ սիրտն առողջ լինայ,* **չորրորդ՝** *զհեռաւորն բարով տեսանէ։*

3. Դարձեալ Դ իրք են, որ զմարդոյն հարկիքն աւելցնէ.

Նախ՝ *ամէն բարի խօսիլն,* **երկրորդ՝** *խոնարհ կենալն,* **երրորդ՝** *պակաս խօսիլն և* **չորրորդ՝** *ամաչէ ի մեծէ և ի փոքրէ։*

4. Դարձեալ չորս իրք են, որ զմարդոյն երեսին ջուրն տանի.

Նախ՝ *ի սիրոյ տիրութիւնն շատախօսիլ,* **երկրորդ՝** *ամէն բան ի սրտի ներս առնուլն,* **երրորդ՝** *զոր չգիտենայ պարծենայ, թէ գիտեմ,* **չորրորդ՝** *ստախօսութիւն։*

Հարցին ի Խիկար, խաւսին, թէ երկիրս ինչ կայ քաղցր։ Պատասխանի ասէ. Ամօթ երեսացն։ Որ ամօթ ունի, քաղցր է նա, զի ամենայն չարիք ի լրբութենէ ծնանի։

Այս է խրատն, զոր ուսուցի ես՝ Խիկար, Նադանայ։

---

17 Bod *չիք՝ շատախօսիլ,* C_5 *սիրուքիւն շատախօսիլն։*

18 C_3 *բարի չխօսելն փխ ի սրտի ներս առնուլն,* C_4 *և զոր ոչ գիտենայ պարծենայ (չիք՝* Bod, *38). ամէն բան թաքուցանելն յարել ի ներս ընկնելն և զոր ոչ գիտէ ի ներս ընկնի և ասէ (չիք՝* Ven*) փխ ամէն բան-պարծենայ։*

19 *38 ստախաւսէ։*

20 $C_{3',4',5}$ *Պիտարխաւսին փխ Խիկար խաւսին։*

22 C_4 *լրբուքենէ և անմտութենէ։*

* * *

Զայս ամենայն ուսուցի Նադանայ, քեռորդւոյ իմոյ, ես՝ Խիկար, դպրապետս Սենեքարիմայ արքային։ Եւ այսպէս կարծէի ի մտի իմում, եթէ զուսումն և զխրատն, զոր ուսուցի Նադանայ, կացցէ և մնասցէ և պահեսցէ ի մտի իւրում։ Ոչ գիտէի եթէ զբանս իմ անտես արասցէ և հոսեսցէ որպէս զփոշի ընդդէմ հողմոյ։

Զայս եդեալ ի մտի իւրում, եթէ հայրն իմ Խիկար կենդանի է և ծերացեալ յոյժ և հասեալ է ի դուռն գերեզմանին, զառածեալ են միտք իւր և պակասեալ են խորհուրդք իւր և ոչինչ գիտէ, սկսաւ Նադան վատնել զինչս իմ ի կորուստ։ Ոչ խնայէր ի ծառայս իմ և յաղախնեայս իմ և տանջէր զնոսա և սպանանէր և կոտորէր զձիս և զջորիս և զերիւարս իմ և զընտիր ընտիրս ի հօտէ իմմէ սատակէր։

Եւ իբրև տեսի զնադան քեռորդին իմ զգործս իմ այլայլեաց և զինչս իմ վատնեաց, խօսել սկսայ և ասեմ. Ի բաց կաց յընչից իմոց և մի՛ մերձենար։ Գրեալ է յառակսն, եթէ ձեռք որ ոչ են վաստակեալ, ակն նորա մի խնայեսցէ։

Եւ երթեալ պատմեցի տեառն իմոյ։ Եւ նա կոչեաց զնադան և ասէ. Որչափ Խիկար կենդանի է, յինչս նորա մի՛ ոք մերձեսցի։

Յայնժամ ետես Նադան զԲուդան եղբօր իւրոյ, զոր սնուցեալ էր ի տան իմոյ և ասէ. Խիկար հայր իմ ծերացեալ է և բանք նորա անհամացեալ։

---

1 C_3 *Նաթանայ քեռ որդւոյն իմոյ։*

2 *Սինեքարիմայ։*

4 $C_{2',5}$ *չիք՝ և պահեսցէ,* C_5 *սրտի փխ մտի։*

8 C_3 *ծերացեալ է յոյժ (58 և 92 կենդանի է և ծեր) փխ կենդանի-յոյժ։*

10 C_4 *զամենայն ինչս (92 զինչս,* Bod *զինչս նորա),*

12—13 C_3 *զխաչինս իմ կորուսանէր փխ զընտիր-սատակէր։*

14—15 Canon *այլափոխեաց Նաթան գործս իւր,* Bod *այրեաց փխ այլայլեաց։*

16 C_3 *ամենայն ընչից։*

17 C_4 *ոչ խնայէ (92,* Canon *մի խնայեսցէ,* Bod *յինչ այն) փխ մի խնայեսցէ։*

18 $C_{1',2',5}$ *92 պատմեցին,* Bod, Canon *պատմեցի Սինեքերիմա։*

19—20 Ven *մի մերժեսցիս,* Canon *մի մերձենար։*

21 C_1 *չիք՝ զԲուդան,* $C_{2',5}$ *Փուքան,* Ven *92 զԲուդան,* Bod *Բաւդան,* C_3 *զԲուքան։*

Եւ ես իբրև լուա զայս ամենայն, յընչից իմոց ի բաց առարի զնա։

Եւ խորհուրդ արարեալ Նաբան չարութեան ի մտի իւրում, գրեաց յանուն իմ թուղթ առ թշնամին Սենեքարիմայ, արքային Նինուէի և Ասորեստանի։ Եւ ասէր այսպէս. «Ես՝ Խիկարոս, դպրապետ Սենեքարիմայ, արքային Նինուէի և Ասորեստանի, առաքեցի առ եգիպտացւոց թագաւորիդ։ Եթե յորժամ գիրս ի քեզ հասանի, գումարեսցես զզօրս քո և եկեսցես ի դաշտն Արծրունեաց, որ օրն իե լինի ի հրոտից, և ես հնազանդեցուցից զաշխարհս ասորոց և տաց զքագաւորն Սենեքարիմ ի ձեռս քո առանց աշխատանաց, զի կալցես զնա»։

Եւ նմանեցուցեալ էր զձեռագիրն ձեռագրի իմոյ և կնքեալ մատանեաւ իմով։

Եւ յորժամ խնդրեցին զամենեքեանն երթալ ի տունս իւրեանց, Նաբան մեն մնաց առաջի թագաւորին։ Եւ ասէ Նաբան ցթագաւորն. Արքայ, յաւիտեան կաց, զի զաղուհացդ, զոր կերեալ եմ ի տան քո, ինձ քաւ լիցի տեսանել զչարիս առաջի քո։ Խիկար հայրն իմ, որ ի պատիւ և ի մեծութեան քում էր, ստեաց ինձ և քեզ և եղև ի կողմն թշնամեաց քոց։

Եւ առեալ կարդաց զհրովարտակն առաջի թագաւորին, զոր ինքն էր գրեալ։

---

3 C_4 սրտի փխ մտի։
4 Bod չիք՝ գրեաց-թշնամին, Ven չիք՝ առ թշնամին։
4—5 $C_{2'5}$ չիք՝ արքային Նինուէի և Ասորեստանի։
5 C_3 եւ պատճէն գրոյն էր այսպէս փխ և ասէր այսպէս։
6 C_3 արքային յոյշ լիցի արքային, C_4 չիք՝ Նինուէի և Ասորեստանի։
9 C_3 Արծրունեաց, Canon Արծունեաց, C_1 ե փխ Իե, $C_{3'4}$ հրոտից ամսոյն փխ ի հրոտից։
10 Ven, 92 Սինեքարիմ, C_4 զաթոռն Սինեքերիմայ ի ձեռն փխ զթագաւորն Սենեքարիմ ի ձեռս։
14 C_3 բամբն փխ զամենեքեանն, C_4 զաւրքն թագաւորին գնալ, փխ զամենեքեանն երթալ։
15 C_3 մնաց փխ մեն մնաց, C_4 միայն փխ մեն։
15—16 C_4 չիք՝ Նաբան ցթագաւորն։
16 C_1 Ven չիք՝ արքայ, 92 թագաւոր փխ արքայ։
17 C_3 քո և ծածկել։
19 C_4 քոց և թուղթն զոր գրեալ էր Նաթան իմ բանիւ և նմանեցուցեալ էր զձեռագիրն իմոյ ձեռագրին։
20 Bod կնքեալ փխ գրեալ։

Եւ իբրև լուաւ թագաւորն, տրտմեցաւ յոյժ և ասէ. Զի՞նչ մեղանք եմ արարեալ ես Խիկարին, որ այսպէս արար ընդ իս։

Եւ վաղվաղակի գրէ Նաբան հրամանաւ արքային, թէ յորժամ ընթեռնուս զգիրդ, գումարեսցես զզօրս քո և եկեսցես ի դաշտն Արծրունեաց, որ օր իե լինի հրոտից ամսոյ և իբրև տեսցես, ճակատեսցես ընդդէմ իմ, քանզի հրեշտակք փարաւոնի առ իս են եկեալ, զի տեսցեն զզօրս իմ։

Եւ երեր զթուղթն առ իս, և ինքն գնաց առ թագաւորն։ Եկաց առաջի նորա և ասէ. Մի տրտմիր, ով արքայ, այլ յաւիտեան կաց, երթիցուք ի դաշտն Արծրունեաց և տեսցուք թէ այդպէս իցէ, ապա զինչ հրամայեալ ես լինի։

Եւ առեալ Սենեքարիմ զզօրս իւր, եկն ի դաշտն Արծրունեաց և եգիտ զիս զօրօքն իմովք։ Եւ ես ճակատեցի ընդդէմ նորա, որպէս և հրամայեալ էր։

Եւ իբրև ետես արքայն, տրտմեցաւ յոյժ։

Խօսել սկսաւ Նաբան և ասէ. Մի՛ տրտմիր, արքայ, այլ երթիցուք ի տուն, և ես ածից զհայրն իմ Խիկար առաջի քո։

Ասէ արքայն ցՆաբան. Եթէ ածես զհայրն քո Խիկար առաջի իմ, պարգեւս մեծամեծս տամ քեզ և ի վերայ ամենայն գործոց իմոց հաւատարիմ կացուցից զքեզ, և զամենայն գործ արքունեաց վճարես ճարտարութեամբ։

Եւ արքայն դարձաւ յապարանս իւր։

---

2 C_3 Խիկարայ։
3 C_3 արքային այսպէս, Ven թագաւորին, Bod արքային թուղթ։
5 C_1 ե փխ Իե։
9 C_3 չիք՝ այլ։
9—10 C_4 եկ փխ յաւիտեան կաց (92 յաւիտեան կաց փխ եկ)։
12—13 Canon և առեալ Նաթան զարքայն և գնաց ի դաշտն Արծունեաց։
13 C_3 ետես փխ եգիտ։
15 $C_{2'5}$ չիք՝ արքայն, արքայն փխ յոյժ։
18 $D_{3'4}$ չիք՝ զհայրն քո։ Ven չիք՝ Խիկար, C_3 և ածից Խիկար առ քեզ։
18—19 C_3 առ իս փխ առաջի իմ։
18—21 C_3 ասէ թագաւորն թէ ածիցես Խիկար առ իս մեծ պարգեւք առնուս յինէն ի վերա ամենայն իրաց կացուցից զքեզ և գործ արքունեաց իմոց քեզ լիցի վճարն փխ ասէ-ճարտարութեամբ։
21 $C_{2'5}$ քեզ վիճառես, C_4 քեզ վիճարեսցին (Bod ի ձեռս քո, Ven քեզ վիճարեն, 92 քեզ վիճարես, Canon գործք քո վիճարեսցին) փխ վճարես։

Եւ Նագան քեռորդին իմ եկն առ իս և ասէ. Սենեքարիմ արքայն առաքեաց զիս առ քեզ և ասէ. Եկն առ իս, ի միասին ուրախ լինիցիմք:

Եւ յորժամ գնացի, ասէ ցիս արքայն. Խիկար դպիր և իմաստուն, խորհրդակից իմ և իշխան իմ էիր և հրամանատու տանն Ասորոց և Նինուէացոց, և դարձեալ եղեր ի կողմն թըշնամեաց իմոց:

Եւ զթուղթն, զոր գրեալ էր Նագան իմ բանիւ և նմանեցուցեալ էր զձեռագիրն իմոյ ձեռագրին, ետ արքայն առ իս և ասէ՝ ընթերցիր:

Եւ ես իբրև ընթերցայ, լուծաւ ամենայն անդամք իմ, և լեզու իմ որպէս մագաղաթ գալարեցաւ: Եւ ես ապշեցայ և եղէ որպէս զմի յիմարելոց: Ինդրէի բան իմաստութեան և ոչ գտանէի տալ պատասխանի:

Խօսել սկսաւ Նագան և ասէ ցիս. Ի բաց կաց յերեսաց արքայիդ, ալևոր զառածեալ: Տուր զձեռն քո յերկաթ և զոտն քո ի կոճեղս:

Եւ արքայն դարձոյց զերեսս իւր յինէն և ասէ ցԱբուսմագ նայիպին իւրոյ. Տար, սպանանեա զանաստուած խիկարդ և հեռացո զգլուխ դորա իբրև կանկունս ճ:

Եւ ես անկայ ի վերայ երեսաց իմոց, երկիր պագի և ասեմ. Արքայ, յաւիտեան կաց, կամեցար զիս ի սպանումն և բանից իմոց ոչ անսացիր: Ես յանձնէ իմմէ գիտեմ, որ ոչինչ մեղայ և ի սրտի իմում նենգութիւն ոչ գոյ, անմեղ եմ և անպարտ: Արդ,

---

4—7 C_3 ասէ Թագաւորն Խիկար հրամանատու իմ Թագաւորութեանս իմ ազեկ զպրապետ և դարձեալ եղեր կողմն թշնամեաց իմոց փս ասէ ցիս-իմոց:

11 Bod մարմինք անդամոց իմոց փս անդամք իմ:

12 C_3 մօրագատ գլորեցաւ փս մագաղաթ գալարեցաւ:

15—16 C_3 պատասխանի ետ Նագան և ասէ ցիս հեռի կաց ի Թագաւորէդ զառածեալ ծեր փս խօսել-զառածեալ:

16 $C_{2'4'5}$ զառածեալ և ագճատեալ:

18—19 C_1 ցԱբուսմագն իւր փս ցԱբուսմագ նայիպին իւրոյ, $C_{2'5}$ ցԱբուսմագ նայիպ իւրոյ, 92 նայիպն իւր:

21 C_1 ասեմ ցարքայն:

24 C_4 չիք՝ և անպարտ:

ողորմեա ինձ և հրամայեա, զի ի դրան իմում սպանցեն զիս և զմարմինս իմ տացեն ի թաղումն:

Եւ Թագաւորն հրամայեաց Աբուսմագայ, զի ի դրան իմում սպանցեն զիս:

Եւ իբրև ելի ի նմանէ, գրեցի թուղթ լալով առ Աբեստան կինն իմ: Եւ ասեմ. Յորժամ թուղթս ի քեզ հասանի, դու հան ընդ առաջի իմ գուսանս Ր, և զգեցցին զգեստ սգոյ և դիցեն սուք և լացցին զիս, զի ես տեսից աչօք իմովք զլալականս, որ լան զիս ի կենդանութեան իմում: Եւ դու արասցես հացս մեծամեծս, որ տաս դահճաց իմոց և խորտիկս զեղեցիկս առ ի յուտել և ի ըմպել:

Եւ Աբեստան կինն իմ յոյժ իմաստուն էր և արար որպէս և հրամայեցի: Եւ ընդ առաջ և եմոյծ զնոսա և եդ սեղան առաջի նոցա և կերակրեաց զնոսա և ետ ըմպել նոցա գինիս հինս և անապակս, մինչև թմրեցան և ի քուն մտին:

Եւ ես և կինն իմ անկաք յոտս Աբուսմագայ լալով: Եւ ասացի ցնա. Աբուսմագ ընկեր իմ, հայեաց յերկինս և տես զաստուած աչօք քո և յիշեա զաղուհացն, զոր ի միասին կերեալ եմք և յիշեա զայն, որ մատնեցին զքեզ Սենեքարիմ արքային հօրն, և ես առեալ պահեցի զքեզ, մինչև արքայն խընդրեաց զքեզ և իբրև տարայ, առայ պարգևս մեծամեծս ի նմանէ: Արդ, պահեա զիս և հատո զփոխարէն երախտեաց իմոց, և լինի քեզ պարգևս մեծամեծս: Է մարդ մի ի բանտին և յոյժ

---

1 C_5 իւրոյ սպանցէ գնա փս իմում սպանցեն զիս:

7 C_3 կանայս փս գուսանս, C_4 գուսանս փս գուսան, C_3 զգեստն քո փս զգեստ սգոյ, $C_{2'4'5}$ դիցեն ինձ:

12—13 C_4 զհրամայեալսն իմ կատարեաց փս յոյժ-հրամայեցի (Ven, 92, յոյժ-հրամայեցի):

13 C_4 առաջ իմ:

15 C_3 արբեալ Թմրեցան, C_4 Թմրեցան և արբեցան:

18 $C_{2'5}$ զառաւած քո:

18—20 Canon չիշեա զսէր եղբայրութեան մերոյ և մի մեղանչել առեան իմոյ զի զիտես որ ես անպարտ եմ այլ չիշեա զայն որ հայրն Սենեքարիմ առ քեզ ի ձեռս իմ ի սպանումն փս չիշեա-հօրն:

19—20 Bod Թագաւորին փս արքային:

21—22 C_{2-5} առ նա (C_4 առաջի նորա) պարգևս մեծամեծս ետ ինձ (C_3 վասն չմեռանելոյն քո) փս առայ պարգևս մեծամեծս ի նմանէ:

22 C_4 չիք՝ փոխարէն (92 ունի):

23 C_4 մեծամեծս և փոխարէն քո բարւոյն լինի քեզ բարի, Bod քեզ փոխարէն առաւծոյ, C_3 չիք՝ և լինի-մեծամեծս, Ven, Bod իմ այլ փս մարդ մի, C_3 չիք՝ յոյժ:

նման է ինձ: Արիւն արար ի դրանս իմ և մահապարտ է, և անուն նորա Սեննեքար կոչի: Արդ, տարցես զհանդերձս իմ ի բանտն և զգեցուցանես նմա և սպանցես զնա և կատարես զհրամանս թագաւորին:

Եւ իբրև զայս ասացի ցԱբուսմագ, գթացաւ ի վերայ իմ և արար զկամս իմ, զոր ասացի նմա: Եւ զինուորք թմրեալք ի քնոյ, զարդեան ի հասարակ գիշերոյ և սպանին զՍեննեքար ծառայն իմ և հեռացուցին զգլուխ նորա ի նմանէ կանկունս ճ:

Եւ ել համբաւս այս ի քաղաքս Ասորեստանեաց, եթէ Խիկար գպիր և իմաստուն մեռաւ:

Յայնժամ Աբուսմագ ընկեր իմ և Աբեստան կին իմ արարին ինձ տուն գետնափոր. երկայնութիւն նորա կանգունս է և բարձրութիւն նորա հասասար գլխոյ իմոյ, մերձ ի դրան սեմանց տան իմոյ: Եւ արկին զիս ի ներս և եդին առ իս հաց և ջուր:

Եւ գնաց Աբուսմագ առ թագաւորն և պատմեաց, եթէ Խիկար սպանաւ: Եւ ամենեքեան, որ լսէին զմահն իմ, կոծէին և ապաշաւէին և ասէին. Աւա՜ղ զքեզ, գպիր, ով է որ վճարէ զգործս արքունեաց ճարտարութեամբ քո:

Յայնժամ կոչեաց արքայն զնադան և ասէ. երթ արա լաւիք և սուք հօր քո:

Եկն Նադան և փոխանակ լալոյ ժողովեաց զգուսանս և արար ուրախութիւն մեծ: Եւ զծառայս իմ և զաղախնեայս իմ

1—4 C_3 և նա նման է ինձ և մահապարտ է սպան զնա և կատարեա զհրամանս թագաւորին փխ և նման-թագաւորին:
7 C_4 գինոյ (Ven, 92 քնոյ) փխ քնոյ, $C_{2'5}$ զմնաքար, C_3 Սինաքար:
11 C_1 Աբերան փխ Աբեստան, C_2 Աբուստան, C_5 Աբուստան փխ Աբեստան
11—15 C_3 Յայնժամ արարին ինձ տուն գետնափոր երկայնութիւն նորա է կանգուն և բարձրութիւն նորա գլխահասասար մերձ տան իմոյ և եդին զիս անդ փխ յայնժամ- ջուր:
13 C_4 հասարակ փխ հասասար (92 հասասար):
13—14 C_4 սեմոց տանս (92 սեմանց տան):
17 Bod իմաստուն մեռաւ փխ սպանաւ:
18 $C_{2'5}$ աւաղ է:
19 C_4 գործս քո:
20—21 C_4 լաւիք գտան:
21 Bod չիք՝ և սուք:
22 Bod գկուսանս փխ զգուսանս:

չարաչար տանջէր դառնապէս, և Աբեստան կնոջէ իմմէ ոչ ամաչէր, այլ կամէր պոռնկել ընդ նմա, որ սնուցեալ էր զնա:

Եւ ես ի գետնափոր տանն լսէի զլացն և զհառաչանս ողբոց ծառայից իմոց, և ես այլ լայի: Եւ ցանկայր անձն իմ սակաւ հացի և պատառ մսի և բաժակի: Եւ էի կարօտ ամենայն ընչից իմոց:

Եւ ամենայն բնակիչք Ասորեստանեաց և Նինուէացոց փախեան:

Եւ իբրև լուաւ զայս թագաւորն Եգիպտացոց, եթէ Խիկար դպրապետն մեռաւ և Նինուէացոց աշխարհն և Ասորեստան փախեան, յոյժ ուրախ եղև: Եւ գրեաց թուղթ փարաւոն արքայն Եգիպտացոց առ Սեննեքարիմ արքայն Ասորեստանեաց այսպէս. «Ողջոյն լիցի տերութեանդ և թագաւորութեանդ: Գիտութիւն լիցի քեզ, զի կամիմ շինել ապարանս ընդ երկինքն և ընդ երկիրս ի միջի ակա: Տես և առաքեա առ իս ճշմարիտ և ճարտար և իմաստուն այր, որ շինէ և այլ, զոր ինչ հարցանեմ, տայ պատասխանի, ապա թէ անփոյթ առնես, գամ և բառնամ զթագաւորութիւնդ և զերկիրդ աւերեմ»:

Իբրև լուաւ զայս թագաւորն, տրտմեցաւ յոյժ և առաքեաց ժողովեաց զնախարարսն իւր ի խրատ, թէ զինչ առնեմք: Ասեն նախարարքն. Ով թագաւոր, այլ ո՞վ տայ պատասխանի. բայց եթէ Նադան, որ ուսեալ է ի Խիկարէն և գիտէ զդպրութիւն նորա և սնեալ է ի տան նորա: Նա կարէ տալ պատասխանի այդմ բանիդ, զոր գրեալ է արքայն Եգիպտացոց:

---

1 C_4 չարշարէր (92 չարաչար) փխ չարաչար, դառնապէս յոյժ (92 չիք՝ յոյժ):
2 Ven, Bod նաև փխ այլ:
3—4 $C_{1'2}$, 92 գհառաչն և զբոցն, C_5 գհառաչն և զողբոցն:
4 C_4 այլ ի հետ (92 չիք՝ ի հետ):
5 C_3 մսոյ և գինոյ փխ մսի և բաժակի:
8 $C_{2'5}$ 92 փախեան չինէն, Ven, Bod փախեան ի նմանէ:
9 $C_{1'2'5}$, չիք՝ իբրև:
10 C_4 գպիր (92 գպրապետն), և ամենայն աշխարհս Ասորեստան փխ աշխարհն և Ասորեստան:
13 C_4 չիք՝ լիցի 92 (ունի), $C_{2'5}$ տերութեանդ քո:
15—16 C_4 ճարտար այր փխ ճշմարիտ-այր (92 ճշմարիտ-այր):
17 Canon առնես զկամս իմ:
18 $C_{2'5}$ զթագաւորութիւն քո, $C_{2'4'5}$ զերկիրն քո աւերեցից:
20 C_4 խրատ հարցանել (92 չիք՝ հարցանել):
21 C_4 պատասխանի այդ բանիդ:
22 C_3 գտեալ փխ գիտէ:
20—24 Canon և նորա տարակուսեալք ասեն այսպիսի գործոյդ Խիկարն տայ պատասխանի և այժմ Նաթան որ է ի տեղի նորա փխ ասեն-Եգիպտացոց:

Յայնժամ արքայն կոչեաց զՆաթան և յայտնեաց զխորհուրդն և ետ հրաման, որ զհրովարտակն ընթերցաւ Նաթան։ Եւ իբրև կարդաց զթուղթն, ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Ջայդ բանդ դիք և ոչ կարեն վճարել, կամ տալ պատասխանի, ևս զի՞արդ կարացից վճարել։

Եւ իբրև լուաւ թագաւորն, յարեաւ ի յոսկոյ աթոռոյ իւրոյ և նստաւ ի վերայ մոխրոյ, կոծէր ձեռօք իւրովք զերեսս իւր և ճողէր զմորուսն և ասէր. Աւա՛ղ զքեզ, Խիկար դպիր և իմաստուն, ի խօսս մարդկան կորուսի զքեզ, քանզի վճարէիր զգործս արքունեաց իմոց։ Եթէ տայր ոք զքեզ ինձ, ես տայի նմա զինչ և խնդրէր յինէն, այնչափ գանձ ոսկւոյ։

Իբրև լուաւ զայս Աբուսմագն, ընկեր իմ, եկաց առաջի թագաւորին և ասէ. Թագաւոր, յաւիտեան կաց։ Որ զհրաման թագաւորին ոչ առնէ մահապարտ է, զի աստուածոյ հրամանքն և թագաւորին մի է։ Դու զԽիկար հրամայեցեր սպանանել, և նա դեռ կենդանի է։ Ասէ արքայն. Խօսեա Աբուսմագ ծառայ իմ և հաւատարիմ, եթէ զԽիկար կենդանացուսցես ինձ, բհհեղս և ծիրանիս տամ քեզ և պարգևս մեծամեծս պարգևեմ քեզ։

Եւ Աբուսմագ, իբրև զսրաթոիչ հաւ, եկն առ իս և եբաց

---

1 Ven, Bod չիք՝ գնագան։
2 C_4 ի նա փխ հրաման (92 հրամանի)։
3 $C_{2,5}$ զթուղթն Նագան։
4 $C_{2,5}$ ինքն փխ գիր։
4—6 Canon այդպիսի գործդ չաստուածք ոչ կարեն առնել պատասխանի ոչ թէ մարդիկ իբրև լուաւ արքայն զրոմկացաւ յոյժ յարեաւ փխ դայդ-յարեաւ։
8 $C_{2,5}$ զմորուսն իւր։
9 $C_{2,4,5}$ քանզի դու, C_3 քանզի դու ճշմարիտ։
10 C_4 մերոց փխ իմոց։
11 C_3 դոր ինչ և խնդրիցէ գանձս ոսկւոյ և արծաթոյ։
19 C_4 ոսկւոյ և արծաթոյ (92 չիք՝ և արծաթոյ)։
12 C_3 անկաւ փխ եկաց։
14—15 Bod չիք՝ դի-մի է։
17 C_4 կենդանի ցուսցես (Ven կենդանի բերցես, 92 կենդանացուսցես)։
18 Bod հապուշից փխ տամ։
17—18 C_3 կենդանի տաս ինձ և ես տաց քեզ բհհեղս և ծիրանիս ոսկի և արծաթի և մարգարիտս փխ կենդանացուսցես-քեզ։
19 C_4 Աբուսմագ իբրև լուաւ զայս ի թագաւորէն (92 չիք՝ իբրև-թագաւորէն), C_3 եհաս փխ եկն։

զդուռն գետնափոր տանն և եհան զիս անտի, և էին երեսք իմ այլագունեալ և գլուխ իմ թաղկեալ և ըղնկունք իմ իբրև զարծուոյ աճեալ։

Իբրև ետես թագաւորն, կորացոյց զգլուխն իւր և ամաչէր հայել յերեսս իմ և հազիւ հայեցաւ յիս ամօթալից երեսօք, և ասէ ցիս. Ով սիրելի և պատուական եղբայր իմ Խիկար, երթ ի տուն քո և դարմանեա զանձն քո աւուրս ի և ապա՝ եկեսջիր առ իս։

Եւ արարի այնպէս։ Եւ դարձեալ եկի առ թագաւորն։

Եւ ասէ թագաւորն. Մեղայ քեզ, հայր Խիկար, ես քեզ ինչ ոչ մեղայ, այլ Նագան քեռորդին քո, որ սնուցեալ էիր։

Եւ ես՝ Խիկարս, անկայ ի վերայ երեսաց իմոց, երկիր պագի թագաւորին և ասեմ. Որովհետև տեսի զերեսս արքայիդ, կենդանի եմ, և ամենայն չարիք ինձ ի բարի դարձաւ, որովհետև եգիտ ծառայս քո Խիկար շնորհս։

Եւ ասէ թագաւորն. Լուա՛ր, զայս, ո՛վ պատուական և բարի Խիկար, եթէ զինչ է առաքեալ և ասացեալ եգիպտացին, քանզի բնակիչք Նինուէի և Ասորեստանի փախեան։

Եւ ասեմ ցթագաւորն. Արդ, տուր քարոզ կարդալ ի դրան արքունեաց քոց, եթէ Խիկար կենդանի է, և ամենեքեան որ լսիցեն, դարձցին ի տունս իւրեանց։

Եւ հրամայեաց թագաւորն քարոզ կարդալ, եթէ Խիկար կենդանի է։ Եւ ամենայն բնակիչք Նինուէի և Ասորեստանի դարձան իւրաքանչիւր ի տեղիս իւրեանց։

Եւ ասեմ զթագաւորն Սենեքարիմ, եթէ վասն այդմ բանիդ, որ առաքեալ է եգիպտացին, դու մի՛ հոգար, ես երթայց և տաց պատասխանի և զհարկն եգիպտոսի բերից առ քեզ։

---

1 C_3 բանդին փխ գետնափոր տանն, C_2 գետնայիսր, C_3 և եհան զիս փխ և էին երեսք։
2—3 Canon և հեր գլխոյ իմոյ թաղկեալ էր և մազ մորուսիս փխ գլուխ աճեալ։
4 Bod թագաւորն այսպիսի։
12 C_3 յայնժամ փխ և, C_4 չիք՝ Խիկարս։
13 $C_{1,2,5}$ որ ով փխ որովհետև։
15 C_3 շնորհս առաջի քո։
19 C_4 ցարքայն փխ ցթագաւորն։
21 $C_{2,4,5}$ տեղիս փխ տունս, C_3 գարձեալ գան ի տեղիս փխ գարձին ի տունս իւրեանց իւրաքանչիւր ոք։
22—24 Bod չիք՝ և հրամայեաց-իւրեանց։

Իբրև լուաւ թագաւորն, ուրախ եղև և ի գլուխ բազմականին բազմեցոյց զԱբուսմագ։

Եւ ի վաղիւն գրեցի առ Աբեստան կինն իմ այսպէս. «Յորժամ կարդաս զգիրս, դու որսալ տուր Բ ձագս արծուոյ և Բ տղայ դեռախօս և Բ կին դիեցուցանող, որ սնուցանեն զմանկտին և ասեն այսպէս. Կաւ, կիր, ծեփ, աղիւս, ճարտարքս կան խափան։ Եւ տուր մանել Բ պարան, երկայնութիւն նորա ՔՃ կանկուն և հաստութիւն նորա ըղնգուն մի և տուր արծուեացն յամէն օր Բ գառինս և տուր կապել զմանկտին ի վերայ արծուեացն և պակաս Թոիչս առնել, մինչև սովորութիւն առնուն և այնպէս սովորութիւն տուր, մինչև բարձրանան ՔՃ կանկուն»։

Եւ Աբեստան կինն իմ յոյժ իմաստուն էր, արար վաղվաղակի զամենայն, զոր պատուիրեցի։

Յայնժամ արքայն Հրամայեաց ինձ գնալ յԵգիպտոս։

Եւ իբրև հասի ի դուռն Եգիպտոսի, ածի զմանկտին յարկնոցն, որպէս սովորեալ էին։ Կապեցի ի վերայ արծուեացն զմանկտին։ Առեալ Թռան և բարձրացան։ Եւ մանկտին աղաղակէին և ասէին. Կաւ, կիր, ծեփ, աղիւս, ճարտարքս կան խափան։ Եւ ես՝ Խիկարս, առի զգաւազան և ի հետ մտի, ուր և հանդիպէի դան հարկանէի և ասէի. Փութացե՛ք, տուք զոր խնդրեն ճարտարքն։

Երեկ արքայն և տեսեալ զարմացաւ յոյժ և ուրախ եղև և Հրամայեաց իջուցանել զմեզ։ Եւ ասէ. Եկ, հանդիր յաշխատանաց քոց, կեր և արբ և վաղիւն եկ առ իս։

Եւ իբրև այդ եղև, կոչեաց զիս թագաւորն և ասէ. Զի՞նչ է անուն քո։ Ասեմ. Աբիկամ է անուն իմ, քանզի սորուկ եմ Սենեքարիմայ արքային։

1—2 C_3 յոյժ ուրախացաւ և ամենայն բազմականքն ղլուխ կացոյց Աբուսմագ փխ ուրախ-զԱբուսմագ. Bod կացոյց փխ բազմեցոյց։
4 C_3 գիրդ գայդ փխ գիրս, Canon ակդ հաւու փխ արծուոյ, C_3 մանուկ փխ տղայ։
6—7 C_3 բերէք զի ճարտարքս պարապ են փխ ճարտարքս կան խափան։
8 C_4 ըղնգուն մի և տուր հիւսան գուգել Բ արկնոց մանկանցն, $C_{2'5}$ տուր կերակուր։
10 $C_{2'5}$ պակասաթռիչս։
17 $C_{2'5}$ չիք՝ զմանկտին, C_4 Թռան ի վեր։
22 C_4 եկեալ արքայն Եգիպտացոց և (Bod որ եկ) փխ երեկ-տեսեալ։
24 C_4 նոցա փխ քոց, Ven չիք՝ քոց, C_4 արբ և ուրախ լեր։
26 C_3 աղքատն փխ սորուկ։

Եւ իբրև լուաւ զայս արքայն, տրտմեցաւ և ասէ. Ես այնպէս անա՞րգ թվեցայ յաչս Սենեքարիմայ արքային Ասորեստանեաց, զի սորուկ մի առաքեաց առ իս տալ ինձ պատասխանի։ Եւ ասէ ցիս։ Աբիկամ, երթ ի տուն քո և վաղիւն եկն առ իս։

Եւ իբրև վաղիւն գնացի, հրաման ետ արքայն զօրացն իւրոց, զի զգեցցին զրահիթ կարմիր, և ինքն զգեցաւ զգեստ ծիրանի և նստաւ յաթոռ իւր, և զօրքն նորա շուրջ զնովաւ։ Հրամայեաց կոչեաց զիս և ասէ. Աբիկամ, ո՞ւմ նման եմ ես և կամ զօրքս իմ ո՞ւմ նման են։ Եւ ասեմ. Նման ես դու դիցն, և նախարարք քո քոմանց նոցա։ Ասէ. Երթ յօթևանս քո և վաղիւն եկն առ իս։

Եւ իբրև եկն, զգեցոյց կտաւ զօրաց իւրոց, և ինքն զգեցաւ կարմիր։ Եւ ասէ ցիս։ Ո՞ւմ նման եմ ես, կամ զօրքն իմ ո՞ւմ նման են։ Եւ ասեմ. Նման ես դու արեգականն, և նախարարք քո Հառագայթից նորա։

Եւ դարձեալ ասէ ցիս. Երթ յօթևանս քո և վաղիւն եկն առ իս։

Եւ Հրամայեաց նախարարաց, զի զգեցան զգեստ ներկուածոյ, և ինքն թագաւորն զգեցաւ զգեստ փետրուածոյ և նստաւ յաթոռ իւր և ասէ. Ո՞ւմ նման եմ ես, կամ զօրքս իմ ո՞ւմ նման են։ Ասեմ. Նման ես դու դալար խոտոյ, և նախարարքդ քո՝ ծաղկանց նորա։

Յայնժամ արքայն ուրախ եղև յոյժ և ասէ. Ասա ինձ զճըշմարիտն, Սենեքարիմ արքայն ո՞ւմ նման է։ Ասեմ. Թագաւոր, քաւ լիցի քեզ յիշել զարքայն Սենեքարիմ, քանզի նստեալ կաս, այլ յոտն կաց, և ես ասեմ։ Իբրև յարեաւ ասեմ. Սենեքարիմ

---

1 C_4 թագաւորն փխ արքայն, $C_{2'4'5}$ տրտմեցաւ յոյժ։
4 C_3 այսօր գնա փխ երթ ի տուն քո։
7 C_3 չիք՝ քոմանց։
7—8 C_3 ծիրանի ագեկ փխ զգեստ ծիրանի։
9 C_1 ասաց փխ ասէ, C_4 զիս առ ինքն։
11 Bod զաւրք փխ նախարարք։
19 C_4 և իբրև վաղիւն գնացի (Ven չիք՝ և-գնացի). $C_{2'5}$ և ի վաղիւն, $C_{2'5}$ հրամայեաց թագաւորն։
20 C_3 փետրուածոյ սեաւ, Ven փետրուածոյ։
22 $C_{2'4'5}$ դալարոյ փխ դալար խոտոյ, Ven զաշտոյ փխ դալար խոտոյ, C_3 դալար ծառոյ, C_3 զօրքդ փխ նախարարքդ։

արքայն նման է Բելշիմի, և նախարարք նորա՝ փայլատականց նորա։ Յորժամ կամի նուիթէ զանձրև և հարկանէ զցօղն, ի բարձունս ելանէ Թագաւորիւք, որոտայ և կայծու զճառագայթս արեգականն, և յորժամ կամի. կարկուտ ածէ և մանրէ զփայտ դալար և չոր, ծակէ և հարկանէ զբոյսս դալարոյ։ Ասէ արքայն. Ասա ինձ զճշմարիտն, զինչ է անուն քո։ Ասեմ. Խիկար է անուն իմ։ Ասէ Թագաւորն. Թշուառական, կենդանացա՞ր։ Ասեմ. Որովհետև տեսի զերեսս քո, կամ կենդանի։ Ասէ Թագաւորն. Այս օր օրհնեալ եղիցի, զի Խիկար տեսի կենդանի աչօք իմովք։

Եւ անկայ ի վերայ երեսաց իմոց, երկիր պագի նմա և համբուրեցի զնա։

Ասէ Թագաւորն. Հան զայս խօսքս, թէ սիւն մի կայ, և ի վերայ սեանն՝ երկոտասան մարք, և ի վերայ նոցա՝ անիւք Լ—ք, և ի վերայ միոյ միոյ անուանցն՝ սուրհանդակք Բ—ք, մինն՝ սև և միւսն՝ սպիտակ։ Եւ ես ասեմ. Թագաւոր, զայդ ասորոց հորթարածներն գիտեն։ Սիւնն, զոր ասացիր, տարին է, մարքն ԲԺ-ան ամիսք են, անիւքն Լ աւուրք ամսոցն են, սուրհանդակքն. մինն՝ սև և միւսն՝ սպիտակ, ցերեկն ու գիշերն են։

Ասէ Թագաւորն. Զի՞նչ է բանս այս, որ յԵգիպտոսէ մինչև ի Նինուէ Ծ փարսախ է, զիա՞րդ լուան կուսանք մեր զխրխնջուն երիվարաց ձերոց և վրիժեցան։

1 C_1 Բեւշիմի, C_3 Բելշեմի։

1—2 C_3 և զօրք նորա նման են փայլատականց փխ նախարարք նորա փայլատականց նորա, C_4 փայլատակացն փխ փայլատականց նորա (Bod փայլատականց նորա)։

2 C_3 զանձրև սեաւ. Bod նուիթ ասնէ անձրևաց փխ նուիթէ զանձրև։

3 $C_{2,4,5}$ Թագաւորութեամբն։

5 C_2 և ծագէ փխ ծակէ, C_4 ծագէ արև, C_3 չիք՝ ծակէ և հարկանէ զբոյսս դալարոյ, C_1 գնա փխ արքայն, C_3 և ասէ Թագաւորն փխ ասէ արքայն, $C_{2,5}$ չիք՝ արքայն։

7 C_1 չիք՝ Թշուառական։

8 C_4 քո արքայ, $C_{1,2,5}$ չիք՝ ասէ Թագաւորն։

9 $C_{3,4}$ օրհնեալ եղիցի օրս այս։

11 C_3 զսոն փխ զնա։

12 Ven խօսքս և ասէ։

13 C_1 չիք՝ երկոտասան։

14 C_4 չիք՝ միոյ միոյ (Bod միոյ քսան փխ միոյ միոյ)։

16 C_3 մեր տաւարածերն, C_1 որթարածերն, C_2 որթածերն։

21 C_{2-5} ԵԾ խրասխ, Ven, 92 խրախս փխ փարսախ։

22 C_1 վրինջեցան, C_3 վրէժեցան։

Եւ՝ Խիկարս, ելի ի նմանէ և կալայ աքիս մի և յանդիմանեալ տանջէի զնա։ Յայնժամ պատմեցին Թագաւորին, եթէ Խիկար զդիսն մեր անարգէ։ Կոչեաց զիս Թագաւորն և ասէ. Խիկար, վասն է՞ր իրի զդիսն մեր անարգես և զաքիսն տանջես։ Ասեմ ցնա. Զի դա շատ վնաս արար ինձ։ Յայնժամ աքաղաղ մի ետ ինձ Թագաւորն։ Ձայն նորա քաղցր էր և ի ժամուն զարդուն առնէր զիս. երթալ յարքունիս։ Ի գիշերիս յայսմիկ շոգաւ և եհատ զգլուխ աքաղաղին և եկն աստ։ Ասէ արքայն. Ինձ այսպէս թուի, թէ որչափ ծերացար, բանք քո և իմաստութիւնք քո ցրեցան։ Յեգիպտոսէ մինչև ի Նինուէ Ծ փարսախ է, արդ, մի աքիս ի մի գիշերի զիա՞րդ եհատ զգլուխ աքաղաղին և եկն աստ։ Եւ ասեմ. Որպէս խրխնջիւն, զոր լուան կուսանք և վրիժեցան։

Ասէ ցիս արքայն. Թող զայդ և եկ մանեա ինձ պարան աւազէ։

Եւ իբրև եկի ես ի նմանէ, ասէ Թագաւորն ընդ իւրքն ամենայն, եթէ զինչ խօսի Խիկարն, ասացեք թէ մեք լուեալ եմք և գիտեմք զբանդ զայդ։

Եւ ես առեալ գրեցի թուղթ այսպէս. «Սենեքարիմայ արքայէ ողջոյն առ փարաւոն արքայն եգիպտացւոց։

Կարօտ են եղբար յեղբարց և Թագաւոր Թագաւորաց։ Ի

1—2 C_3 և ելի կալայ այգիս մի տանջեցի, C_1 յանդիմանի։

3 $C_{2,5}$ զդինս մեր անցանէ փխ զդիսն մեր անարգէ, C_3 անարգէ դիցն մեր, C_4 անարգէ և զաքիսն տանջէ։

4 $C_{2,5}$ վասն երկրի զդինսն փխ վասն էր իրի զդիսն, C_4 չիք՝ իրի, 92 զդինսն. փխ զդիսն։

5 Bod վնասակ եղև փխ վնաս արար, $C_{2,5}$ վնասակար եղև։

6 Ven, Bod չիք՝ նորա։

6—7 C_4 յամենայն ժամու զարթուցանէր փխ ի ժամուն զարդուն առնէր։

8 C_1 եհան փխ եհատ։

10 C_4 ցրջեցան (92 ջրեցան) փխ ցրեցան, C_{2-5} ԵԾ խրասխ փխ Ծ փարսախ։

12 Bod այսրն փխ աստ. Canon գի է զերիվարքն խրխնջացին յԱսորիս լուան կուսքն մեր փխ որպէս-կուսանք և։

12—13 92 վրեժեցան։

16 Ven, Bod չիք՝ ասէ Թագաւորն, C_3 զօրքն փխ իւրքն։

16—17 Bod ամենայն ասէին թէ։

19 C_4 ի Սենաքարիմայ։

21 Ven կարեոր են փխ կարօտ են, C_4 յեղբարց տեսանել (92 չիք՝ տեսանել), C_3 կարօտ եմք միմեանց Թագաւոր Թագաւորաց որպէս եղբայրք փխ կարօտ են-Թագաւորաց։

ժամանակիս յայսմիկ ծախք և պարտք շատ եղեն, և արծաթ պակասեաց ի գանձուց մերոց։ Արդ, հրամայեա և տուր բերել ի ձեռն հրովարտակիդ արծաթ ճ քանքար»։

Եւ զթուղթն պնդեցի և մտի առ թագաւորն և ասի. Յայսմ հրովարտակիս գրել եմ բան, որ ոչ քաղաքիդ և ոչ թագաւորիդ և ոչ նախարարացդ չեն լուեալ։ Եւ ասացին ամենեքան, թէ մեք լուեալ եմք զբանդ զայդ։ Եւ ասեմ. Եթէ լուեալ եք, ասացեք մինչդեռ չեք բացեալ։ Եւ ոչ կարացին ասել։ Եւ բացեալ կարդացին։ Ասեմ. Երբ լուեալ եք, զոր գրած է, տուք։ Ասէ արքայն. Եթէ զաւազեա պարանն ոչ մանես ինձ, զհարկն եգիպտոսի ոչ տամ։

Եւ ես մտի ի տուն մի խորխորատ և ծակեցի զորմն տանն, ուստի արևն ծագէր, և ի ծագել արևուն ցայթեց ի տանն կանկունս է։ Եւ առի փոշի աւազի և արկի ի ծակն և փչէի ի նա։ Եբեւեցաւ, որպէս մանոցք։ Եւ ասեմ. Հրաման տուր, արքա՛յ, զի ժողովեսցեն զպարանն, և ես այլ մանեցից։

Եւ իբրև ետես արքայն, յոյժ ծիծաղեցաւ և ասէ. Օրհնեալ ես առաջի դիցն։

Եւ պարգևս մեծամեծս ետ ինձ և զհարկն եգիպտոսի եթող և բարով և խնդութեամբ արձակեաց զիս, և գնացի։

Իբրև լուաւ թագաւորն Սենեքարիմ զգնալն իմ, ել ընդառաջ իմ ուրախութեամբ։ Եւ իբրև ողջունեցաք զմիմեանս, առեալ տարաւ զիս յապարանս իւր և ի գլուխ բազմականին բազմեցոյց զիս և արար ուրախութիւն մեծ բազում աւուրս և պարգևս մեծամեծս շնորհեաց ինձ։

1 C_4 շատ են եղեալ։
2 C_1 համարեա փխ հրամայեա, C_4 բերել ինձ։
6 C_4 նախարարացդ իւրոցդ (92 չիք՝ իւրոցդ)։
7 C_4 եմք և գիտեմք։
11 $C_{2,4,5}$ տանին փխ տամ։
13 Bod, 92 տոյն փխ տանն։
15 C_4 մանացք (Ven մանոցք)։
12—16 Canon Յայնժամ մտայծորհ եղէ և ի թիկանց կոյս տանն ծակեցի զորմն ուստի արևն ծագէր և յորժամ ծագեաց արևն խառնեցի փոշի ընդ աւազ և արկի ի լուսամուտն և երևեցաւ շողն որպէս մանոցք և ասեմ տէր իմ արքայ հրամայեաց զի ժողովեսցեն փխ և ես մտի-մանեցից։
20 C_4 խաղաղութեամբ (Bod խնդութեամբ) փխ խնդութեամբ։
21 C_3 արքայն գալն փխ թագաւորն-գնացն, C_4 գալուստն փխ գնացն։
21—22 $C_{2,5}$ ընդդէմն փխ ընդառաջ։
22 C_3 ուրախութեամբ և գուսանօք։
24 $C_{2,5}$ խրախութիւն։

Եւ ասէ ցիս. Ով հայր իմ Ախիկար, խնդրեա յինէն այլ մեծամեծ պարգևս։

Երկիր պագի նմա և ասեմ. Արքայ, յաւիտեան կաց, զոր ինչ պարգևել կամիս դու, Աբուսմագայ ընկերին իմոյ պարգեվեա, որ է տուօղ կենաց ծառայից քոց, այլ տացես ինձ զնադան քեռորդին իմ, զոր ուսուցի, զի ոչ ուսաւ զառաջին ուսումն բարիոք։

Եւ ետ արքայն զնադան ի ձեռս իմ։

Եւ ես առեալ տարայ զնա ի տուն իմ և կապեցի զնա ընդ աղիւսոյ միոյ երկաթոյ, որ էր կշռովն է քանքարոյ ի դրան սրահին իմոյ։ Եւ յանձն արարի զնա Բելիար ծառայի իմոյ և հրամայեցի զան հարկանել ի թիկունս և ի փոր նորա։ Եւ ասեմ ցնա. Ի մտանելն և յելանելն, զոր ինչ առակաւ խօսիմ ընդ սա, գրեա ի թղթի և պահեա։

Եւ տայի նմա հաց սակաւ և ջուր սակաւ։

Խօսել սկսայ և ասեմ ցնա.

3 Bod չիք՝ երկիրպագի նմա և, Ven չիք՝ յաւիտեան կաց։
4 Bod կամիս տուր։
6 Canon զի այլ ուսուցմն ուսուցից նմա փխ զոր ուսուցի։
7 Ven դարմն փխ բարիոք, Bod իմ փխ բարիոք։
8 C_4 գնադան քեռորդին (Ven չիք՝ քեռորդին)։
9 C_1 չիք՝ ի տուն-գնա։
13 $C_{1,2}$ արկաւ փխ առակաւ, C_3 կարգաւ փխ առակաւ։
15 Bod տացի փխ տայի։
16 C_4 այսպէս փխ ցնա։

* * *

1. Որդեակ, որ ընդ ականջս ոչ լսէ, ընդ թիկունս լսեցուցանեն։

Խօսել սկսաւ Նադան և ասէ. Ընդէ՞ր բարկացար ինձ, հայր իմ։ Մեղայ քեզ, հայր իմ պատուական։ Եթէ ողորմիս ծառայիս քո, ես եղէց քեզ մոխիր և ծառայ զամենայն աւուրս կենաց իմոց։

Եւ ես ասեմ ցնա.

2. Որդեակ, յաթոռ փառաց նստուցի զքեզ, և դու յաթոռոյ իմոյ կործանեցեր զիս։

3. Որդեակ, ես բեհեզս և ծիրանիս ագուցի զքեզ, և դու հողով զմարմինս իմ ապականեցեր։

4. Որդեակ, ես բարձրացուցի զքեզ որպէս աշտարակ, զի եթէ եկեսցէ առ իս թշնամին, ելից ամրացայց ի քեզ։ Դու ինքնին թշնամի գտար ի տան իմում։

5. Որդեակ, ես ետու զքեզ ի պատիւ և ի փառս, և դու մատնեցեր զիս ի ձեռս թշնամեաց և մահու։

6. Որդեակ, ես սնուցի զքեզ, որպէս զձագս աղուեսու. Եւ ակն քո ի ծակ քո, մատն իմ կոխեր ի բերան քո և զմատունս քո սրեր յաչս իմ։

7. Որդեակ, արդարութիւն իմ և անմեղութիւն իմ փրկեաց զիս և ապրեցոյց, և անիրաւութիւն քո ոչ աջողեաց քեզ։

1 C_1 *ականջ քո որ ոչ լսեաց։*

2 C_3 *ասէ Նադան փխ խօսել-սսել,* չիք՝ *հայր իմ պատուական,* C_4 *թիկար փխ պատուական,* Ven չիք՝ *մեղայ-պատուական,* C_4 *ողորմիս ինձ։*

3 C_4 *զգեցուցի փխ ագուցի։*

4 C_2 *իբրև փխ որպէս,* C_4 *ինքնին գտար թշնամի տան իմոյ (92 թշնամին գտար ինքնին ի տան)։*

5 C_2 *թշնամու փխ ի ձեռս թշնամեաց,* չիք՝ *թշնամեաց և։*

6 C_4 *ուսուցի փխ սնուցի,* C_1 *կոխեր փխ կոխեր,* Canon *որդեակ սնուցի զքեզ որպէս ձագս արծուի և մատունք քո սրեալ էին ի յաչս իմ քանզի ակն քո չար էր տեսանել զիս փխ որդեակ-յաչս իմ։*

7 $C_{2,4,5}$ *ապրեցոյց զիս,* C_3 չիք՝ *և ապրեցոյց։*

8. Որդեակ, եղեր ինձ որպէս կարիճ, որ եհար զասեղն։ Եւ ասէ ասեղն. Ահա խայթոց, որ չար է քան զքոյդ։

Դարձեալ եհար զթաթն ուղտուն, և նա եհար զթաթն ի վերայ նորայ և ճմլեաց զնա և ասէ. Գերի, ոչ գիտէիր, եթէ շունչ և հոգի քո յոտս իմ էր։

9. Որդեակ, եղեր ինձ որպէս այծն, որ ուտեր զտորունն։ Ասէ տորունն. Զի՞ ուտես զիս, ոչ գիտես եթէ ինև գործեն զմորթիդ քո։ Ասէ այծն. Ես ի կենդանութեանս ուտեմ զքեզ, և ի մահուան իմոյ խլեն զտակ քո և շինեն զմորթի իմ։

10. Որդեակ, դարձեալ եղեր ինձ որպէս այն, որ ձգեաց նետ յերկինս և ոչ կարաց հանել ի վեր, այլ զանօրէնութիւն շահեցաւ։ Եւ դարձաւ նետն ի գլուխն իւր։

11. Որդեակ, եղեր ինձ սերմանահան, որ ցանեաց գրիւս Ժ և ժողովեաց գրիւս Ե և այլ պակաս։

12a. Որդեակ, եղեր ինձ որպէս կացին, որ կոտրէր զծառն։ Եւ ասէր ծառն. Եթէ յինէն չէիր, ինձ յաղթել ոչ կարէիր։

12b. Դու այնպէս կարծէիր եթէ զտեղի նորա լնում, բայց եթէ լինիցի ագի խոզի իբրև կանկունս է, զձիոյ տեղին ոչ կարէ լնուլ։

12c. Եւ եթէ իցէ ասրն, որ ծնանի մարմնոյ թագաւորին, բայց ինքն ումեք ոչ էր օգուտ և ոչ պիտանի, այլ անպէտ և վատ։

8 $C_{1,2,5}$ չիք՝ *և ասէ ասեղն,* C_3 *ասեղն ցկարիճն,* C_1 *զթազն փխ զթաթն.* C_3 *զթաթ ըղտին,* C_1 *զթաղն փխ զթաթն,* C_3 *զթաթ ըղտին,* C_2 *զտոյան փխ ուղտուն,* C_5 *զտոյն փխ ուղտուն,* C_3 *որ շունչ քո փխ եթէ քո,* Ven չիք՝ *ուղտուն-զթաթն,* Canon *ոչ գիտէիր չար կարիճ թե զօրութիւնք քո ոտս իմ է փխ գերի-իմ էր։*

9 C_2 *գիտես զիս,* Bod *այսոմք փխ ինև,* C_3 *չգիտես թե ես եմ գործի մորթոյ քո,* Canon *թէ արմատով իմով ներկեն զմորթն քո, խենդակաւ փխ խլեն զտակ քո։*

10 C_3 *նետն ի վեր և չկարաց հանել յերկինքն,* չիք՝ *այլ-շահեցաւ և,* C_4 *զանաւրէնութիւն իւր։*

11 C_4 *դարձեալ փխ որդեակ (92 որդեակ փխ դարձեալ), որպէս սերմանահան։*

12a C_4 *ոչ յաղթէիր փխ ինձ-կարէիր (92 ինձ-կարէիր փխ ոչ յաղթէիր),* Ven չիք՝ *ասէր ծառն,* Canon *որպէս զծառն զոր կարէին ասէ ծառն եթէ ոչ էիր յինէն որ ի ձեռինդ է ոչ կարէիր յաղթել ինձ փխ որպէս-կարէիր,* C_3 *եթէ յինէն չէր կոթ քո ոչ կարէիր յաղթել ինձ փխ եթէ-կարէիր։*

12b C_3 *թէ փխ բայց եթէ, է կանգուն փխ իբրև կանկունս է,* Bod *լնու, փխ կարէ լնուլ։*

12c $C_{2,5}$ *ծիրանի փխ ծնանի,* C_4 *և թէ լինի ասր նորա որպէս ծիրանի թագաւորի ոչ կարէ նմանել ոչխ հացի եկեր զմարմին թագաւորի։* C խմբի բնօրինակություններում խրատն աղավաղված է։ Իրար են խառնվել A խմբի № 6 և 9 խրատները։

13. Որդեակ, եղեր ինձ որպէս զձագ ծիծառան, որ անկաւ ի բնոյ իւրմէ: Եւ եգիտ զնա ագիսս մի և ասէ. Եթէ յինէն ի զատ էիր լեալ, այլ մեծ չարին էիր դիպեալ: Ասէ ձագն ծիծառան, Թէ զբարիդ զոր ինձ արարիր, ի գլուխ քո դարձցի:

14a. Որդեակ, շունն, որ զորսն ինքն ուտէ, կերակուր գայլոց եղիցի:

14b. Աչք, որ ինձ լոյս ոչ տայ, ագռաւք ծեծեն զնա:

14c. Ձեռք, որ ինձ չէ օգուտ, սրօք հատցեն զնա, որ ոչ է օգուտ:

15. Որդեակ, եղեր ինձ որպէս որոգայթ, որ թաղեալ կայր յաղբին: Եգիտ զնա ճնճղուկ մի և ասէ. Ձի՞նչ ես: Ասէ. Յաղօթս կամ առաստուած: Եւ ասէ ճնճղուկն. Եւ այդ, որ ի բերանդ է, ձի՞նչ է: Ասէ. Քաղցելոց հացիկ է: Արձակեալ ճնճղուկն առնուլ զհատն, և կալաւ զպարանոցսն: Ասէ. Թէ քաղցելոց հացիկն այս էր, աստուած այսպէս լսէ աղօթից քոց:

16. Որդեակ, ասացին գայլուն, Թէ ի բաց կաց ի գիհեդ: Ասէ. Թէ ի բաց կենամ, կուրանամ, զի փոշին աչիցս դեղ է:

17. Որդեակ, եղեր ինձ որպէս ոմն, որ եհես զընկերն իւր, որ դողայր, առեալ ջուր, արկ ի վերայ նորա:

18. Որդեակ, եղեր ինձ որպէս շուն, որ եմուտ ի քուրայ բրտին, յորժամ ջերաւ, սկսաւ հաջել ընդդէմ բրտին:

19. Որդեակ, ասացին ագիսին, եթէ թող զսովորական բանն և համարձակ լինի քեզ յարքունիս մտանել և ելանել: Ասէ ագիսն. Եթէ եղիցին աչք իմ ոսկի և թաթ իմ արծաթի, զսովորական բանն իմ ոչ թողից:

14a C_3 *ուտիցէ գայլոց կերակուր լինիցի:*

14b C_2 *ծիծեռն,* Bod *յիս փխ ինձ, փորեն փխ ծեծեն,* C_3 *որդեակ աչք (Այդպիսով խրատն անկախ բնույթ է ստացել), խաւար եղիցի փխ ծեծեն զնա:*

14c C_4 *ուսովք փխ սրօք* (Ven, *92 (ս) բաւք),* չիք՝ *որ ոչ է օգուտ (92 ունի՝ որ ոչ է օգտս):*

15 C_1 *թաղկեալ փխ թաղեալ,* $C_{3,4}$ *յաղբեան,* Bod չիք՝ *կայր,* C_2 չիք՝ *յաղօթս,* C_4 *զինչ ես դու, ապցելոց փխ քաղցելոց, զհացն փխ զհատն,* Ven չիք՝ *քոց,* C_3 *կամեցաւ առնուլ զհացն:*

16 C_2 *քիզէդ փխ գիհեդ,* C_5 *գեւզէտ փխ գիհեդ,* C_3 *ասէ դայլն,* Bod, *92 դեղ է և շահ,* Canon *աչաց շահ է և փորուս օգուտ:*

17 $C_{2,5}$ *մոմն փխ ոմն,* C_2 *թողայր փխ դողայր:*

18 C_3 չիք՝ *ընդդէմ բրտին:*

19 Bod *զսովորութիւնդ,* Ven *լինի բանն,* Bod *համարձակեալ են ի քեզ,* C_2 չիք՝ *արծաթի,* C_1 *թագ փխ թաթ,* չիք՝ *և ելանել,* Canon *բարս փխ բանն:*

20. Որդեակ, եղեր ինձ որպէս օձն, որ փաթթեցաւ ի մասրենին և անկաւ ի գետն: Եւ գայլն ետես զնա և ասէ. Ահա չարն ի չար է հնծեալ, և չար է, որ վարէ զնոսա:

21. Որդեակ, եղեր ինձ որպէս խլուրդն, որ ելաւ ի ծակէն և այլ ընդ այլ գնաց, վասն աչաց չի տեսանելոյ, և արձակեցաւ արծիւ մի, էառ զնա: Ասէ խլուրդն. Եթէ ոչ էր զգալիքս ի վերայ իմ գալոց, յիմ տեղն էի կացեալ խաղաղական կենօք:

22. Որդեակ, զգայլուն ձագն յուսումն տուին և ասէին, Թէ ասա այր, բեն, գիմ: Եւ նա ասէ. Այծ, բոյծ, գառն:

23. Որդեակ, զխոզն ի բաղանիս տարան, և նա անկեալ ի մուրատն, թաւալէր և ասէր. Դուք ի ձերն լուացուցեք և ես յիմս:

Խօսել սկսաւ Նադան և ասէ. Հայր իմ Խիկար, աստուծոյ մեղանչեն, և նա թողու, յորժամ մեղայ ասեն: Արդ, մեղայ քեզ, թող ինձ, և ես եղէց քեզ ծառայ յայսմհետէ մինչև յաւիտեան:

24. Որդեակ, եղեր ինձ որպէս արմաւենի, որ բուսեալ էր յեզր գետոյն և յորժամ պտուղն հասանէր, նա ի գետն անկանէր: Եկեալ տէր ծառոյն առ ի կտրել զնա: Ասէ ծառն. Թող զիս յայսմ տեղւոջն, զի միւս անգամ բերից զպտուղն: Ասէ տէր ծառոյն. Մինչև ցօրս չեղեր ինձ պիտանի, այլ ոչ պիտանասցիս:

25. Որդեակ, աստուած ապրեցոյց, զիս վասն անմեղութեան իմոյ և զքեզ կորոյս վասն անիրաւութեան քո: Աստուած առնէ ընդ իս և ընդ քեզ փոխարէն, զի ագին շանն հաց տայ և բերանն՝ բիր:

26*. Որդեակ, ես այսպէս կարծէի, Թէ կացցես ի տան իմ և ժառանգեսցես զինչս իմ, այլ ըստ անօրէնութեան քում ոչ յաջողեաց քեզ աստուած:

27*. Որդեակ Նաթան, զամենայն բարութիւնս ջամբեցի քեզ, և դու զհաց և զջուր արգելեր յինէն:

28*. Որդեակ, իւղիւ անուշիւ օծեցի զքեզ, բեհեզս և ծիրանիս ագուցի զքեզ, և դու զմարմին իմ ապականեցեր ի տուն խաւարի:

---

20 C_2 *մարթենին փխ մասրենին,* $C_{3,4}$ *տեսեալ զնայ գայլոյն:*

22 C_3 *ուլ փխ բոյծ:*

23 Ven *մուրսն փխ մուրատն,* $C_{2,4,5}$ *ասելով փխ և ասէր:*

24 C_3 Canon *այսմ ամի փխ յայսմ տեղւոջն,* C_4 *միւս ամի* (Ven, *92 միւս անգամ),* C_2 *մի կտրել բերից պտուղ այլ ոչ ընկէց ի գետն փխ թող-զպտուղն, մինչև ցայսօր չեղար պիտան այլ ոչ լինիս պիտանի:*

25 C_1 *անաւրէնութեան փխ անիրաւութեան,* Bod *գատաստան փխ փոխարէն:*

29*. Որդեակ, անուցի զքեզ, որպէս զմայր զանդրանիկ որդի, և դու զկեանս իմ կորացուցեր զիս:

Ի նմին ժամու ուռեցաւ նադան և պատառեցաւ: Եւ ասեմ.

30. Որդեակ, որ բարի առնէ, բարի գտանէ, և որ այլոց խորխորատ փորէ, և խորխորատի ինքն անկանի:

Կատարի բարին ի բարի և չարն՝ ի չար:

Մինչև ցայս վայր կատարեցաւ Խիկար:

---

30 C_2 չիք՝ բարի գտանէ, Canon և որ փորէ խորխորատ ընկերի անձամբ իւրով լինաւ, C_2 Ven. 92 չիք՝ անկանի ի նմա, C_3 եւ ի նմին ժամու պատառեցաւ նադանն այն և կորեաւ չարն և բարձաւ ի միջոյ չնորհօքն աստուածոյ նոյն պէս և ամենայն չարախօսք պատառին ի դիմաց ծառայիս աստուծոյ պարոն Մալիք Հախնազարին զինքն անձնարարի զՔրիստոս որ պահէ անփորձ ի թշնամեաց ամէն եղիցի եղիցի փխ և ի նմին-Խիկար:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՐԱՏՔ ԻՄԱՍՏՆՈՑՆ ԽԻԿԱՐԱՅ

(ՏԱՐԲԵՐԱԿ D)

Այս տարբերակը հավաքական բնագիր է, կազմված հետագայում որևէ խմբագրի կողմից։ Այդ են վկայում որոշ խրատների կրկնություններ։ Խմբագիրն օգտվելով տարբեր աղբյուրներից, շարքի մեջ վրիպումով տեղադրել է համաբնույթ խրատներ։

Բնագիրն ունի հարուստ խրատականք։ 210 ուսուցող և 41 պատժիչ խրատ։ Առանձին միավոր ենք հաշվել միայն այն խրատները, որոնք ունեն «որդեակ» սկիզբ։

Ընդարձակ է և մանրամասնած նաև պատմության բաժինը։

D տարբերակից մեզ հայտնի է միայն յոթ միավոր։ Առաջին, երկրորդ, երրորդ և հինգերորդ միավորները գրեթե ընթերցումներ չեն տալիս և հավանաբար իրարից են ընդօրինակվել։ Ընթերցումներ ունեն միայն D_4 և D_6 ձեռագրերը, իսկ D_7-ը մի փոքրիկ անկարեվոր հատված է։

Այդ նշանակում է, որ տարբերակն ավելի ուշ շրջանի խմբագրություն է և չի գտել մեծ տարածում։

Բնագրի համար հիմք է ծառայել D_1-ը։

Հրատարակում ենք AB և C տարբերակների սկզբունքներով։

Աղբյուրները և խրատների համադրական աղյուսակը տես գրքի վերջում (աղյուսակ V—ուսուցող խրատներ, աղյուսակ VI—պատժիչ խրատներ)։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՐԱՏ ԻՄԱՍՏՆՈՅՆ ԽԻԿԱՐԱՅ

Յամս թագաւորութեան Սեննեքարիմայ, արքայի Ասորեստանեաց, ես՝ Խիկարս, դպրապետ էի ի դրան Սեննեքարիմայ արքայի: Վաթսուն ապարան շինեցի և վաթսուն կին առի և եղէ ես վաթսուն տարոյ, և ոչ եղև ինձ զաւակ: Յայնժամ խորհուրդ արարեալ իմ և մտի առ չաստուածսն, բորբոքեցի հուր և արկի խունկս անուշս ի վերայ նորայ և անկեալ առաջի նոցա, աղաչէի և ասէի. Ով տեարք իմ և չաստուածք իմ, օգնեցէք ինձ և տուք ինձ զաւակ, զի ահա ծերացեալ եմ և հասեալ եմ յափն գերեզմանին, և զի՞նչ ասեն մարդիկք, եթէ ահա Խիկար մեռանի և ոչ կայ նմա որդի, որ թաղէ զնա և ոչ՝ դուստր, որ լայ զնա: Եւ չունիմ ժառանգ յետ մահուան իմոյ, որ ժառանգեսցէ զինչս իմ և արկցէ հող ձեռօք իւրովք ի վերայ իմ, զի մի՛ մնացից անյիշատակ ի մէջ ազգի իմոյ:

Յայնժամ ձայն եղև ի չաստուածոցն և ասէ առ իս. Ով Խիկար դպիր, ոչ է հրամայեալ քեզ լինել զաւակ, բայց թէ առցես

---

2 $D_{4,5}$ *յայսմ փխ յամս:*
4 D_4 *և շինեցի ես կ ապարան:*
5 D_4 *ամաց փխ տարոյ:*
5—8 D_4 *և ես կայի տրտում անժառանգութեան իմոյ որ ելեալ ժառանգէր զինչս իմ յաւուր միում խորհուրդ արարի ի մտի իմում և ասի երթամ առ չաստուածն իմ և աղաչեմ մինչ լինի որ տա ինձ զաւակ և առեալ խունկս և մոմս և այլ ծխանելիս ելեալ զնացի ի տունն չաստուածոց մերոց արարի հուր կրակի և արկի խունկս անուշս ի վերա նորա և անկեալ առաջի չաստուածոց իմոց և ասէի այսպէս ով տէրք իմ փխ յայնժամ-ով տեարք իմ:*
9 D_4 *զաւակ ժառանգութեան որ ելեալ ժառանգէ զինչս իմ:*
11 D_4 *գոյ փխ կայ:*
12 D_4 *չունի:*
13 D_4 *նորա փխ իմ, չիք՝ իւրովք, նորա փխ իմ:*
13—14 D_4 *ահա մնացի փխ զի մի մնացից:*
15 D_5 *չիք՝ առ իս:*
16 D_4 *ահա փխ բայց թէ:*

զնաթան քւեր որդին քո և սնուցանիցես զնա քեզ որդի, նա լցուսցէ զտեղի անուան քո ի մէջ ազգի քումէ:

Եւ յորժամ լուա ես զպատասխանիս զայս ի չաստուածոցն, յայնժամ առի զնաթան քւեր որդին իմ միոյ ամաց և աղուցի նմա բեհեզս և ծիրանիս և զարդարեցի զնա իբրև զորդի թագաւորի և սնուցանէի զնա ամենայն բարուքեամբ, մինչև եղև է ամաց: Յայնժամ սկսա ուսուցանել նմա զդպրութիւնս գիտութեանց և զիմաստութիւնս հանճարոյ, զպատասխանիս հրովարտակաց և զդարձուածս հակառակախօսից: Եւ ոչ դադարէի յուսուցանելոյ զնա զտիւ և զգիշեր, և յագեցուցանէի զնա ուսմամբ և իմաստութեամբ, իբրև զհացիւ և ջրով:

Եւ յաւուր միում ասէ ցիս արքայն Սեննեքարիմ. Ով խիկար դպիր, գիտեմք, զի ծերացեալ ես և անցեալ զաւուրքդ և յետ քո ո՞վ է, որ կատարեսցէ զգործս արքունեաց մերոց, քանզի և ես տրտում եմ ի վերայ իրացս այսորիկ: Եւ ես ասացի ցնա. Արքայ, յաւիտեան կաց և մի՛ ինչ տրտմիր վասն բանիդ այդորիկ, քանզի է իմ որդի, որ առաւել հանճարով քան զիս, և նա կատարեսցէ զամենայն գործս թագաւորութեան ձերում:

Եւ յորժամ լուաւ արքայն Սեննեքարիմ զբանս իմ, զոր ծանուցի նմա, բերկրեցաւ ի սրտի իւրում և ցնծացաւ յոգի իւր և ասէ ցիս. Ածցես զորդին քո առ իս, զի տեսից զնա:

---

1 D_4 *ի տան քում փխ քեզ որդի:*
3—4 D_4 *չաստուածոց իմոց:*
4 D_4 *ամաց և տարի ի տուն իմում:*
5 D_4 *նման փխ իբրև:*
7 D_4 *յետ այնորիկ փխ յայնժամ:*
7—9 D_4 *զվարս զպրութեան իմոյ գիտութեանց զպատասխանիս հրովարտաքաց արքունական պաղատէն փխ զդպրութիւնս-հրովարտակաց:*
9—11 D_4 *զամենայն իմաստութիւնս հանճարոյ իմոյ իբրև ուսմամբ և իմաստութեամբ զոցի առ աչս ամենեցուն արքունական պաղատին փխ և-ջրով:*
13 D_4 *զպրապետ իմ փխ զդպիր, ահա փխ զի, անցեալ են, ցաւուրբք քո, յետ անցանելոյ:*
14 D_4 *ով կատարէ փխ ով է որ կատարեսցէ, իմոց փխ մերոց:*
15 D_4 *իրացդ այդ բանիդ:*
16 D_4 *չիք՝ ինչ, բանիցդ այդմիկ, D_5 ի վերա փխ վասն:*
17 D_4 *կա ինձ փխ է իմ, առաւել է լի իմաստութեամբ և:*
18 D_4 *կարող է կատարել զգործս թագաւորութեանդ:*
19 D_4 *զայս փխ Սեննեքարիմ:*
20 D_4 *չիք՝ ի սրտի իւրում, սիրտն փխ յոգի իւր:*
21 D_4 *ցիս ով Խիկար, վասն թէ որում հասակի կա փխ զնա:*

Յայնժամ առեալ իմ զնաթան և զարդարեցի զնա պատուական հանդերձիւք, որպէս պատշաճն էր մտանել յարքունիս և ածի զնա առաջի թագաւորին:

Եւ յորժամ եհաս զնա արքայն, ուրախ եղև յոյժ և ասէ առաջի ամենայն մեծամեծաց իւրոց զայս ինչ. Աւուրք Խիկարայ օրհնեալ եղիցի, զի ի կենդանութեան իւրում էած կացոյց զորդի իւր առաջի իմ: Այսուհետև ինքն ի հանգստեան եղիցի: Յայնժամ խոնարհեալ իմ և երկիր պագեցի արքային և առեալ զնաթան, տարայ յապարանս իմ և օրըստօրէ վարժէի զնա իմաստութիւնս և ի հանճարս: Եւ առաւել քան զընտծին որդի իմ խնամ ածէի նմա:

Եւ յուսուցանելն իմ զգիտութիւն և զբանս խրատուց ասէի նմա այսպէս.

1—3 D_4 *և ես առեալ զնաթան քւեր որդին իմ տարի առաջի արքայի բազում գարգարանօք փխ յայնժամ-թագաւորին:*
5 D_4 *չիք՝ ինչ:*
6—7 D_4 *զորդին փխ զորդի իւր, յայսուհետև դու Խիկար հանգստեան եղիցիս:*
8 D_4 *չիք՝ յայնժամ խոնհարեալ իմ, արքային իմոյ բազում պարգևս եւ արքայն որդոյն իմոյ Նաթանայ:*
9 D_4 *ի տուն փխ յապարանս:*
10 D_3 *զնորածին փխ զընտծին:*
11 D_5 *խնամ ածի փխ խնամ ածէի:*
12—13 D_4 *սկսա օրըստօրէ ուսուցանել զվարս գիտութեան և իմաստութեան և խոնարհութեան այսպիսի փխ և-այսպէս:*

1. Որդեակ, եթէ լսես բան ինչ ի դրան արքունի, մեռո՛ զնա և թագո՛ և ծածկեսցես ի յրտի քում և մի՛ հանցես ի վեր և մի՛ ումեք ասիցես։

2. Որդեակ, զկապն կնքեալ մի՛ արձակեր և զարձակեալն՝ մի կապեր։

3. Որդեակ, մի՛ համբառնար զաչս քո ի տեսանել զկին գեղեցիկ, օծեալ և ծարուրեալ և մի՛ ցանկասցիս ի սրտի քում, զի եթէ զամենայն ինչս քո տացես ի ձեռս նորա, ոչինչ աւելի գտանիցես, քան զքոյդ, այլ միայն զամօթ և զնախատինս ի մարդկանէ և վասն մեղացն զդատաստանս յաստուծոյ։

4. Որդեակ, ի լեղուէ քումմէ, որպէս յօտարէ, երկնչիցես, զի ոչ գիտես, թէ յորում ժամու ածիցէ չարիս ի վերայ քո։

5. Որդեակ, առանց դպրութեան մի՛ կացցես, զի ընթեռնելն և քննելն զիմաստս և զհանճարս աճեցուցանէ։

6. Որդեակ, ցածո՛ զաչս քո և կակղացո զբարբառ քո և քաղցր ակամբ նայեսցիս առ ամենեսեան և մի՛ երևեսցիս մարդկան անզգամ։

7. Որդեակ, եթէ աղաղակաւ տուն շինուէր, էշն յաւուրն ծ ապարանս կազմէր և եթէ ի սաստիկ զօրութենէ եզինք վարէին, լուծ յուղտոյ պարանոցէ ոչ պակասէր երբէք։

8. Որդեակ, լաւ է ընդ առն իմաստնոյ քարինս կրել, քան ընդ անմտին գինի ըմպել։

---

3 D_4 բայց փխ այլ, զնախատինս կրես, մեզացն պատիժ մեծամեծ կրես դու օր դատաստանին աստուծոյ, չիք՝ զդատաստանս յաստուծոյ։

4 D_6 զդուշացիր փխ երկնչիցես, D_5 յորժամու փխ յորում ժամու։

6 D_6 քաղցրութեամբ տար ամենեցուն զպատասխանին փխ քաղցր-ամենեսեան։

7 D_5 եթե մարդ, D_4 եզինք ոչ, զլուծն բայց ի յղտոյ։

8 $D_{2,4,5}$ չիք՝ ընդ (Այդպիսով իմաստ փոխվում է)։

9. Որդեակ, հեղցես զգինի քո և մի՛ ըմպեսցես ընդ անօրէնս և ընդ անզգամս, զի մի՛ իբրև զնոսա արհամարհեսցիս։

10. Որդեակ, հրամայեալ է աստուած զգինին վասն ուրախութեան, բայց ի տեղիս բոզանոցի և անպատշաճ լաւ է աղբ ըմպել քան զգինի։

11. Որդեակ, զայր անմիտ և արբեցող պատգամաբեր մի՛ ուղարկեր, կամ բարէխօս, թէ ոչ՝ բազում չարիս ածէ ի վերայ քո անպիտան խօսիւք։

12. Որդեակ, որպէս երկիր, որ մայր է ամենայն բուսոց և տրնկոց, նոյնպէս և արբեցութիւն մայր է ամենայն մեղաց։

13. Որդեակ, տգէտին և արբեցածին և դիւահարին խրատ մի՛ տալ և ոչ հետ նոցա սիրելութիւն մի՛ դնել։

14. Որդեակ, լեղու անմտին և արբեցողին որպէս զբիմս աստղաց է, զայլ ոք ոչ կարէ հարկանել, այլ հանապազ զգլուխն իւր ծեծէ։

15. Որդեակ, այր անմիտ յորժամ գայ յանդիման առաջի թագաւորաց և կամ իշխանաց, խաբեութեամբ պատճառս պատճառեսցէ, առաւել ևս բարկացուցանէ և չարիս զարթուցանէ ի վերայ իւր։

16. Որդեակ, ընդ իմաստունս մի՛ անզգամիցիս և մի՛ լինիցիս կցորդ անզգամի և անմտի, զի մի իբրև զնոսա կոչեսցիս։

17. Որդեակ, ընդ առն վատասրտի և անզօրի մի՛ լինիր, վասն զի վատասրտութեամբն յաղթի յամենայնէ, և դու տրտմիս։ Այլ լեր ընդ առն իմաստնոյ և քաջասրտի, զի յորժամ յաղթահարէ զքշնամին եթէ խօսիւք և եթէ մարտիւ և դո՛ւ ընդ նմա գովիս և փառաւորիս, և եթէ դու յաղթիս ի թշնամոյն, նա քաջութեամբն և հանճարովն օգնէ և զերծուցանէ զքեզ։

18. Որդեակ, այր չարախորհուրդ և նախանձոտ ոչ թէ միայն աստելեաց իւրոց խորհի չար, այլ բնութիւն նորա ամենեցուն չար է։ Այսպէս իմա և զբարի բնութիւն մարդկան։

---

9 D_4 գիտես որ դու հեղցես զգինին, երբեք փխ իբրև, D_5 համարձակեսցիս փխ արհամարհեսցիս։

12 D_4 չիք՝ որպէս, D_6 չարեաց փխ մեզաց։

13 D_1 հետնոց, D_4 ի հետ նոցա, D_6 սիրելի լինիր փխ սիրելութիւն մի՛ դնել։

15 D_4 չիք՝ յանդիման, D_6 մեծամեծաց փխ թագաւորաց և կամ իշխանաց, D_5 յանդիման լիցի, D_3 ամենայն փխ կամ, D_5 բարկացուցանէ զբարբիչն, D_6 չիք՝ և բարկացուցանէ զնոսա։

16 D_4 անիմաստնոս, D_5 անիմաստս, D_6 հակառակիր փխ անզգամիցիս, լինիցիր։

17 D_{2-5} վատասրտութեամբն և անզօրութեամբն, D_6 անօրէնութեամբ փխ վատասրտութեամբն, չիք՝ եթէ խօսիւք և եթէ մարտիւ, հանճարիւն իւրով փխ քաջութեամբն և հանճարուիմ, D_5 օգնէ քեզ։

18 D_4 չարախօս, D_6 միում ումեք փխ առելեաց իւրոց, չար է և հակառակ, չիք՝ այսպէս-մարդն, D_4 իմանաս զբարի բնութիւն մարդն։

19. Որդեակ, զմասն քո կեր խաղաղութեամբ և ի քո ընկերիդ զաչսդ մի՛ արձակեր։

20. Որդեակ, զայր լեղուանի և անբարհաւաճ մի՛ համարձակեցուցաներ մտանել ի տուն քո, զի մի և դու ի գործոց նորա ամօթ կրեսցես։

21. Որդեակ, մի՛ հակառակիր ընդ մարդ և մի՛ ընդ վայր ծիծաղիր, զի ի ծաղրուն լինի կռիւ և անհարկութիւն։

22. Որդեակ, որ զուարթ է մտօք՝ արեգակն է լուսավոր և որ նենգ է և նեղ է սրտիւ՝ խաւար է մթացեալ։

23. Որդեակ, որ առատ է սրտիւ՝ լի է ամենայն բարութեամբ և որ ագահ է մտօք, թէպէտ և ունի ինչս բազումս, դատարկ է և ունայն և կենդանոյն մեռեալ է։

24. Որդեակ, ոչ թէ իմանալն է իմաստութիւն, այլ կատարելն, զի որ գիտենայ և ոչ առնէ՝ անմիտ է։

25. Որդեակ, եթէ կամիս ինչս գործել, մի՛ յառաջագոյն պարծիր կամ խոստանար, զի թէ չետոյ ոչ կարենաս կատարել, ծաղրն լինիս դու ամենեցունց։

26. Որդեակ, մի՛ լինիր որպէս նշենի շուտ, որ յառաջ ծաղկի և չետոյ ուտի պտուղ նորա, այլ լեր որպէս թթենի, որ չետոյ ծաղկի և յառաջ ուտի պտուղ նորա։

27. Որդեակ, եթէ վայելեսցես ի բարութեան զամենայն կեանս քո յաշխարհի, զօր մահուան քո մի՛ մոռանար հանապազ։

28. Որդեակ, հայելով հայեսցես ի գերեզման ընկերին քո և յիշեսցես, զի և դու նման նմա լինելոց ես։

29. Որդեակ, մի՛ լինիր կարի քաղցր, որ կլանեն զքեզ և մի՛ կարի դառն, զի թքանիցեն, այլ եղիցիս հեզ և հանդարտ ի գործս գնացից քոց։

30. Որդեակ, մինչ կոշիկն յոտդ է կոխեա զփուշն և արա համապարհ որդոց քոց։

---

21 D_1 չիք՝ մարդ, D_6 ոսոխի քում թէ ունիցիս դու ինչ ընդ նմա զի կարող ես քաղցրութեամբ յաղթել նմա քան զդառնութեամբ ոչ փխ մարդ և-անհարկութիւն։

22 D_4 թմրեալ փխ մթացեալ։

24 D_5 գիտենալն փխ իմանալն, գիտէ փխ գիտենայ, յիմար է և անմիտ փխ անմիտ է D_5 կատարելն, զօր փխ զի որ, D_4 գիտենայ բան ինչ։

25 D_5 չիք՝ կամ խոստանար, չիք՝ չետոյ, չիք՝ դու ամենեցունց։

27 D_4 եթէ կամիս վայելել ի բարութեամբ, մի փխ քո մի, D_6 չիք՝ հանապազ։

28 D_6 նոյնպէս փխ նման նմա։

29 D_4 մի լինիր փխ մի, $D_{1,2}$ զաղան փխ դառն, D_6 չիք՝ զքեզ, թքանեն։

31. Որդեակ, որ անժամ սերմանէ, ոչ հնձէ, և որ ոչ աշխատի ի գործս ինչ, ոչ առնու վարձս ի նմանէ։ Սոյնպէս որ ոչ խրատէ զորդիս ոչ հրահանգին։

32. Որդեակ, մեծատանն որդին օձ կերաւ, ասին՝ դեղ կերաւ, աղքատին որդին կերաւ ասին՝ ի սովոյն կերաւ։

33. Որդեակ, ընդ աներկիւղն ի ճանապարհ մի՛ երթար և ընդ անզգամին հաց անգամ մի՛ ուտեր։

34. Որդեակ, թէ տեսանիցես զթշնամին քո գլորեալ, մի՛ ծաղր առներ զնա, գուցէ կանգնիցէ և քեզ չար հատուցանիցէ։

35. Որդեակ, ի թշնամոյն քո պատրաստ լեր և զգոյշ կացիր, զի ոչ գիտես, թէ յորում ժամու չար առնիցէ քեզ։

36. Որդեակ, մի՛ մերձենար ի կին աղաղակող և լեղուանի և անզգամ, զի կորուստ բերէ անձին։

37. Որդեակ, տեսի գաղան զօրեղ, և ոչ արձակեցաւ յիս, հանդիպեցայ թշնամոյն և ոչ յաղթեցայ ի նմանէ, դիպեցայ կնոջ պոռնկի և անզգամի և յաղթեցայ ի նմանէ։

38. Որդեակ, մի՛ ցանկար կնոջ գեղոյ, այլ գեղ կնոջ համեստութիւն է, իսկ իմաստունն՝ պարծանք է առն իւրում։

39. Որդեակ, եթէ պատահիցէ քեզ ատելին քո չարով, եւ դու ընդ յառաջ նորա բարով և եթէ ի տարապարտուց վարէ զքեզ, դու քաղցրութեամբ պատասխանի տացես և դատաստան կուտեսցես ի գլուխ նորա։

40. Որդեակ, անկանի անօրէնն ի չար գործոց իւրոց և կանգնի արդարն ի բարի գործոց իւրոց։

41. Որդեակ, զորդին քո ի գաւազանէ մի՛ խնայեր, զի որպէս պիտոյ է աղբն պարտիզին և որպէս կապն քսակին և որպէս պարանն ի յոտն իշոյն, այնպէս պիտոյ է ծեծն տղային, զի թէ մի՛ անգամ, կամ երկու և երիցս խրատես զնա հանդարտութեամբ, ոչ մեռանի, իսկ եթէ թողուս զնա ի կամս իւր, գող և ավազակ լինի, և տանին ի կապանս և ի սպանումն, և լինի քեզ նախատինք և բեկումն։

---

31 D_4 յորժամ սերմանէ փխ որ անժամ սերմանէ, D_5 յորժամ ոչ փխ որ անժամ, D_4 այսպէս խրատէ զորդիս որ ոչ հրահանգին, D_6 չիք՝ ինչ, չիք՝ ի նմանէ, գգոնանան փխ հրահանգին։

32 D_4 ասացին թէ ի ագահի սովոյն կերաւ։

33 D_4 մի հաց ուտեր ոչ մի անգամ։

35 D_6 կացիր հանապազ, առնէ փխ առնիցէ։ D_4 առնէ քեզ չար։

37 D_4 վազվազակի յաղթեցայ փխ յաղթեցայ ի նմանէ, D_6 երկեա փխ յաղթեցայ։

38 D_4 իմաստուն և պարծանք առն իւրում փխ իսկ-իւրում։

41 D_6 առնին զնա, D_4 նախատինք ամօթ։

42. Որդեակ, հնազանդեցո զորդին քո, մինչդեռ փոքր է և կակուղ, զի մի՛ ընդ քեզ մարտուցեալ, ելանիցէ յուս քո, և ի վնասու նորա կորուսանիս և անէծս առցես յօտարաց վասն անխրատութեան նորա։

43. Որդեակ, առացիր քեզ էշ հաստոլոք և ձի սմպակաւոր և մի՛ ստանար ծառայ փախչող և կամ աղախին կաքաւող, զի զամենայն ստացուածս քո վատնեսցին։

44. Որդեակ, յորժամ անմտին խրատ տաս, համարեա թէ փոշի ցանեցեր ի վերայ յարուցեալ գետոյ։

45. Որդեակ, առերեսք սիրէ մարդն սուտակայ և յետոյ արհամարհէ, բայց դու ի գործոց քոց յիմասցիս։

46. Որդեակ, խօսք մարդոյ ստոյ որպէս լորու պարարտ է, և որ անմիտն է՝ կլանէ զնա։

47. Որդեակ, սիրեա զհայր քո, որ ծնաւ զքեզ և զանէծս մօր քո մի՛ առցես, զի և դու ի բարութեան որդոց քոց խնդասցես։

48. Որդեակ, ընդ դատախազի քո առաջի դատաւորին ցասմամբ մի՛ խօսեսցիս, զի մի անզգամ և անմիտ կոչեսցիս և պատուհաս ի դատաւորէն կրեսցես։

49. Որդեակ, այր, որ խիստ է քան զքեզ, մի՛ հակառակիր ընդ նմա։

50. Որդեակ, ի գիշերի առանց սրոյ ընդ ուրեք մի՛ երթայցես, զի ոչ գիտես, թէ չարկամն ուր կայ պահեալ և կամ թէ ի թշնամեաց ո՞ ելանիցէ ընդառաջ քո։

51. Որդեակ, խաշինք, որ ի գիհէն ի զատ գնան, գայլոց բաժին լինենան։

52. Որդեակ, որպէս վայելուչ է ծառ պտղովք և լեառն անտառախիտ մայրիւք և որպէս ծառ ի մէջ պարտիզի, այնպէս վայելուչ է մարդոյ ի մէջ ազգականաց իւրոց և ի կին և յորդիս իւր։ Իսկ որում ոչ գոյ կին և որդիս և ազգականս, նա արհամարհելի է և նման է ծառի միոյ, որ լինի յանցս ճանապարհաց, և ամենայն, որ անցանէ ընդ այն, տերևաթափ և ճղակոտոր առնեն զնա։

53. Որդեակ, մի՛ ասեր թէ տէր իմ անմիտ է և ես՝ իմաստուն, այլ համբերեա նորա անմտութեան, և իմաստնասցիս դու։

---

42 D_4 մարտիցէ և ելանիցէ փխ մարտուցեալ ելանիցէ։

44 D_4 եթէ փխ յորժամ։

51 $D_{2,5}$ գեհէն, D_4 կերակուր գայլոց եղիցին։

52 D_4 անտառ խառիւք մայրիւք փխ և լեառն անտառախիտ մայրիւք, D_6 չիք՝ ի մէջ ազգականաց իւրոց և։

54. Որդեակ, մի՛ լինիր յաչս անձին քում իմաստուն, յորժամ ի բազմաց ոչ վկայեսցիս։

55. Որդեակ, մի՛ ասեր զուր զումեք, մի մի և այլք քեզ ասասցեն։

56. Որդեակ, մտանութիւն երկու ւէւ ունի։ Եթէ տեսանես զթշնամին ի սպանումն տեառն քո և ոչ յայտնես նմա՝ մահապարտ ես։

57. Որդեակ, առաջի տեառն քո մի՛ լինիր շատախօս, զի մի անարգեսցիս։

58. Որդեակ, յորժամ առաքէ զքեզ տէր քո առ այլ ոք ասել ինչս, մի՛ աւելուցուս ի խօսսն և մի՛ ինչ հատցես ի բանիցն, զի մի ծաղր լինիցիս և պատուհաս յերկոցունցն կրեսցես։

59. Որդեակ, ընդ բազմանալ որդոց քոց մի՛ խնդար և ի պակասելն մի՛ տրտմիր, զի որդիքն և ստացուածքն յաստուծոյ շնորհին։

60. Որդեակ, եթէ ընկեր քո հիւանդ է, մի՛ ասեր թէ զինչ ուղարկեմ նմա, այլ երթ ոտիւք և տես աչօք և լաւ է նմա, քան զտուրս ոսկոյ և արծաթոյ։

61. Որդեակ, պահեա զլեզու քո ի ստութենէ և զաչս քո՝ յարատակելոյ, զձեռս քո՝ ի գողութենէ և զոտս քո՝ ի վատ տեղ գնալոյ, զի բարի լինիցի քեզ յաստուծոյ և ի մարդկանէ, և երկայն աւուրբ կացցես յաշխարհի։

62. Որդեակ, վասն չարախօսութեան ոսկի և արծաթ մի՛ առնուլ, զի գործն չար է և վնասբերիչ։

63. Որդեակ, մի՛ հեղուր զարիւն մարդոյ ի տարապարտուց, զի մի հեղցեն զարիւն քո փոխանակ նորա։

64. Որդեակ, լաւ է ծառայ, որ ողորքանոք խօսի ընդ տեառն իւրում, քան որդի, որ խրոխտալով մեծամեծս խօսի և ածէ ի բարկութիւն։

65. Որդեակ, լաւ է բան իմաստնոյ ի հարբածութ, քան զխօսս անմտի ի ծարաւութ։

---

55 D_1 ումեք փխ զումեքէ, D_3 ուրէք փխ զումեքէ, D_4 ասիցեն և ով որ փորէ խորխորատ ինքեամբք ի նոյն անկանի փխ ասասցեն։

57 D_4 անարգեսցիս ի նմանէ։

58 D_4 աւելցնես, երկոցունց կողմանց, D_6 մի յետոյ ծաղր։

59 D_4 շնորհեալ է կամի աւելցնէ և կամի նուազէ։

62 D_5 չարութեան փխ չարախօսութեան, D_6 կորուստաբեր է անձին փխ գործն չար է և վնասբերիչ։

66. Որդեակ, լաւ է սրտմտութիւն իմաստնոյն, քան զքաղցրութիւն անզգամին։

67. Որդեակ, լաւ է վէրս բարեկամին, քան զհամբոյրս թշնամոյն։

68. Որդեակ, լաւ է կոյր աչօք, քան թէ կոյր մտօք, զի կոյրն աչօքն արագ ուսանի զերթեւեկ ճանապարհին, իսկ կոյրն մտօք թողու զերթեւեկ ճանապարհին և ընդ կամակորն գնայ։

69. Որդեակ, լաւ է բարեկամ մօտաւոր, քան զեղբայր ի հեռուստ բնակեալ։

70. Որդեակ, լաւ է ատելութիւն և խռովութիւն առն արդարոյ, քան զքաղցրութիւն և ողորմութիւն անօրինին։

71. Որդեակ, զհաց քո յայլոց սեղանէ մի՛ ուտիցես, զի մի երախտիք այլոց առնուցուս։

72. Որդեակ, լաւ է ճնճղուկ մի ի ձեռս քո, քան զհազարս յերկինս թռուցեալ։

73. Որդեակ, լաւ է կող մի ի ձեռին քում, քան թէ բուժ յայլոց ձեռն։

74. Որդեակ, լաւ է ուլ պատարագ ի տան քում, քան զուարակ յայլում տան։

75. Որդեակ, լաւ է կշռատ մի պղնձոյ իմաստնոյ, քան զհարիւր կշռատ ոսկոյ անմտի։

76. Որդեակ, հանդէս իմաստնոց ի հրապարակս գովի, և արծաթ անմտի ի խաւարի Ճածկի։

77. Որդեակ, լաւ է անուն բարի, քան զտեսակ ցանկալի, զի գեղեցկութիւն ապականի և անուն բարի յաւիտենական մնայ։

78. Որդեակ, նման է ցանկութիւն աշխարհիս յաչս ամենայն տեսողացն որպէս զոմն առիւծ կոչեցեալ, որ ծնաւ ի գիշերի, և սնուցին զնա ի խաւարի, և յորժամ ետես զճառագայթս արեգականն, որպէս ի դժոխս համարեցաւ զամենայն դկեանս իւր։

---

67 D_6 քան զկամակոր։
68 D_3 չիք՝ իսկ-ճանապարհին։
69 C_5 մօտաւոր, D_{4-6} հեռուստանէ։
70 D_4 չիք՝ առն։
73 D_4 կող փխ կող, զոր փխ բուժ (Այդպիսով խրատը փոխել է իր բնույթը)։
74 D_4 ուլ մի։
75 $D_{5,6}$ կշռակ, D_6 արծաթոյ փխ ոսկոյ։
77 D_4 գեղեցկութիւն կու, յաւիտեան։
78 D_4 աստեղաց փխ տեսողաց։

79. Որդեակ, լաւ է առն, եթէ իցէ ի վերայ նորա ձիւն և սառն և սուսեր, քան թէ մերձենայ ի կին աղաղակող և լեզուանի։

80. Որդեակ, նման է տեսութիւն անզգամ կանանց իբրև գեբեզմանաց բռնելոց, որ ի դրուցէ քանդակեալ են ոսկով և ի ներքոյ լի են ոսկերօք մեռելոց և ժահահոտութեամբ։

81. Որդեակ, լաւ է առն, եթէ ոք ի նեղութեան իցէ և կարէ բանիւք օգնել նմա, զի այնպէս է, թէ որպէս ի բերանոյ առիւծոյ զերծուցանէ զնա։

82. Որդեակ, ծառայ, որ մեղանչէ տեառն իւրում և երթայ առ այլս յաշխարհի, հանգիստ մի՛ գտցէ և մի՛ ողորմութիւն աստուծոյ։

83. Որդեակ, ծառայ, որ երկմիտ է ընդ տեառն իւրում, թէպէտ և սիրէ զքեզ, մի վստահանար ի նա, քանզի ծառայ, որ առէ զտէր իւր, ոչ է քեզ բարեկամ։

84. Որդեակ, ընդ ընկերի քում ուղիղ դատեսջիր և բարութեամբ հասանիցես ի ծերութիւն։

85. Որդեակ, բարակացո զմիտս քո հեզութեամբ և կակղացո զլեզու քո քաղցրութեամբ և լեր առատութեամբ և բարութեամբ առ ամենայն ոք, և հանդստեամբ վճարես զժամանակս կենաց քոց։

86. Որդեակ, եթէ յամբարտաւանիս յանձին քում և սիրես զհակառակութիւն, ատիս յաստուծոյ և ի մարդկանէ և հանգիստ կենաց քոց ոչ գտանիս յաւիտեան։

87. Որդեակ, մի՛ հպարտանայր յաւուր մանկութեան քո, զի մի սուր կերիցէ զքեզ։

88. Որդեակ, առաջի անարդ մարդկան բազմախօս մի՛ լինիր, զի մի թեթևասցիս։

89. Որդեակ, քիչ ուտելն մարմնոյն շահ է, և սակաւ խօսելն հոգւոյն շահ է, զի քիչ ուտելովն մարդն ոչ ախտանայ, բայց շատ և յաւելի ուտելովն հաղարք մեռանին։

---

79 D_4 առն և սուսեր և սուսեր փխ առն-սուսեր, D ձիւնոյ և սառին բնաֆնալ քան մնդ կնոջ անգգամի ի տան միում փխ նորա—լեզուանի։
80 D_6 տեսութիւն լկտի կանանց նման է փխ նման է-իբրև, ոսկով և արծաթով, D_4 ներքոյ հոգւոյ։
82 $D_{3,6}$ յայլս աշխարհի փխ առ այլս։
83 D_5 զքեզ փխ զտէր իւր։
85 D_6 զբարբառս փխ զլեզու, D_1 չիք՝ և-քաղցրութեամբ։
88 D_6 շատախօս փխ բազմախօս։
89 D_6 չիք՝ քիչ ուտելն-շահ է զի, սակաւ փխ զի քիչ, ուտելովն բազումք յաւտարին փխ և յաւելի-մեռանին, D_4 բազումք փխ հազարք։

90. Որդեակ, խօսքն զինչ ճօհար է, ի սատաֆի մէջն դիր և յամէն տեղ մի՛ ցրուեր։

91. Որդեակ, եթէ տաս բան բարի գիտես, զհինգն խօսէ և զհինգն պահէ։

92. Որդեակ, լեզուն հարցաւ գլխոյն, թէ հալդ ինչ է։ Ասաց, թէ քանի դու լուռ կաս, նա ես խիստ հանգիստ եմ։

93. Որդեակ, որչափ որ քիչ զրուցես, այնչափ հարկիս առնուս ի մարդկանէ։

94. Որդեակ, զոտքդ ի կաւն դնես՝ ի փշոյ պատրաստ կացիր, ըզձեռքդ ի ծակն տանիս՝ ի յօձու պատրաստ կացիր։

95. Որդեակ, յամենայն մարդ խօսք մի՛ վստահանայր և զծածուկս քո մի՛ յայտներ ումեք։

96. Որդեակ, ընկեր հետ աղէկին եղիր, որ աղէկութիւնդ յաւելնայ։

97. Որդեակ, ով ոք զբարեկամին բարի խրատն ատէ, արժանի է, որ թշնամին ի վերայ նորա խնդայ։

98. Որդակ, հետ վատին քիչ նիստ, թէ ոչ՝ քան զամէնն որ աղէկ ես, նա վատ դու դառնաս։

99. Որդեակ, տես զարեգակն, թէ որչափ պայծառ է. բայց փոքր մի ամպ որ ի դէմն գայ, կու մթնեցնէ զինքն։ Այսպէս և վատ մարդն զաղէկն կու խանգարէ։

---

90 D_6 ի մէջ, չիք՝ մէջն դիր և, յամէն ընդ վայր։

91 $D_{4,6}$ չիք՝ բարի, զհինն (D_6 մեկն) փխ զհինգն. Ի (D_6 զինն) պահէ փխ զհինգն։

92 D_6 հանգիստ եմ և խաղաղ։

93 D_4 չիք՝ որ, հարկինքս, D_6 զրուց տաս այնքան ավելի հարկինս առնուս, մարդկանէ զի շատախօսին շատ պատճառս ծնի չարեաց։

95 D_4 ումեք զի բնութիւն նորա ոչ գիտես, D_6 գծածուկ գործդ քո, բնաւ փխ ումեք։

96 D_4 հետ ընկերիդ աղէկ եղիր (խրատը փոխում է բնույթը). D_6 բարեգործ մարդկանց փխ աղեկին, բարութիւնդ փխ աղեկութիւնդ։

97 $D_{4,5}$ չիք՝ բարի։

98 $D_{4,5}$ կու փխ դու, D_6 վատ մարդկանց մի յարիր թէ ոչ դու այլ գետ գնոքայ լինիս փխ վատին-դառնաս։

99 D_4 չիք՝ բայց, D_6 և թէ սակաւ փխ բայց փոքր մի, մթնեցնէ իր գլոյն փխ մթնեցնէ զինքն, D_4 զաղէկ մարդուն անունն կաւիրէ որ թէ հետն ի միասին գինի։

100. Որդեակ, ով մօտ ի լուսինն նստի, երեսն նման լուսոյ պայծառանայ, և ով մօտ ի սև պուտուկն նստի, նորա նման լիննենայ։

101. Որդեակ, հարկևորին հարկիս արա. վասն իւր հարկիցն և անհարկուն հարկիս արա. վասն քո հարկիցդ։

102. Որդեակ, ինքեան գիտակն աստուածաճանաչ է և իմաստուն։

103. Որդեակ, եթէ ասէ ոսկին, թէ ես Հնդիստանի եմ, ինչ շահ է իւր ասելն, վասն զի մահաքն կու ճանաչէ զինքն։

104. Որդեակ, որ լսէ և ոչ առնէ, մէկ աչօքն կոյր է, և որ ոչ կամի լսել և ոչ առնել, երկու աչօքն կոյր է, իսկ որ լսէ և առնէ, երկու աչօքն ի լոյս է։

105. Որդեակ, կինն, թուր, ձի ոչ են հաւատալի։ Զշունն բտէ և զկին անզգամ ոչ, զի շունն ոչ մոռանայ զերախտիս մարդոյ, իսկ կին, թուր, ձի ոչ ճանաչեն զտէր իւրեանց։

106. Որդեակ, խնամէխօսութիւն մի՛ առներ, զի բարին յաստուծոյ և յրազակէ առնուն, և զնեղումն ի քենէ։

107. Որդեակ, մի՛ տայր թոյլ ընկերին կոխել զոտս քո, զի մի համարձակիցի կոխել զպարանոց քո։

108. Որդեակ, հարց զայր իմաստուն բանս իմաստութեան և իմաստնասցիս դու, և թէ հարցանես զայր անմիտ բանիւք բազմօք, ոչինչ չիմանայ։

---

100 D_4 է լուսի փխ լուսոյ պայծառանայ, լուսին լինի փխ ի լուսինն նստի, սև պուտկի նստի նորա նման սևանայ, D_6 չիք՝ երեսն նման լուսոյ, չիք՝ սև-պուտկն, մրոտի փխ նորա նման լիննենայ։

101 D_4 Հարկևորին հարկիս արա,
վասն իւր հարկեցն կորա.
Եւ անհարկինհարկիս արա
վասն իւր հարկեցն կորա։

103 D_4 հանդարտ եմ փխ Հնդիստանի եմ, $D_{4,5}$ մահանկն, D_4 գիտէ ու ճանաչէ փխ կու ճանաչէ զինքն։

104 D_3 չիք՝ և որ-կոյր է, D_6 և որ բնաւ, չիք՝ և ոչ առնել, և որ փխ իսկ որ։

105 D_6 անաւատալիք են փխ ոչ են հաւատալի, այլ կինն ի նոյն ժամայն փխ իսկ կին-իւրեանց։

106 D_5 զմէջումն փխ զմեղումն, D_4 զմեղումն ինքնէ փխ զմեղումն ի քենէ։

108 D_4 բան բազում ոչինչ օգտիս ի նմանէ փխ բանիւք-չիմանայ։

109. Որդեակ, եթէ ի բան ինչ առաքես զայր իմաստուն, մի՛ ինչ պատուիրեր նմա, և թէ ոչ լինի՝ դու ինքնին ասա, իսկ եթէ պատահի, որ զանմիտ ոք առաքես դու, առաջի երկուց ընկերաց պատուիրեա, ապա թէ ոչ՝ անարգանս ածէ ի վերայ քո անպիտան խօսիւք։

110. Որդեակ, սիրեա զկին քո, զի մարմին քո է և զհետ կնոջ օտարի մի՛ երթիցես, զի գործդ մահաբեր է։

111. Որդեակ, ուսո զորդին քո ի քաղց և ի ծարաւ, զի ըստ սովորութեան վարիցէ զկեանս իւր, զի որկորայքն ոչ ժուժեն, յորժամ ոչ գտանեն։

112. Որդեակ, փորձեա զորդին քո յուտել հացին և տես թէ իցէ իմաստուն, և ապա՝ տացես զինչս քո ի ձեռս նորա։

113. Որդեակ, մի՛ գնար մէն ընդ առն բարկացողի և մի՛ կագիր ընդ նմա, զի յաչս նորա թեթև թուի արիւն քո։

114. Որդեակ, ի կոչնատանէն և ի հարսանեաց քան զընկերս քո յառաջագոյն հրաժարեա և այլ մի՛ դարձցիս անդրէն, զի մի առնուցուս վէրս ի գլուխս քո։

115. Որդեակ, ուր չկոչեն զքեզ, մի՛ գնար և ուր չհարցանեն՝ պատասխանի մի՛ տար։

116. Որդեակ, ընդ յարուցեալ գետ մի՛ անցանել և ընդ արբեցեալն մի՛ հակառակիլ։

117. Որդեակ, մի՛ երկու լեզու լինիր ի մէջ նմանեաց քոց և կարծիցես զքեզ սիրելի ամենեցուն, զի ոչ գիտես, թէ յորում ժամու յանդիմանեն զքեզ բանք քո, և յայնժամ ծաղր լինիս ի մէջ նոցա։

118. Որդեակ, զբանս հզօրաց մի՛ հոգասցես և որ մեծն է քան զքեզ, ծառայեա նմա։

119. Որդեակ, եթէ բարձր իցեն սեմք տան քո, իբրև կանկունս եօթն, յորժամ մտանիցես, խոնարհեցո զգլուխս քո։

120. Որդեակ, մի՛ առնոյր կշռաւ մեծաւ և տալ փոքրիւ և ասել թէ շահեցայ, զի անօրէնութիւնք և չարութիւնք են առաջի աստուծոյ։ Գուցէ բարկասցի ի վերայ քո և զոր ունիցիս տացէ ի ձեռս օտարաց։

---

109 D_6 *զանմիտ ոք փխ ոչ լինի դու-որ զանմիտ ոք։*

110 D_4 *չար բերէ փխ մահաբեր է։*

115 D^1 *ուրեք ոչ կոչեն փխ ուր չկոչեն։*

116 D_4 *գետն մի անցաներ և ընդ հարբեցեալսն բնաւ մի ումէք խօսիր զի գէշ կու թուի թէ ադկ խօսք այլ ասես փխ գետ-հակառակիլ։*

118 D_4 *հանցես փխ հոգասցես։*

120 D_6 *չարիք՝ փխ չարութիւնք, D_4 ինչս ունիս գուցէ և տացէ օտարաց փխ գուցէ-օտարաց։*

121. Որդեակ, մի՛ երդնուր ամենևին, և թէ երդնուս և ստես, պակասին աւուրք կենաց քոց։

122. Որդեակ, եղիցին բանք քո ճշմարիտ և մի՛ երկբայ։

123. Որդեակ, եթէ կամիս խնդրել ինչս յաստուածոյ, մի՛ խոտորիր ի կամաց նորա։ Պահեա զպատուիրանս նորա, երկիր ի նմանէ և սրբութեամբ կաց առաջի նորա, և յաւելցի քեզ։

124. Որդեակ, որ քեզ չար թուի, ընկերի քում մի՛ առներ, այլ արա զոր սիրես։ Եւ թէ արասցեն քեզ բարեկամք քո, արա և դու ամենեցուն, զի ամենայնէ բարի գտցես։

125. Որդեակ, եթէ եկեսցէ թշնամին քո յոտս քո, թողութիւն շնորհեա նմա և ծիծաղեա յերեսս նորա և ուրախութեամբ ընկալ զնա։

126. Որդեակ, յորժամ իցես ի մէջ արանց, եթէ աղքատ իցես, մի՛ յայտներ զաղքատութիւնս քո, զի բանից քոց ոչ լուիցեն, և արհամարհիս ի նոցանէ։

127. Որդեակ, եթէ առաքէ զքեզ տէր քո բերել սպտուր, դու մի՛ բերիցես խաղող, զի զխաղողն ուտէ և զպատուհաս սպտուրին ոչ թողու։

128. Որդեակ, եթէ լուիցես չար ինչ զումեքէ, թաքո ի սրտի քում և մի՛ հանցես ի վեր, և մի՛ ոք լուիցէ ի բերանոյ քումմե։

129. Որդեակ, մարդոյ, որոյ չիք գործ ուղիղ և անուն բարի, լաւ է նմա մահ, քան զկեանք։

130. Որդեակ, լաւ է աղքատութիւն անփոխ, քան զմեծութիւն ցրուեալ։

131. Որդեակ, մի՛ ասեր բան չար բարեկամին քո, այլ հանապազ ուրախ լեր ընդ նմա։

132. Որդեակ, եթէ տեսանիցես զթշնամին քո գլորեալ, տրտմեա ի վերայ նորա, զի բարեկամ առնիցես զնա քեզ, իսկ եթէ ծաղր առնիցես զնա, և յորժամ կանգնիցի, չարիս հատուցանէ քեզ։

---

123 D_4 *քեզ ինչս։*

124 D_4 *բան որ քեզ, համենաւ փխ առներ։*

125 D_4 *թշնամիք քո եկեսցեն առ ոտս քո, D_6 չիք՝ և ծիծաղեա յերեսս նորա։*

126 D_6 *թէ փխ յորժամ, չիք՝ եթէ աղքատ իցես։*

127 D_4 *յորժամ փխ եթէ, չիք՝ զքեզ, առցէ փխ ուտէ, D_6 բերեր փխ բերիցես։*

128 D_6 *չիք՝ և մի հանցես ի վեր։*

130 D_6 *հաւաք և հանգստեամբ փխ անփոխ, ցրուեալ և ցնորեալ։*

131 D_5 *չիք՝ բան. D_6 գովեա զնա և գուարթ դիմօք խօսեա ընդ նմա փխ ուրախ լեր ընդ նմա։*

132 D_6 *մի ծաղր առներ զնա գուցէ կանգնիցէ և քեզ չար հատուցանիցէ փխ տրտմեա-հատուցանէ քեզ։*

133. Որդեակ, ընդ կնոջ քո խորհեսջիր, բայց զգաղտնիս քո մի՛ յայտներ նմա, զի տկար է և ոչ կարէ պահել, յայտնէ կարևորաց, կարճամիտ է և փոքրոգի և ոչ կարէ ծածկել զբանս ի սրտի:

134. Որդեակ, բազում անգամ խորհեա զբանս ի սրտի քում և ապա ի վեր հանիցես, զի թէ փոխել կամիցիս, ծաղր լիննեսս:

135. Որդեակ, մի՛ հաներ բան դատարկ ի բերանոյ քումմէ, զի լաւ է յանցանք մարմնոյ, քան ղյանցանս լեզուի:

136. Որդեակ, ի մէջ երկուց կռվողացն մի՛ կանգնիր, զի մի ի զուր մեռցիս կամ ձաղեսցիս. այլ փախիր ի նոցանէ ի հեռի:

137. Որդեակ, մի՛ ընդ վայր ծիծաղիր և նախատեր զոք, զի ի նմանէ ծնանի կռիւք և սպանութիւն:

138. Որդեակ, ի տուն արբեցողի մի՛ մտաներ և թէ մտանես՝ մի՛ յամեր, զի մի ի բարուց քոց ունայն և թափուր մնասցես:

139. Որդեակ, եթէ կամիս իմաստուն լինել, պահեա ղլեզու քո ի շատ խօսելոյ և նայեա առաջի աչաց քոց, և լիցիս պատուական առաջի ամենեցուն:

140. Որդեակ, ամենայն մարդ, որ ոչ վարի իրաւամբք և արդարութեամբ, զաւուրս իւր կարճէ:

141. Որդեակ, յաւուր պատարագի աստուծոյ մի՛ հեռանար, թէպէտ և աղքատ իցես:

142. Որդեակ, վասն սակաւ պատճառի ի բուն բարեկամէ քումմէ մի՛ հեռանար, գուցէ այլ ոչ գտանիցես այնպիսի խորհրդակից և բարեկամ:

143. Որդեակ, առանց գրաւականի և առանց վկայի զինչս քո ումեք մի՛ տացես, գուցէ ուրանայ և դու ապաշաւես:

---

133 D_4 Թագուցաներ զբանս և ծածկեր ի սրտի իւրում փխ ծածկել զբանս ի սրտի:

136 D_6 մտաներիր փխ կանգնիր, D_4 խռովիս կամ մեռանիս փխ մեռցիս կամ ձաղեսցիս:

137 D_6 զոք ծաղր առնելովին, ծաղրուն ծնանին անհարկութիւնք և այլ ևս չարիք մեծամեծք փխ նմանէ- սպանութիւն, D_4 կռիւ և սպանութիւն լինի:

138 D_4 ի տուն զինոյ շատիւ մի զնասցես զի մի բարուց և ընչից քոց յուսնայն և թափուր մնասցես փխ ի տուն-մնասցես, D_6 լինիցիս փխ մնասցես:

139 D_5 հայեաց փխ նայեա:

140 D_4 ամենայն մարդ որչափ վարի իրաւամբ և արդարութեամբ զաւուրս իւր բարիոք անցուցանէ փխ ամենայն—կարճէ:

141 D_4 և թէ որչափ փխ թէպէտ և:

142 D_4 սակաւ բան, D_5 չիք՝ քումմէ, D_6 բարեկամեդ փխ բարեկամէ քումմէ:

144. Որդեակ, որոյ ձեռն լի է, նա է այր իմաստուն և առատ, և ամենայն ոք պատուէ զնա: Եւ որոյ դատարկ է, նա անմիտ է և անարգ, և ոչ ոք պատուէ զնա:

145. Որդեակ, եթէ կաշառս ոք տայ դատաւորին, պատուհասի յաստուծոյ, զի զաշս դատաւորին կուրացուցանէ կաշառն:

146. Որդեակ, կերա դառնիճ և արբի լեղի, և ոչ էր դառն քան զաղքատութիւն և զպանդխտութիւն:

147. Որդեակ, բարձի աղ և արճիճ, և ոչ էր ծանր քան զպարտքըն, զի թէպէտ ուտէ և ըմպէ, ոչ կարէ հանգչել:

148. Որդեակ, յաւուր պատարագաց քոց առատաձեռնեա և մի՛ աչս արձակեր, զի ոչ հաճի աստուած:

149. Որդեակ, ձի, որ չէ քո, մի՛ հեծնոյր և մատանի, որ չէ քո, մի դներ ի մատդ և թէպէտ և կարի քաղցեալ իցես, հաց որ չէ քո, մի՛ ուտեր:

150. Որդեակ, յայտնեա զխորհուրդդ առաջի բարեկամին քո և յետ աւուրց ինչ գրգռեա զնա: Եթէ զոր ասերն, ոչ յայտնէ զխորհուրդ քո, բարեկամ քո լիցի, զի հաւատարիմ գտաւ ի բանսն:

151. Որդեակ, յորժամ հետ մարդոյ ծանոթանաս, մի՛ զքեզ վստահանար ի նա և թէ հազար որ քաղցրալեզու լինի, նա մի՛ հաւատալ և զծածուկս քո մի՛ բնաւ յայտնել նմա, զի դեռևս չես գործոց նորա տեղեակ:

152. Որդեակ, զխորհուրդս քո մի՛ յայտներ այլում և ասել, թէ կու ծածկէ նա, զի զքո խորհուրդ, երբ դու չպահես, նա յայլք որպէ՞ս պիտի որ պահեն: Ոչ գիտես, որ երբ մարդն դառնանայ, նա ո՛չ եղբայր գիտէ և ո՛չ սիրելի:

---

146 D_4 չիք՝ և արբի լեղի և, լեղի փխ դառն:

147 D_6 ըմպէ բայց:

149 1—2 D_{1-3} մի զներ ի մատդ փխ մի հեծնոյր, D_{1-3} չիք՝ մատանի որ չէ քո մի զներ ի մատդ, D_6 թէ փխ թէպէտ, D_5 ուտեր, զի անպատեհ է:

150 D_4 տես թե զոր ասերդ փխ եթէ զոր ասերն, գտար զնա ի բանսն քո:

151 D_6 երբ ուսեմն ծանոթանաս մի շուտով հաւատար նմա թէ հազար որ շողոքորթի և բարեկամաբար զրուցէ զծածուկ գործս քո մի յայտներ նմա մինչև քանիմ անգամ փորձես զնայ փխ յորժամ հետ-նորա տեղեակ:

152 D_5 կարծելով ի մտի թէ կու պահէ երբ զքո խորհուրդն դու չի կարես պահել նա այլ որպէս պիտի պահէ զի ոչ գիտես թէ յերբ մարդն դառնայցէ ոչ եղբայր գիտէ ոչ սիրելի և վազվազակի յայտնէ փխ և ասել-սիրելի, D_6 մի ասեր թէ զխորհուրդս իմ ասեմ նմա և նա չի յայտնել ունէք զի երբ դու չպահես զբանս քո նայ այլք որպէս տի պահեն և առաւել փխ զխորհուրդս քո-ոչ գիտես որ:

153a. Որդեակ, եթէ չար ինչ գործեսցես, մի՛ ոք տեսցէ, զի աստուածոյ հաճոյքն գործք բարիք են։

153b. Եւ յամօթոյ, իբրև աստուածոյ, երկիր, զի ամենայն չարիք ի լրբութենէ գործին։

154. Որդեակ, խաբելով կեղծաւոր մարդիկ և սէր ցուցանելով յիմանան զծածուկս ընկերին և յորժամ ոչ գնան ըստ կամաց իւրեանց, զնոյն որոգայթ կազմեն ընկերին, որ գործեաց, որ նա այլ ոչ կարենայ խօսել ի դէմ նորա։

155a. Որդեակ, յորժամ քաղցր է ակն տեառնդ ի վերայ քո, յայնժամ առաւել երկիր ի նմանէ։

155b. Եւ յորժամ տեսանես զքեզ յաչս մարդկան փառաւոր, մի՛ հպարտանար ի սրտիդ և զքշնամիս քո մի՛ յոչինչ համարիր, այլ ծիծաղեա յերեսս նոցա, զի բամբասեցեն առաջի տերանցն, զի փոքրաւորքն են զմարդոյ վկայութիւնս հաստատողքն առաջի մեծամեծաց։

156. Որդեակ, եթէ խնդրէ ոք ի քէն ինչս և կարող ես տալ, մի՛ արգելուր ի նմանէ, զի առցես յաստուածոյ միոյն զհարիւրն։

157. Որդեակ, յորժամ տեսանիցես զծերն, պատուեա զնա և յոտն կաց առաջի նորա, զի և այլք քեզ արասցեն։

158. Որդեակ, առն, որում աջողեալ է աստուած, դու պատուեա զնա և մեծարեա։

153a D_5 բարուքիւնք փխ բարիք, D_6 զի մի պատճառս լինիցիս ուսանելոց նոցա և դու մանկակից լեցիս չարեաց նոցա փխ զի աստուածոյ-բարիք են։

153b D_4 իբրև աստծոյ երկիր զի թէ լրբութեամբ առնես փխ եւ-երկիր (Այդպիսով խրատը լրիվ միակցված է a խրատին), D_6 որդեակ փխ և (Այդպիսով խրատը տրոհվել է երկուսի)։

154 D_4 կեղծաւոր մարդիկ կամին խաբելով, չիք՝ և յորժամ-ընկերին, D_6 կեղծաւորք ոմանք սուտ սէր ցուցանելով յիմանան զծածուկ գործ մարդո և յորժամ ոչ գնաս ըստ կամաց նոցա սպառնան նովաւ որ այլ ոչ կարենաս խօսել ընդդէմ նոցա փխ խաբելով-ի դէմ նորա։

155a D_4 չիք՝ առաւել, D_6 խոնարհ լեր գուցէ համարձակիս և հպարտանաս փխ երկիր ի նմանէ։

155b D_6 որդեակ փխ և (Այդպիսով խրատն ակնախս բնույթ է ստացել), D_4 զի մի չարախօսեսցեն զքեզ առաջի տեառնդ քո զի փոքրաւորք մարդոյ վկայութիւնն և հաստատողք են, D_6 պատուեա զամենեսեան քաղցր լեզուաւ զի մի բամպասեսցեն զքեզ առաջի տէրանցն այլ գովեսցեն և փառաւորեսցեն փխ ծիծաղեա-առաջի տէրանցն, չիք՝ յորժամ-ի սրտիդ և։

156 D_4 չիք՝ յաստուածոյ։

157 D_5 չիք՝ յորժամ, D_4 տեսանես։ D_6 չիք՝ զնա։

159. Որդեակ, եթէ դադարեսցեն գետք ի գնացից և արեգակն յընթացից, կամ քաղցրասցի լեղի որպէս զմեղր, կամ սպիտակասցի ադամն որպէս զաղաւնի, նոյնպէս թողցէ անզգամն զանըզգամութիւն իւր և անմիտն զգօնասցի։

160. Որդեակ, եթէ պաշտօնեայ ես աստուածոյ, զգոյշ լեր և սրբութեամբ ծառայեա նմա։

161. Որդեակ, որ ի մեղաց ոչ երկնչի, ճարակ հրոյ եղիցի։

162. Որդեակ, շուն, որ թողու զտէր իւր և գայ զհետ քո, քարիւ հալածեա զնա ի քէն։

163. Որդեակ, մի՛ ստանար ինչս յանիրաւութենէ, զի մի կորուսանիցես զամենայն ստացուածս քո ընդ նմա։

164. Որդեակ, լաւ է թէ գողացեն զինչս քո, քան թէ գողութիւն գտցի ի վերայ քո։

165. Որդեակ, ընդ մահ թշնամոյն քո մի՛ ուրախանար, զի կա և քեզ մահ։

166. Որդեակ, մի՛ յաճախեր ոտիւք ի տուն բարեկամին քո, զի մի թեթևասցիս։ Գուցէ յագեսցի և ատեսցէ զքեզ։

167. Որդեակ, ի մարդոյ չարէ փախիր, և ընդ առն իմաստնոյ եղիցին գնացք քո։

168. Որդեակ, յորժամ վիշտ հասանէ քեզ, զաստուած մի՛ հայհոյեր, զի մի բարկացի քեզ խստագոյն և տարաժամ սատակեսցէ զքեզ։

169. Որդեակ, մի՛ առներ կին այրի, զի յորժամ նեղութեան հանդիպի և կամ այլ ինչ և ասիցէ. Աւաղ զառաջին այրն իմ, և դու տրտմիս։

170. Որդեակ, հաստատեա յառակսն, որ ասեն. Մնիր և կոչեա որդի, գնեա և կոչեա ծառա։

171. Որդեակ, յորժամ ասիցէ կին քո, եթէ խեղդեմ զիս ի ձեռաց քոց, զգոյշ լեր անձինդ, զի զքեզ կամի խեղդել։

172. Որդեակ, ագահութիւն մայր է ամենայն մեղաց և ծնօղ ամենայն չարեաց։

173. Որդեակ, ողորմութիւն և ճշմարտութիւն ձեռնտու է բարեաց և սէր առ ամենայն մարդիք։

---

163 D_4 զամենայն ուղիղ։

165 D_4 մահ առաջի քո, D_6 խնդալ փխ ուրախանար։

169 D_6 չիք՝ և կամ այլ ինչ։

170 D_4 ծանիր փխ ծնիր։

171 D_6 խեղդիմ փխ խեղդեմ զիս, ձեռաց քոց ծաղր արա զնա բայց։

174. Որդեակ, ագահութիւն կորուստ է անձին և յիշատակ չարի և ատելութիւն առ ամենայն ոք, քանզի որ սիրէ զինչս՝ ատէ զընկերն, վասն այնորիկ ագահութիւն օտար է յամենայն բարի գործոց:

175. Որդեակ, եթէ դատաւոր ես, ուղիղ դատեսջիր, զի մի ի մեծ դատաւորէն պատուհասեսցիս:

176. Որդեակ, դատաստան անիրաւութեան մի՛ առներ, զի թէպէտ և յաղթես ոսոխին, յաստուծոյ դատաստանացն երկիր:

177. Որդեակ, մի՛ սերմաներ ըռասմն չարի, զի մի անօրէն դահճաց մատնեսցիս:

178. Որդեակ, օրինաց ունկն դիր և ի չարեաց մի՛ երկնչիր, զի պատուիրանն աստուծոյ պարիսպ է մարդկան:

179. Որդեակ, խրատ բարի տացես ամենայն մարդոյ և կոչեսցիս իմաստուն:

180. Որդեակ, դատաստան միակողմանի ոչ է պարտ առնել և ոչ՝ հաւատալ չարախոսութեան մարդոյ, մինչև լուեալ իցես զպատասխանիս միւսոյն: Ո՞ գիտէ, լինի թէ սա է սուտն և նա է ճշմարիտն, զի դեռևս չես տեղեակ, թէ զինչ է ասելոց միւսն:

181. Որդեակ, մի՛ ասիցես աղքատին և տկարին, թէ դու ինձ չար ոչ կարես առնել, քանզի տէր է վրեժխնդիր նոցա:

182. Որդեակ, զայր յականէ մի՛ խոտեր, զի բազում չարիք յանարգ մարդկաց ելանեն և ոչ ի պատուականաց:

183. Որդեակ, կրթեա զլեզուս քո ի խօսս բարիս և ի մէջ ընկերաց քոց վայելուչ երևեսցիս:

184. Որդեակ, չար բանն արագ հասանէ ի լսելիս մարդկան, և որ խօսի զբարին՝ փառք անձին իւրում է:

185. Որդեակ, երկիր յաստուծոյ, և զչար գործս քո մի՛ ոք տասցէ, զի մի պատճառ լինիցիս ուսանելոյ նոցա:

186. Որդեակ, զոխս թշնամոյն հան ի սրտէ քումմէ, վասն զի սերմն չար է և չար պտուղ ծնանի:

---

174 D_5 այնորիկ ամենայն, D_4 անիրաւ է փխ օտար է D_6 ագահք օտար են, չիք՝ յամենայն:

177 D_4 ոգմ, D_6 ըռազմն:

180 D_4 լուիցես պատասխանի իրաւոյն՝փխ լուեալ-միւսոյն, D_6 ազազակի ումեք փխ չարախօսութեան մարդոյ, իցէ զասացուածս փխ իցես զպատասխանիս, չիք՝ զի դեռևս-միւսն:

181 D_4 կամ անմանկին փխ և տկարին:

182 D_4 խոտորեր փխ խոտեր:

184 D_4 անարգ հասանիցէ փխ արագ հասանէ:

185 D_5 ումեք փխ ոք, D_6 թէ չար ինչ գործեսցես փխ երկիր-գործս քո, նոցա և դու մանկակից լիցիս չարեաց նոցա:

187. Որդեակ, հետ խաղբի և հետ արբածի մի՛ հակառակիր և մի՛ ասեր, թէ քո չեմ:

188. Որդեակ, զմարդ, որ ի կապանս տանին և կամ յատազակաց ի սպանումն, հեռի լեր ի նոցանէ: Ո՞ գիտէ, թէ զինչ ասէ և կամ ում նմանեցնէ, և չարիս ծնանիցի:

189. Որդեակ, յանիրաւէն փախիր, զի զանձն իւր մատնեալ է ի կորուստ և յապականութիւն:

190. Որդեակ, որ ծաղր առնէ զաղքատն, ինքն շուտ հասանի յաղքատութեան:

191. Որդեակ, որ սիրէ զշատախօսութիւն, անարգանս բերէ անձին իւրում:

192. Որդեակ, զչարախօսութիւն յումեքէ մի՛ ընդունիր, զի որպէս զսուր է, խոցոտէ զսիրտ լսողին և մի՛ տրտմիր ի բարբառոյ նախատանաց, զի ընդունայն է, զի ոչնչանայ և անցանի որպէս զհողմն:

193. Որդեակ, ի մարդոց ծերոց և յիմաստնոց պատկառեա և ընդ նոսա լեր հանապազ:

194. Որդեակ, մարդ, որ սիրէ զխաղաղութիւն, հանապազ ուրախութիւն և ցնծութիւն է ի տուն նորա և գովեստ ի հրապարակս:

195. Որդեակ, ի գինարբունսն մի՛ սիրեր զշատախօսութիւն և մի՛ հակառակիր ընդ ումեք, զի ի նմանէ ծնանի կռիւք և անհարկութիւն:

196. Որդեակ, ընդ առն լեզուանոյ մի՛ կռուիլ, զի այնպէս է. որպէս թէ ի վերայ հրոյ փայտ դիզես:

197. Որդեակ, խօսք կակուղ որպէս զջուր է և շիջուցանէ զհրացեալ և զգազանաբարոյ սիրտ մարդոյ, վասն զի պատասխանի խոնարհ խորտակէ զբարկութիւն:

198. Որդեակ ամբարտաւան մարդիք հեռանան ի բարեկամութենէ մարդկան և ի սիրոյ և առնուն անարգանս անձինն և մեկուսանան յընկերաց, նոյնպէս և ագահքն:

---

187 D_6 ասել փխ մի ասեր:

188 D_6 չիք՝ և չարիս ծնանիցի:

190 D_1 գաղքատութիւն փխ գաղքատն, D_4 շուտով:

191 D_4 գախտախօսութիւն փխ զշատախօսութին, անարգս, D_6 անձինն փխ անձին իւրում:

192 D_6 զսուր է որ, չիք՝ և մի տրտմիր-որպէս գհողմն:

195 D_6 մարդոյ փխ ումեք, սպանութիւնք փխ անհարկութիւն:

196 D_4 գառն փխ առն:

197 D_6 որդեակ փխ վասն զի (Այդպիսով խրատը տրոհվել է), խոնարհ և կակուղ համբերութեամբ:

198 D_4 բանանայքն փխ ագահքն:

199. Որդեակ, բարեբարոյ մարդիք և երկիւղածք ունկնդիր լինին բանից օգտակարաց, եթէ յիմաստնոց և եթէ պարզամտաց և առնուն յամենայնէ **գովութիւնս անձինն**։

200. Որդեակ, ի խոնարհութեան կալ զանձն քո հանապազ առ ամենայն ոք, եթէ առ մեծամեծս և եթէ առ աղքատս, քանզի խոնարհութիւն մայր է խաղաղութեան և բնակարան ողջունի։

201*. Որդեակ, յորժամ արբենաս, փակեա զլեզուն քո և մի՛ բնաւ խօսիր, դի բնութիւն ձեռին քում ոչ է (12D₆ և 13D₄)։

202*. Որդեակ, մի՛ տրտմեցուցաներ զոք, և ոչ տրտմիս յումեքէ (19D₆)։

203*. Որդեակ, այր չարագործ կարծէ ի միտս իւր, թէ զգործս իմ ծածկեմ և թաքուցանեմ։ Եւ ոչ գիտէ, թէ նման է ի շուն մեռեալ և նեխեալ դժնդակութեամբ, որ ոչ ծածկի հոտ նորա (67D₆)։

204*. Որդեակ, թէ հանդիպիս կնոջ անառակի և լրբի, հուր մերձեցաւ յանկողինս քո և օձ չարագոյն յշտեմարանս քո, գազան անտառի ի մէջ խաշանց քոց և թշնամի սրով զինեալ ի զօրս քո (84D₆)։

205*. Որդեակ, պատրաստ լեր յագահութեան կերակրոց, զի ցաւս զարթուցանէ անձին (94D₆)։

206*. Որդեակ, բնութիւն մարդոյն նման է ջրոյ. թէ մեղր լնես քաղցրանայ, թէ սպառ լնես լեղենայ (105D₆)։

207*. Որդեակ, կին, որ արհամարհէ զայր իւր և գովէ զբեզ, երկիր ի նմանէ, դի նման է դեղս մահաբերս, որ թագուցեալ լինի ի կերակուրս քաղցրագոյնս (218D₆)։

208*. Որդեակ, այր ագահ և զեղխ նման է ի թուղն գիշակեր, դի ծանրացեալ և թուլացեալ թևօքն, ոչ կարէ թռչել և դիւրաւ ըմբռնի յորսողաց։ Սոյնպէս և այր արբեցող և ագահ, դի թափի ի մտաց և ի զգայութեան և դիւրաւ ըմբռնի ի թշնամեաց յորոգայթս, թէ՛ հոգով և թէ՛ մարմնով (147D₆)։

209*. Որդեակ, այր անմիտ և արբեցող լաւ է քեզ թշնամի քան սիրելի, և ի խորհրդոց քոց հեռի արասյ զնա (161D₆)։

210*. Որդեակ, որպէս լերինք շտեմարանք են սառնամանեաց, նոյնպէս և սիրտք նենգաւորաց բնակարան չարեաց (204D₆)։

Իսկ որ առնէ զխրատս զայսոսիկ, գովի յաստուծոյ և ի մարդկանէ և եղիցի փառաւոր և պատուական աստ և ի հանդերձելումն։

---

199 D_5 անձին ով մարդ։

201 D_6 չիք՝ բնաւ։

210 D_6 զայս ամենայն փխ զխրատս զայսոսիկ, D_4 հանդերձելումն ամէն, D_5 հանդերձելումն որում փառք յաւիտեանս ամէն հայր մեր որ յերկինս։

* * *

Զայս ամենայն ուսուցանէի Նադանայ, քւերորդոյ իմոյ ես՝ Խիկար դպիր, այսպէս կարծելով ի մտի իմում, եթէ պահեսցէ զխրատս իմ ի մտի և կացցէ ի դրան արքունի։ Իսկ նա հոսեաց զբանս իմ, որպէս զփոշի առաջի հողմոյ։

Զայս եդեալ ի մտի, եթէ Խիկար հայրն իմ ծերացեալ է և հասեալ է յափն գերեզմանին, զառածեալ են միտքն և մաշեալ ամենայն մարմին նորա։ Եւ սկսաւ Նադան վատնել և կորուսանել զամենայն ինչս իմ։ Ոչ խնայէր ի ձիս և ի ջորիս, ի ծառայս և յաղախնեայս, այլ չարչարեալ տանջէր զնոսա և կորուսանէր անխնայ։

Եւ յորժամ տեսի ես, եթէ Նադան զգործս իմ այլայլեաց և զինչս իմ վատնեաց, խօսել սկսայ և ասեմ ցնա, եթէ յինչս իմ մի՛ մերձենար, զի ասացեալ է յիմաստնոցն, թէ ձեռք, որ չէ վաստակել, ակն մի՛ խնայեսցէ։

Եւ երթեալ պատմեցի Սենեքարիմայ արքայի։ Եւ նա կոչեաց զնադան և ասէ. Որչափ հայր քո Խիկար կենդանի է, յինչս նորա մի՛ մերձենար։

Եւ յայնմ օրէ ոխացաւ Նադան ընդ իս և մահու սպասէր անձին իմոյ և խորհուրդ չարութեան արարեալ ի մտի իւրում և գրեաց հրովարտակս Ր. մինն՝ առ փարաւոն արքայն եգիպտացոց։ Եւ գրեալ էր այսպէս. «Ես՝ Խիկար, դպրապետ Սենեքե-

---

2 D_{1-3} իմ փխ ի մտի իմում, D_4 մտի իւրում։

5 D_4 մտի իւրում։

6 D_{1-3} զառանցեալ։

8—9 D_4 ոչ ծառայս և ոչ ագախնեայս։

11 D_4 տեսի ես Խիկար։

13—14 D_4 ձեռք որ ոչ են վաստակել և ակն ոչ խնայեսցէ բստուգ են ասացեր։

15—16 D_4 և ես յաւուր միում գնացեալ պատմեցի արքային իմոյ Սենեքարիմայ արքային զոր ինչ առնէր ինձ և արքայն կոչեաց զնաթան և բազում բանիւք զպարտեաց գնա փխ և երթեալ-զնադան։

18 D_4 կամէր փխ սպասէր։

20—21 D_4 եգիպտացոց և միւսն այլ Սենեքարիմա արքային իմոյ առ իս։

րիմայ արքայի, գրեմ առ փարաւոն արքայդ եգիպտացոց։ Գիտութիւն լիցի քեզ, զի յորժամ գիրս հասանի առ քեզ, վաղվաղակի գումարեսցես զզօրս քո և եկեսցես ի դաշտն Արծրունեաց, որ օր ԺԵ լիցի հրոտից ամսոյն, և ես տարայց և Թագաւորեցուցից զքեզ ի վերայ սորա առանց աշխատանաց»։

Եւ դարձեալ գրեաց այսպէս. «Ի Սեննեքարիմայ արքայէ ողջոյն առ Խիկար դպրապետդ իմ։ Յորժամ հասցէ գիր Թագաւորութեանս իմոյ առ քեզ, ժողովեսցես զզօրս, որ ընդ ձեռամբ քո է և եկեսցես ի դաշտն Արծրունեաց, որ օր ԺԵ լիցի հրոտից ամսոյն։ Եւ յորժամ մերձեսցիս, ճակատեսցես զզօրսդ ընդդէմ իմ, որպէս զայն որ պատրաստին ի պատերազմ ընդդէմ թշնամեաց, քանզի դեսպանք փարաւոնի առ իս եկեալ են, զի տեսցեն զզօրսդ մեր և զարհուրեսցին»։

Եւ զգիրն առաքեաց առ իս, որպէս թէ ի Թագաւորէն։

Եւ ինքն չոգաւ առ արքայն և ասէ. Ես զաղուհացն, զոր կերեալ եմ ի տան քո, ինձ քաւ լիցի նենգել արքայիդ, զի զհայրն իմ Խիկար, զոր առաքեցեր ի հանգստեան, ոչ արար ըստ հրամանի քում, այլ եղեալ է ի կողմն թշնամեաց մերոց։

Եւ էր տուեալ զգիրն հաւատարիմսն Թագաւորին, և նորա ետուն ի Թագաւորն, և նա ետ ցՆադան, և ընթերցաւ Նադան,

---

21 (էջ 199)—2 D_4 և էր գրեալ բերանէ իմմէ առ փարաւոն արքայն եգիպտացւոց Խիկար դպրապետս ի դրան Սեննեքարիմա արքայէն ողջոյն լիցի առ փարաւոն արքայդ Եգիպտացոց գիտութիւն լիցի քոյին տէրութեանդ փխ և գրեալ էր-քեզ։

4—5 D_4 և ես զօրքս սորա առհասարակ կոտորեալ տայցեմ ընդ զօրսդ քո և յետոյ տարեալ Թագաւորեցից զքեզ ի վերա յաթոռոյն սորա առանց աշխատութեանց փխ և ես-աշխատանաց։

6 և դարձեալ գրեաց,—այստեղից D_4-ում պատմվում է նույնը, բայց շարադրանքն այլ հերթակարգ ունի։ Փարավոնին ուղղած նամակից հետո պատմում է հետևանքները, թե ինչպես թուղթն ընկավ թագավորի ձեռքը։ Նա հարցաքննում է, տրտմում, վախենում Խիկարի դավաճանությունից։ Այնուհետև պատմում է, թե ինչպես Նաթանը Խիկարին է թուղթ ուղում և ապա գնում թագավորի մոտ, հորդորելով, որ գնան Արծվաց դաշտ։ Խիկարը գնում է։

Համեմատում ենք համապատասխանաբար. D_4 և դարձեալ Նաթան գրեալ կրկին թուղթ ի Սեննեքարիմա արքայէն առ իս այսպէս փխ և դարձեալ գրեաց այսպէս։

6—7 D_4 ողջոյն սիրոյ։

7—8 D_4 հասանէ գիրս Թագաւորութեան։

11 D_4 նման փխ ընդդէմ։

15 D_4 և Նաթան չոքաւ առաջի արքային։

որպէս և գրեալ էր։ Եւ ասէ արքայն. Ո՞վ ետ ի ձեռ զգիրս զայս։ Եւ որպէս պատուիրեալ էր նոցա Նադան, ասացին, թէ անցաւորք, որ յԵգիպտոս երթային, նոքա ունէին զգիրս զայս, և ծառայք քո տեսեալ առին բռնութեամբ։ Եւ Թագաւորն տրտմեցաւ յոյժ և ասէ. Զի՞նչ արարի ես Խիկարայ, որ զայսպիսի չարիս գործեաց մեզ։ Եւ ասէ Նադան. Մի՛ տրտմիր, արքայ, այլ երթիցուք ի դաշտն Արծրունեաց և տեսցուք, թէ այդպէս իցէ, յայնժամ զինչ և հրամայես՝ արասցուք։

Եւ ել Թագաւորն և գնաց ի դաշտն Արծրունեաց։

Իսկ ես՝ Խիկարս, յորժամ տեսի զգալն Թագաւորին, պատրաստեցի զզօրս իմ ընդդէմ նորա, որպէս և գրեալ էր առ իս։

Եւ յորժամ ետես Թագաւորն, տրտմեցաւ յոյժ։ Եւ ասէ Նադան. Մի՛ տրտմիր, արքայ։ Ես ածից զԽիկար առաջի քո։

Եւ զայս լուեալ Թագաւորին՝ դարձաւ յապարանս իւր։

Յայնժամ եկն Նադան առ իս և ասէ. Հրաման տուր զօրացդ երթալ ի տեղիս իւրեանց, և դու եկ առ Թագաւորն։ Եւ ես ելեալ գնացի խնդութեամբ, որպէս թէ կատարեցի զհրամայեալսն, և այժմ արժան եմ պատուոյ։

---

19 (էջ 200)—4 D_4 և այսպէս նմանեցուցեալ էր զգիրն իմոյ գրին և զմատնեհարն իմոյ մատանեացս և արարեալ ընդ կամակից ի դրան արքունեաց զերիս այրս և տարեալ ետ զթուղթն ի նոսա և նոքա տուեալ Թագաւորին և Թագաւորն կոչեաց զՆաթան զի ընթերցող նայ էր ամենայն հրովարտակի դրան արքունի և նա ընթերցաւ և լուաւ Թագաւորն զբանն այն զահի հարաւ և յոյժ բարկացաւ ի վերա Խիկարա և նայեցեալ զգիրն և զմատնեհարն որ Խիկարայ էր կամէր նոյն ժամոյն սպաննէր և եհարց արքայն ցհաւատարքն և ասաց ով ետ ի ձեզ գիրս այս և նոքա որպէս ուսեալ էին Նաթանա ասացին անցաւորք որ յԵգիպտոս երթային նոքա ունէին զգիրս զայս և մեք բռնութեամբ առաք զգիրս զայս փխ և. էր տուեալ-բռնութեամբ։

1 D_1 չիք՝ արքայն։

7 D_4 երթիցուք ամսոյ ԺԵ-ին։

8 D_4 արասցուք հօրն իմ Խիկարա։

9 D_4 և Թագաւորն ելեալ առնէր պատրաստութիւն գնալ ի դաշտն այն որ օրն էր հրոտից ամսոյն ԺԵ։

11 D_4 զզօրս իմ քաջամարտիկ գնալ, առ իս որ և օրն էր հրոտից ամսոյն տասնուհնգին։

12 D_4 յորժամ գնացի ի դէմ նորա յայնժամ, Նադան ցարքայն։

13 D_4 քո և զինչ որ հրամայես նմա արասցուք անպատճառ։

14 D_4 և արքայն լուաւ զայս։

15 D_4 չիք՝ առ իս։

16 D_4 զի երթիցեն փխ երթալ, Թագաւորն հրամայէ զքեզ։

17 D_4 խնդութեամբ առ Թագաւորն։

17—18 D_4 կարծելով ի միտ իմում թէ կատարեցի զհրամանն արքային փխ որպէս թէ-պատուոյ։

Եւ յորժամ կացի ես առաջի արքային, ասէ ցիս. Ով խիկար գալիր, որ խորհրդակից մեր էիր և հրամանատու տանն ասորոց, և այժմ ընդ է՞ր եղեր ի կողմն թշնամեաց մերոց և նեղեցեր մեզ: Եւ ես ասեմ. Զի՞նչ է այդ զոր ասէդ: Յայնժամ զթուխթին, զոր գրեալ էր Նադան իմ բանիւ և նմանեցուցեալ էր զգիրն իմոյ գրի, ետ արքայն ցիս և ասէ՝ ընթերցիր: Եւ իբրև ընթերցայ ես, լուծաւ ամենայն անդամս իմ, և լեզու իմ գալարեցաւ, և ես յափշեցայ և եղէ որպէս զմի ի յիմարելոց: Խնդրէի բան իմաստութեան և ոչ կարէի տալ պատասխանի:

Յայնժամ ասէ Նադան ցիս. Ի բաց կաց յերեսաց արքայիդ, է, ալևոր զառածեալ և աղճատեալ: Տուր զձեռն քո յերկաթ և զոտն քո ի կոճեղս:

Եւ արքայն գարձոյց զերեսս իւր յինէն և ասաց ցԱբուսմաք վազիրն իւր, թէ տար, սպանեա զանաստուած խիկարդ:

Յայնժամ անկայ ես ի վերայ երեսաց իմոց և ասեմ. Արքայ, յաւիտեան կաց, ես զանձէ իմմէ չար ինչ ո՛չ գիտեմ, և ի սրտի իմում չարութիւն ո՛չ գոյ, այլ հրաման արքայիդ եղիցի: Բայց զայս խնդրեմ, զի հրաման տացես ի դրան իմում սպանանել զիս:

Եւ հրամայեաց այնպէս:

Եւ յորժամ ելի յերեսաց արքային, գրեցի առ Աբեստան կին իմ, եթէ հանցես ընդ առաջ իմ գուսանս և լալականս, զի լացցեն զիս, և ես ի կենդանութեան իմում տեսից զսուգ իմ, և դու արասցես խորտիկս գեղեցիկս և ըմպելիս անուշահամս ի կերակրել զնոսա:

Եւ Աբեստան կինն իմ արար զամենայն, որպէս և ասացի և ել ընդ առաջ իմ և եմոյծ զմեզ ի տուն: Եւ եդ սեղան և կերակրեաց զնոսա և արբեցոյց նոցա գինիս հինս, մինչև թմրեցան ամենեքեան և ի քուն մտին: Յայնժամ ես և Աբեստան կինն իմ

4 D_4 ով արքայ փխ զոր ասէդ:
7 D_4 և տեսի գրանն զոր գրեալ կայր յայնժամ լուծաւ ամենայն մարմինս իմ և կապեցաւ լեզու իմ փխ լուծաւ լեզու իմ:
8 D_4 գալարեցաւ աղիք իմ:
10 D_4 երթ ի բաց փխ ի բաց կաց:
11 D_4 պիտի ձեռն քո և ոտդ ի կոճեղս երկաթի փխ տուր-կոճեղս:
18 D_4 խնդրեմ ի հրամանուցէդ:
20 D_4 և հրամայեաց արքայն այնպէս արասցեն փխ և հրամայեաց այնպէս:
21 D_4 գրեցի թուխթ:
22 D_4 կինն փխ կինն իմ:
28 D_4 չիք՝ և արբեցոյց-հինս:
29 D_4 ի խմելն զգինին հին փխ ամենեքեան, և ամենեքեան ի գինուրացն:

անկաք յոտս Աբուսմաքայ, և ասեմ. Ով Աբուսմաք, յիշեա զաղուհացն, զոր կերեալ եմք և հայեաց յաստուած և մի՛ սպանաներ զիս, այլ պահեա ի թագստի, որպէս գիտես: Եւ յետ աւուրց փոշիմանի արքայն և խնդրէ զիս: Եւ յորժամ տացես զիս կենդանի, պարգևս մեծամեծս առցես վասն իմ: Է ոմն ի բանտին ի ծառայից իմոց և է մահապարտ, զի արիւն արար ի դրան իմում: Տացես զհանդերձս իմ և զգեցուսցես նմա և բերեալ սպանցես զնա ըստ հրամանաց թագաւորին:

Իսկ Աբուսմաք գթացաւ ի վերայ իմ և արար որպէս և ասացի: Եւ զինուորքն, թմրեալք ի գինոյն, զարթեան ի մէջ գիշերին և սպանին զծառայն իմ:

Եւ ել համբաւ ընդ ամենայն երկիր, եթէ խիկար գալիր մեռաւ:

Յայնժամ Աբուսմաք ընկերն իմ և Աբեստան կինն իմ արարին ինձ տուն գետնափոր, մերձ դրան իմոյ և արկին զիս անդ և տային հաց և ջուր չափով:

Եւ գնաց Աբուսմաք առ թագաւորն և ասաց, եթէ սպանաւ խիկար: Եւ որք լսէին զմահն իմ, աւաղէին և ասէին. Ո՛վ ոք վճարեսցէ զգործս արքունեաց ճարտարութեամբ խիկարայ:

Եւ կոչեաց արքայ զնադան և ասէ. Երթ և արա սուգ ի վերայ հօր քո: Եւ եկն Նադան և փոխանակ լալոյ ժողովեաց գուսանս և ուտէր և ըմպէր և զծառայս և զաղախնեայս իմ չարշարէր դառնապէս և յԱբեստան կնոջէ իմմէ ոչ ամաչէր, մինչ զի կամէր պոռնկել ընդ նմա, որ սնուցեալ էր զնա:

Եւ ես ի գետնափոր տունն լսէի զլացն և զհառաչն ծառա-

1 D_4 ասեմք լալով փխ ասեմ, Աբուսմաք ընկեր իմ հայեաց երկինս և տես գաստուած քո աչօքդ և:
2 D_4 եմք ի միասին և յիշեա զօրն այն որ մատնեցին զքեզ Սենեքարիմ հօրն արքային և ես առեալ պահեցի զքեզ մինչև արքայն խնդրեաց զքեզ և ես տարայ առաջի արքային առի պարգևս մեծամեծս և այլ խնայեա ինձ և մի սպաններ, չիք՝ և հայեաց յաստուած:
3 D_4 թագեա զիս փխ պահեա, ահա գիտութիւն է որ յետ աւուրց փոշմանի փխ որպէս գիտես—փոշիմանի:
5 D_4 կենդանի առաջի արքային:
11 D_4 գծառայն իմ և գիտացեալ թէ խիկար է:
15 D_4 իմոյ և ես մտի անդ միայն գիտութեամբ Աբուսմաքայ և Աբեստան կնոջ իմոյ և այլ ոչ ոք գիտէին:
15—16 D_4 չիք՝ և արկին-չափով:
18 D_4 զմահն իմ ամենեքեան:
20—21 D_4 վասն հօր քո խիկարա փխ ի վերայ հօր քո:
21 D_1 չիք՝ լալոյ:

յից իմոց: Եւ ես լայի ընդ նոսա, և ցանկայր անձն իմ սակաւ հացի և պատառ մի մսոյ և բաժակի, և էի կարօտ ամենայն բարութեանց:

Իբրև լուաւ փարաւոն արքայն յեգիպտացւոց, եթէ սպանաւ Խիկարն, ուրախ եղև յոյժ և գրեաց հրովարտակս առ Սենեքարիմ արքայ և բանս հարցուկս և պատասխանիս խնդրել:

Եւ կոչեաց արքայն զնադան և ասէ, եթէ գրեա պատասխանիս եգիպտացոյն: Եւ նա ոչ կարեաց գրել զպատասխան իւսածս բանիցն: Եւ տրտմեալ արքայն Սենեքարիմ և ասէ. Աւաղ զքեզ, Խիկար դպրապետ իմ: Եւ մորմոքէր ի կսկծոյն:

Իբրև գիտաց փարաւոն, եթէ ոչ կարացին տալ պատասխանի գրոյն, առաքեաց զօրս բռնաւորս, և առին հարկս ի Սենեքարիմայ: Եւ որչափ յամեաց Խիկար ի բանտին, բազմացաւ հարկն փարաւոնի յԱսորեստան: Եւ որք էին ընդ ձեռամբ Սենեքարիմայ, աղքատացան յոյժ: Եւ աւերեցաւ երկիրն ամենայն, և ամենայն բնակիչք Ասորեստանեաց փախեան, և տուն գանձուց արքային դատարկացաւ:

Եւ յոյժ տրտմեալ արքայն Սենեքարիմ և ասէ. Աւաղ զքեզ Խիկար, զի ի խօսս մարդկան կորուսի զքեզ: Ով ոք տայր զքեզ ինձ կենդանի, բազում ինչս տայի նմա և հաւասար թագաւորութեանս իմոյ պատուէի զնա: Եւ Աբուսմաք ոչ յատնէր արքային, մինչև յոյժ նեղացի և գիտասցէ զօգուտն Խիկարայ:

Եւ դարձեալ առաքէ փարաւոն հրովարտակս Սենեքարիմայ: Եւ է այսպէս. «Ի փարաւոն արքայէ եգիպտացոց ողջոյն առ Սենեքարիմ արքայդ Ասորեստանեաց. Գիտութիւն լիցի

1 D_4 և ես զնոսա հանապազ աւախէէ զնոսա փխ և ես լայի ընդ նոսա:
2 D_4 գինոյ փխ բաժակի:
4 D_4 չիք՝ փարաւոն:
8 D_4 զոր խնդրէ եգիպտացին փխ եգիպտացոյն:
8—9 D_4 տալ պատասխանի գրել զդարձուածս բանին փխ գրել զպատասխան իւսածս բանիցն:
14 D_4 ի վերա Ասորեստանի փխ յԱսորեստան:
14—17 D_4 և եղեն Ասորեստան ընդ ձեռամբ ի ներքս փարաւոնի և որչափ ամեաց Խիկար ի բանտն այնչափ զօրացաւսն ի վերա Ասորեստանեաց կամէր աւեր տալ և բառնալ զերկիրն և տուն գանձուց դատարկեցաւ և որք էին ընդ ձեռամբ Սենեքերիմա աղքատացան յոյժ և աւերեցաւ երկիրն ամենայն բնակիչք Ասորեստանեաց փախեան և մնաց երկիրն դատարկ փխ եւ որք էին-դատարկացաւ:
21—22 D_4 նմա փխ արքային:
23 D_4 դարձեալ յաւուր միում:

քեզ, զի կամիմ ապարան շինել ընդ երկինս և ընդ երկիրս ի մէջ: Առաքեա առ իս այր իմաստուն, որ եկեալ շինեսցեն և այլ զոր ինչ և հարցանեմ, տայցեն զպատասխանիսն: Եւ եթէ անփոյթ արասցեն զասացեալսն իմ, գամ բազում զօրօք և աւերեմ զաշխարհս քո և բառնամ զթագաւորութիւնս քո»:

Եւ յորժամ լուաւ զայս արքայն Սենեքարիմ, տրտմեցաւ յոյժ, խռովեցաւ յոգի իւր: Եւ ժողովեաց զամենայն մեծամեծս իւր և ասէ ցնոսա, թէ զինչ արասցուք պատասխանի բանիս այսորիկ: Եւ նոքա ասեն, եթէ ոչ այլ ոք կարող է տալ պատասխանի այդորիկ, բայց եթէ նադան, զոր ուսեալ է ի Խիկարայ: Նա վճարեսցէ զգործդ զայդ:

Եւ կոչեաց թագաւորն զնադան և ետ զթուխտն փարաւոնի: Եւ յորժամ ընթերցաւ և գիտաց, ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Ով թագաւոր, զայդ բանդ զնէն ոչ կարեն վճարել, կամ տալ պատասխանի, ես զիա՞րդ կարացից: Եւ հայրն իմ Խիկար, թէ կենդանի էր և նա ևս ոչ կարէր տալ պատասխանի բանիցդ այդորիկ:

Իբրև լուաւ Սենեքարիմ զբանս նադանայ, յարեաւ աթոռոյ իւրմէ և նստաւ ի վերայ մոխրոյ: Կոծէր զանձն իւր և ասէր. Աւաղ, աւաղ զքեզ, Խիկար, դպիր և իմաստուն: Եթէ տայր ինձ ոք զքեզ կենդանի, ես տայի նմա զամենայն, զոր ինչ և խնդրէր յինէն:

Յայնժամ եկաց Աբուսմաք առաջի արքային և ասէ. Թագաւոր, յաւիտեան կաց, որ զհրամանս թագաւորի ոչ առնէ,

1—2 D_4 ի յերկինն և ընդ երկրիս մէջ ապարան շինել որ ոչ հասեալ լինի երկիր միայն երկնի և երկրի մէջի լինի փխ ապարան շինել-ի մէջ:
3 D_4 հարցանեմ բան իմաստութեան:
6 D_4 թագաւորն փխ արքայն:
9 D_4 կարէ փխ կարող է:
10 D_4 բանիցդ այդմիկ փխ այդորիկ:
13 D_4 ընթերցաւ և ոչ կարաց տալ պատասխանի, չիք՝ և գիտաց ի ձայն բարձր:
14 D_4 թագաւոր յաւիտեան կաց:
15 D_4 տալ բանիցդ այդմիկ:
20 D_4 դպրապետ փխ դպիր, իմաստուն կորուսցի զքեզ ճարտար և խօսատու մարդկան, ոհ փխ եթէ:
22 D_4 յինէն և հաւասար թագաւորութեան իմոյ պատուէի զնա:
23—24 D_4 արքա փխ թագաւոր:
24 D_4 ով ոք փխ որ:

մահապարտ է: Դու հրամայեցեր զխիկար սպանանել, և նա դեռևս կենդանի է: Եւ ասէ թագաւորն ցնա, թէ ով Աբուսմաք, եթէ զխիկար կենդանի ցուցցես ինձ, առցես զոր ինչ և խընդրեսցես յինէն:

Յայնժամ Աբուսմաք, իբրև զսրաթռիչ հաւն, եկն առ իս և եբաց զգետնափոր տունն և եհան զիս: Եւ էին երեսք իմ այլագունեալ և գլուխ իմ թաղկեալ և ընկկունք իմ որպէս զարծուոյ աճեալ:

Եւ իբրև կացոյց զիս առաջի արքային, և նա կորացուցանէր յինէն զգլուխս իւր և ամաչէր հայել յերես իմ: Եւ ասէ ցիս. Ով խիկար դպրապետ իմ, երթ ի տուն քո և դարմանեա զանձն քո աւուրս ինչ և ապա՝ եկեսցես առ իս:

Եւ ես գնացի ի տուն իմ և դարմանեցի զանձն իմ և եկի առ թագաւորն: Եւ ասէ ցիս թագաւորն. Մեղայ քեզ, հայր խիկար, զի լսեցի նաթանայ քւեր որդւոյ քո: Եւ ես երկիր պագի առաջի թագաւորին և ասեմ. Որովհետև տեսի զերեսս արքայիդ՝ կենդանի եմ, և ամենայն չարիքս իմ ի բարի դարձաւ: Եւ ասէ թագաւորն. Օրհնեալ է օրս այս, որ տեսի զխիկար կենդանի: Եւ նստոյց զիս առ ինքն և ասէ. Լուա՞ր եթէ ղինչ է գրել առ մեզ եգիպտացին: Եւ ետ ցիս զգիրն: Եւ ընթերցայ և ասեմ. Ո՞վ արքայ, մի՛ հոգասցես վասն բանիդ այդորիկ, այլ առաքեա զդեսպանսն երթալ ի տեղիս իւրեանց, և ես յետոյ երթեալ, կատարեցից զհրամանս փարաւոնի:

Եւ իբրև ուղարկեաց զնոսա, ասի թագաւորին, եթէ տուր քարոզ կարդալ, եթէ խիկար կենդանի է, և ամենեքեան որ լսիցեն, դարձցին ի տեղիս իւրեանց:

Եւ հրամայեաց թագաւորն, և քարոզ կարդացին, եթէ խիկար կենդանի է: Եւ ամենեքեան, որք լուանն, դարձան ի տեղիս իւրեանց: Եւ ուրախացաւ թագաւորն և պատուէր ցիս և զԱբուս-

3 D_4 կենդանացուսցես, չիք՝ ինձ:
9 D_4 տարաւ փխ կացոյց, արքային կացոյց:
10 D_4 ցիս արքային:
12 D_4 երիս փխ ինչ:
13 D_4 իմ և անուշ իւղով անուշահոտեացս, ելեալ գնացի փխ եկի:
15 D_4 լսեցի զբան:
16 D_4 թագաւորին իմ:
22 D_4 յետ ինչ աւուրց փխ յետոյ:
24 D_4 զդեսպանսն ելեալ գնացին ի տեղիս իւրեանց առ փարաւոն արքային փխ գնոսա:
29 D_4 եւ յոյժ ուրախացաւ:

մաք ընկերն իմ ընդ իս, որ ետ զիս կենդանի և ուրախացոյց զնա:

Եւ ես ետու բերել Բ ձագս անգղ հաւու և Բ տղայ փոքրիկ դեռախօս և ասացի սնուցանել զձագսն հում մսով և տղայսն, զի ասէին. Բերեք քար և կիր, որ գործենք:

Եւ իբրև հաստատեցան թևք ձագուցն և թռանէին, յայնժամ սահմանեցի սնտուկ մի փայտեայ, զվերևն ի բաց ունելով: Եւ դնէի զմանկունս անդ և լծէի զանկղսն, որ առեալ վերանային: Եւ կայր ի ձեռս մանկանցն իւրաքանչիւր շամփուր մի միս, որ թէ բարձրացուցանէին զմիսն, հաւքն ի հետ վերանային և թէ ցածուցանէին՝ նա զհետ իջանէին:

Յայնժամ առի հրաման ի թագաւորէն և գնացի յԵգիպտոս և մտի առ փարաւոն արքայն և երկիրպագի նմա: Եւ նա մեծարեաց զիս և նստոյց առ ինքն: Եւ խոսէաք բանս, զոր սիտոյ էր մեզ:

Եւ ասէ փարաւոն ցիս. Ո՞ւր են արուեստաւորքն, որ շինելոց են զպարանսն: Եւ ասեմ ցնա, եթէ ի ճանապարհին աշխատեալ էին և ննջեալ հանգչին, բայց տեսցես ի վաղիւն:

1 D_4 կենդանի թագաւորին:
4—5 D_4 սկսա ուսուցանել ձագուցն ուտել հում միս և տղայոցն ուսուցի միայն ասել թէ բերեք քար և կիր որ գործեսցաք զպարանն թագաւորին փխ և ասացի-գործենք:
8—11 D_4 և կապեալ էի պինդ պարանօք զնտուկն և զչուանն լուծի ի մէջն անկըղոյ հաւուցն որ և առեալ վերանային եւ կայր ի ձեռս մանկանց մի մի շամփուր միս որ թէ բարձրացուցանէին շամփուրն մսով և հաւքն վերանային ընդ անդկովն ի բարձր ելանէին և կամէին առնուլ միսն և որքան ոչ կարենային առնուլ միսն նա այլ աւելի բարձրանային սնտուկովն և տղայքն ի մէջն բարձր ձայնիւ աղաղակէին և ասէին թէ բերեք քար և կիր զի գործեցաք զպարանն թագաւորին մինչև վերուստ ի վայր գայր ձայն տղայոցն եւ թէ զմիսն ասա և անդ շրջեցուցանէին նա հաւքն ի միսն վազէին զնտուկ ասա և անդ վերացեալ շրջեցուցանէին և յորժամ կամէնային իջանել ընդ երեսս երկրի նոյնժամայն խոնարհեցուցանէին տղայքն զշամփուրն ի վայր և հաւքն ի միասին գային խոնարհութեամբ ընդ երեսս երկրի նոյնժամայն առնէին զմիսն և կերակրէին փխ լծէի-իջանէին:
12 D_4 եւ յորժամ տեսի որ հաստատեցաւ բանն և ուսուցի զայս հնարս ամենայն յայնժամ առի հրաման ի թագաւորէն իմմէ և ելեալ փխ յայնժամ—թագաւորէն և:
13 D_4 արքայն Եգիպտացոց:
14 D_4 բանս բազում զոր ինչ:

Եւ ի վաղին ասէ ցիս փարաւոն, թէ աստ ի վերայ քաղաքիս կամիմ շինել զապարանսն, զի հանապազ նայիմ ի վերայ քաղաքիս և զուարճանամ։ Եւ ես ասեմ ցնա, եթէ, ով արքայ, տուր զվարձս նոցա, զի եկեալ շինեսցեն։ Եւ ասէ փարաւոն. Երդնում ի գլուխ իմ, զի յորժամ տեսանիցեմ զարուեստաւորսն քո, զի ելանիցեն յօդս շինել զապարանս, յայնժամ բազում պարգևս տացից քեզ և նոցա։

Եւ ես գնացեալ պատրաստեցի և թռուցի զհաւքն, և նոքա բարձրացան և ելին յօդս, որպէս ուսեալ էին։ Եւ մանկտին ձայնէին, թէ բերէք քար և կիր, զի շինեսցուք ապարանս թագաւորին։ Եւ զարմացեալ փարաւոն և ամենայն եգիպտացիքն։ Եւ յոյժ պատուեաց զիս արքայն և ետ ինձ հանդերձս մեծագինս, նոյնպէս և ճարտարացն, որ ընդ իս էին։ Եւ հրամայեցի նոցա իջանել ի վայր։ Եւ գնացեալ յիջևանս մեր՝ հանգեաք։

Եւ ի վաղին գնացի առ թագաւորն, և խօսէաք ընդ միմեանս։ Եւ ասէ ցիս թագաւորն, թէ զինչ է անուն քո։ Եւ ես ասեմ. Աքիկամ է անուն իմ։ Ասէ թագաւորն. Վասն է՞ր է այդպէս անուն։ Եւ ես ասեմ. Վասն այնորիկ է, քանզի ստրուկ եմ Սենեքարիմայ արքային։

Իբրև լուաւ փարաւոն, տրտմեցաւ յոյժ և ասէ, եթէ այդպէս անարգ թուեցայ յաչս Սենեքարիմայ, որ ստրուկ մի առաքեաց առ իս տալ ինձ պատասխանի։ Եւ ասէ ցիս. Երթ ի տուն քո և ի վաղին եկեսցես առ իս։

Իբրև վաղն լուսացաւ և ես գնացի անդ։ Եւ հրամայեալ էր թագաւորն զօրաց իւրոց, զի զգեցեալ էին հանդերձս կարմիրս, և ինքն զգեցեալ էր ծիրանիս և նստեալ յաթոռ իւր։

Եւ ասէ ցիս. Ասա ինձ, Աքիկամ. ես ո՞ւմ նման եմ և կամ իմ զօրքս ո՞ւմ նման են։ Եւ ես ասեմ, եթէ նման ես դու դիցն և նախարարքդ՝ քրմաց նոցա։ Եւ ասէ ցիս։ Երթ յիջևանս քո և ի վաղին եկեսցես այսր։

8—10 D_4 և գնացեալ պատրաստեցի և առեալ բերի ի մէջ քաղաքին ի տես ամենեցուն որ քաղում եգիպտացւոց ի տեսութիւն և մանկտիքն բարձրացուցին զմիս և հաւքն առեալ զնստուկն բարձրացան և մանկտիքն սկսան աղաղակել և ասել թէ բերէք փխ եւ ես-թէ բերէք։

12 D_4 եւ ես ասեմ արքա առաքեա ի վեր քար և կիր զի շինեցեն զապարանսն և նա ասէ զարմանալի է բանքս այս զի այսօր տեսի զքանչելիս ահեղ և ես հրաման ետու մանկանցն իջանել ի վայր և արքայն յոյժ մեծարեաց զիս փխ և յոյժ պատուեաց զիս արքայն։

13 D_4 ճարտարացն իմոց։

13—14 D_4 և առեալ գնացաք ի յօթևանս մեր հանգեաք փխ որ ընդ իս-հանգեաք։

24 D_4 և իբրև լուսացաւ վաղին, ես ելեալ ես։

Եւ ի վաղին զգեցուցեալ էր զօրացն սպիտակ և ինքն զգեցեալ էր կարմիր։ Եւ ասէ ցիս. Ես ո՞ւմ նման եմ և կամ իմ զօրքս ո՞ւմ նման են։ Եւ ասեմ նմա, եթէ նման ես դու արեգական և նախարարքդ՝ ճառագայթից նորա։ Եւ ասէ ցիս. Երթ ի տուն քո և ի վաղին եկ առ իս։

Եւ ի վաղին զգեցուցեալ էր զօրացն գոյնզգոյնս և ինքն զգեցեալ էր փետրածոյս և ասէ. Ես ո՞ւմ նման եմ և կամ իմ զօրքս ո՞ւմ նման են։ Եւ ես ասեմ. Նման ես դու դալարոյ և զօրքդ՝ ծաղկանց նորա։

Եւ լուեալ զպատասխանիս զայսոսիկ և ուրախ եղև յոյժ և դարձեալ ասէ ինձ, եթէ այժմ հարցանել կամիմ քեզ բանս և դու ասասցես ինձ զճշմարիտն։ Եւ ասէ ցիս, եթէ Սենեքարիմ արքայն ո՞ւմ նման է։ Եւ ես ասեմ. Քաւ լիցի քեզ յիշել զարքայն Սենեքարիմ, քանզի նստեալ ես։

Եւ նա յարեաւ ի վերայ ոտից, և ես ասեմ ցնա, եթէ Սենեքարիմ արքայն նման է Բելշիմի և նախարարք նորա՝ փայլատականց նորա։ Յորժամ կամի ածէ զանձրև և հարկանէ ցօղ, ելանէ ի բարձունս և որոտա թագաւորութեամբ և կալնու զճառագայթս արեգականն։ Եւ յորժամ կամի ածէ կարկուտ և մանրէ զփայտ զչոր և զդալար և ծագէ արև և զուարճացուցանէ զբոյսս դալարոյ։

Եւ ասէ ցիս թագաւորն, եթէ ասա ինձ զճշմարիտն, զի՞նչ է անուն քո։ Եւ ես ասեմ. Խիկար է իմ անուն։ Եւ ասէ թագաւորն. Ով թշուառական, կենդանացա՞ր։ Եւ ես ասեմ. Որովհետև տեսի զերեսս քո, կամ կենդանի։

Եւ ասէ արքայն. Օրհնեալ է օրս այս, զի զԽիկար կենդանի տեսի աչօք իմովք։ Եւ ես անկեալ երկիր պագի նմա։ Եւ նա ուրախ եղև յոյժ, և ասացաք զամենայն անցս, զոր անցեալ եղև ընդ մեզ։ Եւ գոհացաք զաստուծոյ։

Յայնժամ եհարց ընդ իս և ասէ, եթէ կայր սիւն մի և ի վերայ նորա՝ ԺԲ մարգք և ի վերայ նոցա՝ անիւք Լ, Լ և ի վերայ

6 D_4 և վաղին ելեալ գնացի տեսի որ զգեցուցեալ էր։

15 D_4 յարեաւ յաթոռոյն և եկաց ի վերա ոտիցն փխ յարեաւ ի վերայ ոտից։

16 D_4 Բելշէմի։

21 D_4 դալարոյ և աճէ նորայ ասսանի ամէն բոլոր երկիր։

24 D_4 թագաւորն եթէ ասա ինձ, թշուառական յերր։

28—29 D_4 և սկսա խօսել զամենայն անցս զոր երեք Նաթան ընդ գլուխս իմ զամենայն պատմեցի փարաւոնի արքային և նա զարմանայր և փառս ետունք աստուծոյ փխ և ասացաք-զաստուծոյ։

14—904

միոյ անուանցն՝ սուրհանդակք Բ, Բ, մինն՝ սև և միւսն՝ սպիտակ:

Եւ ես ասեմ. Ով արքայ, զայդ ասորոց հովիվքն այլ գիտեն: Սիւնն տարին է, մարգն ԲԺ ամիսքն են, անիւքն Լ աւուրքն են, սուրհանդակքն՝ սև և սպիտակ, տիւ և գիշերն է:

Ասէ արքայն. Զի՞նչ է այս, որ յԵգիպտոսէ մինչև ի Նինուէ ԵԾ խրախս է. զիա՞րդ լուան կանայք մեր զխրխնչիւնն երիվարաց ձերոց և վրիժեցան:

Իսկ ես ելեալ ի դուրս, կալայ աքիս մի և տանջէի զնա: Եւ պատմեցին Թագաւորին, եթէ Խիկար անարգէ զդիսն մեր: Եւ կոչեաց զիս Թագաւորն և ասէ. Ընդ է՞ր անարգես զդիսն մեր և տանջես զաքիսդ: Եւ ես ասեմ ցնա, եթէ վնաս մեծ արար սա ինձ, զի Թագաւորն իմ տուեալ էր ինձ աքաղաղ մի, որ ձայն նորա կարի քաղցր էր, և նա զարթուցանէր զիս ի ժամու երթալ յարքունիս, և սա ի գիշերիս յայսմիկ չոգաւ և եհատ զգլուխ աքաղաղին և եկն աստ: Եւ ասէ Թագաւորն ցիս, եթէ որչափ ծերացար բանք և իմաստութիւն քո ջրեցան: Յեգիպտոսէ մինչև ի Նինուէ ԵԾ խրախս է, և մին աքիս ի միում գիշերի որպէ՞ս կարէ գնալ անդ և գործել զոր ասեսդ: Եւ ես ասեմ. Որպէս խրխնչունն, զոր լուան կանայք ձեր և վրիժեցան:

Ասէ արքայն, եթէ կամիմ զի մանեսցես ինձ պարան աւազի: Եւ ասեմ. Այո, եղիցի: Եւ ելի դուրս:

Յայնժամ Թագաւորն ասէ ընդ իւրքն ամենայն, եթէ զինչ և ասիցէ Խիկարն դուք ասացէք. Մեք ամենեքեան լուեալ եմք զբանդ զայդ և գիտեմք:

Եւ իմ գիտացեալ զխորհուրդս նոցա, առի թուղթ և գրեցի դայս. «Ի Սենեքարիմայ արքայէ ողջոյն առ փարաւոն արքայդ

9 D_4 սկսա տանջել փխ տանջէի:

9—10 D_4 և գնացեալ մերձակայքն Թագաւորին պատմեցին փխ և պատմեցին Թագաւորին:

11 D_4 Թագաւորն ի ներս:

11—12 D_4 ով Խիկար ընդէր անարգես և տանջես զդիսն մեր զաքիսդ:

15 D_1 ի գիշերի միոյ փխ ի գիշերիս յայսմիկ:

17 D_4 մեծացար փխ ծերացար:

20 D_4 ժպրհեցան փխ վրիժեցան, ժպրհեցան և Թագաւորն այլ ոչ կարաց տալ պատասխանի և ես ելեալ գնացի յօթեան իմ և ի վաղիւն կոչեաց զիս արքայն ելեալ գնացի:

21 D_4 ասէ ցիս ով Խիկար փխ ասէ արքայն, չինես փխ մանեսցես:

26 D_4 ես լուա փխ իմ գիտացեալ:

27 D_4 արքայից արքայէ, ողջոյն սիրով:

Եգիպտացւոց: Կարօտ եմք եղբարք եղբարց և Թագաւոր Թագաւորաց: Ի ժամանակիս յայսմիկ ծախք բազումք եղեն մեզ, և արծաթ բազում պակասեաց ի գանձուց մերոց: Եւ արդ, զայն որ ունիմքս առ քեզ ի պահեստի արծաթ Ճ սիկղն, արդ առաքեա ի ձեռն գրոյդ»: Եւ մտի առ Թագաւորն և ասեմ. Յայսմն գրի հանց բան կա, որ ո՛չ Թագաւորդ և ո՛չ նախարարքդ քո լսել չեք: Եւ որպէս ասացեալ էր նոցա Թագաւորն, ասացին ամենեքեան, թէ լուեալ եմք և գիտեմք զբանդ զայդ: Եւ ես ասեմ. Երբ գիտէք կարդացէք զգիրս և տուք զարծաթն:

Եւ տեսեալ արքային և զարմանայր ընդ հանճարս իմ, զոր առնէի: Եւ ասէ ցիս. Եթէ ոչ մանես ինձ պարան աւազի, ոչ տանիս զարծաթն յԵգիպտոսէ:

Եւ ես ելեալ մտի ի տուն մի և ծակեցի զորմն տանն, և ի ծագեալ արեւուն՝ ցայթեաց ի տունն: Եւ ես առեալ փոշի աւազի, արկանէի ի ծակն և փչէի ի նա, և երևէր որպէս մանոցք: Եւ ասեմ ցարքայն. Հրաման տուր, զի ժողովեսցեն զպարանն, և ես այլ մանեցից:

Եւ իբրև ետես արքայն, ուրախ եղև և ասէ. Ով Խիկար, օրհնեալ ես դու առաջի դիցն: Եւ պարգևս բազումս ետուր ինձ և զհարկն, զոր խնդրէր՝ եթող: Եւ սիրով արձակեաց զիս:

Եւ ելեալ գնացի աշխարհն իմ:

Եւ իբրև մերձ եղէ անդ, ել ընդ առաջ իմ արքայն Սենեքարիմ և խնդութեամբ ողջունեաց զիս և առեալ տարաւ յապարանս իւր և ի գլուխ բազմականին բազմեցոյց զիս և արար խրախութիւն մեծ և պարգևս բազումս տայր ինձ և ասէ ցիս,

4—5 D_4 առաքեա փութով:

9 D_4 զարծաթն ահա դուք բերնով ձերով վկայեցիք:

12 D_4 յինէն փխ յԵգիպտոսէ:

14 D_4 ցաթեաց արևն:

16 D_4 ցարքայն Թագաւոր:

19 D_4 դիցն և ես երկիրպագի նմա սուրով ահա այս են մանոցքն աւազեաւ:

20 D_4 խնդրէր ի մեզանէ, եթող զնա և ես առեալ բազում արծաթ և ոսկի և բազում պարգևս արքայէն փարաւոնի:

21—22 D_4 և ես ողջունեցի զնա արքա բարով կաց և երկրպագի առաջի արքային և ելի ի ճանապարհ և մերձ եղէ աշխարհին իմոյ փխ եւ ելեալ-եղէ անդ:

23 D_4 զիս և ես զնա:

25 D_4 ուրախութիւն մեծամեծ փխ խրախուն մեծ:

եթէ զինչ կամ է քո խնդրեա յինէն, և տաց քեզ։ Եւ ես երկիր պագի նմա և ասեմ. Ջամենայն, զոր ինչ պարգեւել կամիս ինձ, շնորհեա զայն Աբուսմաքայ ընկերի իմում, որ եղև պատճառ կենդանութեանս իմ, այլ ինձ տացես զնադան, զոր ուսուցի, զի ոչ ուսաւ զառաջին ուսումն բարիոք։

Եւ արքայն ետ զնա ի ձեռս իմ։ Եւ ես առեալ զնա և տարի ի տուն իմ և կապեցի զնա շղթայիւք ի սիւն մի քարեայ, ի դրան սրահի իմում։ Եւ եդի նմա պահապան զմի ի ծառայից իմոց, զի ի մտանելն և յելանելն իմ, զոր ինչ և ասիցեմ նմա, գրեսցէ ջամենայն։

Եւ իմ առեալ բիր և հարկանէի զնա։ Եւ ասէ Նադան. Ձի՞ ոխացար ընդ իս, հայր։ Եւ ես հարեալ բրիւն ի կուշտս նորա, և ասեմ.

1. Որդեակ Նադան, որ ընդ ականջն ոչ լսէ, ընդ թիկունսն լսեցուցանեն։

2. Որդեակ, ես յաթոռ փառաց նստուցի զքեզ, և դու յաթոռոյ իմմէ կործանեցեր զիս։

3. Որդեակ, ես զքեզ բարի խրատիւք ուսուցանէի, և դու կամեցար ի զուր կործանել զիս, բայց անմեղութիւն իմ ապրեցոյց զիս ի ձեռաց քոց։

4. Որդեակ, եղեր դու որպէս կարիճն, որ եհար զասեղն, և ասէ. Ահա խայթոց, որ չար է քան զքոյդ։

5. Որդեակ, դարձեալ եհար զթաթ ուղտոյն, և նա կոխեալ ի վերայ նորա և ճմլեաց և ասէ. Գերեկ, ոչ գիտացիր, թէ շունչ քո յոտս իմ էր։

---

4 D_4 զոր ինչ։
5 D_4 և նա փխ զի, լուաւ փխ ուսաւ, բարիոք ոչ էր և յետինն բաղիոք լինի։
9—10 D_4 զամէնն գրէ ի մէջ թղթի փխ գրեսցէ զամենայն։
11 D_4 բիր մի, ակսա հարցանել փխ և հարկանէի զնա։
12 D_4 չիք՝ բրիւն։

---

1 D_6 չիք՝ Նադան։
3 D_6 իմաստութեան վարժէի փխ բարի խրատիւք ուսուցանէիր։
5 D_4 գառւան փխ գթաթ, ճմլեաց զնա, չիք՝ գերեկ։

6. Որդեակ, եղեր ինձ որպէս զայծն, որ ուտէր զտորունն։ Եւ նա ասէ. Ոչ գիտես, թէ ինև շիկեն զմորթ քո, զի՞ ուտես զիս։ Եւ ասէ այծն. Ես ի կենդանութեան իմում ուտեմ զքեզ, և յետ մահուան իմոյ թող խլեն զտակ քո և շիկեն զմորթ իմ։

7. Որդեակ, եղեր որպէս զայն, որ ձգեր նետ յերկինս և ոչ կարաց հասուցանել ի վեր, այլ զանօրէնութիւն շահեցաւ։ Եւ դարձաւ նետն ի գլուխն իւր։

8. Որդեակ, այսպէս կարծէիր, թէ զտեղի նորա լնում, բայց թէ իցէ ագի խոզին երկայն իբրև կանկունս է, զձիոյ տեղին ոչ կարէ լնուլ և թէ լիցի ասրն նորա ծիրանի, զմարմնով թագաւորի ոչ ապանի։

9. Որդեակ, ես այսպէս ասէի, թէ կացցես ի տան իմում և ժառանգեսցես զինչս իմ։ Իսկ ընդ անօրէնութեան քում ոչ հաճեցաւ քեզ աստուած։

10. Որդեակ, եղեր որպէս զգայլն, որ պատահեաց իշոյն և ասէ. Ողջոյն քեզ, յաւանակ։ Եւ ասէ էշն, թէ այդ ողջոյնդ տեսան իմոյ, որ արձակեաց զպարան յոտից իմոց և ես տեսանել զդէմս քո չար և արենարբու։

11. Որդեակ, եղեր որպէս զորոգայթն, որ թաղեալ կայր յաղբն և ունէր զհատն ի բերանն։ Ետես զնա ճնճղուկն և ասէ. Ձի՞նչ գործես։ Եւ նա ասէ, թէ յաղօթս կամ առ աստուած։ Ասէ ճնճղուկն. Այդ որ ի բերանդ է, զի՞նչ է։ Ասէ որոգայթն. Քաղցելոց հատիկ է։ Եւ ջանաց ճնճղուկն առնուլ զհատն։ Եւ նա կալաւ զպարանոց նորա։ Ասէ ճնճղուկն. Թէ քաղցելոց հատն այս է, այն աստուածն, որ յաղօթս կաս առ նա, այսպէս լուիցէ աղաչանաց քոց։

12. Որդեակ, եղեր ինձ որպէս զոջիլ հացի, որ եկեր զշտեմարանս թագաւորաց, և ինքն ումեք ոչ է օգուտ և պիտանի։

---

6 D_4 զքեզ յինէն փխ զտակ քո։
7 D_6 չիք՝ հասուցանել ի վեր։
8 D_4 ոչ կարէ ազոր ձիոյ տեղն լնուլ, թագաւորի ի արտաքնոցէ։
9 D_6 չիք՝ այսպէս, բայց փխ իսկ, D_4 քան փխ ընդ։
10 D_4 ողջոյն ընդ, իմոյ եղիցի խնդրեմ որ արձակես զպարանն յետին ոտացս և յորժամ ետես զգայլն յետին կողմանէ եհար զնա էշն և արիւնարբու արար, չիք՝ որ-արենարբու։
11 D_4 յորոգայթն փխ նա, առ յաղս և առ աստուած ազաչեմ փխ եթէ յաղօթս կամ առ աստուած, և անկաւ որոգայթն ի պտրանոց նորա, D_6 չիք՝ առ նա։
12 D_6 դու փխ ինձ, չտեմա... Այստեղ ընդհատվում է բնագիրը։

13. Որդեակ, եղեր դու որպէս պտուկ, որ արին արկղ ոսկոյ, և կող նորա ի մրոյն ոչ պակասէր երբէք։

14. Որդեակ, եղեր դու որպէս սերմանացան, որ սերմանեաց գրիւս ծ և, յետ բազում աշխատանաց, ժողովեաց գրիւս ե։

15. Որդեակ, եղեր դու որպէս զոչխարն, որ զընկեր իւր տանին ի խոհակերոցն և զանձն իւր ոչ կարաց ապրեցուցանել ի զենմանէն։

16. Որդեակ, եղեր որպէս զշունն, որ եմուտ ի հնոց բրտին և յորժամ ջեռեաւ, սկսաւ հաչել ընդդէմ նորա։

17. Որդեակ, զբարիս ջամբեցի քեզ, և դու հաց հողոյ արդելեր յինէն։

18. Որդեակ, ես իղով անուշիւ օծի զքեզ, և դու աղտիւ զմարմինս իմ ապականեցեր։

19. Որդեակ, ես յապարանս ոսկէզօծս սնուցի զքեզ, և դու ի ներքո հողոյ բնակեցուցեր զիս։

20. Որդեակ, ես արարի զքեզ ծառ լի պտղով, և դու յարմատոց խլեցեր զիս։

21. Որդեակ, ես բարձրացուցի զքեզ, որպէս աշտարակ, զի թէ եկեսցեն յիս թշնամիք, ելայց և ամրացայց ի քեզ, և դու ինքնին գտար թշնամի և կորուստ անձին։

22. Որդեակ, ես վարժէի զքեզ յիմաստութիւնս, և դու զչարիս կամեցար անձին քում։

23. Որդեակ, զգայլուն ձագն յուսումն տվին, եթէ ասա այր, բեն, գիմ։ Եւ ասէ. Այծ, բուծ, գառն։

24. Որդեակ, եղեր որպէս զխողն, որ տարան ի բաղանիս և յորժամ ետես զնախարարսն, անկեալ ի տիզմն թաւալէր ասելով. Դուք ի ձերդ լուացեք, և ես՝ յիմս։

25. Որդեակ, եղեր դու որպէս զշուն ժպիրհ, որ զչիլս տեառն իւրոյ ծամեաց։

26. Որդեակ, ես սնուցի զքեզ որպէս զձագս աղուեսաց։ Եւ ակն քո ի ծակ քո, մատն իմ կոգիւ ի բերան քո, զմատունքդ սրել ես յաչս իմ։

---

13 D_4 պուտուկ, պիղ փխ արկղ, չիք՝ երբէք։
19 D_4 սնուցեր փխ բնակեցուցեր։
20 D_4 խզեցեր փխ խլեցիր։
21 D_4 եղեր փխ գտար, անձին իմոյ։
23 D_4 Թէ այրուբեն ասա փխ եթէ-գիմ։
26 D_4 աղուեսոյ փխ աղուեսաց։

27. Որդեակ, շուն, որ զորսն ինքն ուտէ, կերակուր գայլոց եղիգի։

28a. Որդեակ, ձեռք, որ սնուցի և ինձ ոչ օգնէ, ուսովն հատցի։

28b. Եւ աչք, որ ինձ լոյս ոչ տայ, ագռաւք հանցեն զնա։

29. Որդեակ, զերեսս դիցն և զարքունիս ցուցի քեզ և մեծ փառաց հասուցի զքեզ, և ի փառաց ընկեցեր զիս։

30. Որդեակ, եղեր ինձ որպէս զծառն, որ կտրէին, և ասէր. Թէ ոչ էր յինէն ի ձեռին քում, ոչ կարէիր հատանել զիս։

31. Որդեակ, եղեր որպէս զձագ ծիծառն, որ անկաւ ի բունոյ իւրմէ, և եդիտ զնա աքիսն և ասէ. Եթէ յինէն ի զատ լեալ էիր, ի մեծ չարիս մատնեալ էիր։ Ասէ ձագն. Զբարիսդ, զոր կամիս աքիս, ի գլուխ քո դարձցի։

32. Որդեակ, եղեր որպէս զաքիսն, որ ասացին թէ թող զսովորական բարս քո և համարձակ լիցի քեզ յարքունիս մտանել և ելանել։ Եւ Նա ասէ. Եղիցին աչք իմ արծւի և թագք իմ ոսկի, զսովորական բարս իմ ոչ թողից։

33. Որդեակ, նմանեցար օձին, որ պատեցաւ ի մասրենի և անկաւ ի գետն։ Եւ տեսեալ գայլուն և ասէ. Ահա չար ի չարն է հեծեալ և չար է, որ վարէ զնոսա։

34. Որդեակ, տեսի զմաքին, որ ի սպանդանոցն ածին և երբ օրն չէր հասեալ, դարձաւ առ ընկերս իւր և ետես զորդիս որդոց իւրոց։

Եւ ասէ Նադան. Տէր իմ Խիկար, արա ինձ ողորմութիւն, զի մարդիկ աստուծոյ մեղանչեն։ Եւ ես եղեց քեզ չար ծառայ, որպէս զմի յանցաւորաց քոց։

Եւ ես ասեմ ցնա.

35. Որդեակ, եղեր ինձ որպէս զայն, որ ետես զընկերն, զի դողայր, և նա առեալ չուր, սրսկեր ի վերայ նորա։

36. Որդեակ, եղեր ինձ որպէս զարմաւենին, որ բուսեալ էր յեզր գետոյն, և պտուղ նորա ի գետն անկանէր։ Եւ եկն տէր ծառոյն կտրել զնա։ Իսկ նա աղաչէր զնա և ասէր. Թող զիս և ի միւսում ամին բերիցս պտուղ, որպէս և կամիս։ Եւ ասէ տէր ծառոյն. Դու ի քում ժամանակիդ ոչ ես բերեալ ինձ պտուղ շահաւէտ, և այժմ, որ կտրել կամիմ, զիարդ պիտանասցիս։

---

29 D_4 զերիս փխ զերեսս, դու փխ ի։
31 D_1 չիք՝ ասէ ձագն, D_4 չիք՝ աքիս։
33 D_4 գայլուն զնա։

37. Որդեակ, ասացին ցայլոն, թէ ի բաց կաց գիհէդ, ապա թէ ոչ՝ շունք պատառեն զքեզ։ Եւ նա ասէ. Եթէ ի բաց կենամ, կուրանամ, զի փոշի նոցա աչացս դեղ է։

38. Որդեակ, որ արտաքոյ Հանապարհին ընթանայ, փշալից եղեալ պատառին ամենայն մարմին նորա։

Այսպէս և որ զչարիս գործեսցեն և արտաքոյ պատուիրանին ընթասցեն, չարաչար կորնչեն յանօրէնութենէ գործոց իւրեանց։

39. Որդեակ, ագին շանն հաց տայ և բերանն՝ բիր։ Նմանապէս և գործք մարդոյ օգնեսցեն։

40. Որդեակ, որ զքարինս գգէ, ատամնաթափ լինի, և որ ի ծով սերմանէ, զձկունս կերակրէ, և որք սիրեն զանօրէնութիւնս, յանձինս իւրեանց տուժեսցեն զփոխարէնն։

Եւ ի նոյն ժամուն ուռաւ Նադան և պատառեցաւ։

Եւ ասէ Խիկարն. Ով բարի առնէ, բարոյ Հանդիպի, և որ փորէ խորխորատ, անձամբ իւրով լցցէ զնա։

Որ սիրէ զչար, ատելի է բազմաց, և որ առնէ զբարի, փրկի ի մահուանէ, աստ մարմնով ուրախասցի և անդ յաւիտենական բարիսն զուարճասցի։

Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։

---

38 D_4 Հանապարհին փխ պատուիրանին, չիք՝ գործոց։
39 D_4 ագահին փխ ագին։

ԽՐԱՏՔ ՊԻՏԱՆԻՔ ԵՒ ՕԳՏԱԿԱՐՔ, ՁՈՐ ԱՍԱՑԵԱԼ Է ԽԻԿԱՐԱՅ ԻՄԱՍՏՆՈՑ

(ՏԱՐԲԵՐԱԿ EF)

Այս տարբերակը համապատասխանում է «Պղնձե քաղաքի պատմության» ժողովածուի հայտնի բնագրին։ Խիստ բարբառային է, համառոտված և այժմյան տեսքով շատ է հեռանում մայր թարգմանությունից։

Ձեռագրական աղբյուրների (E) և տպագրերի մեջ (F) կա որոշ ընթերցվածային տարբերություն։

Տպագիրը գալիս է ձեռագրից. իսկ բոլոր հրատարակությունները կազմում են երկու խումբ (Fa և Fb)։

Համեմատության համար յուրաքանչյուր խմբից ընտրել ենք մի բնորոշ տպագիր՝ Fa—1792 թվականի հրատարակությունը, Fb—1857 թվականի հրատարակությունը։

Այն ձեռագրերը, որոնք հետագայում արտագրվել են տպագրերից, ձեռագրական միավորների մեջ չենք հաշվում։

Խրատականքի և պատմության համար հիմք է ծառայել E_1-ը, իսկ մուտքի համար՝ F_1-ը, որովհետև E_1-ը մուտք չունի։

E խմբի մուտքը ներկայացված է C տարբերակում, ուստի այստեղ տալիս ենք առանց ընթերցումների։

Բնագրի մեջ հազվադեպ ուղղումներ կատարվել են E խմբի օրինակներով, իսկ Fab-ի բոլոր ընթերցումները արտահայտել ենք միայն տողատակերում։

Պահպանվել է բնագրի ուղղագրությունը։

Աղբյուրները և խրատների համակարգը տես գրքի վերջում (աղյուսակ VII—ուսուցող խրատներ, աղյուսակ VIII—պատժիչ խրատներ)։

ԽԻԿԱՐԱՅ ԻՄԱՍՏՆՈՅ
ԽՐԱՏՔ ՊԻՏԱՆԻՔ ԵՒ ՕԳՏԱԿԱՐՔ, ՁՈՐ ԱՍԱՑԵԱԼ Ի

Ես՝ Խիկարս, դպիր էի Սենեքերիմ արքային Ասորեստանեայց։ Եւ արարի Կ կինս, և շինեցի Կ ապարանս, և ես՝ Խիկարս, եղէ Կ ամաց, և ոչ եղև ինձ որդի։

Յայնժամ մտի առ կուռքն բազում ընծաիւք և վառեցի հուր և արկի խունկս անուշահոտս ի վերայ նորա, մատուցի զընծայս և գոհեցի զոհս վասն ծննդեան։ Եւ աղաչեցի ասելով.

Ով տեարք իմ և չաստուածք իմ. Բէլշիմ և Շահմիմ, հրամայեցէք և տուք ինձ արու զաւակ, քանզի ահա Խիկարս կենդանի մեռանի։ Եւ զինչ ասեն մարդիք, թէ Խիկար իմաստուն էր և ճարտար, մեռաւ՝ և ո՛չ կայր նորա որդի, որ թաղէր զնա և ո՛չ դուստր, որ լայր զնա։ Զի՞նչ ասեմ, չունիմ ժառանգ յետ մահուան իմոյ։ Եւ եթէ որդին իմ յօրն Ժ քանքարս ծախեսցէ, ոչ կարէ սպառել զինչս իմ, այլ զի միայն արկցէ հող ձեռօք իւրովք ի վերայ իմ, և զի մի մնացայց անյիշատակ։

Յայնժամ ձայն եղև ի չաստուածոցն իմոց, և ասէ. Խիկար, ոչ հրամայեալ է լինիլ քեզ զաւակ, բայց թէ առցես զնաթան քեռորդին քոյ և սնուցցես զնա որդի քեզ, և նա հատուսցէ քեզ զանուն քո։

Եւ ապա առի զնաթան քեռորդին իմ առ իս, որ էր ի մի ամի և հագուցի նմա բեհեզս և ծիրանիս և եդի մանեակ ոսկի ի պարանոց նորա, որպէս որդի թագաւորի զեղաշուք զարդարնցի զնա և արբուցի նմա կաթն և մեղր և ննջեցուցանէի զնա ի վերայ արծուոց և աղաւնեաց իմոց, մինչև եղև է ամաց։

Եւ ապա սկսա ուսուցանել նմա զդպրութիւն և զիմաստութիւն և զհանճարագիտութիւն և զպատասխանիս հրովարտակաց և զդարձուածս հակառակ խօսից։ Եւ ի տուէ և ի գիշերի ոչ զադարէի ուսուցանելոյ։ Եւ յագեցուցի զնա ուսմամբ իբրև հացիւ և ջրով։

Ապա ասէ արքայն առ իս. Դպիր և իմաստուն Խիկար, զիտեմ զի ծերացեալ ես, և յետ վախճանի քոյ ո՞վ է, որ կատարէ ճարտարութեամբ և իմաստութեամբ զգործս արքունեաց մերոց, և ես հա-

նապազ տրտում եմ վասն այդ խորհրդիդ։ Պատասխանի ետուս նմա և ասացի. Արքայ, յաւիտեան կաց, է իմ որդի, որ առաւել հանճարեղ և իմաստուն է քան զիս։ Ասէ Թագաւորն. Ած գայ առ իս, զի տեսից զնա։ Եւ իբրև ածի զնա, կացուցի զնա առաջի Թագաւորին։ Յորժամ ետես Թագաւորն, ուրախ եղև և ասէ. Այս օրս օրհնեալ եղիցի, քանզի խիկար ի կենդանութեան իւրում էած և կացոյց զորդին իւր առաջի իմ, և ինքն ի հանգստեան եղիցի։

Եւ ես երկրպագի արքային իմոյ և առեալ տարայ զնաթան յապարանս իմ։

Եւ այսպէս ասէի ի խրատելն իմում.

1. Որդեակ, Թէ լսես խօսք ի դուռն Թագաւորաց և իշխանաց, կամ մեծամեծաց, պահեա և մնռո զնա ի սրտի քում և մի՛ ասեր մարդոյ, մինչև այլ մարդ ասէ, ապա իմանաս։

2. Որդեակ, զմարդոյ մօհրած և զկապած մի՛ արձակեր և զարձակեալն մի՛ կապեր։

3. Որդեակ, լաւ է իմաստուն մարդոյ հետ քար կրել, քան զհետ յիմար մարդոյ և անզգամի ուտել և ըմպել։

4. Որդեակ, մի՛ լիցի, զի առաքեսցեն զքեզ ի բան, և դու ոչ իմանաս զբան և գնաս, և այլ մարդ ղրկեն յետև, որ գայ հոգայ զբանն, և դու ծաղր լինիս։

5. Որդեակ, մի հանց բան աներ, յորտեղ որ երթաս, ասեն, Թէ ել և գնա, այլ հանց բան արա, որ ասեն, Թէ եկ այլվի առ մեզ։

6. Որդեակ, յորժամ կոչեն զքեզ ի պատիւ, մի՛ նստիր քան զքո լայնխիդ տեղիքն ի վեր, զի մի ասիցեն, Թէ ել յայդ տեղացդ և եկ ի վայր, և դու ամօթով լինիս։

1 E_2 չիք՝ կամ, չիք՝ և մեռոյ, չիք՝ մարդ, Fb յայտներ փխ ասեր, Fab այլքն ասեն ի քեզ փխ այլ մարդ ասէ ապա իմանաս։
2 $E_{4,5}$ կնքած և գմաւհրածն, Fa կապած և մօհրածն, Fb կապած և կնքածն։
3 Fab քան գանգետին հետ ուտել և խմելն (Fb ըմպելն)։
4 Fb որդեակ եթէ առաքեսցեն զքեզ ի տեղի ինչ վասն բանի լաւ ի միտ առ զբանն զոր ասելոց ես և ապա գնա զի մի գուցէ յետոյ լինիցի ծաղր առաջի այլոց փխ որդեակ-լինիս, Fa երթաս յետոյ այլ ոք ուզարկեն որ երթա ի բանն փխ գնաս-զբանն։
5 E_2 եկեալ վազն առ մեզ փխ եկ այլվի առ մեզ։
6 $E_{4,5}$ պատիւ. կամ ի հարսանիս։ Fa մի այնպէս աներ որ երթաս ի տեղ մի ւ ի քեզանէ մեծ մարդոյն ի վեր նստիս որ չասեն Թէ եկու ի վայր որ յամօթ լինիս ի վայր նիստ որ ասեն Թէ եկու ի վեր փխ յորժամ-լինիս։ Fb որդեակ եթէ գնաս ի հրաւիրեալ տեղիս յորում գտանի քան զքեզ մեծ և յարգի մի նստիր ի վերին կողմն զի յետոյ սակաւ առ սակաւ իջանես ամօթով ի ստորին կողմն փխ որդեակ-լինիս։

7. Որդեակ, Թէ ընկեր քո հիւանդ է, մի՛ ասեր մտօքդ, Թէ տանձ կամ խնծոր գտնում և ապա՝ երթամ ի տես։ Երթ ուտիւքդ և տես աչօքդ, զի հիւանդին քո դատարկ տեսն լաւ է, քան զբաղում կամակս։

8. Որդեակ, մի՛ հեղուր զարիւն մարդոյ, զի մի այլ ոք հեղցէ զարիւն քո, փոխանակ արեան նորա։

9. Որդեակ, մի՛ շնար ընդ այլոց կանանց, զի մի այլք շնասցեն ընդ կնոջ քո, և դու լինիս սևերես։

10. Որդեակ, լաւ է ծառայի՝ միամտութեամբ տալ պատասխանի տեառն իւրում, քան զոր խրատելով խօսի և ածէ ի բարկութիւն։

11. Որդեակ, մի՛ տար ընկերի կոխել զոտս քո, զի մի համարձակեսցի և կոխեսցէ զպարանոց քո։

12. Որդեակ, մի՛ լինիր քաղցր, որ կլանեն զքեզ և մի՛ խիստ դառն, զի մի թքանիցեն զքեզ։

13. Որդեակ, լաւ է կոյր աչօք, քան Թէ կոյր մտօք, զի կոյրն արագ տեսանէ զերթևեկ ճանապարհին, և կուրամիտ մարդն հանապազ գնա կամակոր։

14. Որդեակ, լաւ է աղչիկ, որ ծնանի և շուտ մեռանի, քան Թէ ապրի և աղգին սևերեսանք բերէ։

15. Որդեակ, լաւ է կող մի ի ձեռին քո, քան Թէ չարեկ մի յայլոց ձեռին։

16. Որդեակ, լաւ է ուլ մի քո տունն մորթած, քան Թէ եղ մի յայլոց տունն։

17. Որդեակ, ի պարտէզ Թագաւորաց մի՛ մտաներ և ընդ կնոջ դատաւորի մի՛ խօսիր։

18. Որդեակ, աչք մարդոյ ագահ է. ոչ լցւի գանձով, մինչև լցւի հողով։

7 E_1 առնում փխ գտնում, $E_{4,5}$ եղ քո փխ երթ, Fab գհիւանդն փխ հիւանդքեն քո, $E_{2,3}$ չիք՝ երթ-կամակս, $E_{4,5}$ քան զքոյ, Fab տեսանել շատ, Fa համա՛յն ուտելոյ, Fb միրգս տանել փխ կամակս։
8 E_1 այլք փխ այլ ոք, Fab այլքն հեղցեն փխ այլ ոք հեղցէ, Fab չիք՝ փոխանակ արեան նորա։
9 Fab չիք՝ և դու լինիս սևերես։
12 Fab լինիր լեզի որ թքանեն փխ խիստ-թքանիցեն, $E_{4,5}$ որ փխ զի մի։
13 Fab մտօք կոյրն փխ կուրամիտ մարդն։
14 $E_{2,3}$ չիք՝ լաւ է, E_1 բերէ և խախուտութիւն, Fa ազգին իւրոյ, Fb իւրոյ լինի նախատինք փխ սևերեսանք բերէ, E_5 լինի փխ բերէ։
15 Fa չարիք է յայլոց ձեռքին փխ չարեկ մի յայլոց ձեռին։
16 Fab ի ձեր փխ քո, գեղած փխ մորթած, ի տունս այլոց։
17 $E_{2,3}$ զի պարտ է փխ ի պարտէզ, Fab յապարանս փխ պարտէզ։
18 Fa կշտանայ փխ լցւի։ Fb շատանայ գանձով մինչև մտանէ ի հող փխ լցւի հողով։

19. Որդեակ, մարդոյ կին մի՛ թպտրեր։ Թէ գէշ լինի, անիծանեն զքեզ, թէ աղեկ լինի, այլ ոչ յիշեն զքեզ։

20. Որդեակ, յորժամ ի դատաստան երթաս, մի՛ շատախօսիր և մի՛ ծուռ զրուցեր, թէ չէ զսուտդ հանեն, և մտնուս ի զնտան։

21. Որդեակ, յառաջն խէսմիտ հետ դատաւիդ արա։ Թէ սուտ ես, մեղայ ասա, թէ չէ դատաւորն ի բանդ դնէ և բողակդ թալանէ։

22. Որդեակ, մարդ, որ ի կախել տանին, յառաջ մի՛ երթար ի թամաշան, թէ չէ ի սրտին կսկծուն կասէ, թէ սա իմ ընկերն է, և դու խապար չունիս։

23. Որդեակ, յորժամ երթաս ի հարսանիս, կամ ի մահտուն, յառաջն հաց կեր ի ձեր տունն և ապա՝ գնա, զի թէ հարսանիս է, ի խնդութենէն հոգ չանեն զքեզ, և թէ մահտուն է, ի տրտմութենէն հոգ չանեն զքեզ, և դու անօթի մնաս։

24. Որդեակ, լաւ է ի կարմունջ գնալ հեռու, քան թէ մօտ գետ մտանել և խեղդիլ։

25. Որդեակ, նոր դատաստան մի՛ սերմաներ անիրաւութեամբ, թէպէտ իշխանաւոր ես։

---

19 Fa ընդ մարդոյ կնոջ մի խնամախօսիր զի փխ մարդոյ—թպտրեր, Fb մի պատճառ լինիր հարսնացուցանելոյ զդուստրն ուրուք ընդ առն օտարի զի փխ մարդոյ-թպտրեր, յետոյ այրն վատ փխ գէշ E_1 զքեզ ընաւ և ոչինչ, Fb յիշեն ընաւ։

20 E_{3-4} շատ խաւսիր, E_5 Fab շատախօս լինիր, Fa զի մի սուտ հանցեն զքեզ փխ թէ չէ զսուտդ հանեն, Fb սուտ խօսիր զի մի յետոյ մտանիցես ի բանտ փխ ծուռ-գնատան։

21 $E_{4,5}$ ընդ միտգ փխ խէսմիտ հետ, Fab յառաջ գխօսքն ի միտքդ խորհիր թէ սուտ ես մեղայ ասա զի մի դատաւորն արկցէ ի բանտ և թալանէ զինչս քո (Fb գխօսքն ի մտի քում խորհա, և տուժեսցէ զքեզ փխ և թալանէ զինչս քո) փխ յառաջն-թալանէ։

22 Fab գմարդն որ ի կախել տանին մի յառաջ նորա ընթանայր զի մի մտանէ զքեզ և ասէ թէ սա այլ իմ ընկեր է (Fb եթէ գմարդն, չիք՝ որ, մտանենացէ, առասցէ, ևս փխ այլ) փխ մարդ-չունիս, E_{2-5} թէ չէ ասէ սայ է իմ ընկերն ($E_{2,5}$ ասէ թէ այ ալ իմ ընկերն է)։

23 Fab տունդ փխ ձեր տունն, Fb մեռելոյ տուն փխ մահտուն, E_1 խընդութեան փխ ի խնդութենէն, Fb մոռանան փխ հոգ չանեն, մնաս քաղցեալ փխ անօթի մնաս։

24 $E_{2,3}$ հեռանալ փխ գնալ հեռու, Fab կամուրջ մի հեռի գնալ անցանել լաւ է քան մտնուլ ի ջուր մոռիկ (Fb մանել) փխ լաւ է-խեղդիլ, E_{2-5} չիք՝ և խեղդիլ։

25 E_1 աներ փխ սերմաներ, Fab սահմաներ փխ սերմաներ, թէպէտ և իշխան լինիս ի սահմանել զուսրս մի ելաներ փխ նոր-ես։

26. Որդեակ, մի՛ բանար զաչքդ և մի՛ հայիր ի կին գեղեցիկ, զի դիպեալ ի գերեան և ծարուրեալ ի զաչսն։ Եւ թէ ծախես զամենայն ինչս քո ի սէր նորա, ոչինչ աւելի գտանես քան զկնոջ քո, բայց միայն զմեղքն և զսևերեսանքն։

27. Որդեակ, թէ տեսանիցես զերիտասարդ մարդն թռուցեալ յօդս, մի՛ հաւատար գործոյ նորա, զի բան ծերոց հաստատ է, քան զտղայոց։ Օգնել բանիւ, իբրև բերանոյ առիւծոց զերծուցանես զնա։

28. Որդեակ, թէպէտ որդին քո իմաստուն է, յառաջն Ա. Բ անգամ փորձեա զնա և ապա՝ տուր զապրանքդ ի ձեռն նորա։

29. Որդեակ, ի կնոջ օտարէ և ի հարսնաստանէ քան զընկեր քո յառաջ ել և գնա և այլ մի՛ դառնար, որ հարկևոր մնաս, ապա թէ դառնաս, առնուս ի գլուխ քո անարգութիւն։

30. Որդեակ, որ քան զքեզ պնդերես է, մի՛ հակառակիր ընդ նմա։

31. Որդեակ, թէ բարձր է շեմ տան քո իբրև Ք կանգուն, յորժամ մտաննես, խոնարհ կալ զգլուխ քո։

32. Որդեակ, մի՛ առնուր կշռով մեծ քարով և ծախեր փոքր քարով և ասես ի մտիդ, թէ շահ արի։ Ոչ գիտես, թէ բարկանայ աստուած և զոր ունիս, առնու և տայ այլոց։

33. Որդեակ, մի՛ երդնուր և մի՛ ասեր սուտ, զի սուտ ասելն և սուտ երդումն մարդոյ արևն պակսեցնէ։

---

26 Fab վատնես փխ ծախես, առաւել փխ աւելի։ $E_{2,3,5}$ գտանես ի նա, E_4 գտանես ի նոսա, Fab գսևերեսութիւն։

27 Fb չիք՝ մարդն, գործոց, բայց երիտասարդ որդւոյն ոչ (Fb բայց երիտասարդին ոչ) փխ քան զտղայոց, Fa ահա օրինակ սորա առացեալ է թէ իբրև բերան առիւծու որ զերծուցանէ զնա փխ օգնել-զնա Fb չիք՝ օգնել-զնա։ E_1 չիք՝ բերանոյ։

28 Fab յառաջագոյն փխ՝ յառաջն Ա. Բ անգամ, զինչս քո փխ զապրանքդ, $E_{2,3}$ քո փխ ի ձեռն նորա։

29 E_5 տանէ փխ ի հարսնաստանէ, Fa լինիս փխ մնաս, դառնաս փոխարէն հարկացդ, Fa չիք՝ ի գլուխ քո։

30 Fab ով որ քան զքեզ պինդ երես է, E_1 նմա զի վերջքն չար է։

31 Fab քո առաւել, E_1 թէ շեմմարանք քո բարձր է փխ թէ բարձր է շեմ տան քո, Fa այլ որ փխ յորժամ, Fab խոնարհեցո փխ խոնարհ կալ, Fb ի մտանելն քո ընդ այն փխ յորժամ մտանես։

32 Fab չիք՝ քարով, ասեր ի սրտի քում թէ շահեցայ (Fb մտի փխ սրտի), որ փոխանակ ի յայն փոքր շահուն (Fb չիք՝ փոքր) փխ թէ, առնու ի ձեռաց քոց։

33 Fab գմարդոյ կենաց պակասութիւն բերէ, $E_{2,3}$ աւերեն պակասեցուցանէ, E_4 օրէն պակասեցուցանէ, E_5 ուժն փխ արևն։

34. Որդեակ, թէ կամիս խնդրել ինչ յաստուծոյ, ի կամաց նորա մի՛ հեռանար։ Եւ զոր խնդրես, տացէ քեզ աստուած։

35. Որդեակ, զինչ բան որ քեզ չար թւի, ընկերին քո մի՛ կամենար։

36. Որդեակ, զոր ինչ որ կամիս, թէ արասցեն քեզ բարեկամք քո, արա և դու ամենեցուն, զի յամենայնէ բարի գտցես։

37. Որդեակ, յորժամ իցես ի մէջ մարդկաց, մի՛ յայտներ զպարտք և զպակասութիւն քո, զի ի նոցանէ շահ ոչ լինի քեզ, և արհամարհիս ի մէջ նոցա։

38. Որդեակ, սիրեա զկին քո, զի մարմին քո է և աշխատանօք սնուցանէ զորդի քո, և կցորդ կենաց քոց է։

39. Որդեակ, սիրեա զեղբայր քո հաւասար քեզ, զի ի հասանել որդոց քոց՝ խնդասցես։

40. Որդեակ, ուսո զորդի քո ի քաղց և ի ծարաւ, զի սովորեն համբերել, յորժամ հանդիպի ժամանակ սովոյ կարասցեն ժուժկալել։

41. Որդեակ, թէ առաքէ տէր քո, թէ բեր սպտուր, մի՛ բերեր խաղող, զի ուտէ զխաղողն և զսպտուրն ի քէն պահանջէ։

42. Որդեակ, մարդուն գործքն, որ չէ շիտակ և չունի անուն բարի, լաւ է այն մարդն մեռած, քանց կենդանի։

43. Որդեակ, թէ լինիս մարդոյ ղոնախ, օձ և կարիճ դնեն առաջի քո, ի մէկալ իջևանն մի՛ գանգատիլ։

---

34 Fab խնդրել բանս, չիք՝ աստուած։

35 Fa աներ փխ կամենար, աներ և զոր ինչ բարին է կատարէ և արասցէ քեզ բարեկամ և դու յամենեցուն բարի գտցես։

36 E_{2-5} չիք՝ որդեակ (Այսպիսով խրատը միակցվել է նախորդին), Fb թէ կամիս գտանել յամենեցունց զբարիս արա դու այլոց զբարիս փխ զորգտցես, Fa միակցվել է նախորդին։

37 Fab լինիս փխ իցես, E_1 նոցա և այլ ոչ անեն քեզ զառաջին պատիւն։

39 Fa հաւասար ընդ, Fb իբրև դանձն քո փխ հաւասար քեզ, E_1 քոց հաւասար։

40 Fab ուսանիցեն փխ սովորեն, համբերել նեղութեան և։

41 $E_{2,3}$ սուտ է փխ ուտէ, զբսպտուն ինքնէն ոչ թողու փխ զսպտուրն ի քէն պահանջէ, $E_{4,5}$ սպտուրին քենն ոչ թողու։

42 Fab մարդոյ գործք որ ոչ է բարի փխ մարդուն գործքն որ չէ շիտակ, բարի յաշխարհի։

43 Fa յորժամ լինիս այլոց տան հիւր եթե օձ և կաքիճ բերեն առաջի քոյ մի քալէջևան և մի գանկատիր փխ թէ լինիս-գանգատիլ, $E_{2,3}$ խոնախ։

44. Որդեակ, մի՛ ասեր բան չար բարեկամի քո, այլ ծիծաղեա յերեսս նորա, և ուրախ լինի ի մէջ ընկերաց քոց։

45. Որդեակ, զամենայն բարութիւն կնոջ քո արա, բայց զսրտիդ խորհուրդն մի՛ յայտներ, զի կին մարդ տկար է, ոչ կարէ պահել զբան քո, յայտնէ դրացեաց և զքեզ ի փորձանս ձգէ։

46. Որդեակ, ապրանք, որ քո չէ, մի՛ առնուր և մի՛ այլոց տար։

47. Որդեակ, խորհեա զբանն ի սրտիդ, ընտրեա զպիտանին և ապա՝ բեր ի լեզուդ և խօսիր։ Եւ թէ զինչ գայ բերանդ խօսիս, ծաղր լինիս։

48. Որդեակ, երկու մարդ որ կռվին սրով, դու ի մէջ նոցա մի՛ անկանիր, թէ չէ ի զուր մեռանիս։

49. Որդեակ, մի՛ դատարկ բան խօսիր և ծիծաղիր զմարդիկ, զի տնաղելուն կռիւ լինի և ի կուոյն՝ սպանութիւն։

50. Որդեակ, թէ կամիս, որ իմաստուն լինիս, պահեա զլեզուդ ի չար խօսելոյ։

51. Որդեակ, թէ կանչելով մարդ տուն շինէր, էշն օրն Ը դարպաս կու շինէր, և թէ ի սաստիկ զօրութենէ եզինն վարին, լուծն ի յղտուն պարանոցէն ոչ ելանէր։

52. Որդեակ, թէ աղքատ ես, յաւուրս պատարագաց աստուծոյ մի՛ հեռանար։

53. Որդեակ, մի՛ տացես ըռզակն քո առանց գրի և վկայի, զի մի բազում խօսք լինի յետոյ ի միջին, և ի բուն բարեկամէն քակտիս։

54. Որդեակ, զբան աղային քո մի՛ յաւելուր, թէ փոքր է, և թէ մեծ՝ մի պակասեցուցաներ զհրամայեալսն։

---

45 E_1 խորհուրդն քո, Fab զխորհուրդ սրտի քոյ, E_5 մարդ փխ կին մարդ, Fab կինն փխ կին մարդ, դրացեաց քոց, և դու անկանիս ի փորձանս և ի նեղութիւն (Fb փորձութիւնս) փխ և զքեզ ի փորձանս ձգէ։

47 Fb որդեակ նախ, սրտի քում և, Fb զի մի յետոյ ծաղր լիցիս այլոց փխ բեր ի-լինիս։

48 Fa ընդ կռիլն և ընդ ծեծուիլն փխ որ կռվին սրով դու, Fb եթէ տեսանես զկռուիլն երկու մարդոյ ընդ միմեանս մի մտաներ ի մէջ նոցա, Fab զի մի փխ թէ չէ, $E_{2,3}$ սրով զքեզ հատանեն և դու մեռնիս փխ ի զուր մեռանիս։

49 Fa դատարկաբանութիւն, զի մարդն ի նուազելոյն փխ զմարդիկ զի տնաղելուն։

52 Fa ես յամենայն։

53 Fa ապրանք փխ ըռզակն, գնի փխ գրի, չիք՝ յետոյ ի միջին, $E_{2,3}$ բարեկամին հետ լինիս կռիւ փխ բարեկամէն քակտիս։

54 $E_{2,3}$ մի մեծացներ մի պակասեցուցաներ փխ և թէ մեծ մի պակասեցուցաներ զհրամայեալսն, $E_{4,5}$ չիք՝ զհրամայեալսն։

55. Որդեակ, պատուեա զհայր քո և զմայր, զի ի հասանել որդոց քոց և դի ի նոցանէ պատուիս։

56. Որդեակ, շալկեցի երկաթ և ի վերայ՝ արճիճ, և ոչ էր ծանր քան զպարտքն։ Թէպէտ որ ուտէ և ըմպէ, ոչ կարէ հանգչել, մինչև վճարէ զպարտսն։

57. Որդեակ, յաւուր զոհից քոց առատ բռնեա զձեռն քո, որ աչք ի ձեռն քո ոչ մնայ, և ոչ հաճի աստուած, և ի մարդկանէ անարգիս։

58. Որդեակ, մեծատան որդին օձ կերաւ, ասեն, թէ դեղ է նմա, աղքատին որդին ձուկ կերաւ, ասեն, թէ ի սովուն է։

59. Որդեակ, ձի որ քո չէ, մի՛ հեծնուր։ Թէպէտ որ կարի քաղցեալ ես, հաց, որ քո չէ, մի՛ ուտեր։

60. Որդեակ, յայտնեա զխորհուրդ քո բարեկամիդ և յետ քանի մի աւուր փորձեա զնա և սակաւ մի կուեա ընդ նմա։ Թէ պահէ զբան քո ի սրտին մէջն և ոչ յայտնէ, նա բարեկամ է, սիրեա զնա։

61. Որդեակ, լաւ է գողանալ զամենայն ինչս քո, քան թէ գտանեն մի գողութիւն ի վերայ քո։

62. Որդեակ, ընդ թշնամեաց կորուստ մի՛ խնդար, զի առաջի քո կայ մահ։

63. Որդեակ, յորժամ տեսանես զծերն, յոտն կաց և պատուեա զնա, զի այլք արասցեն քեզ զնոյն։

64. Որդեակ, թէ դադարեն գետք ի գնացից և կամ քաղցրանայ ծով, որպէս մեղու, կամ սպիտականայ ադուաւ, որպէս զաղաւնի, այնպէս թողու անզգամն զանզգամութիւն, կամ անմիտն զգայուն լինի։

---

55 Fab առցես և դու զնոյն (Fb գոցես) փխ և-պատուիս։

56 Fa արճիճ և երկաթ փխ երկաթ և ի վերայ արճիճ։

57 E_1 մնայ այլ ամենեցուն հաւասար բաշխէ և թէ առատ ոչ բռնես։

58 $E_{2,3}$ ասեն յամենեքեան, Fa, $E_{4,5}$ մեծատան որդին թէ օձ ուտէ կասեն թէ վասն բժշկութեան կերաւ և թէ ագքատն ուտէ կասեն թէ սովալլուկ մեռանելոյն կերաւ ($E_{4,5}$ կերաւ փխ ուտէ, ասեն փխ կասեն թէ, E_4 եկեր փխ կերաւ) փխ մեծատան-սովուն է։

59 E_1 ուտեր այն է կարի լաւ։

60 $E_{2,3}$ աւր վրա փխ նմա։

61 Fa գողոց տալ փխ գողանալ, $E_{2,3}$ ի քէն փխ ի վերայ քո, Fb մի գողանար զինչս մարդկանց զի մի գուցէ աստ մահու մեռանիցիս և անդ յանշէջ հուրն այրիցես փխ լաւ է-ի վերայ քո։

62 Fab թշնամւոյն կորուստեանն։

64 Fab չիք՝ ծով, սպիտակի, Fa զագաւնի նա, Fb նոյնպէս փխ այնպէս, Fab զանզգամութիւնն իւր, Fb չիք՝ կամ անմիտն զգայուն լինի, $E_{2,3}$ անզգայուն լինի փխ անզգամն-լինի։

65. Որդեակ, մի՛ յաճախեր ի տուն բարեկամի քո, զի մի յատելցի առել զքեզ։

66. Որդեակ, ագահութիւն մայր է ամենայն չարեաց և ծնուցիչ է մեղաց։ Ողորմութիւն ձեռնտու է ամենայն բարեաց։

67. Որդեակ, որ սիրէ զխաղաղութիւն, ի դատաստանէն հեռի կացցէ։ Որ հանապազ յօժարի ի դատաստան, մայր է չարեաց, յիմարեալ է և ոչ գիտէ զինչ առնէ։

68. Որդեակ, օրինացն աստուծոյ ունկնդիր լեր, զի պատուիրանն աստուծոյ ամուր պարիսպ է մարդոյ։

69. Որդեակ, շատախօսութիւն զումեքէ մի՛ լսեր, զի կարի խոցոտէ զսիրտ մարդոյ լսողին և ապականէ զբարք մարդոյ, զի նախատինք է։

70. Որդեակ, սովորեցո զլեզուն քո ի բարին խօսել ի մէջ բնակեաց քոց։

71. Որդեակ, թէ խրատ բարի տացես ամենայն մարդոյ, կոչիս իմաստուն, զի չարն հանապազ ի չար մարդուէն ծնանի։

72. Որդեակ, որ պայծառ է մտօք, իբրև զարեգական լուսաւորէ զինքն, որ պիղծ է սրտիւ և նենգ է մտօք, խաւար է խորհրդով, որ ագահ է մտօք՝ մարդ և ունի ինչս բազումս, ունայն է և կենդանի մեռեալ։

73a. Որդեակ, թէ կամիս գործ մի գործել, յառաջն մի՛ պարծեննար, լինի թէ չկարենաս և ծաղր լինիս։

73b. Եւ թէ կամիս մարդոյ ինչս տալ, յառաջն մի՛ պարծեննար, կամ խոստանալ, զի թէ պարծենաս և չիտաս, հետ բարեկամիդ թշնամի լինիս։

---

65 Fab յադեալ առիցեն փխ յաւելցի առել։

66 Fab ծնուցիչ ամենայնի։

67 Fab պատրաստ կաց փխ հեռի կացէ, դատաստան նա, $E_{2,3}$ չիք՝ որ հանապազ-առնէ, Fab մայր է ամենայն մեղաց և։

69 $E_{2,3}$ կարէ փխ կարի, Fab մի ասեր և, չիք՝ լսողին, գփառք փխ զբարք, Fa զի մեծ, նախատինք մեծ։

70 Fb կրթեա զլեզուդ քո խօսիլ զբարի ի մէջ ամենեցուն փխ սովորեցոքոց։

71 Fb չիք՝ ամենայնի, Fa գտացես գու իմաստուն կոչիս փխ տացես-իմաստուն, Fb գտանես գու զբարի փխ կոչիս իմաստուն։

72 Fb որ ամբարտաւան է աչօք և ագահ սրտիւ. Այնպիսի մարդն թէպէտ և ունի փխ որ պայծառ է-ունի, $E_{2,3}$ որ պայծառ է մտաւք և խաւար է խորհրդով որ ագահ է մտօք մարդ և յունի ինչս բազումս յունայն է և կենդանի մեռեալ (աղավաղված), $E_{4,5}$ գմարդն փխ զինքն, մտօք և։ Fa չիք՝ զինքն, այնպիսի մարդն թէպէտ և փխ մարդ և։

73 Fab չիք՝ թէ-լինիս (73a), $E_{2,3}$ որդեակ և թէ փխ և թէ (Այդպիսով խրատը տրոհվել է երկուսի), Fab և մի փխ կամ, Fb զի մի գուցէ յետոյ ոչ կարիցես տալ և լինիցիս ծաղր և այլոց այլոց փխ զի թէ-լինիս։

74. Որդեակ, մի՛ ցանկար մարդոյ արեան և մի՛ սիրեր զկռիւ, այլ սիրէ զխօսք կակուղ, զի կակուղ խօսքն շիջուցանէ զհրաբորբոք գաղանացեալ սիրտ մարդոյ:

75. Որդեակ, յորժամ ըմպես գինի, մի՛ շատախօսիր, զի շատախօսիս՝ կռիւ լինի, և հետ կռվոյն՝ սպանութիւն:

76. Որդեակ, անբարտաւան մարդն հեռի և օտար է յընտանեաց և բարեկամաց և քէ բազում անգամ ջանայ սիրոյ, առնու անարգանս անձին իւրոյ և հեռանայ ընկերաց, նոյնպէս ագահ մարդն և խոզամիտն:

77. Որդեակ, խոնարհութիւն մայր է խաղաղութեան, բնակարան է ողջունի և զաւուրս մարդոյն խաղաղութեամբ առնէ:

78. Որդեակ, մինչ կոշիկդ յոտդ է, կոխեա զփուշն և արա ճանապարհ, որ հետ քեզ գալոց են:

79. Որդեակ, ջանա որ, քանի կենդանի ես, շահիս անուն բարի, զի լաւ է մարդոյն անուն բարի, քան զգեղ գովելի, զի գեղեցկութիւն հիւանդութեամբ և մահուամբ ապականի, և անուն բարի մնայ յաւիտեան:

80. Որդեակ, լաւ է ստանալ ձի սմբակեղ և էշ ստվարոլոք, քան զծառայ փախչող և ստախօս:

81. Որդեակ, մի՛ երաշխաւոր լինիր բարեկամին քո, զի բազում վիշտս կրես մինչև վճարես զպարտս նորա, և ցաւի մորուսդ:

---

74 Fa և խօսք որ փխ զի կակուղ խօսքն, Fb որ փխ զի կակուղ խօսքն:

75 $E_{4,5}$ Fab շատախօս լիներ, Fa խմես փխ ըմպես, յետոյ խռովութիւն և սպանութիւն փխ հետ կռվոյն սպանութիւն, Fb ծնանի կռիւ և յետոյ խռովութիւն գուցէ և սպանութիւն, $E_{4,5}$ Fab շատ խօսիցն (Fab ի շատ խօսից), E_5 սպանութիւն լինի:

76 E_1 չիք՝ և բարեկամաց, Fab բարեկամաց իւրոց (Fb իւրոց այլ խոնարհն միշտ մերձ է ոչ միայն ընտանեաց և բարեկամաց իւրոց այլև հեռաւորաց և անծանոթից), $E_{4,5}$ անգամ առնու նա գանս անձին իւրոյ փխ ջանայ-իւրոյ. Fb չիք՝ և քէ բազում-խոզամիտն, E_1 ոչ կարէ փխ առնու-իւրոյ և, Fa սիրով նա, չիք՝ նոյնպէս-խոզամիտն:

77 Fa խաղաղութիւն մայր է ամենայն բնական ողջունի խոնարհութեան, Fb խաղաղութիւն մայր է ամենայն առաքինութեան փխ խոնարհութիւն մայր է խաղաղութեան:

78 Fab ընկերի քում որ ընդ քեզ է գալոց փխ որ հետ քեզ գալոց են:

79 Fa և շահիր փխ որ-շահիս, Fb և առացիր փխ որ-շահիս, Fab քան քէ-

80 Fa սմակել փխ սմբակեղ, Fb ծոյլ և պղերգ փխ սմբակեղ, Fab ըստ վարուք փխ ստվարոլոք:

81 $F_{2,3}$ ճարես փխ վճարես, Fb զի յետոյ, $E_{2,3}$ սիրտն քո փխ մորուսդ, Fab չիք՝ և ցաւի մորուսդ:

82. Որդեակ, քէ հանդիպիս կնոջ անզգամի, հնազանդի՛ր նմա, կամ փախի՛ր ի նմանէ:

83. Որդեակ, ի լեզուէ քումմէ վախեցիր, քան զօտար քշնամոյն, զի ոչ գիտես, քէ յորժամ գայթակղեցուցանէ զքեզ: Լեզու անմիտ և արբեցողի, որպէս նետ ի լարս աղեղան, զայլ ոք ոչ կարէ հարկանել, այլ հանապազ զգլուխդ ծեծէ:

84. Որդեակ, լաւագոյն է քեզ քշնամութիւն ընդ առն իմաստնոյ, քան սիրելութիւն առն անմիտ մարդոյ:

85. Որդեակ, այր անմիտ և արբեցող ի բան մի ղրկեր, զի քէ ուղես, այլ բազում չարիս ածէ ի վերայ քո:

86. Որդեակ, քէ անմտին խրատ տաս, այնպէս է քո խրատն, որպէս քէ ոք ցանէ փոշի ի վերայ ելման գետոյ:

87. Որդեակ, չար իմաստնոյ որպէս փաթերակի գայ ի ժամանակի, բայց անմիտն յամենայն ժամ չար ուզէ իւր անձինն:

88. Որդեակ, չար, անմիտ և լեզուանի և ամբարհաւաճ մարդ ի տուն քո մի՛ տանիր, զի ի գործոց նորա ամօթու լինիս:

89. Որդեակ, քէ լինիս տէր աշխարհիս, զմահ քո մի՛ մոռանար յամենայն ժամ:

90. Որդեակ, արար աստուած զկինն վասն ուրախութեան, բայց տես մի՝ լի ըմպեր քան զգինի:

91. Որդեակ, փառաւոր առնէ գինին երբեմն զմարդիկ և երբեմն՝ ծաղր և ամօթալի առնէ:

---

82 $E_{2,3}$ քան զաւտար փխ ի նմանէ:

83 Fa զի այլ ոք ոչ կարէ հարկանել զքեզ եթէ ոչ գնա փխ զի ոչ-ծեծէ, Fb զի այլ ոք ոչ կարէ այնչափ վնասել զքեզ եթէ ոչ նա փխ զի ոչ-ծեծէ, $E_{2,3}$ է ի չար փխ ի լարս, $F_{2,3}$ գայլս քո փխ գայլ ոք:

84 $E_{2,3}$ չիք՝ ընդ առն իմաստնոյ, Fab քան քէ, E_{2-5} Fab անմտի փխ անմիտ մարդոյ, $E_{4,5}$ Fa սիրելութիւն ընդ:

85 Fb ի գործ ինչ մի առաքեր փխ ի բան մի ղրկեր, Fb չիք՝ քէ ուզես այլ, Fa և քէ կուգես որ փխ զի քէ ուզես, քո ուղարկեա:

86 Fab անմիտ մարդոյ խրատ տալն, չիք՝ քո խրատն, չիք՝ վերայ, E_{2-5} Fab գնացման (Fb գնացս) փխ ելման:

88 E_1 չարմիտ փխ չար-լեզուանի, Fa մոցներ փխ տանիր, Fb ի մէջ տան քո մի ընդունիր փխ ի տուն քո մի տանիր, Fa գտանես փխ տանիր:

89 E_{2-5} Fab չիք՝ յամենայն ժամ, Fb մոռանար և որչափ մեծութեան հասանես այնքան ի խոնարհութեան կալ զանձն քո:

90 Fab ած գինի վասն ուրախութեան բայց տես քէ լինի քէ ըմպէ գինին զքեզ (Fb մի գուցէ փխ լինի քէ, զքեզ զի փառաւոր առնէ երբեմն զմարդն և երբեմն ամօթալից և ծաղր), $E_{2,3}$ չիք՝ լի:

91 Fb խրատք միակցվել է ճախորդին. E_1 առնէ զմարդն:

92. Որդեակ, լաւ է քեզ կուել ընդ մարդոյ զինւորի, քան ընդ կնոջ անզգամի:

93. Որդեակ, մարդ չարախորհուրդ և նախանձոտ ոչ միայն ատելեաց խորհի չարութիւն, այլ բնութեամբ ամենեցուն հակառակ կայ:

94. Որդեակ, մարդ չարաբարոյ և ամբարտաւան, յորժամ տեսնու զխոովութիւն ընկերի իւրոյ, ցնծայ և ուրախ լինի և կարծէ ի միտս իւր, Թէ փառս ինչ յաւելցաւ նմա:

95. Որդեակ, յորժամ քաղցրանայ աչք աստուծոյ ի վերայ քո, առաւել վախեցիր ի նմանէ, զի մի՛ յետոյ մեղադրես անձին քո:

96. Որդեակ, յորժամ տեսանես զքեզ առ աչս տեառն քո և թագաւորաց փառաւորեալ, և ամենայն մարդ սիրէ զքեզ, և յորժամ արհամարհիս յաստուծոյ, յայնժամ թագաւորք և իշխանք և ամենայն սիրելիք քո առնեն զքեզ:

97. Որդեակ, մի՛ ասեր աղքատին, Թէ դու ինձ շար ոչ կարես առնել: Տես զի բազում չարիք անարգ և ոչինչ մարդուէն ելանեն և ոչ՝ պատուականէն:

98. Որդեակ, կին օտար, որ սիրէ զքեզ և ասէ, Թէ դու լաւ ես քան զիմ այրն, մի՛ հաւատար դու նմա, զի կին պոռնիկ նման է շան, որ խառնակի յամենայն շան:

99. Որդեակ, մի՛ վախեցուցաներ զսիրտ քո հետ նոր բռնած սիրելւոդ, մինչև քանիցս անգամ փորձես զչարն և զբարին:

100. Որդեակ, մի՛ լրբալեզու լինիր ի մէջ ընկերացդ, զի կարծես զքեզ սիրելի լինել նոցա: Յորժամ յանդիմանեն զքեզ, լինի բան քո ամօթալից:

---

93 Fab ատելեացն առնէ գչարութիւն փխ ատելեաց խորհի չարութիւն:

94 Fab գկռովութիւն (Fb գկռիս) փխ զխռովութիւն, մաի իւրում փխ միտս իւր, Fb յաւելու յանձին իւրում փխ յաւելցաւ նմա:

95 Fb երկնչիր ի պատուիրանացն Նորա որով յաչս թագաւորաց հաճոյ երևիս և ամենայն մարդ սիրէ զքեզ և յորժամ արհամարհիս յաստուածոյ յայնժամ թագաւորք և իշխանք և ամենայն սիրելիք քո առնեն զքեզ փխ վախեցիր-անձին քո, Fa երկնչիր փխ վախեցիր, յետև փխ մի յետոյ:

96 $E_{2,3}$ յառաջ փխ առ աչս, Fa տեառն աստծոյ, Fb միակցվել է նախորդ խրատին:

97 Fab և անարգանք փխ անարգ և, Fb չիք՝ ասս, E_{2-5} Fa պատուականն մարդոյն (Fa մարդկաց), Fb չիք՝ և ոչ պատուականէն:

98 $E_{2,3}$ որ սիրէ զքեզ փխ դու նմա, Fab խառնակի ընդ, շանց (Fb շանց և նման է գերեզմանի բռնոյ որ ի ներքս լի է գարշահոտութեամբ):

99 Fa քանի մի ինչ փխ քանիցս, գնա չարեօք և բարեօք փխ զչարն և զբարին, EF բնագրում պետք է լինի՝ վառեցուցաներ փխ վախեցուցաներ:

100 $E_{2,3}$ շնայլեզու փխ լրբալեզու, Fab և կարծեր Թէ սիրելի ես նոցա այլ (Fb զի փխ այլ) փխ զքեզ-նոցա:

101. Որդեակ, լերինք շտեմարանք սառեցան, և սիրտ նենգաւորաց բնակարան չարեաց են:

102. Որդեակ, կին պոռնիկ նման է գերեզմանաց բռելոց, որ ի ներքոյ են գարշահոտութեամբ:

103. Որդեակ, մի՛ այլոց կին կատարեր զցանկութիւն քո, զի օտար կինն նման է աղի ջրի, զի որչափ խմես առաւել ծարաւիս:

104. Որդեակ, ոչ ամենայն մարդ ժառանգէ զանուն մարդոյ, այլ որ իմաստուն է, զի որպէս հուր ի լուսոյ և ի տապոյ բորբոքի, որպէս արեգակն ի ճառագայթից երևի լուսաւոր, որպէս առիւծն ուժովութեան գովելի և որպէս բազան սրընթաց առ ի սաչելոյ թևացն մեծարի յաչս թագաւորաց, նոյնպէս պարտ է մարդոյ, որ լինի դպիր և իմաստուն, զի գովի յաչս թագաւորաց և մեծամեծաց:

105. Որդեակ, առն խոզամտի սիրելի ոչ կայ երբեք, զի մարդ խոզամիտ ասէ յիւր մտին, Թէ կեանքս ոչ անցանէ և ըռզակ իմ ոչ պակասի: Աստուած տայ նմա մահ և զինչքն նորա յայլոց տայ, և չունենայ անուն բարի, որ յիշեն զնա:

106. Որդեակ, այր անմիտ, յորժամ արբենայ, յօժարի ի կռիւ, կարծէ ի միտս, Թէ մեծագոյն է քան զայլսն և ոչ գիտէ, Թէ հանդիպի առն քաջասրտի, և սպանէ զինքն:

---

101 Fb որդեակ որպէս, Fab սառաց են փխ սառեցան, և նենգաւորք (Fb նոյնպէս և նենգաւորք) փխ և սիրտ նենգաւորաց:

102 Fa գերեզմանի բռելոյ, Fb միակցվել է № 98 խրատին, Fa ներքս լի է փխ ներքոյ են:

103 Fb մի գնեաս, $E_{2,3}$ այլ փխ այլոց, Fab կանանց, $E_{2,3}$ աղջրի, E_1 այնչափ փխ առաւել, Fab որ որքան փխ զի որչափ, Fb ըմպես փխ խմես, Fa առաւելագոյն, Fb այնքան փխ առաւել, Fab ծարաւիս և գանուն վատ ժառանգես:

104 Fa զի որ իմաստուն է նման է փխ ոչ-զի, Fb չիք՝ ոչ ամենայն-զի, հուր միշտ, չիք՝ ի լուսոյ և, Fab և լուսաւորէ գաթաթածս և կամ, որ ուժեղութեամբն, $E_{2,3}$ չիք՝ սրընթաց առ ի սաչելոյ թևացն, Fb գովի փխ մեծարի, Fa թևացն գովի ևս առաւել, Fb նոյնպէս և իմաստունն միշտ իմաստութեամբ իւրով պայծառ երևի ի մէջ ամենեցուն և մանաւանդ ի թագաւորաց և ի մեծամեծաց և յիշխանաց պատիւս ընդունի փխ յաչս-մեծամեծաց:

105 Fab գոյ փխ կայ, $E_{2,3}$ չիք՝ մարդ, Fab չիք՝ մարդ խոզամիտ, ի սրտի իւրում փխ յիւր մտին, Fab պակասի և ոչ գիտէ Թէ (Fb Թէ յանկարծ), այնպիսեաց փխ նմա, Fb ինչքս փխ ըռզակ իմ, $E_{2,3}$ չիք՝ գնա, Fb որք ոչ երբէք յիշեն գնա փխ տայ և-գնա:

106 Fb ոչ գոյ մեծ և հզոր քան զինքն փխ մեծագոյն է քան զայլսն, Fab Թէ յորժամ, ումն քաջ փխ քաջասրտի և, Fb ուրումն քաջի յազգէ ի նմանէ գուցէ և տայցէ սպանանել զինքն փխ առն—զինքն:

107. Որդեակ, յորժամ արբենաս, լեզուդ ի քեզ կապէ, զի խելքդ ի քենէ գնացեր է։

108. Որդեակ, որպէս հողն մայր է ամենայն տնկոց, նոյնպէս արբեցութիւնն մայր է ամենայն չարեաց։

109. Որդեակ, թէ իշխան ես աշխարհի և մարդկան, պահեա զանձն քո ի զեխութենէ, զի առ քեզ են հոգք երկնաւորաց և երկրաւորաց։

110. Որդեակ, տեսի գազան կատաղեալ, արձակեցաւ յիս և ո՛չ վախեցայ ի նմանէ, հանդիպեցայ թշնամոյ իմոյ և ո՛չ յաղթեցայ ի նմանէ, հանդիպեցայ կնոջ լեզուանոյ և յաղթեցայ ի նմանէ։

111. Որդեակ, մի՛ լինիր փոյթ, իբրև զնշենի, որ յառաջն ծաղկի և յետոյ ուտվի, այլ լեր հնազանդ, հեզ և հանդարտ, որպէս զթզենի, որ յառաջն ուտվի պտուղ նորա և յետոյ ծաղկի։

112. Որդեակ, անարգի անօրէնն վասն չարեաց իւրոց և կանգնի արդարն վասն բարի գործոց իւրոց։

113*. Որդեակ, միշտ խորհեա զաղքատն և զտնանկն, զի յաւուր չարէ փրկէ աստուած զանձն քո (44 Fb)։

Որդեակ Նաթան, զայս ամենայն ուսուցի քեզ, ի միտ առ և կատարեա զամենայն և լինիս իմաստուն ի մէջ ընկերաց քոց և յաշխ թագաւորաց երեւելի լինիս։

---

108 E_1 չիք՝ որպէս $E_{2,3}$ որպէս յաբբեցութիւն մայր է ամենայն չարեաց նոյնպէս հողն մայր է ամենայն տնկոց փխ որպէս-չարեաց։

109 Fab վասն զի ի փխ զի առ. չիք՝ երկնաւորաց և, երկնաւորաց ամենայն։

110 Fab ի վերա իմ փխ յիս, Fb երկեա փխ վախեցայ, Fa յաղթեաց զիս փխ յաղթեցայ ի նմանէ, Fb նմանէ բայց։

111 E_1 չիք՝ հեզ. Fa ապա փխ յետոյ, հնազանդ և պտղաբերեա դհեզութիւն, Fa չիք՝ հեզ-ծաղկի, չիք՝ նորա։

112 Fab անկանի փխ անարգի, չար գործոց՝ փխ չարեաց, Fb և ոչ կարէ կանգնիլ վերստին բայց թէև անկանի արդարն անդէն կանգնի վասն բարեաց իւրոց փխ և կանգնի-իւրոց։

113 $E_{2,3}$ լինիս այս է ուսումն թէ միտդ պահես և Քրիստոսի փառք յաւիտեան, $E_{4,5}$ եթանելի փխ երեւելի։

* * *

Այս է ուսումն, որ ուսուցի ես՝ Իկարոս, քվեր որդոյն իմոյ Նաթանայ։ Եւ ես գիտէի, թէ զամենայն բանս իմ պահեալ էր ի մտի։ Նա որպէս փոշի, որ լինուս ի վերայ ելման գետոյ, որ կորնչի, նա այնպէս արար զխրատս իմ։

Յառաջն տվի նորա զտունս իմ և զծառայքս, զինչս և զստացուածս և զիշխանութիւնս և արարի ատենադպիր Սենեքարիմայ թագաւորին։ Եւ նա սկսաւ ինձ չարութիւն առնել։ Զծառայքս իմ ոչ խնայէր և զինչս իմ վատնէր և զբազում խրատս իմ անտես առնէր։ Եւ ես՝ Իկարոս, յորժամ տեսի զնաքանայ չարութիւն, գնացեալ թագաւորին իմոյ ասի։ Եւ ասէ թագաւորն առ Նաթան, թէ մի մերձենար յինչս Իկարայ։ Եւ ես ելեալ գնացի ի տունս։

Եւ Նաթան սկսաւ յիւր մտին չարիս գործել Իկարայ դպրի։

Գնաց Նաթան ի դուռն թագաւորին, գրեաց թուղթ մի դաղտ յանուն իմ և կնքեաց իմ մօհրովս և ղրկեաց փարաւոն թագաւորին, որ չար կամէր իմ թագաւորին՝ Սենեքարիմայ։ Եւ գիրն էր այսպէս. «Իկար իմաստասիրէս ողջոյն քեզ, փարաւոն արքայ։ Յորժամ գիրս առ քեզ հասանի, փութով առ զզօրքդ և եկ ի դաշտն Արծւոյ, որ օրն Իե լինայ հրոտից ամսոյն։ Առցես զՍենեքարիմայ թագաւորութիւն, առանց պատերազմի»։

Եւ Նաթան ընկէց դաղտաբար զթուխտն ի դուռն թագաւորին, և այլք գտին զթուղտն և տարան առ թագաւորն։

---

3 $E_{2,3}$ գնացման փխ ելման։

7 E_5 անել փխ առնել։

10 E_5 գնացի փխ գնացեալ։

11 A_3 նորա փխ Իկարայ։

15 A_3 քաղաքին փխ թագաւորին։

16—17 E_5 փարաւոնին փխ փարաւոն թագաւորին։

18 A_3 գրէր գիրն փխ գիրն էր։

21 A_3 առանց պատճառի և։

Եւ Նաթան դարձեալ թուղթ մայլ գրեաց յիմ թագաւորին բերնէն և առ իս ուղարկեաց: Եւ այսպէս էր գրեալ ի մէջ թղթին. «Խիկար, յորժամ թուխտս, որ ի քեզ հասնի, հեծել ժողավեա և եկ ի դաշտն Արծունեաց, որ օրն Իե լինայ հրոտից ամսոյն, և պատերազմեա հետ փարաւոնի, զի դեսպանք եկեալ են առ իս ի փարաւոնէ»:

Եւ տվեալ զթուխտն Նաթան առ հաւատարիմսն թագաւորին, և բերեալ զի թուխտն ետուն առ թագաւորն: Եւ տեսեալ թագաւորն զթուխտն, զահի հարեալ և ոչ գիտէր զինչ ասէր Խիկարայ: Յայնժամ Նաթան, որ դպիր էր թագաւորին, ասէ, թէ հայրն իմ Խիկար ոչ գիտաց զերախտիսն քո և զթագաւորութիւնդ կամի խափանել:

Դեսպանին հրամայեաց և բերին զԽիկար, բարկութեամբ հարցին զբան թխտին: Յայնժամ կապեցաւ լեզուս և գնաց իմաստութիւնս յինէն: Շատ լացի և ողբացի, թէ չունիմ խապար յայտ թխտերոյդ, և նոքա ոչ լսեցին, այլ հրամայեաց սպանանել զիս:

Յայնժամ Նաթան քէոորթին իմ կապեաց զձեռս իմ յետևս: Յառաջին խրատս իմ այս էր, թէ զարձակեալն մի՛ կապեր: Նա յառաջն զիս կապեաց:

Եւ աղաչեցի զթագաւորն, թէ տուր զիս յԱնբուսամաք զօրապետն, որ տանի զիս յիմ դուռն գլխատէ և զգլուխն իմ ձ կանկուն ի մարմնոյս հեռի թաղէ:

Եւ առեալ տանէին զիս: Եւ ես գաղտն խապար ղրկեցի Արբուստան կնոջն իմոյ, թէ Ի գուսան լալով բեր առաջի իմ, որ լան զիս: Եւ կինն իմ իմաստուն էր, արար զոր ինչ ասացի: Եւ արար պատիւ և արբոյց զամենեսեան, որք եկեալ էին յրսպաննումն իմ: Եւ անկեալ ամենեքեան՝ քնացան: Եւ ես՝ Խիկարս, կապեալ կայի երկաթով, զարթուցի զԱնբուսամաք զօրապետն, որ բերեալ էր զիս յսպանումն և աղաչեցի զնա և

1 $E_{4,5}$ *այլ թուղթ մի:*
2 E_1 *ղրկեաց փխ ուղարկեաց:*
5 $E_{2,3}$ *Քեսպանք փխ դեսպանք:*
13 $E_{2,3}$ *Քեսպանին:*
15 $E_{4,5}$ *ողորմացի փխ ողբացի:*
21 $E_{4,5}$ *յԱբուսամակ:*
25 A_3 *Աբուստան,* $E_{2,3}$ *կուսակ փխ գուսան:*
29 A_3 *երկաթի կապանօք փխ երկաթով:*
29—30 E_{3-5} *ընկերն իմ փխ զօրապետն:*

ասի. Գիտես եղբայր, որ ժամանակ մի թագաւորն քեզ բարկացաւ և ետ զքեզ ի չիս, թէ տար սպանէ զդա: Եւ ես տարեալ պահեցի զքեզ: Եւ յորժամ ղղջացաւ, ափսոսաց զքեզ և ասաց. Աւաղ զքեզ Աբուսամաք, կենդանի պիտէիր: Յայնժամ բերի զքեզ թագաւորին և բազում պարգևս առի ի նմանէ: Նոյնպէս դիր զիս գաղտ հօրն ի տան իմում, և ես ունիմ ինձ ծառայ մի մահապարտ և մարդասպան, և կու նմանի չիս: Հան զհալաւն իմ և հագո ծառային իմոյ և զարդո զօրքն քո և շուտով կտրեա զգլուխ ծառային իմոյ և տար թաղեա զգլուխն ճ կանկուն ի մարմնոյն հեռի:

Եւ արար Նաբուսամաք այնպէս և գնաց առ թագաւորն, թէ սպանի զԽիկար:

Յայնժամ ուրախացաւ Նաթան և գայր ի տուն իմ, ուտէր և ըմպէր և աղտեղէր զծառայքն իմ, յանկարգ և չար: Եւ կամէր չարիս գործել ընդ կնոջն իմոյ: Եւ ես ի հորն էի և լսէի ականջով իմով զձայն գուսանաց և զխաղուց և զպազշոտել կնոջ իմոյ, և ես մահ խնդրէի և ոչ գտանէի:

Լսեց փարաւոն արքայն, թէ Խիկար սպանեալ է, ուրախացաւ և գրեաց թուխտ Սեննեքարիմայ թագաւորին. «Ծանուցումն լիցի քեզ, որ կամիմ շինել դարպաս մի ի մէջ երկնից և երկրիս, անսուն և անգերան: Ղրկէ ինձ ճարտար և իմաստուն մէյմար, որ եկեալ շուտով կատարէ, և թէ ոչ ղրկես, բազում հեծելով գամ և աւերեմ զերկիրդ և զաշխարհդ և առնում ի քէն զհարկն»:

Յորժամ կարդացին զթուխտն առաջի Սեննեքարիմայ արքային, զարհուրեցաւ և կոչեաց զիւր իմաստունքն և զմեծամեծքն և ասէ. ԶԽիկար սպանեցաք, այլ ո՞վ կարէ տալ պատասխանի փարաւոնի: Ասացին մեծամեծքն. Արքայ, յափտեան կաց, կայ որդեգիր մի Խիկարայ Նաթան անուն, հանճարեղ և իմաստուն քան զԽիկար:

Կոչեաց թագաւորն զնաթան և ետուր կարդալ զթուխտն և ասէ. Կարե՞ս տալ պատասխանի փարաւոնի: Եւ ասէ Նաթան. Այդ անհնար է ի մարդկանէ: Յայնժամ տարակուսեալ թագաւորն և ասէ. Վայ մեզ, ոչ գիտեմք զինչ տամք պատասխանի փարաւոնի արքային: Լայր Սեննեքարիմ և ասէր. Աւաղ զքեզ:

7 E_{2-4} *մարդասպան զոր կապեալ կայ ի բանտին:*
11 $E_{4,5}$ *Աբուսամաք:*
19 E_{2-5} *արքային փխ թագաւորին,* A_3 *թագաւորին իմոյ:*

Ի բերան, Խիկար իմաստուն: Ինչ մարդ որ զբեզ կենդանի ինձ բերէր, կշռովն ոսկի տայի նմա: Եւ ասէ Աբուսմաք. Ով որ բերէ առաջի քո զԽիկար կենդանի, փոխանակ նորա սպանանես զնա: Եւ ասէ թագաւորն. Փոխանակ սպանանելոյն պատեմ զնա:

Եւ գնացեալ Աբուսմաք, հանեալ զԽիկար ի հորոյն և եբեր առաջի թագաւորին: Եւ յորժամ ետես թագաւորն զԽիկար կենդանի, յարեաւ աթոռոյն և անկեալ զպարանոցաւն, համբուրէր զնա և ասէր. Ով Խիկար, մեռեալ էիր և կենդանացար:

Եւ ուրախացաւ թագաւորն յոյժ և հրամայեաց ի օր զԽիկար պատւել և յետոյ բերեալ առաջի իւր և ետ կարդալ զթուխտրն: Եւ ասէ Խիկար. Մի վախեր, ով թագաւոր, ես երթամ տամ պատասխանի փարաւոնի արքային և առնում զհարկն և գամ:

Եւ ես՝ Խիկարս, ղրկեցի թուխտ առ Աբեստան կինն իմ, թէ բռնէ երկու ձագս արծւոյ և մանել տուր երկու պարան երկայն և բերել տուր Բ ծծկեր տղայ և բեր Բ կին, որ պահեն զտղայքն և ուսուցանեն տղայոցն կանչել, թէ կաւ, ծեփ և աղիւս բերէք, հանէք ի վեր: Եւ Բ տղայն յամէն օր կապեա ի վերայ ձագու արծւին և թոռ յօդն պարանով և իջո ի վայր, մինչև կատարեալ ուսանին զելանելն և զիջանելն: Եւ կինն իմ Աբեստան իմաստուն էր և փութով կատարեաց զհրամանս իմ:

Եւ ես առի հրաման ի թագաւորէն և գնացեալ առի զերկու ձագն արծւին և զերկու տղայն և եդի ի սնտուկն և ելեալ գնացի առ փարաւոն արքայն յԵգիպտոսի և իջայ ի տուն մի և թողի զսնտուկն ի տունն այն և գնացի առաջի թագաւորին:

Եւ ասէ փարաւոն. Ո՞վ ես դու և կամ ուստի՞ գաս: Եւ ես ասի. Աբիկամ է անուն իմ, և ղրկեաց Սեննեքարիմ արքայն կատարել զհրամանս քո: Եւ ասի. Բերեալ եմ ճարտարք, որ շինեն

1 A_3 *իմաստուն կենդանի պիտէիր:*
2 E_2 *Աբուսմաք ով թագաւոր:*
5 A_3 *գնա և մեծարեմ:*
13 $E_{2,3}$ *թագաւորին փխ փարաւոնի արքային,* E_5 *փարաւոնին փխ փարաւոնի արքային:*
14 A_3 *Աբուստան:*
16 E_5 *բերել տուր փխ բեր:*
20 A_3 *Ամբուստան:*
27 A_3 *Աբիկէ փխ Աբիկամ:*
28 $E_{4,5}$ *ես ասացի փխ ասի:*

դարպաս յօդս: Եւ ասէ փարաւոն. Ջի՞նչ են պետք ճարտարացն ի պէտս պարսպին: Եւ ես ասի. Բերել տուր կաւ, ծեփ, աղիւս: Եւ նոքա բերին:

Եւ ես գնացի կապեցի զերկու տղայն ի վերայ երկուց արծւուց ձագուն և թոռուցի դէպի յօդն: Եւ տղայքն աղաղակելով կանչէին, թէ բերէք կաւ, ծեփ և աղիւս, որ շինեմք դարպաս: Եւ ոչ ոք կարէր ինչ հանել ի վեր: Եւ ես առի գաւազան մի և ծեծեցի զօրքն փարաւոնի, և նոքա փախեան և անկան ի դարպասն փարաւոնի: Եւ ելեալ փարաւոն ետես զձագն արծւուցն և զձայն տղայոցն և զարմացաւ յոյժ և եմուտ ի դարպասն և ասէ յիւր մտին, թէ շատ իմաստուն է սա քան զԽիկար: Եւ ոչ գիտէր, թէ Խիկար է:

Եւ ասէ թագաւորն. Ստոյգ ասա ինձ, ո՞վ ես դու: Եւ ես ասի, թէ Խիկարն եմ: Եւ ասէ փարաւոն. Ով թշուառական, կենդանացա՞ր: Եւ ասէ փարաւոն. Ջինչ որ ասեմ, կատարեա: Եւ ասէ. Ջի՞նչ է այն, որ սիւնն ի վերայ սնի, մայրք երկոտասան ի վերայ մայրից, անիւք Լ ի վերայ անվից, սուրհանդակք երկուս. մինն սև և միւսն սպիտակ:

Ասէ Խիկար. Սիւնն տարին է, Բժ-ան մայրքն ամիսք տարւոյն է, Լ անիւքն աւուրք ամսոյն են, Բ սուրհանդակքն տիւն և գիշերն է:

Եւ ասէ փարաւոն. Մանեա ինձ պարան յաւազէ:

Եւ ես երթեալ ծակեցի զօրմն պատին, գէմ արեգականն: Եւ ի ծագել արեգականն, առեալ աւազ և փոշի, շփէի յերկու ափիս մէջն և տայի ի դէմս արեգականն, որ տանէր ոլոր, ոլոր ի ծակն ի ներս: Եւ ես կանչէի. Կծկեցեք շուտով զպարանն: Եւ զահի հարեալ փարաւոն, ապուշ մնայր:

Եւ յայնժամ փարաւոն պատուեաց զիս և ետ ինձ բազում խալիաթ և զհարկն թագաւորին իմոյ:

Եւ ողջունեցի զփարաւոն և ելեալ գնացի առ թագաւորն իմ Սեննեքարիմ, անկայ յոտս նորա և համբուրեցի: Յայնժամ ու-

2 $E_{3,5}$ *զարպասին փխ պարսպին:*
6 A_3 *աղաղակէին փխ կանչէին:*
9 A_3 *եկեալ փխ ելեալ:*
14 $E_{4,5}$ *փարաւոն ով Խիկար:*
19 E_3 *Սիրաք փխ Խիկար:*
24 A_3 *փչէի փխ շփէի:*
29 A_3 *թագաւորութեան փխ թագաւորին:*
30 E_5 *զփարաւոն արքայն:*
31 E_5 A_3 *առ ոտս փխ յոտս:*

րախացաւ արքայն, իբրև ետես զիս, և ասէ. Խիկար, զինչ խնդրես յինէն և տաց քեզ։ Եւ ես ասի. Իմ խնդիրքն այն է ի քէն, որ զՆաթան քեռորդին իմ, որ է ինձ որդեդիր և աշակերտ, տաս ի յիս, զի այլ ուսումն կայ, զայն ալ ուսուցանեմ և լինի կատարեալ։ Զառաջին խրատն իմ ոչ պահեաց ի մտի, զոր ուսուցի քաղցրութեամբ, հիմի ուսուցանեմ դառնութեամբ։

Թագաւորն ետ զՆաթան ի ձեռս իմ և ասէ. Զինչ որ քո կամքն է, զայն արա։

Եւ ես առեալ զՆաթան, երկաթի կապանօք տարայ ի տունս իմ և եդի ի պարանոցն նորա ՃԾ լիտր երկաթ և յանձնեցի զնա ի Բելիար ծառայն իմ և ետու թուխտ և թանաք և ասեմ. Ցելանելն իմ և ի մտանելն իմ, զինչ որ առնեմ Նաթանայ, գրեա՛ զամենայն։

Նախ և առաջի զարկի ի թիկունս Նաթանայ Ռ բիր և ասի.

1. Մարդոյ ականջն, որ ոչ լսէ, ի թիկունս ծեծելով լսեցուցանել պարտ է։

Հաց և ջուր կշռով տայի։ Ո՛չ մեռանէր և ո՛չ ապրէր։

Խօսեցաւ Նաթան և ասէ. Զի՞ ոխացար ընդ քեռորդոյ քում։ Եւ ես ասեմ.

2. Որդեակ Նաթան, յաթոռ փառաց նստուցի զքեզ, և դու յաթոռոյ իմոյ ընկեցեր և կործանեցեր զիս։

3a. Որդեակ, եղեր ինձ որպէս կարիճ, որ եհար զասեղն, որ ասեղին խայթոցն չար է քան զքոյդ։

Դարձեալ եհար զթաթ ըզտուն, և նա հարեալ զթաթն ի վերայ կարճին և սատակեաց զնա։

3b. Եւ դարձեալ եղեր որպէս զվայրենացեալ եղն, որ արկցէ զտիրոջ վարոցքն և վիրաւորի իւր ոտքն։

4. Որդեակ, եղեր ինձ որպէս այծն, որ ուտէ զտորուննն և ասէ. Ես ի կենդանութեանս ուտեմ զքեզ, թող յետոյ հանեն զտակ քո և ներկեն զմորթս իմ։

---

3 Fab զի եղեր, կարիճն այն, ծայրն փխ խայթոցն, գիւրն փխ գքոյդ, և դարձեալ իբրև զայն որ եհար գոտից (Fb չիք՝ իբրև զայն որ) փխ դարձեալ եհար զթաթ, որդեակ զի փխ և դարձեալ, եղեր ինձ, էարկ զտունն Fb զտորդն) և անկաւ վարոցն և վիրաւորեցաւ փխ արկցէ-վիրաւորի։

4 Fab կենդանութեան իմում, զքո քոքն (Fb արմատն), փխ զտակ քո։

5. Որդեակ, եղեր ինձ այն տգէտ մարդն, որ ձգեաց նետ յերկինս, թէպէտ ոչ կարաց հասուցանել, զանօրէնութիւն շահեցաւ։ Եւ դարձաւ նետն ի գլուխ իւր։

Նոյնպէս և դու կամեցար սպանանել զիս, այլ անմեղութիւն իմ ապրեցոյց զիս։

6a. Որդեակ, եղեր ինձ որպէս այրն այն, որ դողայր ի ցրտոյն, և այլ ոմն բերեալ պաղ ջուր, լնոյր ի վերայ նորա։

6b. Դու նոյնպէս կարծէիր, թէ զտեղի նորա լնում, բայց թէ իցէ ագի խոզին ինն կանգուն երկայն, զտեղի ձիուն ոչ կարէ լնուլ։

7. Որդեակ, եղեր ինձ որպէս արջն, որ հանդիպեցաւ իշոյ միոյ և ասէ. Ողջոյն քեզ, էշ։ Ասէ էշն. Այդ ողջոյնդ իմ տիրոջն պարանոցն, որ զիս արձակեաց ի մսրէն, որ քեզ հանդիպեցայ և տեսի զքո գէշ երեսդ աղտեղի։

8. Որդեակ, եղեր ինձ որպէս որոգայթ, որ թաղեալ կայր յաղբիսն։ Եւ եկեալ ճնճղուկն՝ ասէ. Զի՞նչ գործես։ Ասէ ականատն. Աղօթս առնեմ առ աստուած։ Ասէ ճնճղուկն. Զի՞նչ է այդ ի բերանդ։ Ասէ ականատն. Քաղցելոց հացիկ է։ Եւ վազեաց ճնճղուկն առնուլ զհատն յականատէն, և անկաւ ականատն ի վիզ ճնճղկին։ Եւ ասէ ճնճղուկն. Քաղցելոց հացն այդ է, ապա այդպէս լսէ աստուած աղօթից քոց։

9. Որդեակ, եղեր ինձ որպէս շունն, որ եմուտ ի հնոցն բրտին և յորժամ տաքցաւ, սկսաւ հաչել յերեսս բրտին։

---

5 $E_{4,5}$ որպէս յայն փխ այն տգէտ մարդն, Fab որպէս այրն այն փխ այն տգէտ մարդն, Fa նետ դէպ, հասուցանել այլ։

6 Fab որդեակ զի թէ ագի խոզին ունէն կանգուն երկայն լինի ի տեղի ձիոյն ոչ կարէ լինի փխ գու-լնուլ։

7 Fab որդեակ զի, արջն այն, ողջոյն ընդ, չիք՝ էշ, Fa պարանոցն լինի, Fb ի վիզն տեսաւն իմոյ եղիցի փխ իմ տիրոջն պարանոցն, Fab որ եկի և հանդիպեցայ քեզ, չար փխ աղտեղի։

8 Fab որդեակ զի, որոգայթն այն, կայցես ասա փխ գործես, հաց փխ հացիկ է, գհացն փխ գհատն, Fb նորա փխ ճնճղկին, $E_{4,5}$ ճնճղուկն թէ։

9 Fab որդեակ զի, շունն այն որ դողայր ի ցրտոյն, և մտաւ (Fb եմուտ) փխ որ եմուտ, ընդ երես փխ յերեսս։

10. Որդեակ, եղեր դու որպէս զայն ագահ շունն, որ ունէր հաց մի ի բերանն և երթայր յեզեր գետոյն։ Եւ տեսեալ շուն մի այլ ի մէջ գետոյն և հաց մի ի բերանն։ Եւ ձգեաց զիւր հացն ի բերանոյն և անկաւ ի ջուրն, զի առցէ զայնոր հացն, այլ ոչ շուն եգիտ և ոչ հաց։ Եւ զիւր ձգած հացն շուն մի այլ առեալ գնաց։ Ինքն խեղդեցաւ ի ջուրն և զրկեցաւ յիւր հացէն։

Նոյնպէս եղեր և դու. զիմ հագն խլել կամեցար և զրկեցար ի քո հացէդ։

Ասէ Նաթան. Մեղայ քեզ, հայր, այլ չի գործեմ զինչ գործեցի։ Մի՛ չարչարեր զիս և մի՛ հատուցաներ չար փոխանակ չարի։

11. Ասէ Խիկար. Ծառ մի բուսեալ էր յեզեր գետոյն, և մարդ մի ծառայէր նմա մինչ ի ժամ պտղոյն։ Եւ յորժամ հասանէր պտուղն, թափէր ի գետն և կորնչէր։ Եւ յորժամ մարդն եկեալ պտուղ խնդրէր, ոչ գտանէր։ Ը, Գ տարի զայս արար և ոչ շահեցաւ ի պտղոյն, յետոյ կտրեաց զծառն և ընկէց ի ջուրն և ասէ. Այսչափ երախտեացս մինչև հիմա զի՞նչ արիր, որ այլ համբերեմ նա զինչ տի անես։

Արժան ես այդ չարչարանացդ։ Ոչ կայ հնար ազատիլ ի ձեռաց իմոց, մինչև մեռանիս։

Ինչ մարդ, որ բարոյն չար հատուցանէ իբրև զնաթան, պիտի կորնչի աստ և ի հանդերձեալն։

---

10 Fab որդեակ զի, ինձ փխ դու, $E_{4,5}$ եաես փխ տեսեալ, Fab ջրին փխ գետոյն, բերան նորա, ձգեալ փխ և ձգեաց, $E_{2,3}$ եգիտ ոչ հաց, Fab հացն և իբրև հասաւ ի մէջ գետոյն (Fb եհաս), չիք՝ և զիւր—գնաց, Fb զրկեցար դու։
Fab և գարձեալ Նաթան ազաչանօք ասէ աս իս փխ ասէ Նաթան, չարաչար տանջեր փխ չարչարեր, չիք՝ և մի-չարի։

11 Fab և ես առացի ահա տամ քեզ օրինակ մի փխ ասէ Խիկար, զի որպէս ծառն այն որ բուսեալ էր յեզր գետի մերոյ, չիք՝ մինչև ի ժամ պտղոյն, և երբ գայր տէրն ոչ գտանէր զպտուղն և աշխատեցաւ այրն այն Բ և Գ տարի այլ ի հասանիլ պտղոյն թափէր ի ջուրն և ոչ շահէր ի նմանէ և ապա կտրեաց զծառն և ձգեաց ի ջուրն ասելով այսքան աշխատեցայ զինչ շահեցայ որ այսուհետև գտանեմ նոյնպէս և դու եղեր ինձ զի չառաջագոյն այսչափ խրատս տուի քեզ և ոչ լսեցեր այժմ զինչ պիտի լինիս արժանի ես յայդ չարաչարանացդ մինչև մեռանիս և ապանի գնա և բարձաւ չարն ի միջոյ և եղև խաղաղութիւն արդ զինչ մարդ որ բարւոյն չար հատուցանէ իբրև զնաթան կորնչելոց է յորմէ փրկեաց զմեզ Քրիստոս աստուած մեր և նմա (Fb շահեցայ մինչև ցայժմ, ես շահեցայց փխ գտանեմ, խրատ եաու, լուաք, ես չունիս լսել վասն որոյ փխ զինչ պիտի լինիս, մեռանիցիս, և ապա ապանի, փոխանակ բարւոյն, հատուցանէ փխ հատուցանէ, չարաչար մահուամբ կորնչի փխ կորնչելոց է, նմա փառք յաւիտեանս ամէն) փխ և յորժամ-հանդերձեալն։

ԽԱԻՍՔ ԽԻԿԱՐԻ՝ ԴՊՐԱՑՊԵՏԻ ԵՒ ԻՐԱՍՏՆԱՑՍԻՐԻ ՍԵՆԵՔԱՐԻՄԱՑ ԱՐՔԱՅԻ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԵՒ ՆԻՆՈՒԷԻ

(ՏԱՐԲԵՐԱԿ Ը)

Սա բացառիկ և արժեքավոր բնագիր է, հեռանում է հայկական ձեռագրության մյուս տարբերակներից։

Ունի միակ օրինակ. Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագիր № 5599, 1347 թվականի գրչություն, էջ 222ա—232բ։ Թղթի եզրերը մաշված են, որից բնագրի որոշ բառեր ջնջվել, կամ դարձել են անընթեռնելի։

Ձեռագրի 227ա էջի կեսից («Որդեակ, ի հետ խաբածի և ի հետ հարբածի») մինչև 228ա էջը լրիվ («Պարգևս մեծամեծս տաց քեզ») գրիչը փոխվում է։ Նույն երկրորդ գրչինն են նաև 229բ էջի կեսից («Ով է ի ձենջ, որ կարող է երթեալ») մինչև 230ա էջը («Խիկար, լուեալ է քո եթէ եգիպտացիքն ինչ յղեցին»)։

Ամբողջ բնագիրը գրված է կարմիր, իսկ 231ա—232բ էջերը՝ սև թանաքով։ Այս հատվածը թերևս ընդօրինակել է մի երրորդ գրիչ։

Բնագրի ջնջված կամ անընթեռնելի տեղերը փորձել ենք վերականգնել։ Մեր կողմից առաջադրվող որևէ ընթերցում առել ենք ուղղանկյուն փակագծերի մեջ։ Ուր բաց է մնում և հնարավոր չէր վերականգնել, նշել ենք բազմակետով (....)։ Այդ տեղերը ենթագրում են մեկից ոչ ավելի բառ կամ բառի հատված։

Բնագիրը ներկայացվում է հարազատորեն։ Թույլ չենք տալիս ուղղագրական, կամ որևէ այլ կարգի միջամտություն, բացի մի դեպքից. երբ գրիչն անտեղի աւ կապակցությունը արտահայտում է օ տառով (օրինակ. փարաօն, զօակ, մեռօ) փոխել ենք աւ-ի։ Գրությանն այդ ձևն ունի առաջին ընդօրինակողը։

Ուղղել ենք բացահայտ վրիպակները, խաթարված ձևերն իջեցնելով տողատակ։

222ա

ԽԱՒՍՔ ԽԻԿԱՐԻ՝ ԴՊՐԱՅՊԵՏԻ ԵՒ ԻՄԱՍՏՆԱՅՍԻՐԻ ՍԵՆԵՔԱՐԻՄԱՅ ԱՐՔԱՅԻ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԵՎ ՆԻՆՈՒԷԻ

Յամս Սեննեքարիմայ արքայի Ասորեստանի ես՝ Խիկար, դպրայպետ էի նմայ, Մինչ դեռևս տղայ էի, հրաման եղև ինձ, թէ որդի քեզ չէ հրամայած յաստուծոյ լինելոյ։ Եւ մեծութիւն յոյժ ստացեալ էր իմ։ Կ. կին առի և Կ. ապարան շինեցի և Կ. ամաց եղէ, և ոչ եղև ինձ որդի ի նոցանէ։

Յայնժամ ես՝ Խիկար, շինեցի բագինս մեծ, վառեցի հուր և արկի ի վերայ խունկս անուշահոտս և նուէրս, զոհեցի զոհս և մատուցի ընծայս և այսպէս ասէի յաղաչելն իմում. Ով տեարք իմ և աստուածք. Բէլշիմ և Միրշահմին, էշարիշէ և Իշմիշահ, եթէ հրամայեցէք[1] ինձ արու որդի, զի մի՛ անժառանգ մնացից, զի ահայ մեռանիմ, և զի՞նչ ասեն ինձ մարդիք. Աւաղ զքեզ Խիկար, դպրայպետ և [ի]մաստուն, մեռաւ և ոչ ոք է որդի, որ թաղէ զնայ և զաւակ, որ յիշատակ լինի նմայ։ Արդ, աղաչեմ զձեզ, տեարք իմ և աստուածք իմ, տու[ք] ինձ որդի արու, զի յորժամ մեռանիմ, արկցէ հող ձեռօք [իւր]ովք ի վերայ իմ։

Յայնժամ լուան նոքայ ինձ, և այսպէս բար[բա]ո լսելի եղև ինձ և ձայն յաստուածոցն իմոց, որ ասէին. Ով Խիկար [դպր]այպետ և իմաստուն, այս լսելի եղիցի քեզ, զի ի հետ մահ[ու քո, որպէս] ամենայն ինչ քո ի ձեռս մեր է, այլ չէ հրամայած քեզ յաստուծոյ զաւակ լի[նելոյ]։ Մի տրտմիր, զի ահայ Նադան քեռորդին քո, զի եթէ առցես և սնուսցես և արասցես զնայ քեզ յորդեգիրս, և նայ հատուսց[է քեզ] զանունդ քո և կարող է զամենայն ինչ ուսանել։

---

[1] Գրչի օրինակի մեջ եղել է ճրամայեցէք, բայց նա սխալվել է և գրել ճամարեցէք, ապա նկատելով՝ ճ-ի գլխին ավելացրել է ր, մոռանալով մյուս ուղղումը ևս կատարելու։ Այդպիսով բնագրում մնացել է ճրամարեցէք։

Եւ յորժամ լուայ ես՝ [Խիկարս] այս, կարդացի առ աստուած իմ և ասեմ. Ով աստուածք իմ և տեարք իմ, ես [ննջեց]ուցանեմ զնայ ի վերա բարձուց իմոց և ի ծոց իմ կրեմ զնայ, [զի] արկցէ[1] հող ձեռօք իւրօք ի վերայ իմ։ Զայս ծանուցանեն[, զի թէ] ‖ զամենայն աւուրս կենաց իւրոց ուտիցէ և
222բ ըմբիցէ, ինչ իմ ոչ պակասէ։

Եւ այլ ոչ եւտուն պատասխանի։

Եւ ես ըստ հրամանի նոցայ արարի։ Առի զնաղան քեռորդին իմ միամեայ, մինչ դեռևս տղայ էր։ Եւ ագուցի նմայ բհեզս և ծիրանիս և մանեակ[2] ոսկի ի պարանոց նորայ և իբրև որդի թագաւորի, շքեղաչուցի զնայ և ձեռօք իմովք արբուցանէի նմայ կաթն և կոչեցի սնուցանողս, որ սնուցանէին զնայ եղով և մեղրով և շաքրով, և ննջեցուցանէի զնա ի վերայ ծնկաց իմոց, արծուաց և աղաւնեաց։ Եւ սնաւ քեռորդին իմ և զուարճացաւ։ Եւ ուսուցի նմայ դպրութիւն և զիմաստութիւն և զհանճար և զգիտութիւն։ Եւ իբրև եկն արքայ, ուստի երթեալն էր, ասէ ցիս արքայ. Ով Խիկար դպրայպետ և իմաստուն խորհրդակից իմ, յորժամ ծերասցի[ս] և վախճանեսցիս, ո՞վ պահեսցէ զիս։ Խօսել սկսայ ես՝ Խիկար, և ասեմ. Արքայ, յաւիտեան կաց, է իմ քեռորդի մի իմաստուն և հանճարեղ, և զդպրու[թիւն] իմ առաւել դիտէ, քան զիս։ Ասէ արքայ. Ած զնայ առ իս և ցուց ինձ, զի զքեզ արձակեցից, զի հանկըստեամբ վարեսցես զծերութիւն քո ի տան քո, մինչև ժամանակք քո լցին կենաց։

Յայնժամ տարայ զնաքդան քեռորդին իմ առաջի արքային։ Տէր իմ այսպէս ասէ. Օրս այս յաւուրս օրհնեալ եղիցի, զի ի կենդանութեան իւրում էած կացուց Խիկար զորդի իւր [առ]աջի իմ, և ինքն ի հանկըստեան եղիցի, զի ի վաստակոց որ առ իս՝ [ք]արւոյ կատարեցաւ։

Եւ առեալ զնայ արքային և արկ ի վերայ նորա ...նկս և այսպէս ասաց. Զի Խիկար զորդի իւր կացուց ի դրան իմ[ում ի] կեանս իմ, և զինքն հրամայեցի ի հանկիստ։

Եւ ես՝ Խիկար, փառաց [կ]այի, երկիր պագի և ոչ դադարէի յուսուցանելոյ զորդին իմ, մինչև [յագե]ցուցի զնայ ուսմամբ, իբրև հացիւ և ջրով։

Եւ յուսուցանել նմայ [իմում] և ասէի ցնայ խրատ.

1. Որդեակ, եթէ լսես բան ինչ ի դրան ար[քունի], մեռոյ և թագոյ զնայ ի սրտի քում և մի՛ մոռասցիս և կամ ի վեր հա[նիցես]։ Գուցէ հանդիպեսցի ի թագաւորէն քեզ տանջանք և բանդ։

2. ‖ Որդեակ, մի՛ լիներ շտապկոտ, իբրև զնշենի փութոտ,
223ա սանիցես, մի՛ ումեք ասասցես։

3. Որդեակ, զկապ կնքեալ մի՛ արձակեսցես և զարձակեալն մի՛ կապեսցես։

4. Որդեակ, եթէ հայեսցիս և տեսանիցես գեղեցկացեալս և ծարուրեալս, սանդրեալս և պաճուճեալս, մի՛ ցանկանայցես ի սրտի քում, զի թէ զամենայն ինչս և զգանձս քո վատնեսցես և աւելի ի նմանէ ինչ ոչ գտանիցես, բայց միայն զմեղս և զանօրէնութիւն շահեսցիս և պատիժս սաստիկս յաստուծոյ և ի մարդկանէ։

5. Որդեակ, մի՛ լինիր[1] շտապկոտ, իբրև զնշենի փութոտ, որ յառաջն ծաղկէ և յետոյ [հ]ասանի պտուղ նորայ, այլ լեր որպէս թթենի, որ յետոյ ծաղկէ և յառաջ ուտի պտուղ նորայ։

Այլ եղիցիս դու հեզ և հանդարտ ի [գ]ործս գնացից քոց, և բարի լիցի քեզ։

6. Որդեակ, ցածոյ զաչս քո և կակղացոյ զբարբառ քո և նայեա ընդ ակամբ և մի՛ երևեսցիս մարդկան անբսգամ, զի թէ աղաղակաւ տաճար շինուէր, էշն աւուրն Զ ապարան շինէր և եթէ ի սաստիկ զօրութենէ և ի խիստ [ուժովն] եղինք վարէին, ապայ լուծ և արօր ոչ պակասէր ի պարա[նոցէ] ուղտուց։

7. Որդեակ, լաւ է ընդ իմաստնոյ քարինս կրել, քան ընդ[դ առ]ն յիմարի և անբսգամի խմել գինի։

8. Որդեակ, հեղցես զգինի յ[ոտս] արդարոց և մի՛ ըմբեսցես զնայ ընդ անօրէնս և ընդ ան[բսգ]ամս, զի մի իբրև զնոսայ անբսգամ և անմիտ կոչեսցիս։

9. Որդեակ [ընկ]եր լեր մարդոյ իմաստնոյ և իմաստնասցիս իբրև զնայ [և մի՛ ը]նկեր լինել մարդոյ անօրինի, և չար լինիցի քեզ։

10. Որդեակ [մի՛ աս]եր չար զումեքէ, բայց եթէ ասիցես՝ չարարարին ա[սես]։

11. Որդեակ, մի՛ բազմայխօս լինիցես[1] առաջի տեառն քո, զի մի յան[դիմ]անեսցեն զքեզ։

---

[1] Ձեռագրում՝ արկոցէ։

[2] Ձեռագրում՝ մանակ։

[1] Ձեռագրում՝ լինիցե։

12. Որդեակ, մի՛ թէ առաքեն զքեզ ուրեք, և դու [ոչ] գիտիցես և զկնի զայլ ոք առաքեն, և դու ծաղր լինի[իցես]։

223բ 13. ‖ Որդեակ, յաւուր մատաղաց, կամ պատարագաց մի՛ ագահ երևեսցիս, զի ոչ հաճի աստուած, և ի մարդկանէ անարգանս առնուս։

14. Որդեակ, մի՛ թողուր զլալիսն և գնալ ի հարսանիսն, զի ամենեցուն մահ առաջի կայ։

15. Որդեակ, յորժամ ի կոչնայտունս մեծարիցիս[1], մի՛ նստցիս բարձր քան զընկեր քո, քանզի ասիցեն քեզ, թէ յարի աստի, և բազում տրտմութիւն գայ քեզ։

16. Որդեակ, ձի, որ չէ քո, մի՛ հեծանես, զի բազումք արհամարհեն զքեզ, որք ճանաչեսցեն։

17. Որդեակ, մատանի, որ չէ քո, մի՛ դներ ի մատին քո և անդերձ[2], որ չիցէ քո, մի՛ ագաներ բեհեզս և ծիրանիս առտարս, զի ծաղր արասցեն տեսողքն։

18. Որդեակ, զքո մասն կեր և ընկերին մի՛ աչս արձակեր և զհաց ընկերի քո մի՛ ուտիցես, որ չէ քո, և ոչ լինիս քա[ղց]ած։

19. Որդեակ, այր, որ խիստ է քան զքեզ, մի՛ հակառակիր ընդ նմայ և մի՛ լին[իր] թշնամի մարդոյ, որ ուժով է քան զքեզ, զի մի՛ խորհեսցի քեզ չարութիւն, և բարի լինիցի քեզ։

20. Որդեակ, չնչեայ զչարութիւն ի սրտէ քումէ և զոխս [և] զխռովութիւն հան ի սրտէ, զի սերմն չար է և չար ծնանի։

21. Որդեակ, եթէ բ[ար]ձր է շեմք տան քո, իբրև կանկունս է, յորժամ մտանես, խոնարհեց[ոյ] զգլուխ քո և ապայ՝ մտանիցես, եթէ չհանդիպեսցի ցածայգոյն և դ[իպ]եսցի ընդ երեսս քո։

22. Որդեակ, մի՛ առնուր կշիռով մեծաւ և տալ փոքրովն և [ասաս]ցես ի սրտի քում, եթէ շահեցայց և ինչք յաւելուն ի տան իմոյ, [զի] անօրէնութիւն և չարիք են։ Գուցէ հայեսցի աստուած յերկնից և տեսանիցէ [զ]քեզ և դարձուցանիցէ զերեսս իւր ի քէն և իբրև յանօրինէ և յամբար[տաւանէ] երկինք և երկիր չեն բաւական տանել դատաստան ի քո։

23. Որդեակ, մի [երդնուց]ուս սուտ յաստուածս և ստիցես, թէ՝ յօրաց քոց պակասէ։

24. Որդեակ, եթէ խնդ[րեսց]ես ինչք յաստուծոյ, զբանիւք նորայ մի՛ յանցանիցես։

[1] Ձեռագրում՝ մեծարիցի։

[2] Ձեռագրում՝ անդրեռն։

25. Որդեակ, պահեայ զպատ[ուիր]անս աստուծոյ և զօրենս և մի՛ մոռանար և մի՛ մեղանչէր, և բարի լինիցի քեզ։

26. Որդեակ, [ընդ բ]ազմութիւն որդոց քոց մի՛ խնդասցես և ընդ պակասիլն նոցայ մի՛ [տրտմեսցես, զ]ի որդիք և ստացուածք յաստուծոյ շնորհին, զի մեծն աղքատանայ և խո[նարհն] բարձրանայ և բարձրն խոնարհի։

224ա 27. Որդեակ, զհետ անդաստանաց ‖ քոց և ստացուածոց մի՛ աշխատիր, զի ստացուածք և մեծութիւնք յաստուծոյ շնորհին։

28. Որդեակ, թէ ընկերն քո հիւանդանայ, մի՛ ասեր թէ դինչ տարայց նմայ, [այ]լ ե՛րթ ոտիւք և տե՛ս աչօք և բանս քաղցունս ասայ նմայ, զի լաւ է, քան թէ Ծ. քանքար ոսկոյ տարցես նմայ։

29. Որդեակ, մի՛ հեղցես զարիւն մարդոյ ի տարայպարտուց, զի մի հեղցեն զարիւն քո փոխանակ արեան նորայ, լ շար լինիցի քեզ առաջի աստուծոյ և մարդկան։

30. Որդեակ, պահեայ զլեզու քո ի չարայխօսութենէ զձեռն քո ի գողութենէ և զաչս քո յարատ հայելոյ, զի որ գողանայ ոսկի և կամ[1] միրգ, վրեժ պատուհասին մի է։

31. Որդեակ, մի՛ շնասցես ընդ կնոջ աղուհացկերի քո, զի մի տեսանիցէ աստուած և բարկանասցէ ի վերայ քո և արկցէ ի սիրտ այլոց, և շնասցեն ընդ կնոջ քո, և դու տրտիս։

32. Որդեակ, զխորհուրդ քո ընդ կնոջ խորհիչիր, բայց զգաղտնիս քո մի՛ յայտներ նմայ, զի կարճամիտ է և փոքրոգի, ոչ կարէ ծածկել զբանս ի սրտի, յայտնէ կարևորաց իւրոց և եղբարց և տայ ծեծել զքեզ։

33. Որդեակ, որ լսիցէ զբանս իմաստնոց և պահիցէ ի սրտի իւրում, այնպէս է, որպէս թէ գտանիցէ ջուր ցուրտ և զովանայ և ըմբիցէ ընդ կամս իւր։

34. Որդեակ, յաւուր չարի մի՛ հայհոյեսցես զաստուած, գուցէ լսիցէ և բարկասցի ի վերայ քո։

35. Որդեակ, մի՛ սիրեսցես զծառայս քո առ[աւ]ել, քան զընկերս քո, զի ոչ գիտիցես, թէ ո՞ր պիտանի լինիցի քեզ ի նոցանէ, և մի՛ սիրեր զորդի քո առաւել, քան զծառայն։

36. Որդեակ, լաւ իցէ ծառայ, [որ] միամտութեամբ և ողջքանօք տայ պատասխանի տեառն իւրոյ, քան որդի, [թէ] մեծայմեծս խրոխտալով խօսի և ածէ ի բարկութիւն և թէ քան

[1] Ձեռագրում՝ մամ։

[մեծ]այմեծս մատուցանիցէ պատուական խորտիկս և բազմայզանս?։

37. Որդեակ, որ մեղանչիցէ տեառն իւրոյ և երթայ առ այլս[1] յաշխարհի, հան[գիստ մի] գտցէ։

38. Որդեակ, շուն, որ զորսն ինքն ուտէ, կերակուր գայլոց եղիցի։

39. [Որդեակ], զդատաստան քո ուղեղ կտրեցեր և բարեաւ հասցես ի ծե[րութիւն]։

40. Որդեակ, ցածոյ զաչս քո և կակղացոյ զբարբառ քո, զի ագի շանն [հաց բերէ] ‖ և բերանն՝ բիր։

224բ 41. Որդեակ, մի՛ պանծար ի մանկութիւն քո, զի մի կորուսցէ զքեզ։

42. Որդեակ, մի՛ տալ թոյլ ընկերին կոխել զոտն քո, զի մի համարձակիցի կոխել զպարանոցդ։

43. Որդեակ, մի՛ լինի կարի քաղցր, զի մի կլանիցեն զքեզ և մի՛ կարի դառն, զի մի թքանիցեն, այլ լեր հեզ և հանդարտ ի գործս գնացից քոց։

44. Որդեակ, հարց զայր իմաստուն բանիւք իմաս[տ]նոք և փութով իմաստնասցիս։

45. Որդեակ, մարդ, որ մեծայատուն է և ունի ինչս բազումս, նայ առատ է, և ամենայն ոք պատուէ զնայ։

46. Որդեակ, որ ոչ ունի ինչս, աղքատ է, անարգ և անմիտ, և ոչ ոք պատուէ զնայ։

47. Որդեակ, եթէ կաշառ ոք[2] դատաւորին տայ, պատուհասի յաստուծոյ, զի զաչս դատաւորին կուրացուցանէ կաշառն։

48. Որդեակ, կերայ դառն ինչ և արբի լեղի և ոչ էր դառն, քան զաղքատութիւն։

49. Որդեակ, բարձի աղ և բարձի առճիճ և ոչ էր ծանր, քան զպարտքն։ Որ պարտի ոք, զի թէպէտ ուտէ և ըմբէ, ոչ կարէ հանկչել, զի այնպէս ծանրացաւ ի վերայ, որ պարտ իցէ ոք ումեք։

50. Որդեակ, բարձի երկաթ և բարձի քար և ոչ ծանրացաւ ի վերայ իմ, իբրև առն, որ բնակեալ է ի տան աներոջ իւրոյ։

51. Որդեակ, մեծայատանն որդին աւձ եկեր, ասեն դեղ է նմա, աղքատին որդին եկեր, ասեն առ սովին եկեր։

---

[1] Ձեռագրում՝ այրս։

[2] Այս բառից հետո բնագրում ավելորդ կրկնվում է՝ եթէ։

52. Որդեակ, եթէ ա[ղք]ատ ես և ի մէջ աղքատաց բնակեալ, մի՛ ասեր, թէ աղքատ եմ ես, [զի] մի արհամարհեսցեն զքեզ և լինիցի սիրտ նոցայ իբրև... ջեռուցեալ, զի թէ հարկանես զայր անմիտ բրօք բա[զմօք], ոչ առնու ի միտ։

53. Որդեակ, եթէ առաքես ուրուք պատգա[մաւոր] զայր իմաստուն, մի՛ յաճախել պատուիրել նմայ և եթէ զ[այր ան]ըզգամ և անմիտ առաքես, առաջի երկուց և երից վկայ[ից պատուիրեա], կամ դու քեզեն երթ և ղնայ մի առաքել, թէ չէ վնասս բ[երէ զքեզ]։

54. Որդեակ, ուսոյ զորդին քո ի քաղց և ի ծարաւ, զի ըստ
225ա սով‖որութեանն վարեսցեն զկեանս իւրեանց, զի որկորքն ոչ ժուժէն, յորժամ ոչ գտանեն։

Եւ յորժամ փորձես զորդին քո, ապայ տացես զինչս քո ի ձեռս նորայ։

55. Որդեակ, ի կոչնայատանէն և ի հարսանաց քան զընկերս քո յառաջագոյն հրաժարեայ և այլ մի՛ դարձցիս յետս, եղով անուշիւ օծանիլ, ապայ թէ յետս դարձար, գուցէ առնուցուս գանս և վրէժս ի գլուխ քո։

56. Որդեակ, այր, որ խիստ է քան զքեզ, մի՛ հակառակիր ընդ նմայ, գուցէ առնուցու զքեզ և դիցէ յորմ անդր։

57. Որդեակ, ընդ մարդոյ, որոյ որդիք և ինչք ստացուածք շատ է, մի՛ կռուիր։

58. Որդեակ, սիրեայ զկին քո, զի մարմին քո է և կցորդ կենաց քոց և մայր որդոց քոց և յոյժ աշխատի սնուցանել զորդիս քո։

59. Որդեակ, զեղբայր քո առաւել սիրեայ, քան զամենիսեան, զի յոյժ պիտոյ են քեզ։

60. Որդեակ, եթէ առաքեսցէ տէր քո բերել սպտուր, խաղող մի՛ բերել նմայ, զի զխաղողն ուտէ և պպատուհաս սպտրին ոչ թողու։

61. Որդեակ, լաւ է բանք իմաստնոյ յարբունոյթ, քան մարդոյ անմտի և անրզգամի ի ծարաւութ։

62. Որդեակ, [ամ]ենևին մարդոյ երեշխաւոր մի՛ կենաս, զի եթէ չլսես ինձ, մո[ր]տդ? ցաւի և յետոյ վճարես և յոյժ տրտմիս։

63. Որդեակ, լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք, զի կուրն արագ ուանի զերթևեկ ճան[ապ]արհին, իսկ կոյրն մտօք թողու զղորդ ճանապա[րհ և] երթայ ընդ կամայկորն։

64. Որդեակ, լաւ է կնոջ, թէ յորժամ [ծնանի]ցի՝ մեռցի, քան արտաքոյ տրամեցուցանէ զնոսայ և ...ուին այնոցիկ, որ անուցանեն զնոսայ։

65. Որդեակ, լաւ է ծառ[այ հաւ]ատարիմ, քան որդի ապատ և ճշմարտութիւն ի նմայ [ոչ գոյ]։

Լաւ է բարեկամ մերձաւոր, քան եղբայր հեռաւոր։

66. Որդեակ, [լաւ է ա]նուն բարի, քան տեսակ ցանկալի, զի գեղեցկու[թիւն ապ] ‖ ականի և անուն բարի յաւիտեան մնայ։ 225բ

67. Որդեակ, լաւ է մահ, քան զկեանս։

Լաւ է ձայն լալոյ, քան զձայն հարսանեաց։

68. Որդեակ, լաւ է կող մի ի ձեռին քո, քան երբուծ մի յայլոյ ձեռին։

69. Որդեակ, լաւ է ուլ զենած ի տան քո, քան զուարակ յայլոյ տան։

70. Որդեակ, լաւ է ճնճղուկ[1] մի ի ձեռին քո, քան թէ Ո՛. ընդ երկինս թռուցեալ։

71. Որդեակ, լաւ իցէ մարդոյն այնմիկ, եթէ իցէ ի վերայ ձիւն, սառն և սոսուռ, քան եթէ մերձեսցի ի կին անբսգամ և լեզուանի և բամբասող։

72. Որդեակ, զայս գիտասջիր, զի թէ դադարեսցեն գետք ի գնացից և կամ արեգակն յընթացից և կամ սպիտակասցի ագռաւ իբրև զաղաւնի և կամ քաղցրասցի լեղի իբրև զմեղր, նոյնպէս թողջէ անբսգամն զանբսգամութիւն իւր և անմիտն սգաստասցի[2]։

73. Որդեակ, մի՛ տացես զինչս քո առանց մուրհակի և վկայի, զի մի յետոյ զղջասցիս։

74. Որդեակ, եթէ կամեսցիս իմաստուն լինել, յորժամ ի մէջ ընկերաց ըմբես զինի, մի՛ շատասխոս լինիր, ուկն դիր, զի ի բազում խօսից կռիւ լինի և կռուեն սպանութիւնք։

75. Որդեակ, ի բարեկամաց քո[ց] մի՛ հեռենար, զի գուցէ այլ ոչ ևս լինիցին ըստ սրտի քում։

76. Որդեակ, եթէ առաքէ զքեզ տէր քո ուրեք, եթէ մեծ իցէ բանն, մի՛ հա[տցես] ի բանիցն և եթէ փոքր է, մի՛ մեծացուցաներ, զի գուցէ [ո]չ ևս լինիցին ըստ նմանութեան, և մի՛ յաւելցես ի խաւսս։

[1] Ձեռագրում՝ ճճճուկ։

[2] Ձեռագրում՝ ստաստասցի։

77. Որդեակ, պատուեայ զհայր քո և զմայր և ի բարութիւն որդոց ք[ոց խնդ]ասցես։

78. Որդեակ, ի պարտեզ թագաւորաց մի՛ մտանէր և [ընդ] կնոջ դատաւորաց մի՛ խօսիս։

79. Որդեակ, լաւ է թէ գողասցին [զինչս ք]ո, քան թէ գոցի ի վերայ քո գողութիւն։

80. Որդեակ, եթէ [տեսան]ես զծերն, պատուեայ զնայ և յոտն կաց առաջի [նորա], և այլք զնոյն քեզ արասցեն։

81. Որդեակ, մարդոյ, որոյ ‖աստուած յաջողեալ է, նոյնպէս և դու պատուեայ զնայ։ 226ա

82. Որդեակ, մի՛ հակառակիր[1] ընդ մարդոյ յաւուրս նոցայ և մի՛ ընդ գետոյ՝ ի յորդութեան նորայ։

83. Որդեակ, ակն մարդոյ ագահ է. ոչ լցցի գանձով, մինչև լցցի հողով։

84. Որդեակ, մարդոյ կին մի՛ խօսեսցիս, զի եթէ շար ինչ լինիցի, անիծանեն զքեզ և եթէ բարի՝ ոչ յիշեն զքեզ։

85. Որդեակ, մի՛ յաճախեր ի տուն բարեկամի քո, զի մի ատիցեն զքեզ, և ինքն ընդ ինքն տրտընջեսցէ։

86. Որդեակ, շուն, որ թողու զտէր իւր և գայ զհետ քո քարեամբք հալածեայ զնայ։

87. Որդեակ, օրէնք և պատուիրանք և հաճուքն աստուծոյ գործք բարիքն են։

88. Որդեակ, ի մարդոյ ամօթոյ, իբրև յաստուծոյ, երկիր և ամաչեայ։

89. Որդեակ, խորհրդոց բարեաց ցանկացիր, զի մարդիք տեղիք չարութեան են։

90. Որդեակ, համբերութիւն ծերոց հիմն է։

91. Որդեակ, զոր ինչ քեզ շար թուի, ընկնիրն քո մի՛ առներ։

92. Որդեակ, մի ոք տեսցէ զքեզ, զի գործես զան[ար]ժանս։

93. Որդեակ, սիրեայ զճշմարտութիւն և ստութիւն իբրև զմահ տես։

94. Որդեակ, վկայք շար բանք ստութեան քո են։

95. Որդեակ, գեղ կնոջ քո մի՛ հնազանդեցուսցէ զքեզ, այլ խորհուրդ նորայ.

96. Որդեակ, ի մարդոյ լեզուանոյ փախիր և ստոց, զի ագահութիւն և ստութիւն մահ է չարեաց։

[1] Ձեռագրում հակառիր։

97. Որդեակ, ի մէջ երկուց կռուողաց մի՛ [մ]տանիցես, զի մի ի զուր մեռցիս, կամ ձաղեսցիս և պատու[հաս]եսցիս, փախիր հեռի։

98. Որդեակ, զդատաստանս անիրաւու[թեան] մի՛ սեր-մանեսցես, զի մի տրտմութեամբ հնձեսցես։

99. Որդեակ, յոր[ժա]մ ի դատաստան գնաս, առաջի դատաւորին ցասմա[մբ] մի՛ խօսիցես և մի՛ աղաղակ բառնար, թէ չէ ասեն ց[քեզ.] Այդ լեզուիդ ի դէմ ով կենայ և տռա-յովն զչլն...?

100. Որդեակ, ընդ քո խամին ի ճանապարհն դատես[ցես։
226բ թէ] ‖ սուտ լինիցիս, մեղայ ասայ նմա, ապայ թէ ոչ լսես, տարցէ զքեզ առաջի դատաւորին, և դիցեն զքեզ ի բանդ, և անդի ոչ ելանիցես։

101. Որդեակ, մարդոյ, որ ի սպանումն տանին և կամ յաւազակաց՝ ի կախումն, առաջի նորայ մի՛ գնար, թէ չէ ասէ եթէ իմ ընկեր է և մեծ վնաս բերէ քեզ։

102. Որդեակ, ի գիշերի առանց զինու ի ճանապարհ մի՛ ելանել, զի ոչ գիտես, թէ ի ճանապարհի ի թշնամեաց քոց պատահեսցին և ելանիցեն ընդ առաջ քո և վնաս բերեն քեզ։

103. Որդեակ, յորժամ ի շեն ուրուք կամիցիս մտանել, մինչ դեռ[1] ձեր տունն լինի, առջև հաց կեր, զի թէ հարսանիս լինի, ի խնդոյն պետ չառնեն քեզ և կամ մահ լինի՝ ի տրտմու-թենէն։

104. Որդեակ, ի զատարան լաւ է գնալ և ի հեռի, քան ի գետն և ի մոտ։

105. Որդեակ, բուք օրն ի ճանապարհ մի՛ ելանել, զի ո[չին]չ վտանկեսցէ զքեզ։

106. Որդեակ, ընդ կրակն մի՛ վանիր ու ասէ [ե]թէ կու-մաշ հանեմ, թէ ոչ՝ մեծ որոգայթ լինի և մահ։

107. Որդեակ, [ն]որ դատաստան մի՛ սերմանիցես անի-րաւութեամբ[2], զի մի՛ տրտմ[ու]թեամբ հնձեսցես, թէպէտ և յաղթող ես։

108. Որդեակ, ի շահս չարեաց մի՛ [գն]ասցես և գողոց ականջ մի՛ դնես։

109. Որդեակ, զչարայխօսութիւն [զ]ումեքէ մի՛ լուիցես, զի սուտ է նայ։

---

[1] Ձեռագրում՝ ինչո, վերջին տառի (ո) վրա պատիվ է դրված։

[2] Ձեռագրում՝ արիրաւութեամբ։

110. Որդեակ, մի՛ յափտակիր [չա]րէ և մարդոց ստոց, որ աղտեղացուցանէ զսիրտս [իմ]աստնոց։

111. Որդեակ, երկնչելն աստուծոյ բարի է, և չերկնչելն՝ մահ է և կորուստ։

112. Որդեակ, խրատ առջիր ամենայն մարդոյ [և կոչես]-ցիս իմաստուն և ոչ եթէ որոյ պարտ միայն իցէ, [որո]ւմ չեն արժանի. թէ կոչեսցի նայ իմաստուն, այլ [մարդոյ] իմաստ-նոյ, որպէս սրով սպանանէ զանմիտն?։

227ա 113. ‖ Որդեակ, խափանելն զչարն առաւել քաջութիւն է։

114. Որդեակ, որ ընդարձակ է մտօքն, պայծառ է քան զարեգակն և վայելուչ։

115. Որդեակ, որ ագահ է, ոչ ատտ շահի և ոչ ի յաստուծոյ դատաստանին, այլ զտանջանսն կրիցէ։

116. Որդեակ, որ ծաղր առնէ զաղքատն, ինքն շուտ հա-սանէ յաղքատութիւն, և նայ ոչ է առաւել քան զնայ։

117. Որդեակ, եթէ կամեսցիս ինչս տալ մարդոյ, մի՛ յա-ռաջ պարծիր։

Եւ զոր ինչ կամիս գործել և յետոյ չկարես վճարել և գոր-ծել, ծաղր լինիս ամենեցուն։

118. Որդեակ, եթէ նստեալ իցես ի մէջ ընկերաց, ըմբես գինի, մի՛ շատախաւս լինիլ։

119. Որդեակ, ի հետ խաբածի և ի հետ հարբածի մի՛ ա-սեր, թէ չեմ քո։

120. Որդեակ, ամբարտաւութեւին մարդոյ անարգէ զնա, և խոնարհութիւն՝ բազում առնէ զպաքն։

121. Որդեակ, մեծով գինի մի՛ խմեր, թէ չէ վնաս լինի քեզ և փոխիս յառողջութենէ։ Գովեն ոչ զքեզ, այլ բամբասեն։

Այս ուսումն է, զոր ուսուցի ես Նայդանայ քեռորդոյ իմոյ, թէ պահեսցէ և կացէ ի դրան արքունի։ Եւ զայս ոչ լուայ, եթէ Նայդան զբանս իմ ոչ պահեաց, այլ երան երետ, այլ որպես հողմ փոշի։

Եւ այսպէս ասէ Նադան, թէ Խեկար հայր իմ ծերացեալ և հասեալ կայ յափն գերեզմանի, [քան]զի անցեալ միտքն և կորուսեալ են իմաստք նորա։

Եւ սկս[աւ] վատնել և կորուսանել զինչս իմ, ոչ խնայէր ի ծառայ[ս] իմ և յաղախնայս։ Եւ զսիրելիսն իմ սկսաւ տանջել և [չար]չարել առաջի իմ և զձիս իմ և զջորիս իմ և զընտիր [ընտ]իրսն զուգեաց, զոր լաւն էր, զամենայն հատոյց։ Եւ ես

իբրև տե[սի], եթէ Նադան քեռորդին իմ զբանս իմ այլայլեաց,
227բ [խնայ]‖եցի չինչս իմ, զի մի կորիցէ։

Խաւսել սկսա և ասեմ ցՆադան. Որդեակ իմ, չինչս իմ մի՛ մերձենար, զի գրեալ է Սողոմոն իմաստունն յառակսն և ասացեալ, թէ ձեռք, որ ոչ է վաստակեալ, ակն մի՛ խնայեսցէ։

Եւ այս ասացեալ առաջի արքային իմոյ, զի երթեալ պատմեցի ես նմա։ Յայնժամ ասէ արքայ ցՆադան[1]։ Մինչև հայր քո խիկար կենդանի է, չինչս նորա մի մերձենար։

Եւ յայնժամ Նադան՝ քեռորդին իմ, բարկացաւ յոյժ և չոգաւ ի դուռն արքունի և չար ի սրտի իւրում խորհէր և գրեաց թուղթ այսպէս. «Ես՝ Խիկար, դպրապետ Սինաքերեմայ՝ արքայի Ասորեստանի և Նինուէի, պարսից արքայի՝ Փարաւոնի, ողջոյն։ Յորժամ հրովարտակս առ քեզ հասանի, փութով առցես զզօրս քո և հասցես յառաջ իմ յԱսորեստանիս, և զթագաւորութիւնս տաց քեզ առանց կռուի և պատերազմի»։

Եւ դարձեալ գրեաց միւս այլ թուղթ առ հայրն իւր Խիկար. «Ի Սենէքարիմայ արքայէ ողջոյն առ Խիկար դպրապետ և իմաստուն։ Ընթեռնուլ հրովարտակիտ իմոյ, գումարեսցես զզօրս իմ զամենայն և յորժամ մերձեցայց ես առ քեզ, կարգե[ս]ցես ճակատեսցես զօրս, որպէս այն եկեսցեն ի պատերազմ, [քանզի] դեսպան[2] եկն ի փարաւոնէ առ իս, թէ եկ ի պատերազմ, որ զիր[ս] տեսանեմք»։ Եւ ետ բերել զթուղթն ի հաւատարիմս թագաւ[որին]։ Եւ կացուցին զնայ առաջի իմ, և ինքն Նադան կայր առ[աջի] արքայի, և զզօրքն ամենայն խնդրէին ի տունս իւրեանց գնալ։ [Յ]որժամ արձակեցան զօրքն ամենայն յիւրաքանչիւր իւր տունս, [յայ]նժամ յառաջ կացեալ Նադան, ասէ ցարքայն. Արքայ [յաւի]տեան կաց, ես եմ աղ կերեալ ի տան քո, քաւ լիցի արքա[յ դա]ւել, կամ տեսանել զչարիս ի տան քո և ոչ ծածկեց‖ից, զի Խեկար հայր իմ, 228ա
զոր առաքեցեր ի հանգիստ և ի պատիւ, ոչ արար ըստ պատուոյ արքայիդ, ոչ եղև ի կողմ հրամանաց քոց։

Եւ էր տուեալ զթուղթն ի բարէկամս թագաւորին և պատուէր տուեալ նմայ, եթէ հարցանիցէ թագաւորն զքեզ, ասասցես թագաւորին պատասխանի, թէ յանցաւորաց ճանապարհորդաց բռնութեամբ առաք զթուղթս զայս։

[1] Ձեռագրում՝ ցԱդան։
[2] Ձեռագրում՝ դեստան։

Յայնժամ յառաջ կոչեցեալ Նադան յայրն, որ զթուղթն էր տուեալ, և եդիր զթուղթն առաջի արքային։

Եւ առեալ Նադան, եցոյց զթուղթն, զոր կնքեալն էր մատանեաւ հայրն իւրոյ Խիկարայ եւ երաց առ ի կարդալ։ Եւ իբրև լուաւ զայս արքայ, դարձեալ ասէ ցնա, որ զթուղթն ունէր. Ո՞վ ետ ի քեզ զթուղթս զայս։ Եւ նայ զինչ որ Նադան իւր խրատ էր տուէր, ասաց թագաւորին։ Յայնժամ թագաւորն. Զի՞նչ մեղայ ես Խիկարայ, ո՛վ աստուածք, զի այսպէս կամեցաւ առնել ընդ իս չարիս փոխանակ բարոյ իմոյ։ Խաւսել սկսաւ Նադան և ասէ. Մի՛ տրտմիր, տէր իմ արքայ, այլ երթեսցուք ի դաշտն Արծէբունի, որպես և գրեալ է ի հրովարտակիս յայտնիկ և գիտասցուք և տեսցուք, թէ այդպէս է և ապայ՝ զինչ և հրամայեսցես լինի։

Եւ առեալ Նադանայ քեռորդոյ իմոյ զՍինէքարիմ արքայն, եկն եդիտ զիս և զզօրսն իմ, որ [ընդ]իս էին։

Եւ իբրև տեսի զարքայ, կարգեցի ճակատեցի [զզօրսն] իմ ի դէմ նորա ի պատերազմ։

Եւ իբրև ետես զայն արք[այ, տրտ]մեցաւ։ Խաւսել սկսաւ Նադան և ասէ ցարքայ. Մի՛ երկն[չիր], տէր իմ արքայ, այլ երթ դու ի տուն քո, և ես ածից զԽ[իկար] հայր իմ առաջի քո։ Ասէ արքայ ցՆադան. Թէ դու [ածես] զԽեկար առաջի իմ, պարգևս մեծամեծս տաց [քեզ և] ‖ ի վերայ դրան իմոյ հաւատարիմս կացուցից զքեզ, զի միայնիտ և բարեկամ գտար ինձ։ 228բ

Եւ դարձաւ արքայ ի տուն իւր։

Եւ Նադան քեռորդին իմ եկն առ իս և ասէ. Հրաման տուր զօրացդ, զի երթիցեն ի տունս իւրեանց, և դու եկն առ իս, զի ի միասին ուրախ եղէց։ Եւ իբրև եկի առաջի արքային, յայնժամ ասէ ցիս արքայն. Դու, Խիկար՝ դպրայպետ Ասորեստանի և Նինուէի, ես[1] հրամայեցի քեզ ի պատիւ և ի մեծութիւն, և դու դարձար ի մէնջ և եղեր ի կողմն թշնամեաց մերոց։ Եւ ետ զթուղթն ի ձեռս իմ, զոր էր Նադան նմանեցուցեալ ձեռնայգրի իմոյ։ Եւ իբրև կարդացի, ես՝ Խիկար, լուծան ամենայն աղիք իմ, և լեզու իմ իբրև զմագաղաթ գալարեցաւ։ Խնդրէի բան իմաստութեան և ոչ գտանէի ի սրտի իմում և ոչ կարացի ամենևին տալ պատասխանի։

[1] Ձեռագրում՝ և։

Յայնժամ խօսել սկսաւ Նադան քեռորդին իմ և ասէ անօրէնն, զոր սնուցի ես, և ասէ ցիս. Ի բաց գնայ յերեսաց արքայիդ, ալևոր զառանցեալ և աղճատեալ, եւտուր զձեռս քո ի կոճեղս և զոտս քո յերկայթս։

Յայնժամ արքա դարձուց զեր[ե]սս իւրոյ յինէն և ասէ ցԱբուսմակ ընկեր իմ. Տար [եսպ]ան զԽիկար և հեռացոյ զգլուխ իւր ի նմանէ իբրև կանկունս ճ։ Եւ ասեմ ցարքայ. Արքայ, յաւիտեան կաց, [թէ]և կամեցար սպանանել զիս և բանից իմոց ոչ անս[աց]եր, այլ ես յանձն իմ գիտեմ, զի ոչինչ մեղայ։ Արքայ, այժմ հրամայեաց, զի ի դրան իմումս անցեն զմարմինս իմ, սպանցեն և տարցեն ի թաղումն։

229ա ‖ Եւ ասէ արքայ ցԱբուսմագ. երթ սպան զԽիկար առ դրան իւր։

Եւ ես՝ Խիկար, առաքեցի առ Աբեստան կին իմ և ասեմ. Հան ընդ առաջ իմ կուսանս Ր, զի սգեստին հանդերձս տըրտականս և կոծ եդեալ լացցեն դառնայպէս և ելցեն ընդ առաջ իմ, զի զլալիսն աչօք իմովք տեսից։

Եւ Աբեստան կին իմ յոյժ իմաստուն էր, արար վաղվաղակի, զոր ինչ առաքեցի առ նայ։ Արար հաց և ընթրիս և ել ընդ առաջ նոցայ և եմուծ առաջի իմ զնոսայ ի տուն իմ։ Եւ մտի ես ուտել հաց ընդ նոսայ։ Եւ Աբեստան կին իմ ծառայէր զնոսայ և ազաչէր ըմբել գինի, և ըմբեցին գինի և արբեցան։ Յայնժամ խաւսել սկսայ ես՝ Խիկար, և ասեմ ցԱբուսմաք ընկեր իմ. Հայեաց, յաստուած և յիշեայ զայն, զի զքեզ մատեաց գլխով քո հայր Սեննեքարիմայ արքայի և ետ զքեզ ի ձեռս իմ սպանանել զքեզ։ Եւ գիտացի, զի չէիր ինչ մեղուցեալ, ոչ սպանի [զք]եզ, այլ պահեցի մինչև ինքն արքայ խնդիր արար քեզ, և առի [տ]արայ զքեզ առաջի նորայ, և պարգևս մեծայմեծս ետ ինձ։ [Ար]դ, դու պահեայ զիս և հատոյ զերախտիսն ի մի սպանանե[լ], զի մի՛ շար լինի քեզ։ Եւ իմ ծառայ մի, որում անուն էր Ս[եփար] և յոյժ նման է ինձ և է ի բանդի, զի մահապարտ է։ [Հրամայ]եայ ծառայից քոց, զի հանցեն և սպանցեն զնայ, [հեռաց]ուսցեն զգլուխ նորայ ի նմանէ իբրև կանկունս ճ։ [Եւ Աբու]սմաք լուաւ ինձ և գթացաւ ի վերայ իմ և առ զհան[դերձս], և տարան ի բանդն և ագուցին Սեփարայ ծառային [իմ, 229բ որ] ‖արկեալ էր իմ ի բանդն։ Եւ ծառայք նորայ հանին և սպանին զՍեփարայ ծառայ իմ։ Եւ ել համբաւս այս ի քաղաքս և ի գեաւղս և ի գաւառս Ասորեստանի և Նինուէի, թէ Խիկար, դպրապետ և իմաստունն մեռաւ։

Եւ յարեան Աբեսմագ և Աբեստան կին իմ, փորեցին և արարին ինձ տուն գետնայփոր և եդին առ իս հաց և ջուր։ Եւ չոգան պատմեցին Սեննեքարիմայ տեառն իմոյ, թէ Խիկար մեռաւ։ Յայնժամ լուան ամենեքեան առհասարակ, և բնակիչքն Ասորեստանի և Նինուէի ցրուեցան։ Եւ յորժամ լուաւ[1] փարաւոն արքայ վասն Խիկարայ, թէ մեռաւ, յոյժ ուրախ եղև։ Յայնժամ փարաւոն արքայ ետ գրել հրովարտակս և առաքեաց առ Սեննեքարիմ. «Ի փարաւոնէ արքայէ ողջոյն Սիննայքարիմայ արքայի։ Այլ զայս ծանուցանեմ քեզ, կամիմ շինել ապարանս մէջ ընդ երկինս և ընդ երկիր։ Տես այր մի իմաստուն և ճարտար և առաքէ այսր, զի եկեալ շինեսցէ և վասն այլ ամենայն բանի հարցայքննութեան, զոր ինչ և հարցից, պատասխանի առնէ, ապայ թէ անփոյթ առնես և ոչ առաքես, ժողովեայ և տուր բերել զհարկն Ասորեստանի և Նինուէի զմեր կա[յս]»։

Եւ յորժամ լուաւ զհրովարտակն, և ընթերցան առաջի ամեն[եց]ուն, և ասէ ցնոսայ. Ով է ի ձէնջ կարող է երթալ յԵգիպտոս [առն]էր պատասխանի փարաւոնի։

Եւ պատասխանի տուեալ զաւր[ացն ա]սեն ցարքայն. Դու գիտես, արքայ, զի իրք, որ ի յայդ ի նմանէ, [Խիկար] երթայր և կատարէր, և այժմ Նադան քեռորդի նորա [գիտէ] զդպրութիւն նորայ, նայ երթայ և պատասխանի առնէ [փարաւ]ոնի։ Եւ իբրև լուաւ զայս Նադան, ի ձայն բարձր աղա- 230ա ղակ ‖ եաց և ասէ. Զայդ իրս դիքն ոչ կարեն վճարել, իսկ ի մարդէ ո՞յ իցէ կարող վճարել զբանս զայդ։

Եւ իբրև լուաւ զայս արքայ, յոյժ տրտմեցաւ, յարեաւ էջ յաթոռոյ իւրմէ և նստաւ ի վերայ մոխրոյ։ Քուրձ զգեցաւ և այսպէս ասէր. Աւաղ զքեզ Խիկար, դպրապետ և իմաստուն, զի խաւս մարդկան կուրուսի զքեզ։ Ոյ ով տար զքեզ ի ժամուս յայսմիկ, ընդ ձոյլ ոսկոյ կշռէի զքեզ և գնէի։

Եւ յորժամ լուաւ զայս յԱփուսմակ, ասէ ցարքայն. Որ զբանս տեառն իւրոյ արհամարհէ, մահապարտ է։ Դու զԽեկար հրամայեցեր սպանանել, և նայ դէռևս կենդանի է։ Յայնժամ խաւսել սկսաւ արքայ և ասէ. Խաւեսաց Աբուսմակ ծառայ իմ, բարի և հաւատարիմ, ո՛չ մեղար, այլ բազում բարեաց առիթ գտար, զի եթէ զԽիկար կենդանի ցուցես ինձ, բազում քանքարս և ծերանիս ագուցից քեզ։

---

[1] Գրիչն այս անհրաժեշտ բառը վրիպել է։

Եւ ի նմին ժամու, իբրև սլանալ հողմոյ, եկն առ իս: Եւ բացին զդուռն գետնափորին: Ելի ես և եկի առաջի արքային տեառն իմոյ և անգեալ ի վերա երեսաց իմոց. երկիր պագի նմայ: Եւ զգլխոյ իմոյ թաւալեալ էին, և մարմին իմ ապականեալ ի հող[ոյ], և ըղնկունք իմ աճեցեալ իբրև զարծուի:

Եւ յորժամ ետես [զ]իս արքայ, ելաց ի վերա իմ և ամաչէր հայել՝ յերեսս իմ: Եւ ասէ ցիս. Ես քեզ ինչ ոչ մեղայ, այլ Նադան քեզ որդ[եգիր], զոր սնուցեալ էիր: Եւ ասեմ. Տէր իմ արքայ, որովհետև տե[սի զեր]եսս քո, տրտմու չիս ոչինչ է, այլ ուրախութիւն: Եւ ասէ արքայ. [Խիկ]ար, երթ ի տուն քո և դարմանեայ զանձն քո յաւուրս [քառաս]ուն:

Յայնժամ գնացի տուն իմ, և դարձաւ սիրտ [ի յ]իս և եկի առաջի արքային: Խաւսել սկսաւ արքայ և [ասէ]. Խիկար, լուեալ է քո, եթէ եգիպտացիքն ինչ յղեցին [առ մեզ]:

230բ ‖ Եւ ասեմ ցարքայն. Իբրև լուան, եթէ ես մեռայ և զտեղի իմ չէ լից ոք, վասն այնորիկ փախեան ամենեքեան ի գաւառէտ և վասն որոյ առաքեաց առ քեզ փարաւոն արքայ: Հոգս մի՛ լիցի քեզ, զի ես երթայց առաջի փարաւոնի և պատասխանի տաց նմայ և զհարկն Եգիպտացոցն բերից քեզ:

Եւ իբրև լուաւ զայս արքայ, յոյժ ուրախ եղև և պարգևս մեծայմեծս ետ ինձ և զիս և զԱբուսմագ ընկեր իմ բազմեցուց ընդ իւր:

Եւ ի լինել առաւօտուն, առաքեցի առ Աբեստան կին իմ և ասեմ. Հրաման տուր բերել Բ ձագս արծուոյ և տուր մանել պարան Բ յերկայն և հրաման տուր հիւսանցն, զի տաշեսցեն և յօրինեսցեն կու[պ]այս Բ փայտեղէնս և առ քեզ մանկունս տարեղէնս և սրնդիացի[2] կանայս Բ, որ ուսուցանեն զմանկունս և այսպէս ասեն. Կաւ, ծեփ, աղիւս յաւերայք հանեք, ճարտարքս պարապ են: Եւ ա[պ]այ, զամենայն, զոր ինչ պատուիրեցի, արար[3] վաղվաղակի, զի քաջ իմաստուն էր:

Եւ հրաման ե[տ] արքայ, և առի զաւրս իմ, որ ընդ իս, և գնացի: Եւ իբր[եւ] հասի ես յօթնանսն առաջինսն, հրաման ետու զաւ[րաց] բանակել:

Եւ հանի զմանկունսն և պնդեցի ի վերայ [արծ]ուացն և արկի առասանս ընդ ոտս նոցայ: Թռա[ն արծու]իքն և վերացան ի յերկինս, և սկսան մանկունսն, որ պ[ատուիրեալ] էր զնոսայ:

¹ Ձեռագրում այս բառը կրկնված է:

² Ձեռագրում՝ ըերըդիացի:

³ Ձեռագրում՝ արայ:

Եւ իբրև հասի ես յԵգիպտոս, չոգայ [առ դուռ]ն փարաւոնի և ասեմ. Յիմացուցէք արք արքայ[ին], թէ զայրն, զոր խնդրեցեր ի Սենեքարիմայ արքա[յէն, արդ] առաքեաց:

231ա Եւ արքայն փարաւոն հրաման ետ, և ես ասեմ. ‖ Բերեալ եմ ճարտարք, որ շինեն դարպաս յօդս: Եւ ասէ փարաւոն. Զի՞նչ պէտք են ճարտարացն ի պէտս դարպասին: Եւ ես ասի. Բերել տուր կաւ, ծեփ, աղիւս: Եւ նոքա բերին:

Եւ գնացի կապեցի զԲ տղայն ի վերա Բ արծուց ձագին և թռուցի յօդն: Եւ տղայքն աղաղակելով կանչէին, թէ բերէք կաւ, ծեփ և աղիւս բերէք, որ շինիմք դարպաս: Եւ ոչ ոք կարէր հանել ինչ ի վեր: Եւ ես առի գաւազան և ծեծեցի զօրքն փարաւոնի: Եւ նոքա փախեան և անկան ի դարպասն փարաւոնի: Եւ ելեալ փարաւոն, ետես զձագս արծուոց և զձայն տղայոցն և զարմացաւ յոյժ: Եւ եմուտ ի դարպասն և ասէ իւր մտին, թէ սա շատ իմաստուն է քան զԽիկար: Եւ ոչ գիտէր, թէ Խիկար է: Եւ ասէ թագաւորն. Ստոյքն ասա ինձ թէ ով ես դու: Եւ ես ասի, թէ Խիկարն եմ: Եւ ասէ փարաւոն. Ով Բշուառական, կենդանացա՛ր:

Եւ ասէ փարաւոն. Ով Խիկար, զինչ որ ասեմ կատարեայ: Եւ ասէ. Զի՞նչ է ան սիւնն ի վերա սնի[2], մայրք Բժնի վերա մայրից, անիվք Լ ի վերա անուից, սուրհանդակ եր[կուք՝], մինն՝ սև և մին՝ սպիտակ: Ասէ Խիկար. Սիւնն տարին է, Բժն մայրքն ամիսք տարւոյն, Լ անիվքն աւուրք ա[մսոյ]ն են, Բ սուրհանդակքն՝ տիւ և գիշերն:

Եւ փարա[ւոն] ասէ. Մանեա ինձ պարան յաւազէ:

Եւ երթալ ծա[կեցի] զորմն պատին դէմ արեգական, որ տանէր ոլոր, [ոլոր] ծագն ի ներս: Եւ ես կանչէի, թէ կծկեցէք շուտ[ով]:

231բ ‖ Եւ զահի հարեալ փարաւոն, ապուշ մնայր:

Եւ յայնժամ փարաւոն պատուեաց զիս և ետ ինձ բազում խլաթս և զհարկ թագաւորին իմոյ:

Եւ ողջունեցի զփարաւոն և ելեալ գնացի առ թագաւորն իմ Սինեքարիմ և անկայ առ ոտս նորայ և համբուրեցի: Յայնժամ ուրախացաւ արքայն, յորժամ և ասէ. Խիկար, զի՞նչ խնդրես յինէն, որ տաց քեզ: Եւ ես ասեմ. Իմ խնդիրքն այն է ի քէն, որ զՆաթան զքեռորդին իմ, որ է ինձ որդէգիր և աշա-

¹ Հավանաբար պետք է լինի արևայից:

կերտ է, տայս ի յիս, զի այլ ուսումն կայ պակաս, որ զայլն այլ ուսուցանեմ, որ լինի կատարեալ։ Զառաջին խրատն իմ ոչ պահեաց ի մտի, զոր ուսուցի քաղցրութեամբ, հիմի ուսուցանեմ դառնութեամբ։

Եւ ասէ թագաւորն. Զինչ որ քո կամքն է, զայն արայ։

Եւ ես առեալ զնաթան երկաթի կապանօք, տարա ի տունս իմ և եդի ի պարանոց նորա Շ լիտր երկաթս և յանձնեցի զնա ի Բելիար ծառայն իմ և ետու թուխթ և թանաք և ասեմ. Յելանելն իմ և ի մտանելն իմ, զինչ որ առնեմ, զամէն գրեայ նաթանայ։

Նախ և առաջին զարկի Ռ բիր ի թիկունս և ասէ Թէ.

1. Մարդոյ, որ ականջն չլսէ, ի թիկունս ծեծելով լսեցուցանել պարտ է։

Հաց և ջուր կշռով տայի, որ ո՛չ մեռանէր և ո՛չ ապրէր։

2. Որդեակ Նաթան, յաթոռ փառաց նստուցի զքեզ, և դու [յա]թոռոյ իմոյ ընկեցեր և կործանեցեր զիս։

Խաւսեցաւ [Նաթան] և ասէ. Զի՞ ոխացար ընդ քեռորդոյ քում։

Եւ ես ասեմ.

3. Որդեակ, եղեր ինձ որպէս կարիճ, որ եհար զասեղն։ [Եւ աս]եղին խաթոցն չար է, քան զքոյդ։ Դարձեալ և[հար] զթաթ ուղտուն, և նա հարեալ զթաթն ի վերա [կարճ]ին և սատակեաց զնա։

232ա Եւ դարձեալ եղար որպէս ‖ վայրենացեալ եղն, որ զտիրոջն արկեալ զվարքն և վիրաւորի իւր ոտքն։

4. Որդեակ, եղեր որպէս այծն, որ ուտէ զտորուննն[1], և ես կենդանութեանս ուտեմ զքեզ, թող յետոյ հանեն զտակն քո և ներկեն զմորթս իմ։

5. Որդեակ, եղեր ինձ այն, որ ձգեաց նետ յերկինս, թէպէտ ոչ կարաց հասուցանել, զանօրէնութիւն շահեցաւ։ Եւ դարձաւ նետն ի գլուխն իւր։ Նոյնպէս և դու կամեցար սպանանել զիս, այլ անմեղութիւն իմ ապրեցոյց զիս։

6. Որդեակ, եղեր ինձ որպէս այրն այն, որ դողայր ի ցրտոյն և այլումն բերեալ պաղ ջուր, լնոյր ի վերա նորա։

Դու նոյնպէս կարծէիր զտեղի նորա լնում, բայց[2] իցէ ագի խոզին Ք կանգուն երկայն, զտեղի ձիոյն ոչ կարէ լնուլ։

7. Որդեակ, եղեր ինձ առջն, որ հանդիպեցաւ իշոյ միոյ[1] և ասէ. Ողջոյն քեզ։ Ասէ էշն. Այդ ողջոյնդ ի յիմ տիրոջն պարանոցն, որ զիս արձակեաց ի մորէն, որ քեզ հանդիպեցայ և տեսի զքո գեղ երեսո[2] չար։

8. Որդեակ, եղեր ինձ որոգայթ, որ թաղեալ կայր յաղբիսն։ Եւ եկ ճնճղուկն ասէ. Զի՞նչ գործես։ Ասէ ակնատն. Ա[ղո]թս առնեմ առ աստուած։ Ասէ ճրնճղուկն. Զի՞նչ է ի բերանդ։ Ասէ ակնատն. Քաղցելոց հացիկ է։ Եւ վազեաց ճրնճղուկն առնուլ զհացն յա[կնա]տէն, և անկաւ ակնատ ի վիզ ճրնճղկին։ Եւ [ասէ] ճրնճղուկն. Քաղցելոց հացն այդ է, ապա
232բ ա[յդ]‖պէս լսէ աստուած տղօթից քոց։

9. Որդեակ, եղեր որպէս շունն, որ եմուտ ի հնոցն բրտին և յորժամ տաքցաւ, և սկսաւ հաչել յերես բրտին։

10. Որդեակ, եղեր դու որպէս զան ագահ շուն, որ ունէր հաց մի ի բերանն և երթայր յեզր գետոյն։ Եւ ետես շուն մի այլ ի մէջ գետոյն և հաց մի բերանն և ձգեաց զիւր հացն ի բերանոյն և անկաւ ի ջուրն, զի առցէ զայնոր հացն, այլ ոչ շուն եգիտ և ոչ՝ հաց։ Եւ զիւր հացն շուն մի այլ առեալ գնաց։ Ինքն խեղդեցաւ ի ջուրն և զրկեցաւ ի յիւր հացէն։

Նոյնպէս եղար և դու. զիմ հացն խլեցիր և զրկեցար ի քո հացէդ։

Ասէ Նաթան. Մեղա քեզ, հայր, այլ չգործեմ զինչ գործեցի, մի՛ չարշարեր զիս և մի՛ հատուցաներ չար փոխանակ չարի։

Ասէ Խիկար.

11. Ծառ մի բուսեալ էր յեզր գետոյն և յորժամ հասանէր պտուղն, թափէր ի գետն և կորընչէր։ Եւ յորժամ մարդն եկեալ պտուղ խնդրէր և ոչ գտանէր։ Բ և Գ տարի զայս արար և ոչ շահեցաւ ի պտղոյն։ [Յե]տոյ կտրեաց զծառն և ընկէց ի ջուրն [և] ասէ. Այսչափ երախտեացս մինչև հիմա [զի՞նչ ես] արել, որ այլ համբերեմ նա զի՞նչ տի առ[նես]։

Արժան ես այդ չարշարանացդ։ Ոչ կայ [հնար] քեզ ազատիլ ի ձեռաց իմոց, մինչև մե[ռցիս]։

Ինչ մարդ բարոյն չար հատուցանէ [որպէ]ս Նաթան, պիտի կորընչի աստ և ի հանդերձեալն, ամէն։

[1] Ձեռագրում՝ զաարիւնն։

[2] Ձեռագրում՝ բաց։

[1] Ձեռագրում՝ իմոյ։

[2] Ձեռագրում՝ երեսեստ։

ԽՕՍՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՑ
ԵՒ ԽՐԱՏՔ ՀԱՍԱՐԱԿԱՑ
(ՏԱՐԲԵՐԱԿ Լ)

Այս բնագիրը միջնադարյան, թերևս հայկական հողի վրա ծագած մի երկ է, որ երբեմն ընդօրինակվել է առանձին, տարբեր խորագրերով, բայց մտել է Խիկարի զրույցի խրատականքի մեջ և դիտվել իբրև նրա մի հատվածը:

Զրույցի հայկական խմբագրության համարյա բոլոր տարբերակներն առավել կամ պակաս չափով ներձուլել են այս աղբյուրը:

Մենք այն հրատարակում ենք զրույցի բնագրից անկախ ընդօրինակությունների հիման վրա:

Ընդգրկում է 14 միավոր: Համառոտագրում ենք L տառանիշով:

Բնագրի համար հիմք է ծառայել L_1-ը (Մատենադարանի ձեռագիր № 4724):

Բնագրի հետ համեմատվել են զրույցի բոլոր տարբերակների զուգահեռները և արտահայտվել տողատակերում:

Ուղղումներ թույլ են տրված միայն L խմբի ընթերցումներով:

B տարբերակի զուգահեռները կազմում են չափազանց մեծ թիվ, գրեթե ծածկում L բնագիրը, ուստի չկրկնելու համար և ընդունելով, որ Խիկարի զրույցին անհարազատ է, չենք տվել AB տարբերակի մեջ:

Զրույցի ընթերցումներն արտահայտում ենք տարբերակներում կիրառված միևնույն համառոտագրություններով:

Բնագրի աղբյուրները և խրատների համադրական ազբուսակը տես գրքի վերջում (աղյուսակ IX):

L_{14}-ն ունի հավելյալ խրատներ: Տեղադրել ենք բուն շարքի վերջում, տարբերել աստղանիշով (*): Նախ տրված է բնագրի, ապա՝ փակագծի մեջ, հավելյալ խրատը պարունակող օրինակի (L_{14}) հերթական համարը:

Խրատների տարընթերցվածները տալիս ենք յուրաքանչյուր միավորից հետո, ինչպես AB բնագրում:

ՅՕՍՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՑ ԵԻ ԽՐԱՏՔ ՀԱՍԱՐԱԿԱՑ

1. Որդեակ, նախ ի լեզուէ քումմէ երկիցես, որպէս յօտար թշնամւոյ, զի ոչ գիտես յորում ժամու ածէ ի վերայ քո չարիս:

1. L_{14} *իբրև ի փխ որպէս,* D_{1-5} *չիք՝ նախ,* L_{13} $B_{3-5,12,19}$ *երկիր,* $L_{4,9,11}$ D_6 *զգուշացիր (*L_9 *զգուշ կացիր) փխ երկիցես,* $L_{4,9-12}$ B_{1-24} *գիտես թէ,* B_{1-24} *յորժամ (*B_9 *յորում ժամու,* $B_{12,18,19}$ *երբ),* D_5 *յորժամու,* B_{18} *զի գու,* B_{1-24} D_{1-6} *որպէս յօտարէ երկիցես (*$B_{4,5,18}$ *երկիցես որպէս յօտար թշնամւոյ,* D_{1-6} *երկընչիցես),* E_{1-6} *որդեակ ի լեզուէ քումմէ վախեցիր քան զաւտար թշնամոյն զի ոչ գիտես թէ յորժամ գայթակղեցուցանէ զքեզ լեզու անմիտ և արբեցողի որպէս նետ ի լարս ազեղան գայլ ոք ոչ կարէ հարկանել այլ հանապազ ըզգըլուխս ծեծէ (*E_2 *է ի չար փխ ի լարս, գայլս քո,* $E_{4,5}$ *նետ է),* Fa,b *որդեակ ի լեզուէ քումմէ վախեցիր քան զօտար թշնամւոյ զի այլ ոք ոչ կարէ հարկանել զքեզ կէտ ոչ գնա (*Fb *երկնչիր փխ վախեցիր, այնչափ մնասել փխ հարկանել, նա փխ գնա),* L_7 *և զգոյշ լեր յանպատրաստ խաւսից զի լեզու անմտին որպէս նետ ի քիմս ազեղան է այլ զգլուխ քեև գայլ ոք ոչ հարկանէ այլ զգլուխ իւր ծեծէ փխ զի ոչ-չարիս,* L_{14} *քէ յորում աւուր ածէ չար ի վերայ քո փխ յորում-չարիս:*

2. Որդեակ, լեզու անմտի և արբեցողի որպէս նետս ի քիմս ազեղան, թէև գայլ ոք ոչ հարկանէ, այլ զգլուխ իւր հանապազ ծեծէ:

2. B_{1-24} D_{1-6} L_2 *անմտին և արբեցողին (*B_3 *անմտի և արբեցողի),* B_{1-24} D_{1-24} *չիք՝ նետս,* B_{1-24} D_{1-6} *զքիմս ասղան է փխ ի քիմս ազեղան թէև (*B_{18} *աւզան փխ ազեղան,* $B_{4,5}$ *զքիմք,* B_{18} *ի քիմս),* B_{1-24} D_{1-6} *կարէ հարկանել,* L_4 *և փխ թէև, ոչ կարէ,* $L_{4,5,9-12}$ *չիք՝ հանապազ,* B_{18} *զգլխովն,* L_8 *ծիծէ փխ ծեծէ,* L_{14} *ի լեզուանոյ և յանմտէ և յարբեցողէ փախիր զի որպէս նետք ի քիմս ազեղան են և գայլ ոք ոչ կարեն հարկանել այլ հանապազ զգլուխս իւրեանց ծեծեն փխ լեզու-ծեծէ,* E *խմբում խրատք ձուլվել է նախորդին,* L_7*-ում՝ նուլնպես:*

3. Որդեակ, լաւագոյն է թշնամութիւն ունել ընդ առն իմաստնոյ, քան թէ ընդ առն անմտի և լեզուայնոյ բարեկամութիւն։

3. L_{9-12} B_{1-24} E_{1-6} Fa,b լաւ է քեզ (L_{9-12} $B_{4,5}$ Fa E_{1-6} լաւագոյն, Fb չիք՝ քեզ), B_{1-24} E_{1-6} Fa,b չիք՝ ունել, L_7 լաւագոյն է ումէք, L_8 չիք՝ ընդ, B_{1-24} E_{1-6} Fa,b սիրելութիւն ընդ առն անմտի և լրբի ($B_{2,6-8,10,12,15,19}$ զբարեկամութիւն, E_2 Fa,b չիք՝ և լրբի, $E_{1,3-5}$ անմիտ մարդոյ) փխ թէ-բարեկամութիւն, $L_{4,9-12}$ սիրելութիւն փխ բարեկամութիւն L_5 սիրալիութիւն փխ բարեկամութիւն $L_{9,11}$ չիք՝ առն (II), L_7 քան թէ սիրելութիւն ընդ առն անմտի լեզուայնոյ և բարկացողի փխ քան թէ-բարեկամութիւն։

4. Որդեակ, զայր անմիտ և արբեցող մի՛ առաքեր պատգամաւոր, զի ուղելովն քեզ բարիս ոչ հանդիպի, այլ բազում չարիս ածէ ի վերայ քո անմտութեամբն իւրով։

4. B_{13} և բարկացող, L_4 քան զբարիս փխ քեզ բարիս, B_{1-24} պատգամաւոր մի յուզարկեր և բարէխօս քանզի ոչ կամենա զբարիս գործել այլ բազում չարիս ածէ ի վերայ քո ($B_{6,7,12,19}$ զուգեր փխ յուզարկեր, B_9 այլ գչար և ածէ ի վերա քո բազում չարիս, B_{18} կամէ, $B_{12,19}$ կարէ նա փխ կամենա) փխ մի-իւրով, D_{1-6} պատգամաւորեր մի ուղարկեր կամ բարէխօս թէ ոչ բազում չարիս ածէ ի վերա քո անպիտան խօսիւք փխ մի-իւրով, E_{1-6} Fa ի քան մի զրկեր զի թէ ուզես այլ բազում չարիս ածէ ի վերա քո (Fa և թէ կուզես որ բազում չարիս ածէ ի վերա քո ուղարկեա) փխ մի-իւրով։ Fb ի գործ ինչ մի առաքեր զի բազում չարիս ածէ ի վերայ քո փխ մի-իւրով։

5. Որդեակ, այր անմիտ և արբեցող լաւ է քեզ թշնամի, քան սիրելի։

Եւ ի խորհրդոց քոց հեռի կացո զայր անմիտ։

5. B_{1-24} լաւ է նա (B_9 չիք՝ նա), B_{1-24} քան թէ, $L_{4,9,11}$ կացցէ, L_9 չիք՝ զայր անմիտ, B_6 լաւ է քեզ թշնամի սիրելի քան թէ բարեկամ արբեցող և անմիտ փխ այր-սիրելի, B_7 լաւ է քեզ թշնամութիւն առն անմտի և արբեցողի քան թէ սիրելի և խորհրդակից լինել ընդ նմա փխ լաւ է քեզ-անմիտ, B_{1-24} արա գնա փխ կացո զայր անմիտ, L_4 չիք՝ զայր անմիտ։

6. Որդեակ, անմտին խրատն այնպէս է, որպէս փոշի ցանես ի վերայ հողմոյ, կամ ի վերայ յարուցեալ գետոյ։

6. $L_{9,11}$ ի հողմ փխ ի վերայ հողմոյ, B_{1-24} եթէ անմիտին խրատ ասա նմա փխ անմտին խրատն, B_3 այսպէս թուի փխ այնպէս է որպէս, L_7 թէ զանմիտն խրատես փխ որդեակ անմտին խրատն, B_{1-24} չիք՝ ի վերայ հողմոյ, B_{18} որպէս ցանես ի վերա յարուցեալ գետոյն ալիւք փխ որպէս-գետոյ, $B_{12,19}$ եւ-ման փխ յարուցեալ, D_{1-6} յորժամ անմտին խրատ ասա համա-

բեա թէ փոշի ցանեցեր ի վերա յարուցեալ գետոյ, E_{1-6} թէ անմտին խրատ ասա այնպէս է քո խրատն որպէս թէ ոք փոշի ցանէ ի վերայ գնացման գետոյ ($E_{1,3}$ եւման), Fa,b անմիտ մարդոյ խրատ տալն այնպէս է որպէս թէ ոք փոշի ցանէ ի գնացման գետոյ։

7. Որդեակ, չարն իմաստնոյն և գիտնականին որպէս փաթեթակ գայ, իսկ անմիտն յամենայն ժամ չարիս բերէ անձին իւրում։

7. E_{1-6} չիք՝ և գիտնականին, $L_{2,3,4,7,9-13}$ գիտնականին փխ գիտնականին, L_7 չիք՝ որդեակ, $L_{5,7,9,10,12,13}$ E_{1-6} գոյ ի ժամանակի, չար ուղէ փխ չարիս բերէ, $L_{4,9,11}$ չիք՝ անձին իւրում։

8. Որդեակ, զայր լեզուային և ամբարտաւան մի՛ համարձակեցուցաներ ի տուն քո, զի մի և դու ի գործոց նորա ամօթով լիցիս։

8. L_{14} B_{1-24} D_{1-6} ամբարտաւան, E_{1-6} չար անմիտ և լեզուանի և ամբարտաւան մարդ ի տուն քո մի տանիր, L_7 ընդ առն անբզդամի և լեզուայնոյ մի յարենար, E_{1-6} չիք՝ մի և դու, D_{1-6} ամօթ կրեսցես։

9. Որդեակ, եթէ վայելեցես զամենայն կեանս աշխարհիս, զօր մահուան քո մի՛ մոռանար, այլ հանապազ ի միտ կալ, թէ մեռանելոց եմ։

9. B_{1-24} D_{1-5} վայելեսցես ի բարութիւնն (B_{18} ի բարութենէ, $B_{12,19}$ վայելեսցես զամենայն բարութիւնն ի), D_{1-6} կեանս քո, L_4 վասն մահու որդեակ, աշխարհիս սակաւ, B_8 աշխարհիս ապա, B_{1-24} այլ յիշեա հանապազ ($B_{2,3,6,8,10,12,15,19}$ չիք՝ այլ յիշեա հանապազ) փխ այլ-եմ, D_{1-6} ի միտ կալ թէ մեռանելոց եմ, E_{1-6} Fa,b որդեակ թէ լինիս աէր աշխարհիս գմահ քո մի մոռանար յամենայն ժամ ($E_{2,4,5}$ Fa,b չիք՝ յամենայն ժամ, Fb մոռանար և որչափ մեծութեան հասանիս այնքան ի խոնարհութեան կալ գանձն քո) փխ որդեակ-մեռանելոց եմ, L_7 բարութիւնն փխ կեանս, L_{14} գմահ քո մի մոռանար փխ օր-մեռանելոց եմ։

10. Որդեակ, նստելով առ գերեզմանի ընկերի քո, յիշեացես անդ և ասասցես ի մտի քում, թէ և՛ ինձ պատրաստ է այս։ Եւ արտասուեա վասն մեղաց քոց։

10. $L_{4,11}$ տեսցես և յիշեսցես և ասիցես, L_9 տեսցես փխ յիշեսցես անդ և ասասցես, $L_{4,8,9,11}$ և բազմութիւնն առաջուածոց քոց փխ վասն մեղաց քոց, A_5 B_{1-24} որդեակ նայելով նայեաց ի գերեզմանս ընկերի քո և գմահ քո յիշեա և արտասուեա (A_5 B_3 և դու, $B_{9,17}$ նայեսցես, B_{18} հայեա, A_5 նայեա), D_{1-6} որդեակ հայելով հայեսցես ի գերեզմանս ընկերին քո և յիշեսցես զի և դու նման նմա լինելոց ես, L_{14} յորժամ հայիս ի գերեզմանս ընկերի քո գմահ քո յիշեա և առեա զբազմութիւն առաջուածոց քոց փխ նստելով-քոց։

11. Որդեակ, յորժամ տեսանիցես զընկեր քո մեռեալ, մի՛ զանց առնիցես ի նմանէ, այլ երթ և ողբա և մի՛ զընկերն, այլ զանձն քո, զի նոյն օր պատրաստական է քեզ կարճել և զքեզ ի կենաց քոց։

11. A_5 B_{1-24} $L_{4,9,11,14}$ *վազճանեալ փխ մեռեալ,* L_{14} *չիք՝ ի նմանէ,* L_{10} *և ոչինչ փխ մի զանց,* B_{1-24} A_5 L_{14} *ընթացիր փխ երթ,* L_7 *զնա փխ զընկերն,* B_{1-24} A_5 *զանձն քո և ապա զընկեր քո քանզի և նոյն օր քեզ կայ պատրաստեալ (*B_1 *պատահեալ,* B *չիք՝ և ապա զընկեր քո,* B_{18} *նոյնպէս փխ նոյն էր),* L_{14} *նախ զքեզ և զընկեր քո զի նոյն կայ պարտս և առաջի քո փխ և մի զընկերն-քոց։*

12. Որդեակ, ի վերայ մեռելոյ իջո արտասուս և ողբա զնա վասն մեղաց նորա և մի՛ անտես առներ զթաղումն նորա։ Դառնացո զաղիսդ և ջերմացո կոծ և արա սուգ ըստ արժանաց նորա օր մի վասն բասրանաց և ի վաղիւն մխիթարեա զսիրտ քո վասն հրամանացն աստուծոյ։

12. L_2 *ի մեռեալս,* L_5 *չիք՝ և ողբա զնա,* L_7 *չիք՝ որդեակ,* L_2 *եղբայրսիբրանաց փխ բասրանաց,* L_{10} *բարանաց փխ բասրանաց,* L_3 *բարսանաց փխ բասրանաց,* $L_{5,7}$ *չիք՝ զառնացո-աստուծոյ։*

13. Որդեակ, արար աստուած զգինին վասն ուրախութեան, բայց ի տեղիս տեղիս լաւ է զլեղին ըմպել քան զգինին, վասն զի է՛ ժամանակ, որ փառաւոր առնէ գինին զորդիս մարդկան և երբեմն ծաղր ու ամօթալից կացուցանէ։

13. $L_{4,11}$ *վասն գինւոյ որդեակ արար,* B_{1-24} A_5 *աղր փխ զլեղին,* B_6 *զնոն խմել փխ զլեղին ըմպել,* $L_{4,9,11}$ B_{1-24} E_{1-6} A_5 *որդեակ երբեմն փխ վասն զի է ժամանակ (*Այդպիսով խրատը տրոճվել է երկուսի) L_2 B_{1-24} E_{1-6} Fa,b A_2 *գմարդ փխ գորդիս մարդկան,* L_{10} *ծաղր առնէ,* B_{17} *ամօթ լինի և ծաղրացուցանէ,* $B_{12,19}$ E_{1-6} Fa,b *առնէ փխ կացուցանէ (*E_1 *առնէ գմարդն),* D_{1-6} *որդեակ հրամայեալ է աստուած զգինին վասն ուրախութեան բայց ի տեղիս բոզանոցի և անպատշաճ լաւ է աղր ըմպել քան զգինի,* E_{1-6} *որդեակ արար աստուած զգինն վասն ուրախութեան բայց տես մի լի ըմպեր զքան գինի (*E_2 *մի ըմպել քան զգինի) փխ որդեակ-զգինին,* Fa,b *որդեակ ած զգինի վասն ուրախութեան բայց տես մի լինի թէ ըմպէ գինին կբեզ (*Fb *մի գուցէ փխ մի լինի թէ),* K *հրամայեալ է աստուած գինին ուրախութեան տեղի բայց տեղի բոզանոցի և վատթար և անպատշաճ տեղի լաւ է աղ ըմպել քան թէ գինի,* L_{14} *որդեակ, եա աստուած զգինի յուրախութիւն և ոչ յարբեցութիւն իսկ արբեցողացն ի տեղիս տեղիս լաւ է ըմբել աղր քան զգինի զի ամաւթալից առնէ որդիս մարդկան։*

14. Որդեակ, ի գինարբուս մի՛ քաջանար, զի զբազումս կորոյս գինին։

14. $L_{2,3,8}$ *գինի արբուներս,* (L_8 *արբումն),* $L_{5,10,12}$ *գինարբուս,* L_7 *չիք՝ որդեակ, պարծենար,* L_2 *կորուսանէ փխ կորոյս զգինին։*

15. Որդեակ, հաւասար է գինին կենդանութեան մարդկան, եթէ արբցեն զնա չափով։

15. L_7 *չիք՝ որդեակ, ըմպէն փխ արբցեն,* L_2 *չափաւոր։*

16. Որդեակ, չեն ինչ կեանք կարօտելոյն ի գինոյ, զի նա հաստատեալ է յուրախութիւն մարդկան։

Ցնծութիւն սրտի և ուրախութիւն անձին գինի, որ ըմպիցի ի ժամուց բաւական։

Դառնութիւն հոգւոյ գինի, որ շատ ըմպիցի, զի կասեցուցանէ զոյժն և դնէ վէրս, կորուսանէ զխելս և մերժէ զերկիւղն աստուծոյ, թուլացուցանէ զմարմինն և բթեցուցանէ զմիտս, տանի զահ ի սրտաց և զամօթ յերեսաց։

16. L_7 *չիք՝ որդեակ,* L_2 *կուրացուցանէ փխ բթեցուցանէ,* L_5 *չիք՝ զի կասեցուցանէ-յերեսաց,* L_7 *լերդի է փխ անձին,* L_7 *յորժամ ըստ պատշաճին լիցի բաւական փխ որ-բաւական,* L_7 *մտաց փխ սրտաց։*

17. Որդեակ, լաւ է քեզ կռուել ընդ զրեհաւորի, քան ընդ կնոջ անզգամի, լեզուանոյ և բարկացողի։

17. $L_{4,9,11}$ *վասն կնոջ որդեակ,* L_{14} *լավագոյն է փխ լաւ է,* L_{14} B_{1-24} *ընդ առն,* A_3 F_{1-6} Fa,b *ընդ մարդոյ,* $L_{4,9,11}$ *լեզուանոյ և անզգամի փխ անզգամի-բարկացողի,* L_5 *կնոջ պոռնկի անզգամի և լեզուայնոյ և բարկացողի,* B_{1-24} *և անամօթի փխ լեզուանոյ և բարկացողի,* L_{14} A_3 E_{1-6} Fa,b *չիք՝ լեզուանոյ և բարկացողի,* $B_{6,7,18,19}$ *հզօրի և զրեհաւորի,* B_9 *գինաւորի փխ զրեհաւորի,* B_{17} *զօրաւորի փխ զրեհաւորի։*

18. Որդեակ, յորժամ ասէ ցքեզ կին քո թէ խեղդեմ զիս ի նեղոյ քումմէ, դու զգուշացիր անձին քում, զի կամի խեղդել զքեզ։

18. L_{14} *եթէ փխ յորժամ,* B_{1-24} D_{1-6} A_5 *չիք՝ ցքեզ,* $L_{4,9,11}$ $B_{2,13,19}$ *խեղդեմ ես,* A_5 *խեղդեմ զիս,* L_{14} *ընդ քեզ փխ ցքեզ,* $L_{2,4,9,11}$ *նեղութենէ,* B_{1-24} D_{1-1} A_5 *ձեռաց քոց (*$B_{12,19}$ *ձեռօք խմովք) փխ նեղոյ քումէ, զգուշ լեր (*$B_{4,18}$ *զգուշ կայցէր,* B_5 *զգուշացիր) փխ զգուշացիր,* L_{14} *յարենէ քումմէ դու զգուշ լեր փխ ի նեղոյքումմ։*

19. *Որդեակ, այր անմիտ յորժամ գայ ի յանդիմանութիւն առաջի թագաւորաց խաբեութեամբ պատճառս պատճառելով, առնել բարկացուցանէ զսիրտ թագաւորին և զարթուցանէ ի վերայ իւր չարիս։*

19. B_3 չիք՝ յանդիմանութիւն, D_{1-6} յանդիման (D_5 յանդիման լիցի, D_4 չիք՝ յանդիման) փխ ի յանդիմանութիւն, $B_{12,19}$ թագաւորաց յանդիման, D_{1-6} թագաւորաց և կամ իշխանաց (D_3 ամենայն փխ կամ), B_2 առ առաջի, L_4 չիք՝ խաբեութեամբ, L_8 չիք՝ պատճառս, L_5 առաջի թագաւորաց ի յանդիմանութիւն խաբեութեան, B_{1-24} D_{1-6} առնել եւ, B_{17} պատճառելով խօսի, D_5 բարկացուցանէ զարարիչն, B_{1-24} թագաւորաց (B_{17} թագաւորին փխ թագաւորեն), B_{1-24} D_{1-6} չարիս զարթուցանէ ի վերա իւր, չիք՝ զսիրտ թագաւորին։

20. *Որդեակ, այր չարախորհուրդ և նախանձոտ ոչ թէ միայն առնելեաց իւրոց խորհի չար, այլ բնութիւն նորա ամենեցուն հակառակ կայ, և ոչ ումեք կամի նա զբարիս։*

20. $L_{4,9,11}$ վասն ննդաւորաց որդեակ, L_2 չիք՝ այր, E_{1-6} $F_{a,b}$ մարդ փխ այր D_4 չարախօս փխ չարախորհուրդ E_{1-6} չիք՝ իւրոց, չարութիւն փխ չար, $F_{a,b}$ առնելեացն առնէ զչարութիւն փխ առնելեաց իւրոց խորհի չար, L_{14} թշնամեաց փխ առնելեաց, L_{14} E_{1-6} $F_{a,b}$ բնութեամբ փխ բնութիւն նորա, L_3 չիք՝ ումեք. B_{1-24} է (B_{18} է և չար առէ ամենայն մարդոյ փխ կայ), $L_{4,14}$ B_{1-24} E_{1-6} $F_{a,b}$ չիք՝ և ոչ ումեք կամի նա զբարիս, $B_{12,19}$ չար է և հակառակ փխ հակառակ կայ, D_{1-6} չար է փխ հակառակ կայ, չիք՝ այսպէս խմա կ զբարի բնութիւն մարդկան փխ և ոչ ումեք կամի նա զբարիս, A_5 չար է ամենեցուն հակառակ է փխ ամենեցուն հակառակ կայ, $L_{9,11}$ չիք՝ և ոչ ումեք կամի նա զբարիս։

21. *Որդեակ, այր չարաբարոյ և ամբարիշտ յորժամ տեսցէ զխռովութիւն ընկերի իւրոյ, ցնծայ և ուրախ լինի և կարծէ ի միտս իւր, թէ փառս յաւելու ինձ։*

21. B_{18} չարափառ փխ չարաբարոյ, A_5 չարախորհ և ամբարիշտն, E_{1-6} $F_{a,b}$ մարդ փխ այր, ամբարտաւան փխ ամբարիշտ, A_5L_{13} չիք՝ այր, F_a զկռուութիւն փխ զխռովութիւն, L_{14} F_b զկռիւ փխ զխռովութիւն, B_{1-24} E_{1-6} $F_{a,b}$ փառս ինչ, B_{1-24} յիւրքն ($B_{4,5}$ ի յիւրքն, B_{18} ինքն և զատուած արդարև) փխ ինձ, $B_{12,19}$ աւելցաւ նմա փխ յաւելու ինձ, L_{14} եթէ փառք ինչ յաւելան նմա, A_5 փառաց ինչ աւելնու իրնքն, E_{1-6} F_a յաւելցաւ ի նա (E_{1-3} նըմայ, F_a ի նմա), F_b յաւելու յանձին իւրում, L_4 որդեակ կայր այժմս մարդիք չար և ամբարիշտք յորժամ տեսանեն զխռովութիւն ընկերիաց իւրանց ցնծայն և ուրախ լինին և կարծեն ի միտս իւրեանց թէ փառքեր աւելաւ։

22. *Որդեակ, մինչ քաղցր է քեզ աչք տեառն քո երկիր ի նմանէ, զի անձին քում դու ես բարեխօս և մի՛ բարկացուցաներ զնա ի վերայ անձին քում։*

